

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Խ. ՄԱՐԿՈՍՅԱՆ
Է. Ն. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Մ. Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ
Ա. Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2024

ISBN 978-9939-61-287-4



9 789939 612874

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» Իրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128, 010 593437

ԵՐԵՎԱՆ 2024

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԷԼՅԱՆՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 338.2:339.9(07)
ԳՄԴ 65.9(5Հ)-983ց7
Տ 776

**Հրապարակության է երաշխավորել ՀՊՏՀ գիտական
խորհուրդը**

**Գիտական խմբագիր՝
տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Ն. Սարինյան**

Տնտեսական անվտանգություն / Ա. Խ. Մարկոսյան, Է. Ն. Մաթևոսյան,
Տ 776 Ա. Ա. Մարկոսյան, Ա. Ա. Մարկոսյան.- Եր.: «Տնտեսագետ» հրատ., 2024.-
334 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկը նվիրված է պետության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության «միջուկին»՝ տնտեսական անվտանգության հիմնահարցին: Քննարկվել են տնտեսական անվտանգությանը վերաբերող այնպիսի համալիր հիմնախնդիրներ, ինչպիսիք են տնտեսական անվտանգության հասկացությունը, դրա տեղն ու նշանակությունն ազգային անվտանգության համակարգում, տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մակրոտնտեսական ցուցանիշների շրջանակը, այդ ցուցանիշների շեմային մեծությունների ընտրության մոտեցումները: Առաջարկվել է տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման հեղինակային փորձարկված մեթոդաբանություն, որի օգնությամբ հնարավոր է քանակական չափման ենթարկել պետության, պետությունների խմբի, ինչպես նաև տնտեսական միության կազմի մեջ մտնող երկրների տնտեսական անվտանգությունը՝ և՛ միավորների, և՛ մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա կազմված մատրիցի օգնությամբ:

Գիրքը նախատեսված է «Տնտեսության պետական կարգավորում» և «Հանրային կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրում ներառված՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնահարցեր» և «Ազգային անվտանգության հիմնահարցեր» դասընթացների դասավանդման, ինչպես նաև տնտեսական անվտանգության ոլորտի խնդիրներով հետաքրքրվող ակադեմիական կազմի, ասպիրանտների ու հայցորդների, հետազոտողների, ուսանողների, տնտեսագիտական կրթություն ունեցողների, օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների ու գործարարների համար:

ՀՏԴ 338.2:339.9(07)
ԳՄԴ 65.9(5Հ)-983ց7

ISBN 978-9939-61-287-4

© «Տնտեսագետ», 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 7

ԳԼՈՒԽ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 1.1. Տնտեսական անվտանգության հասկացությունը և հայեցակարգային հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում..... 13
- 1.2. Տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների համակարգը 25
- 1.3. Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը.... 32
- Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ..... 46*
- Առաջարկվող գրականություն..... 48*

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- 2.1. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները..... 51
- 2.2. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը և զարգացման գերակայությունները..... 56
 - 2.2.1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը..... 58
 - 2.2.2. Տնտեսական անվտանգության հիմնահարցերը՝ << կառավարության ծրագրերում..... 66
 - 2.2.3. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները..... 73
 - 2.2.4. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության սպառնալիքները..... 86
- 2.3. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության որոշակի ցուցանիշների բարելավումը 95
 - 2.3.1. Աղքատությունը և դրա հաղթահարումը..... 97
 - 2.3.2. Սննդամթերքի սպառման մակարդակը..... 101
 - 2.3.3. Ժողովրդագրական անվտանգության ցուցանիշները..... 107
 - 2.3.4. Բնակչության դրամական եկամուտների ձևավորումը..... 110

2.3.5. Արտաքին պարտքը և դրա սահմանային մակարդակները.....	118
2.3.6. Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը և դրա կառավարման արդյունավետությունը.....	124
2.3.7. Ներդրումային պահանջարկը և ներդրումային միջավայրի առողջացումը.....	18
2.3.8. Փողի զանգվածի աճը.....	141
2.3.9. Արտաքին և փոխադարձ առևտրի ապրանքաշրջանառության կառուցվածքը.....	151
2.4. Երկրի ազգային և տնտեսական անվտանգությունը՝ ռազմավարական պլանավորման համատեքստում.....	161
<i>Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ.....</i>	<i>170</i>
<i>Առաջարկվող գրականություն.....</i>	<i>172</i>
<i>Իրավաբանական ակտեր և տեղեկատվական շտեմարաններ.....</i>	<i>174</i>

ԳԼՈՒԽ 3. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

3.1. ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական անվտանգության օրենսդրությունը.....	176
3.2. Տնտեսական անվտանգության ոլորտում ԵԱՏՄ անդամ երկրների համագործակցության հնարավորությունները.....	188
3.3. Տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում իրավակիրառության փորձի և միջազգային իրավունքի նորմերը	197
<i>Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ.....</i>	<i>203</i>
<i>Առաջարկվող գրականություն.....</i>	<i>204</i>

ԳԼՈՒԽ 4. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

4.1. Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները.....	207
--	-----

4.2. Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների ընդհանրությունները, առանձնահատկությունները և վտանգվածության աստիճանը	223
<i>Ինքնասպուրզման հարցեր և առաջադրանքներ</i>	235
<i>Առաջարկվող գրականություն</i>	236

ԳԼՈՒԽ 5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ

ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Միջազգային տարբեր դասակարգումներին համապատասխանող լավագույն երկրները.....	237
5.2. Կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող երկրների տնտեսական անվտանգության մակարդակը.....	243
<i>Ինքնասպուրզման հարցեր և առաջադրանքներ</i>	259
<i>Առաջարկվող գրականություն և տեղեկատվական շրջամարաններ</i> .	260

ԱՄՓՈՓՈՒՄ	261
-----------------------	-----

SUMMARY FOR FOREIGN STUDENTS	288
---	-----

РЕЗЮМЕ ДЛЯ ИНОСТРАННЫХ СТУДЕНТОВ	310
---	-----

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հին աշխարհում առաջին քաղաքակրթությունները ստեղծվում, ձևավորվում և զորեղանում էին մեկ հիմնական նպատակի հասնելու և դա պահպանելու համար: Պետական քաղաքականության կայացման հիմնական կարգախոսը հետևյալն էր. նպատակին հասնելու և դա պահպանելու բոլոր միջոցներն արդարացված ու օրինաչափ են: Ու թեև առաջին պետությունների կազմավորումից հետո անցել է մի քանի հազարամյակ, այդ ընթացքում կործանվել են հզոր և ուժեղ բազմաթիվ տերություններ, դրանց փոխարեն ձևավորվել ու ստեղծվել նորերը, սակայն, անկախ պետության դիրքից, աշխարհագրական պայմաններից և հանգամանքներից, այն հիմնական նպատակը, որը դրվում է պետության գործառույթների առանցքում, շարունակում է մնալ նույնը: Խոսքը պետության կազմավորման հիմնական սկզբունքի մասին է, որի շուրջ և որի միջոցով «հավաքվում» է պետությունը՝ իր բազմաբնույթ գործառույթներով ու կառույցներով: Ավելի ստույգ՝ խոսքը պետության տարածքում ապրող քաղաքացիների՝ արտաքին ուժերից (թշնամիներից) պաշտպանվածության և անվտանգության ապահովման մասին է: Առաջին հայացքից, այս պարզ թվացող գործառույթի ապահովումը, ինչպես վկայում է մարդկության անցած ճանապարհը, այնքան էլ միագիծ և հեշտ չի եղել: Այդ հիմնախնդրի լուծման և իրագործման նպատակով պետություններն ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում հսկայական, կարելի է ասել՝ աստղաբաշխական մեծության միջոցներ են հատկացնում: Ավելին, այդ ծախսերն աճում են ոչ միայն բացարձակ արժեքով, այլև ՀՆԱ կամ համախմբված պետական բյուջեի ծախսերի մեջ հարաբերական կշռով: Գրեթե բոլոր մայրցամաքներում և պետություններում ավելի ու ավելի շատ միջոցներ են հատկացվում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին անվտանգության պահպանման և ամրապնդման համար: Թվում էր՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ Յալթայի կոնֆերանսում ժամանակի խոշոր պետությունների

(Խորհրդային Միության, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի) առաջնորդների մասնակցությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, աշխարհը մտավ հարաբերական դադարի կամ խաղաղության փուլ, դա պետք է ուղեկցվեր հետպատերազմյան տնտեսությունների վերականգնման և երկու տնտեսական համակարգերի (սոցիալիստական և կապիտալիստական) խաղաղ գոյակցության հայեցակարգով: Սակայն, պարադոքսն այն է, որ այս իրավիճակը կարճ տևեց, և ընդամենը երկու տարի անց, սկսած 1946 թ.-ից, հակամարտությունը փոխարինվեց սառը պատերազմով (սոցիալական և տնտեսական տարբեր համակարգեր ունեցող պետությունների միջև տեխնոլոգիական, տնտեսական և գաղափարական առճակատմամբ)՝ ներառելով ավելի մեծ թվով պետություններ, նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Անհրաժեշտ է նկատել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արագորեն ու մեծ ծավալներով զարգացավ համաշխարհային տնտեսությունը, ինչը նշանակում էր, որ պետությունների միջև զարգանում էին կապերը, ավելի ինտենսիվ էին դառնում արտաքին առևտրաշրջանառությունը, տնտեսական ինտեգրումը, մի խոսքով՝ երկրագնդում տեղի էր ունենում աշխատանքի հասարակական բաժանում և մասնագիտացում: Այս նոր երևույթը, որը ստացավ գլոբալացում անվանումը, պարունակում է ոչ միայն առավելություններ (պետություններն օգտվում են միմյանց բացարձակ և համեմատական գերակշռություններից), այլև հակադրությունների ու պայքարի միասնության «սերմեր» (տարբեր պետությունների միջև ծագում են անհանդուրժողականության և հակասության իրավիճակներ, որոնք երկրագնդի տարբեր մասերում ուղեկցվում են ռազմական կամ զինված ընդհարումներով):

Ստեղծված իրավիճակը թույլ է տալիս եզրակացնել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված «ստատուս քվոն» սպառել է իրեն, քանի որ որոշ պետությունների կամ նրանց ռազմաքաղաքական միությունների շահերն առաջ են մղվում ոչ թե

միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների համաձայն, այլ ռազմական ուժով կամ «ուժի թելադրանքով»: Այսինքն՝ ժամանակակից աշխարհում պետություններն առաջնորդվում են ոչ թե միջազգային իրավունքով, այլ միջազգային իրավունքը ստորադասվում է հզոր պետությունների քաղաքականություններին, որոնց հիմքում ռազմական ուժն է:

Հատկապես ռուս-ուկրաինական լայնածավալ ռազմական ընդհարումը, որը սկսվեց 2022 թ. փետրվարի 24-ին, աշխարհը դարձրեց պայթյունավտանգ: 2023 թ.-ի հոկտեմբերին սկիզբ առած իսրայելապաղեստինյան ռազմական գործողություններն այս շրջայի օղակներից են: Ռազմաքաղաքական առճակատման ծավալների մեծացումն աշխարհում վկայությունն է այն բանի, որ մարդկությունը կանգնած է աշխարհաքաղաքական նոր բաժանման շեմին: Որոշ ապագայագետների (ֆուտուրիստների) կարծիքով աշխարհի նոր վերաբաժանումը կավարտվի 2035 թ.-ին, իսկ այն, ինչ կատարվում է ներկայում, այդ գործընթացի առաջին «ձնծաղիկն» է:

Կարևոր է նկատել, որ Հարավային Կովկասի պետություններն այդ «սցենարի» մասնակիցներն են: 2020 թ.-ի հայ-ադրբեջանաթուրքական 44-օրյա պատերազմը, 2023 թ.-ի սեպտեմբերին Արցախի Հանրապետության ամբողջական հայաթափումն այդ «մեծ խաղի» դրվագներից են: Ստեղծված իրավիճակը, անկասկած, տարածաշրջանի երկրների փոխհարաբերությունների միջև նոր կարգավիճակ է ձևավորել, որը պահանջում է վարքագծի փոփոխություն և արդի քաղաքականության մշակում ու իրականացում: Խոսքն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին անվտանգության միջոցների կիրառման մասին է: Խորացող աշխարհաքաղաքական ճգնաժամերի, հատկապես հնարավոր ռազմական նոր ընդհարումների պայմաններում ավելի մեծ նշանակություն է ստանում տնտեսական անվտանգության հիմնահարցերի ուսումնասիրությունը, քանի որ միայն առողջ և զարգացած տնտեսությունն է հնարավորություն ու համապատասխան միջավայր ստեղծում ազգային անվտանգության ներքին և արտաքին

գործոնների ազդեցությունը կառավարելու և ցանկալի հունով տանելու համար: Հետևապես՝ երկրի ազգային անվտանգության հիմնական բաղկացուցիչները պետք է դիտարկել միայն ամբողջության և միասնականության համատեքստում: Ասվածն ամենևին էլ չի նշանակում, որ ազգային անվտանգության միասնական համակարգը, ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բաղադրիչներով հանդերձ, զարգացման որոշակի ժամանակահատվածում չի կարող ունենալ առաջնահերթություններ և գերակա ուղղություններ: Ազգային անվտանգության այս կամ այն բաղկացուցիչ կարևորությունը և նշանակությունը յուրաքանչյուր ժամանակահատվածում որոշվում է ստեղծված հանգամանքներից և հրատապ որոշումներ կայացնելու անհրաժեշտությունից ելնելով: Ակնհայտ է, որ եթե, օրինակ, այս կամ այն երկիրը հայտնվել է մեկուսացման մեջ և կարիք ունի նոր դաշնակիցների ու գործընկերների, ապա պետք է ակտիվացնել դիվանագիտական կառույցների աշխատանքը՝ բարձրացնելով նրանց գործունեության արդյունավետությունը:

Ազգային անվտանգության ներքին և արտաքին գործոնները փոխկապված և փոխապայմանավորող հանգամանքների ու պայմանների անբաժանելի միջավայրեր են: Այդուհանդերձ, օրինակ, ամերիկյան քաղաքակրթությունն առաջնությունը տալիս է երկրի ներքին անվտանգությանը, որը և ձևավորում ու հնարավոր է դարձնում արտաքին անվտանգության իրացումը: Այլ կերպ ասած, երկրի արտաքին անվտանգության հնարավորություններն ու արդյունավետությունն առավելապես պայմանավորված են ներքին անվտանգությամբ: Ի վերջո, երկրի արտաքին քաղաքականությունը ներքին քաղաքականության շարունակությունն է աշխարհագրական այլ վայրերում և միջավայրում: Ինչպես նկատում է դասականներից մեկը, նույնիսկ պատերազմը ներքին քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով և ռեսուրսներով¹:

¹ Зоткин А.А., Война, политика и мир в трактовке К. Фон Клаузевица, Вестник Московского Университета, Сер. 12. Политические науки. 2019, № 2, с. 113.

Փաստորեն, պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության բաղկացուցիչների բարելավման հնարավորությունները, առաջին հերթին, կախված են տնտեսական անվտանգության ապահովման հնարավորություններից և ներուժից: Միայն արդյունավետ և հզոր տնտեսությունն է ի զորու ապահովելու երկրի պաշտպանությունը, մեծացնելու դիվանագիտական կարողություններն ու կապերը՝ ձեռք բերելով նոր գործընկերներ, միանալով և անդամակցելով այս կամ այն տնտեսական կամ ռազմաքաղաքական դաշինքներին: Սեփական քաղաքացիների համար բարձր կենսամակարդակ ապահովող պետությունն է, որ հարգանք ու վստահություն է ներշնչում ապագա գործընկերներին և դաշնակիցներին:

Ուսումնամեթոդական ձեռնարկում քննարկվում են տնտեսական անվտանգության գնահատման մեթոդաբանական հիմնահարցեր, ներկայացվում գնահատման մեթոդներ: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև հարավկովկասյան հանրապետությունների, Եվրասիական տնտեսական միության և վերջինիս անդամ երկրների, աշխարհի 10 զարգացած երկրների կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների ու տնտեսական անվտանգության միջև կապերի բացահայտումն ու գնահատումը:

ԳԼՈՒԽ 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Տնտեսական անվտանգության հասկացությունը և հայեցակարգային հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում

Մարդկային քաղաքակրթության և պետությունների ձևավորման ու անցած ուղու ուսումնասիրությունը վկայում է, որ անվտանգության ապահովումը բոլոր ժամանակներում եղել է յուրաքանչյուր պետության կարևորագույն գործառույթը: Անվտանգության ապահովման ձգտումն է պատճառ դարձել հասարակության ներսում նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների համակենտրոնացման, պետության ներքին և արտաքին քաղաքականության ձևավորման, դրան համարժեք պետական կառուցվածքների ստեղծման և վարվող քաղաքականության իրականացման համար: Միջազգային փորձը վկայում է, որ այն երկրները, որոնք զգալի չափով և պատշաճ ուշադրություն չեն դարձնում անվտանգության (հաճախ ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ պաշտոնական փաստաթղթերում և առօրյա կյանքում օգտագործվում է «ազգային կամ պետական անվտանգություն» հասկացությունը) համակարգի ձևավորմանը և սպառնալիքների չեզոքացմանը, որպես կանոն, լուրջ նախադրյալներ են ստեղծում խոշոր ցնցումների համար՝ վտանգելով ոչ միայն սեփական գոյությունը և կենսունակությունը, այլև խարխուլվելով երկրի պետականության հիմքը, հետևաբար նաև պետության և նրա քաղաքացիների ապագան: Ասվածից հետևում է, որ ազգային անվտանգության ապահովման ուղղությամբ գիտական և փաստարկված տեսական մոտեցումների վրա խարսխված հիմնախնդիրների լուծման կենսական անհրաժեշտությունը և հիմնավոր ուղիների մշա-

կումը դառնում են մեր ժամանակների հրամայականներն առանձնապես փոքր և բաց տնտեսությամբ երկրների համար, առավել ևս, եթե տվյալ երկիրը մի տնտեսական համակարգից մյուսին անցման և շուկայական տնտեսության զարգացման դժվարին գործընթացում է:

Կարելի է եզրակացնել, որ պետական և ազգային շահերի պաշտպանվածությունը յուրաքանչյուր պետության անվտանգության առարկան է՝ այնպիսի նախադրյալների և միջավայրի ձևավորմամբ, որոնց միջոցով հնարավոր է ապահովել անհատի, հասարակության և պետության կայուն, հարատև և առաջընթաց զարգացումը: Այսինքն՝ կարող ենք նշել, որ անվտանգությունն անհատի, հասարակության և պետության՝ արտաքին. ներքին վտանգներից ու մարտահրավերներից պաշտպանվածության վիճակն է, որը հիմնվում է դրանց բացահայտման, կանխարգելման, չեզոքացման ուղղություններով իրականացվող նպատակասլաց ու արդյունավետ գործունեության վրա: Հետևաբար՝ անվտանգության մարտահրավերները կարող են առաջացնել դեպքերի և գործընթացների զարգացման այնպիսի հնարավորություն, որի պայմաններում կարող է ծագել իրական վտանգ պետության բուն գոյության, նրա ազգային, մշակութային, սոցիալական, քաղաքական, ինչպես նաև տնտեսական անկախության, անհատների և հասարակության բնականոն գործունեության, գոյության և առաջընթացի համար:

Բովանդակային առումով, ընդունված է ասել, որ անվտանգությունը բաղկացած է հետևյալ ոլորտներից՝ տնտեսական, ռազմական, սոցիալական, բնապահպանական, քաղաքական, իրավական, տեղեկատվական, ժողովրդագրական, տեխնոլոգիական և այլն:

Անվտանգության հարաբերությունների բարդ ու հակասական իրավիճակը ճիշտ հասկանալու և այդ թնջուկից դուրս գալու գործում տեղին է մեջբերել 20-րդ դարի խոշորագույն մտածողներից մեկի՝ Կ. Պոպերի հետևյալ խոսքը. «Քանի որ ես քննադատում եմ Մարքսին ու ինչ-որ չափով էլ գովում եմ դեմոկրատական քայլ առ քայլ ինտերվենցիոնիզմը (մանավանդ սրա ինստիտուցիոնալիստական տեսակը...),

ուզում եմ պարզ լինի, որ ինձ համար շատ ընդունելի է Մարքսի այն գաղափարը, թե պետության ազդեցությունը կթուլանա: Անկասկած, ինտերվենցիոնիզմի ամենամեծ վտանգը (մանավանդ ուղղակի ինտերվենցիոնիզմի վտանգը) պետական իշխանության ու բյուրոկրատիայի հզորանալն է: Ինտերվենցիոնիստների մեծ մասը հաշվի չի առնում սա կամ էլ աչք է փակում՝ մեծացնելով սրա վտանգը: Բայց ես համոզված եմ, որ երբ վտանգը լրիվ հայտնի է, դա հաղթահարելու հնարավորությունը կգտնվի, որովհետև սա արդեն միայն սոցիալական տեխնոլոգիայի ու սոցիալական քայլ առ քայլ ինժեներության հարց է: Բայց այս վտանգը պիտի իսկույն վերացնենք, քանզի սա սպառնալու է դեմոկրատիային: Մենք ոչ միայն անվտանգությունը, այլև ազատությունը պիտի, անպայման, պլանավորենք, քանի որ (եթե ուրիշ ոչ մի պատճառ չլինի) միայն ազատությունն է, որ ապահովում է անվտանգությունը»²:

Ազգային անվտանգության և դրա օրգանական բաղադրիչի՝ տնտեսական անվտանգության հիմնահարցի գիտական ըմբռնման համար նախ՝ անհրաժեշտ է բացահայտել «անվտանգություն» եզրույթը:

Անվտանգության հիմնախնդրի արդի հետազոտողները հետևյալ կերպ են մեկնաբանում այդ եզրույթը. անվտանգությունը համակարգի որոշիչ հատկությունն է, որը բնութագրում է նրա կողմից ամբողջականության, կայունության, հարաբերական ինքնուրույնության պահպանումը և ինքնազարգացման հնարավորությունը՝ որպես ապակառուցողական ներգործություններից համակարգի պաշտպանվածության արդյունք: Այդ հատկանիշներից որևէ մեկի կորուստը հանգեցնում է համակարգի կործանմանը, իսկ արտահայտման աստիճանը թույլ է տալիս դատել անվտանգության ապահովման մակարդակի մասին³:

² Պոպեր Կ., Բաց հասարակությունն ու դրա թշնամիները. Հեգելն ու Մարքսը. հատոր 2 (թարգմ. Մ. Հարությունյանի): Եր., «Գրական հայրենիք» (Հայաստան), 2006, էջ 186-187:

³ Основы экономической безопасности, под ред. Е.А.Олейникова, М., 1997.

Ազգային անվտանգության հասկացության էությանը, հիմնախնդիրների բացահայտմանը, ռազմավարական, հայեցակարգային հարցերին և մոտեցումներին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել նաև հայ հեղինակները⁴:

Ազգային անվտանգության ապահովման գործում կարևոր դերակատարում ունեն տնտեսական գործոնները: Ազգային անվտանգությունը տնտեսական անվտանգության նախապայմանն ու երաշխիքն է, և հակառակը: Այս երկու գործընթացները փոխկապված են, մեկը մյուսով պայմանավորված, ուստի պետք է դիտարկվեն ամբողջության մեջ: Նման մոտեցմամբ հաղթահարվում է տնտեսական և պետական քաղաքականությունների նկատմամբ մեկուսի մոտեցումը:

Ներկայում արտասահմանյան բազմաթիվ երկրներում ուսումնասիրություններ են կատարվում տնտեսական անվտանգության ինչպես տեսական-մեթոդաբանական, այնպես էլ գործնական հարցերի շուրջ: Նշված հիմնախնդիրը լայնորեն հետազոտվում է նաև հետխորհրդային երկրներում:

Հայ տնտեսագիտական գրականության մեջ, տեսական և ծրագրային հիմնախնդիրների բազմակողմ հետազոտության ասպարեզում, կապված տնտեսության անցման շրջանի և տնտեսական անվտանգության որոշակի հարցերի հետ, իրենց ավանդն ունեն Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի անդամները⁵, ինչպես նաև մի շարք այլ հեղինակներ⁶: Հրապարակված աշխատություններ-

⁴ Տե՛ս, մասնավորապես, Աղայան Ա., Ազգային զարգացման ռազմավարության գաղափարախոսությունը, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, Շահգեղյան Մ., Ազգային անվտանգության հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, Սաֆարյան Ա., Ազգային անվտանգություն, հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:

⁵ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, 480 էջ:

⁶ Խաչիկյան Գ., Տնտեսական անվտանգության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2001, Հովհաննիսյան Ա., Հայաստանի Հանրապետության

րում գիտական բավարար մակարդակով հետազոտվել են տնտեսական անվտանգության կարևորագույն կողմերը: Սակայն, այդ բազմաշերտ և բազմեզր հիմնախնդիրը դեռևս համակարգված ձևով ուսումնասիրված չէ, ինչպես նաև մշակված չէ տնտեսական անվտանգության հայեցակարգը, որի հիմնական նպատակները պետք է դառնան՝

- հանրապետության տնտեսական անվտանգության կառուցակարգի տեսական-մեթոդաբանական կողմերի հետազոտությունն ու այդ ոլորտում գոյություն ունեցող ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրությունը,
- հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացությունների, առաջարկությունների ձևավորումը և Հայաստանի տնտեսության բարեփոխումների այնպիսի ընթացքի երաշխավորումը, որը կապահովի նրա տնտեսական անխափան առաջընթացն ու անվտանգությունը,
- տնտեսական անվտանգության տեսական-մեթոդաբանական տեսանկյունների դիտարկումը,
- հատկապես տնտեսական աճի և հանրապետության տնտեսական անվտանգության կայուն զարգացման դերի բացահայտումը,
- Հայաստանի ֆինանսական անվտանգության վերլուծությունը՝ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից՝ որպես տնտեսական անվտանգության ռազմավարության հիմք,
- Հայաստանի տնտեսական անվտանգության աստիճանի գնահատման, մյուս երկրների հետ համեմատության և այդ բազմագործոն հիմնախնդրի լուծման վերաբերյալ համապատասխան եզրակացությունների ու հանձնարարականների, երաշխավորությունների մշակումը և գործնական առաջարկությունների առաջադրումը:

տնտեսական անվտանգության գնահատման համակարգը և ապահովման ուղիները, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002:

Տնտեսական անվտանգության վերաբերյալ գոյություն ունեցող բնորոշումներում տնտեսական անկախության, կայուն տնտեսական զարգացման շեշտադրումներին անհրաժեշտ է ավելացնել այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են տնտեսության սոցիալական կողմնորոշվածությունն ու համաշխարհային շուկայում առաջատար ոլորտների մրցունակության մակարդակի բարձրացումը:

Սոցիալական կողմնորոշում ունեցող պետության տնտեսական քաղաքականությունը, ընդգրկուն լինելով հանդերձ, ունի մի առանցքային կողմնորոշիչ, որը վերաբերում է արդար հասարակարգի կազմավորմանը: Մարդկային հասարակության պատմությունը վկայում է, որ դասակարգային պայքարի և հակասությունների կենտրոնում, կենսագործունեության դրսևորումների առումով, ի վերջո, արդարության հաստատումն է: Արդար հասարակության չափանիշներ կարող են լինել՝ ա) եկամուտների բաշխման այնպիսի սկզբունքների կիրառումը, որոնք հնարավորություն կտան նվազագույնի հասցնելու առավել հարուստների և առավել աղքատների եկամուտների միջև էական ճեղքվածքը (խիստ բևեռացումը), բ) սեփականության (իսկ ավելի լայն իմաստով՝ ազգային հարստության) արդարացի բաշխումը սոցիալական տարբեր խմբերի միջև, գ) կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնումը, դ) բնական ընտրության սկզբունքի կիրառումը գործունեության բոլոր ասպարեզներում, ե) անհատի ազատությունների կամ կամքի ազատ դրսևորման մակարդակը, զ) օրենքի գերակայության ապահովումը և այլն:

«Տնտեսական անվտանգություն» հասկացությունը հաճախ կիրառվում է ինչպես առանձին դիրքորոշումների ճշմարտացիությունը հիմնավորելու, այնպես էլ տնտեսությունում դրսևորվող ռիսկերը մատնանշելու համար, որոնք սպառնում են պետության անվտանգությանը: Հասկանալի է, որ նոր հասկացության հաճախակի կիրառումը անհրաժեշտություն է առաջացնում բացահայտելու դրա առաջացման պատճառները և տալու գիտական սահմանումներ:

Տնտեսության նկատմամբ պետության միջամտության նպատակ-

ների և միջոցների համալիրը ձևավորում է տնտեսական քաղաքականության բովանդակությունը: Տնտեսական քաղաքականության հիմնախնդիրը բարիքների արտադրության ու բաշխման կապակցությամբ հասարակության և պետության, համապատասխան ինստիտուտների հետ հակասություններում դրսևորվող հարաբերությունների գործնական կարգավորումն է: Դեռևս XX դարի սկզբին տնտեսական միտքը ձևավորեց տնտեսական քաղաքականության այնպիսի կարևոր երկու սկզբունքներ, ինչպիսիք են արտադրության արդյունավետությունը և բարիքների արդար բաշխումը: Այս առնչությամբ նկատենք, որ հայ հասարակության միջավայրում առանձնապես արդիական և չափազանց հրատապ է ազատության ու արդարության ըմբռնումը՝ արժեքային համակարգի պատկերացումներում:

Այսպես՝ հետհեղափոխական Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում (ԱՀ) հասարակության արժեքային համակարգի ձևավորման հիմքի և այդ գործում ազատության ու արդարության դերակատարման, ինչպես նաև հարևան երկրների հետ հարաբերությունների ձևավորման վերաբերյալ պատկերացում կազմելու համար 2019 թ. սեպտեմբերի 25-ից նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում և ԱՀ-ում իրականացվել է սոցիոլոգիական հարցում, որին մասնակցել է շուրջ 670 մարդ: Նպատակն էր բացահայտել հայ հասարակության շրջանում որոշակի արժեքների (արդարություն, ազատություն, համերաշխություն, համախմբվածություն, ինքնասահմանափակում և զոհաբերություն, հայրենասիրություն, մարդու նկատմամբ բարություն, ընտանեկան ավանդույթներ) առկայությունն ու գերակայությունը: Եվ այսպես՝ հարցման արդյունքում պարզվեց, որ հարցվածների արժեքային համակարգում, որպես ամենակարևորներ, գերակայում են արդարության պահանջը (հարցման մասնակիցների 36%-ը) և ազատությունը (հարցվածների 22%-ը):

⁷ Հետազոտության արդյունքների մասին ավելի մանրամասն տե՛ս Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը, Եր., «Անտարես», 2020, էջ 44-72:

Արտադրության արդյունավետության սկզբունքը հետևյալն է. ծախսերի որոշակի մեծության պայմաններում պետության քաղաքացիներին առավելագույն արդյունքով ապահովում կամ, որ նույնն է, տրված քանակությամբ արտադրանքի թողարկում՝ նվազագույն ծախսերով:

Պետության քաղաքացիների համար վերջնական արդյունքը կամ ոչ արտադրական նշանակության արտադրանքը բաղկացած է՝

- սպառողական շուկայի,
- սոցիալական ենթակառուցվածքի (գիտության, մշակույթի, առողջապահության կոմունալ-կենցաղային տնտեսության, կենցաղ սպասարկման, երկաթուղային տրանսպորտի, կապի) և բնապահպանական հավասարակշռության համար նախատեսված,
- ինստիտուցիոնալ ենթակառուցների (պետական իշխանության և կառավարման մարմինների, դրամավարկային և ֆինանսական համակարգի) պահպանման և հասարակական կարգի պահպանության համար նախատեսված, պաշտպանական նշանակության,
- տարերային իրավիճակների համար նախատեսված պահուստային,
- արտաքին տնտեսական գործունեության համար նախատեսված արտադրանքից:

Ելնելով պետական առաջնահերթություններից՝ որոշվում են ոչ արտադրական նշանակության վերջնական արտադրանքի բաշխման համամասնությունները:

Արդյունավետության սկզբունքին համապատասխան՝ ռեսուրսները նպատակահարմար է օգտագործել այնպես, որ ապահովվի սպառողների կողմից պատվիրված ոչ արտադրական նշանակության վերջնական արտադրանքի աճ՝ օպտիմալ կառուցվածքով: Միաժամանակ, պետք է այնպես անել, որ չխախտվի եկամուտների բաշխման արդարությունը և չթուլանա պետության կայունությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական անվտանգությունը բավական լայն հասկացություն է, որը հնարավոր չէ բնութա-

գրել մեկ սահմանման միջոցով, նպատակահարմար է տալ մի քանի սահմանումներ: Տնտեսական անվտանգությունը՝

- ✓ ուժերի և միջոցների համախմբություն է, որն ընդունակ է հակազդելու պետության (որպես համակարգի) և նրա մասնակիցների տնտեսական շահերի սպառնալիքներին,
- ✓ գործընթաց է, որն ուղղված է պետության (որպես համակարգի) տնտեսական կառուցակարգերի գործունեությունը փոփոխվող պայմաններում զարգացման հիմնական նպատակներին անընդհատ համապատասխանեցնելուն,
- ✓ տնտեսության ընդունակությունն է համապատասխան կերպով դիմակայելու ներքին և արտաքին բացասական ազդեցություն ունեցող գործոններին՝ ինքնապահպանման և հետագա զարգացման նպատակով,
- ✓ որոշակի գործողությունների իրականացման հնարավորություն է՝ ուղղված կոնկրետ ժամանակահատվածի համար սահմանված նպատակներին հասնելուն,
- ✓ ներքին և արտաքին սպառնալիքներից տնտեսական պաշտպանվածությունն է, որը թույլ է տալիս հուսալիորեն պահպանել և արդյունավետ կերպով օգտագործել աշխատանքային, նյութական, բնական և ֆինանսական հնարավորությունները:

Ակադեմիկոս Լ. Աբալկինի սահմանմամբ՝ տնտեսական անվտանգությունը պայմանների և գործոնների այնպիսի ամբողջություն է, որն ապահովում է ազգային տնտեսության անկախությունը, կայունությունը և մշտապես նորացման ու կատարելագործման ունակությունը⁸: Ե. Բուխվալդի համոզմամբ՝ տնտեսական անվտանգությունը տնտեսության կողմից ազգային և միջազգային մակարդակներում հասարակության պահանջունքների արդյունավետ բավարարման ապահովման կարողությունն է⁹:

⁸ Абалкин Л., Экономическая безопасность России: угрозы и их отражение», «Вопросы экономики. N 12, 1994, с. 4-13.

⁹ Бухвальд Е., Головацкая Н., Лазуренко С., Макроаспекты экономической безопасности: факторы, критерии и показатели, «Вопросы экономики», N 12, 1994.

Այսպիսով՝ տնտեսական անվտանգությունը երկրի տնտեսության այն վիճակն է, երբ ազգային շահերի իրացումը երաշխավորող որոշակի թվով կենսականորեն կարևոր տնտեսական գործունեության ոլորտներում ապահովվում է անհատի, պետության և հասարակության անընդմեջ, երկարատև և նպատակաուղղված այնպիսի առաջընթաց, որի դեպքում ազգային տնտեսության նկատմամբ սպառնալիքների առաջացման հավանականությունը և ազդեցության չափը դառնում են նվազագույն:

Անցումային տնտեսությամբ երկրների տնտեսական անվտանգությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են հետևյալ ուղղություններով՝ սպառող և սպասարկող (երբ երկրի ներմուծման չափերը նկատելիորեն գերազանցում են արտահանման մեծությունը) երկրի վերածվելու վտանգը, նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունների բավարար և առաջանցիկ տեմպերի կանխարգելումը, բնակչության և, հատկապես, մտավոր ներուժ ներկայացնող հատվածի զանգվածային արտահոսքը, բնական ռեսուրսների անխնա օգտագործումը, ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին պարտքի տեսակարար կշռի մեծացումը, կցորդային տնտեսական համակարգի կարգավիճակի առկայությունը, գիտական և կրթական համակարգերի փլուզումը: Նշված վտանգներն առկա են նաև Հայաստանի համար, ընդ որում, եթե տնտեսական բարեփոխումների սկզբնական փուլում այդպիսի իրավիճակը կարելի էր «նորմալ» համարել, ապա ներկայում նույն վտանգների առկայությունը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում վարվող տնտեսական քաղաքականությունը չի թիրախավորվել դեպի տնտեսական անվտանգության սպառնալիքների չեզոքացումը:

Տնտեսական անվտանգության էությունը տնտեսության զարգացման այնպիսի միջավայրի ապահովումն է, որը նպատակ ունի առավելագույնս բավարարելու հանրապետության քաղաքացիների սոցիալական, մշակութային և տնտեսական պահանջները բնական, աշխատանքային և մյուս ռեսուրսների արդյունավետ օգտագործման

պայմաններում:

Տնտեսական անվտանգությունը, իր հերթին, որպես հարաբերությունների համախմբություն, ունի բավական բարդ ներքին կառուցվածք, որի երեք հիմնական տարրերն են.

- տնտեսական անկախությունը, որը, սակայն, արդի համաշխարհային տնտեսությունում բացարձակ բնույթ չի կրում: Աշխատանքի միջազգային բաժանումն ազգային տնտեսությունները դարձնում է միմյանցից փոխկախված: Այս պայմաններում տնտեսական անվտանգությունը նշանակում է արտադրական ռեսուրսների նկատմամբ պետության վերահսկողություն, արտադրության, արդյունավետության և որակի այնպիսի մակարդակի ձեռքբերում, որը կապահովի երկրի մրցունակությունը և հնարավորություն կտա դառնալու համաշխարհային առևտրի մասնակից,
- ազգային տնտեսության կայունությունը, որը ենթադրում է սեփականության բոլոր ձևերի պաշտպանվածություն, ձեռնարկատիրության ակտիվության համար կայուն պայմանների և երաշխիքների ստեղծում, եկամուտների բաշխման այնպիսի անհամաչափությունների կանխում, որոնք սոցիալական ցնցումների պատճառ կարող են դառնալ, տնտեսության ինքնազարգացման և առաջընթացի ընդունակություն, որն առավել կարևոր է ներկայիս զարգացող աշխարհում: Այս ամենն էլ, իրենց հերթին, կանխորոշում են ներդրումների և նորարարությունների համար բարենպաստ մթնոլորտի ձևավորում, արտադրության անընդհատ արդիականացում, աշխատողների մասնագիտական կարողությունների շարունակական կատարելագործում և այլն:

Այս տեսանկյունից, տնտեսական անվտանգության ռազմավարությունը պետք է բովանդակի ներքին և արտաքին սպառնալիքների բնութագրում՝ որպես պայմանների և գործոնների համախումբ, որը վտանգ է առաջացնում պետության, հասարակության և անձի կեն-

սականորեն կարևոր տնտեսական շահերի համար, ինչպես նաև տնտեսության վիճակը բնութագրող չափորոշիչների և չափանիշների սահմանում, ըստ որի՝ կապահովվեն տնտեսական անվտանգությունն ու երկրի կենսականորեն կարևոր շահերը: Միաժամանակ, տնտեսական անվտանգության ռազմավարությունը պետք է ներառի պետության համար կենսականորեն կարևոր շահերի ապահովման այնպիսի կառուցակարգ, որը հիմնված կլինի իշխանության բոլոր մարմինների համագործակցության վրա:

Գործնականում տնտեսական անվտանգության պետական ռազմավարությունը պետք է իրագործվի որոշակի միջոցառումների, կառուցակարգերի համակարգի միջոցով, որը կսահմանվի որակական և քանակական ցուցանիշների և չափանիշների հիման վրա: Այդպիսի համակարգը պետք է կազմի տնտեսական քաղաքականության հիմքն ու հիմնական բովանդակությունը:

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, ինչպես նաև կառավարության երկարաժամկետ (եռամյա և ավելի երկար հորիզոն ունեցող) քաղաքականության գործնական հիմնախնդիրների լուծման համար առանձնապես ուշադրության են արժանի տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների համակարգի մշակումը և դրանց հիման վրա Հայաստանի Հանրապետության ու տարածաշրջանի մյուս երկրների տնտեսական անվտանգության վիճակի նկարագրությունն ու գնահատումը, մասնավորապես՝ բացահայտելով և նկարագրելով տնտեսական անվտանգության ցուցանիշների շեմային մեծությունները, տնտեսական անվտանգության վրա ազդող գործոնները, ինչպես նաև մեր երկրի համար վտանգավոր սահմանագծում գտնվող որոշ ցուցանիշներ:

Այլ կերպ չի էլ կարող լինել, քանի որ ամեն մի սոցիալ-տնտեսական երևույթի կառավարման և շարժընթացի վերլուծության համար անհրաժեշտ է դրա գնահատումը (չափումը): Այլապես, ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում անհնար է պատկերացում կազմել որևէ երևույթի, ինչպես նաև դրա զարգացման ընթացքի մա-

սին (առավել ևս այն դեպքում, երբ կառավարումը պարտադրում է կատարել երևույթի թե՛ որակական, թե՛ քանակական գնահատում): Միայն այդպիսի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը կարող է ունենալ գնահատված (չափված, որոշակիացված) կողմնորոշիչներ՝ մշակելու համար զարգացման ծրագրերի առաջնահերթություններն ու գերակա ուղղությունները: Սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, տնտեսավարման գործիքակազմի միջոցով բերելով կառավարման տիրույթ, հնարավոր է ազատել մտացածին ու անհիմն կերպով որպես գերակա ճանաչվող տնտեսական գործունեության ոլորտներից և ուղղություններից:

1.2. Տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների համակարգը

Յուրաքանչյուր, նույնիսկ փոքր տնտեսություն բարդ համակարգ է՝ տարբեր ոլորտների և ենթահամակարգերի ամբողջություն, որի ներսում գործում են բազմաթիվ կապեր ու կախվածություններ: Ըստ որում, այդ կապերը, իրենց հերթին, ունեն տարբեր կողմեր, որոնք զուգակցվում են ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական բնույթի և բովանդակության երևույթների հետ: Նշված հարաբերությունները բազմակողմ և բազմաշերտ են, ուստի մեկ կամ մի քանի ցուցանիշներով գործնականում անհնար է դրանք գնահատել:

Տնտեսական անվտանգության էությունն ավելի ամբողջական կերպով բնութագրելու համար օգտագործվում է որոշակի ցուցանիշների համակարգ: Ընդ որում, տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման նպատակով կարևոր է ոչ միայն այդ ցուցանիշների համակարգի ձևավորումը, այլև դրանց շեմային մեծությունների սահմանումը (որոշումը), որոնք էլ ընդունվում են որպես յուրատեսակ կանխարգելիչ ցուցիչներ կամ, ինչպես ընդունված է անվանել, առանձնահատուկ «կարմիր գծեր»: Տնտեսական անվտանգության

յուրաքանչյուր ցուցանիշի համար սահմանված այդպիսի շեմային մեծությունները թույլատրելի սահմանների այն մակարդակներն են, որոնցից շեղվելու դեպքում լուրջ խոչընդոտներ են առաջանում տնտեսության վերարտադրության տարբեր բաղադրիչների բնականոն զարգացման համար՝ տնտեսական անվտանգության ասպարեզում հանգեցնելով բացասական, հաճախ նաև կործանարար միտումների ձևավորմանը: Ավելացնենք նաև, որ այդ չափանիշների թույլատրելի սահմանները հաստատուն մեծություններ չեն և կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հարմարեցվելով համընդհանուր, ժամանակակից միտումներին: Նման մոտեցումը պայմանավորված է ինչպես համաշխարհային տնտեսությունում, այնպես էլ տվյալ երկրի աշխարհագրական, ինչպես նաև տնտեսական շահերը բնութագրող տարածաշրջանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական զարգացումներով, հետևաբար նաև այդ զարգացումներն «արձանագրող» բազմաբնույթ ցուցանիշների բացարձակ ու հարաբերական մեծությունների փոփոխությամբ: Հասկանալի է, որ, օրինակ, 1990-ական թվականների կեսին արձանագրված բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշի մեծությունն ինչպես աշխարհում, այնպես էլ հետխորհրդային տարածքում և Հարավային Կովկասի հանրապետություններում էականորեն տարբերվում են 2022 թվականի համապատասխան ցուցանիշների մեծություններից: Այդ և նմանատիպ հանգամանքները հիմք են հանդիսանում նաև տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման շեմային մեծությունների փոփոխման համար:

Տնտեսական անվտանգության մակարդակի չափանիշները կապված են տնտեսության իրավիճակի հետ, որը ենթադրում է տնտեսական սպառնալիքների հայտնաբերում և դրանց մակարդակի գնահատում:

Տնտեսական անվտանգության չափանիշների սահմանման նպատակն է թույլ չտալ այս կամ այն ցուցանիշի մոտենալը տնտեսական սպառնալիքի սահմանային թույլատրելի մեծությանը՝ կորուստները և ռիսկերը հասցնելով նվազագույնի, որպեսզի բարձրանա երկրի սո-

ցիալ-տնտեսական արդյունավետությունը, ավելանա մրցունակ ապրանքների արտադրությունը, բարելավվեն բնակչության կյանքի որակը, կենսամակարդակը և այլն:

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական անվտանգության ցուցանիշների առավելագույն սահմանները¹⁰ խմբավորվում են ըստ տնտեսության ոլորտների: Առաջին խումբը միավորում է ազգային արտադրության զարգացման մակարդակը, երկրորդ խումբը՝ ֆինանսական և դրամավարկային իրավիճակը բնութագրող ցուցանիշները:

Տնտեսական անվտանգության գնահատման և չափանիշների վերաբերյալ գոյություն ունեն էապես տարբերվող մոտեցումներ: Հատկապես մեծ տարածում են ստացել ՌԴ ակադեմիկոս, պրոֆեսոր Ս. Գլազևի առաջարկած ցուցանիշները¹¹: Համաձայն տվյալ մեթոդի՝ որոշակի ժամանակահատվածի տնտեսական անվտանգության ցուցանիշները համեմատվում են առաջարկվող ցուցանիշների շեմային մեծությունների հետ: Շեմային ցուցանիշների մակարդակը գերազանցելու (կամ դրանցից շեղվելու) դեպքում երկրի տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծումը դառնում է հրատապ: Այստեղ կարևոր դեր են խաղում վիճակագրական տվյալների առկայությունը և դրանց որակը: Սովորաբար, որպես տնտեսական անվտանգության շեմային մեծություններ, կարելի է ընդունել միջին համաշխարհային ցուցանիշները: Օրինակ՝ ներմուծվող պարենային ապրանքների բաժինը չպետք է գերազանցի երկրի ապրանքային շուկայի 25%-ը, մշակող արդյունաբերական արտադրանքի բաժինն արտահանման մեջ չպետք է պակաս լինի 40%-ից, բարձր տեխնոլոգիաների արտադրանքը՝ ոչ պակաս թողարկվող արտադրանքի 10-15%-ից, պետության կողմից գիտության ֆինանսավորումը՝ ՀՆԱ 2%-ից և այլն¹²:

¹⁰ Հաճախ դրանց փոխարեն օգտագործվում են «շեմային» կամ «սահմանային» եզրույթները, ուստի հետագա շարադրանքում դրանք կօգտագործենք որպես հոմանիշներ:

¹¹ Глазьев С. Ю., Основы обеспечения экономической безопасности России — альтернативный реформационный курс, Российский экономический журнал, N1, N2, 1997.

¹² Основы экономической безопасности, под ред. Е.А.Олейникова, М., 1997, с. 68-71.

Նկատենք նաև, որ տնտեսական անվտանգությունն ապահովված է առավելագույնս, եթե բավարարված են ուսումնասիրվող բոլոր ցուցանիշների շեմային մեծությունները, այսինքն՝ երկրի համապատասխան ցուցանիշները չեն գերազանցում (եթե շեմային մեծությունը ձևակերպված է որպես «ոչ ավելի, քան» որոշակի սահմանը) կամ պակաս չեն (եթե շեմային մեծությունը ձևակերպված է որպես «ոչ պակաս, քան» որոշակի սահմանը) շեմայիններից: Ավելացնենք, որ բոլոր շեմային մեծությունները գործնականում միաժամանակ կարելի է ապահովել միայն տնտեսության բարձր զարգացած լինելու պայմաններում:

Շեմային ցուցանիշների մեծությունները պետք է ուղղորդվեն, շտկվեն՝ ըստ ժամանակի և վայրի (երկրի աշխարհագրական դիրքի) գործոնների, այլ խոսքով, **ai** ցուցանիշի **i**-րդ սահմանային մեծությունը երկու փոփոխականով ֆունկցիա է. ժամանակ՝ **t** և երկրի տարածք՝ **x**, այսինքն՝ **ai = fi (t, x)**:

Երկրի տնտեսական անվտանգությամբ զբաղվող պետական մարմինները շեմային ցուցանիշների մեծությունները հիմնավորելուց հետո պետք է ստեղծեն համապատասխան կառուցակարգեր, որոնք կապահովեն երկրի տնտեսական անվտանգությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել օրենսդրափրավական, տնտեսական, վարչական բնույթի միջոցառումների համալիր, որի վերջնական գործառույթն այն իրավիճակների կանխումն է, երբ փաստացի և կանխատեսվող ցուցանիշների մեծությունները շեղվում են իրենց շեմային մեծություններից անցանկալի ուղղությամբ և չափերով՝ ահազանգելով տնտեսության այս կամ այն ոլորտում կամ ճյուղում առկա անցանկալի երևույթների մասին: Դրա համար անհրաժեշտ է կատարել համակարգված մշտադիտարկում՝ պարզելու, թե տնտեսական անվտանգության ցուցանիշներն ի՞նչ որակական վիճակում են, և եթե վտանգավոր իրավիճակ է, ժամանակին տեղեկացնել տնտեսական քաղաքականություն իրականացնող մարմիններին:

Այսպիսով՝ տնտեսական անվտանգության ցուցանիշների հիմնա-

կան խմբերն են.

- ✓ ընդհանուր տնտեսական ներուժը,
- ✓ պաշտպանունակության տնտեսական ապահովվածությունը,
- ✓ տնտեսության ինքնուրույն զարգանալու հնարավորությունները,
- ✓ բնակչության կենսամակարդակը, ֆինանսական համակարգի անվտանգությունը,
- ✓ արտաքին տնտեսական անկախությունը,
- ✓ տնտեսական անվտանգության կառավարչական դրույթները բնութագրող ցուցանիշները:

Յուրաքանչյուր խմբում կարող են ընդգրկվել բազմաթիվ ցուցանիշներ, որոնք, ըստ որոշ հետազոտողների, անվերջության միտում ունեն: Մասնազետ փորձագետները, որպես տնտեսական անվտանգության կարևորագույն ցուցանիշներ, հաճախ մատնանշում են հետևյալները՝

Տնտեսական. ա) ՀՆԱ ծավալի կրճատում բազային տարվա նկատմամբ (%), բ) պարենային կախվածություն (ներմուծվող մթերքի սպառման մասնաբաժինը) (%), գ) արտահանման ծավալում բարձր տեխնոլոգիաների մասնաբաժինը (%), դ) գիտությանն ուղղված հատկացումները (%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ):

Սոցիալական. ա) նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցություն, բ) դեցիլային գործակից (10% ամենահարուստ խավի եկամուտների հարաբերությունը 10% ամենաաղքատների եկամուտներին), գ) կենսաապահովման նվազագույն և միջին եկամտի հարաբերություն, դ) գործազրկության մակարդակ (%) (հաշվի առնելով նաև թաքնված գործազրկությունը), ե) ծնվածների և մահացածների հարաբերակցություն՝ մեկ տարվա կտրվածքով:

Քաղաքական. իշխանության օրինականության մակարդակ (քաղաքացիների այն տոկոսը, որը չի վստահում իշխանության մարմիններին):

Տնտեսական անվտանգության բոլոր ցուցանիշները բաժանվում են երեք խմբի՝ համեմատվող, բացարձակ և համամասնական: Հա-

մեմատվող ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են՝ համեմատության մեջ դրվելով տարածաշրջանային հիմնական մրցակիցների նույն ցուցանիշների մեծությունների հետ: Համամասնական ցուցանիշներն արտահայտում են տնտեսական անվտանգության համակարգի տարբեր բաղադրիչների համամասնությունները, որոնք ապահովում են համակարգի կայունությունը՝ անկախ տնտեսության զարգացման այս կամ այն վիճակից: Բացարձակ ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են բնակչության կենսաբանական հատկանիշներով՝ կախված լինելով հասարակության ներսում ձևավորված ավանդույթներից, սովորույթներից, ինչպես նաև բնակլիմայական պայմաններից:

Տնտեսական անվտանգության՝ վերը նշված ցուցանիշների շեմային մեծությունները որոշվել են միջազգային փորձի հիման վրա, և դրանց մեծ մասը կիրառելի է բոլոր երկրների համար՝ անկախ դրանց զարգացման աստիճանից¹³: Ընդ որում, որոշ ցուցանիշների (այն էլ՝ սահմանափակ թվով) շեմային մեծություններ կարող են տարբեր լինել այս կամ այն երկրի համար՝ պայմանավորված միայն տվյալ երկրի բնակլիմայական պայմաններով, պատմական զարգացմամբ, ժողովրդագրական ցուցանիշներով և սովորույթների տարբերություններով:

Ստորև ներկայացնենք տնտեսական անվտանգության մի շարք ցուցանիշների շեմային մեծությունները: Մասնավորապես՝ կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից դեցիլային գործակիցը (եկամուտների տարբերակվածությունը 10 տոկոս ամենահարուստ և 10 տոկոս ամենաաղքատ ընտանիքների եկամուտների մեջ) չպետք է գերազանցի վեցապատիկը: Զինիի գործակիցը (եկամուտների կենտրոնացման գործակից) արդյունաբերական զարգացած երկրներում հավասար է 0,15-0,17, և որքան դա մոտենում է 1-ին, այնքան մեծանում է անհավասարությունը: Աղքատության ցուցանիշի «բնական» մակար-

¹³ Основы экономической безопасности, под ред. Е.А.Олейникова, М., 1997, с. 68-71.

դակն արդյունաբերական զարգացած երկրներում 8,5-ից 9 տոկոս է:

Ինֆլյացիայի տարեկան նորմալ մակարդակ է համարվում 5-6 տոկոսը: 6-10 տոկոս տարեկան ինֆլյացիայի դեպքում մշակվում և իրականացվում են դրա մակարդակն իջեցնելու հատուկ միջոցառումներ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տնտեսության արմատական բարեփոխումների ժամանակաշրջանում գործազրկության մակարդակը (նորման) թույլատրելի է 15,7-20 տոկոսի չափով, սակայն դա կարող է պահպանվել 3-5 տարի: Իսկ ընդհանրապես՝ զարգացած երկրներում գործազրկությունը, սովորաբար, մոտ 6-10 տոկոս է:

Տնտեսական աճ: Իրական ՀՆԱ աճի տեմպի նորմալ մեծություն է համարվում տարեկան 2,7-ից 4 տոկոսը: Տնտեսության արմատական բարեփոխումների ժամանակաշրջանում թույլատրվում են ավելի ցածր ցուցանիշներ կամ տարեկան 0,5-1,5 տոկոս, սակայն դա չպետք է պահպանվի 2-3 տարուց ավելի: Նման տեմպի դեպքում անթույլատրելի է ՀՆԱ ծավալի 50 տոկոսից ավելի նվազումը:

Ապրանքների գնային զանգվածի և դրամով ապահովվածության հարաբերակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ այս պարագայում շեմային մեծություն է 1:1,3 հարաբերակցությունը, որից շեղվելը կհանգեցնի ձեռնարկությունների (առևտրային կազմակերպությունների) դրամական միջոցների անբավարարվածությանը: Ընդ որում, դառնալով անվճարունակ, ձեռնարկությունները կկրճատեն արտադրության ծավալները և կբարձրացնեն ապրանքների գները, ինչն էլ, իր հերթին, կարագացնի ինֆլյացիայի տեմպը և կհանգեցնի պահանջարկի նվազմանը: Արդյունքում կառաջանան նոր անվճարունակ ձեռնարկություններ (առևտրային կազմակերպություններ), և տեղի կունենա արտադրության նոր անկում:

Գիտության և կրթության ծախսեր: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ եթե գիտության համար կատարված ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ երկու տոկոսը, ապա հասարակությունը մեծապես տուժում է գիտության նվաճումները տնտեսության մեջ չներդնելու պատճառով: Իսկ եթե կրթության համար կատարված ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ հինգ տոկոսը, ապա ազգը դատապարտված է

մտավոր ոչնչացման: Հատկապես Հայաստանի Հանրապետության համար, որը հարուստ չէ վառելիքաէներգետիկ և այլ բնական ռեսուրսներով, մեծապես կարևորվում է մտավոր սեփականության զարգացման և նորարարությունների ներդրման հիմնախնդրի լուծումը: Կարելի է առանց չափազանցնելու նշել, որ հանրապետությունում տնտեսական աճի որակը զգալի չափով կախված է գիտության և կրթության ոլորտում կատարված ծախսերի մեծությունից¹⁴:

Իրենց հերթին, վարկավորման տոկոսադրույքներն ընդհանրապես պետք է լինեն ավելի ցածր, քան տնտեսությունում, դրա առանձին ոլորտներում ձևավորված շահութաբերության ցուցանիշները: Աշխարհում վարկային տոկոսադրույքների ընդունված չափն է տարեկան 5-7 տոկոս:

1.3. Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը

Պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման համար կարևորագույն գործիքներ են տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի ձևավորումը և դրանց սահմանային (շեմային) արժեքների որոշումը: Սահմանային (շեմային) արժեքները քանակական պարամետրեր են, որոնց միջոցով հնարավոր է դառնում տնտեսության որոշակի ոլորտներում ձևավորված դրության խոցելիության և սպառնալիքի չափի գնահատումը՝ տնտեսական անվտանգության տեսանկյունից: Այլ կերպ ասած, տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշման միջոցով պետության տնտեսական շահերին տրվում է քանակական որոշակիություն:

¹⁴ Մարկոսյան Ա., Գալստյան Հ., Մտավոր սեփականություն. կառավարման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Ձանգակ-97», 2004:

Կարևոր է նշել, որ տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը և դրանց սահմանային (շեմային) արժեքները տարբեր երկրների համար տարբեր են՝ պայմանավորված ազգային շահերի և դրանք իրականացնելու ուղիների տարբերությամբ, ինչը հստակորեն երևում է տնտեսական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող երկրների մասնագետների համապատասխան սահմանումներում¹⁵:

Պետության կենսունակության և գոյության հիմքը եղել և շարունակում է մնալ ազգային անվտանգությունը, որի հիմնական բաղադրիչներից է տնտեսական անվտանգությունը: Վերջինիս բաղադրիչները, կախված ժամանակից և միջավայրից, կարող են փոփոխվել:

Բազմաթիվ ուսումնասիրություններում ընդգծվել է տնտեսական անվտանգության կարևորությունը՝ ազգային տնտեսությունների կայունության և ճկունության տեսանկյունից: Մասնավորապես՝ Գ. Ռոդրիգեսի, Ռ. Վասալոյի և Պ. Կաստիլյոյի աշխատանքում ուսումնասիրվել է արտաքին ցնցումների ազդեցությունը տնտեսական աճի և կայունության վրա զարգացող երկրներում¹⁶:

Օ. Պրոդիուսը և այլք մշակել են ազգային-տնտեսական անվտանգության ռազմավարական պլանավորման մոդելի կառուցվածքը, որը ներառում է մի քանի մակարդակներ, ինչպիսիք են հիմնական նպատակը, ազգային-տնտեսական անվտանգության ոլորտները, սպառնալիքները, հայեցակարգը, ռազմավարությունը, ծրագիրը, պլանը, գործողությունները¹⁷:

Ա. Կոզիցին և Մ. Դուդինսկայան ուսումնասիրել են արտաքին գործոնների ազդեցությունը տնտեսական անվտանգության վիճակի, մակարդակի և աճի վրա: Հեղինակները շեշտում են տնտեսական անվտանգության գործառնական բաղադրիչների (ֆինանսական, տեխ-

¹⁵ Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2005, էջ 111-115:

¹⁶ Rodríguez, G., Vassallo, R., & Castillo, P. (2023). Effects of external shocks on macroeconomic fluctuations in Pacific Alliance countries. *Economic Modelling*, 124, 106302.

¹⁷ Prodius O.I. Features of economic security of enterprises in developed countries. *Scientific Bulletin of the International Humanities University*. № 19. (2016). 79-82.

նյութիական, մտավոր, մարդկային, քաղաքական, իրավական և բնապահպանական) հետազոտման անհրաժեշտությունը¹⁸:

Վ. Գոլովկոյի ուսումնասիրության մեջ պարզաբանվել է «ազգային-տնտեսական անվտանգություն» հասկացության էությունը, հստակեցվել դրա հիմնական բաղադրիչները՝ ֆինանսական, սոցիալական, ժողովրդագրական, նորարարության, ներդրումների, սննդի, էներգետիկայի և տեխնոլոգիական¹⁹:

Ա. Զիգունովայի և այլոց կարծիքով տնտեսական անվտանգության ապահովման համար, առաջին հերթին, անհրաժեշտ է կատարել տնտեսության հիմնական ցուցանիշների ինդիկատիվ (կանխատեսելի) վերլուծություն, որը պետք է ուղեկցվի սոցիալ-տնտեսական միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ²⁰:

Համաձայն Մ. Սուբոտայի ուսումնասիրության՝ տնտեսավարող սուբյեկտների կայուն զարգացման սոցիալական և տնտեսական անվտանգության գնահատման տեխնիկան ներառում է ձեռնարկությունների կայուն զարգացման սոցիալական և տնտեսական անվտանգության գնահատման ամենահայտնի մոտեցումները, մասնավորապես՝ ռեսուրսային և գործառական, ինդիկատիվ, ներդրումային, ռազմավարական, սցենարային և ինտեգրված²¹:

Ա. Լաշիտևը, Մ. Ռոսը և Ե. Վերկերը ուսումնասիրել են տնտեսական դիվերսիֆիկացման (բազմազանեցման) և աճի միջև կապը ռեսուրսներից կախված տնտեսություններում: Նրանք պարզել են, որ երկրի տնտեսության դիվերսիֆիկացումը կարող է հանգեցնել ավելի

¹⁸ Kozitsyn, A.A. & Dudinskaya, M.V. (2015). Competitiveness and economic security-Priority problems of the region's metallurgical complex and its leaders in the conditions of instability. *Economy of Region*, 2015, vol. 3, Pp. 204-215, DOI: 10.17059/2015-3-17Li

¹⁹ Golovko V. Essential Characteristics of the Economic Security of the State and its Main Components. *World Science*. 11(51), Vol.3. (2019): 4-8. DOI: 10.31435/rsglobal_ws/30112019/6778

²⁰ Zigunova A., Shevkunov N., Logvinova I., Kislov I., and Shevchenko V. Ensuring economic security of the enterprise in anti-crisis conditions. (2020). DOI: 10.1051/e3sconf/202015704030

²¹ Subota M.V. Methodology for assessing the socio-economic security of sustainable development of economic entities. *Efficient economy*, № 12. (2019). DOI: 10.32702/2307-2105-2019.12.101

բարձր և ավելի կայուն աճի տեմպերի, ինչը ենթադրում է, որ ոչ ռեսուրսային ոլորտների խթանումը կարող է նպաստել ընդհանուր տնտեսական անվտանգությանը²²:

Չնայած նշված հետազոտություններում տեղ գտած արժեքավոր բացահայտումներին՝ գիտական գրականության մեջ մնում են որոշ բացեր ինչպես առանձին պետությունների, այնպես էլ խոշոր տարածաշրջանների, տնտեսական միությունների տնտեսական անվտանգության, դրա մակարդակի գնահատման, գործոնների օգտագործման և տնտեսության դիվերսիֆիկացման փոխադարձ կապի վերաբերյալ:

Տնտեսական անվտանգության գնահատում՝ բալային գնահատականների մեթոդի կիրառմամբ: Նախատեսվում է տնտեսական անվտանգության յուրաքանչյուր ցուցանիշին տալ 0-ից 1-ի միջակայքում գտնվող գնահատական՝ կախված այն հանգամանքից, թե համապատասխան ցուցանիշը որքանով է շեղվում սահմանված շեմային մեծությունից: Ասվածը պատկերավոր կերպով ներկայացնելու համար բերենք հետևյալ օրինակը: Ենթադրենք՝ ինֆլյացիայի (գնաճի) մակարդակի շեմային մեծությունը որոշված է տարեկան 5-6%-ի չափով: Դա նշանակում է, որ եթե տվյալ տնտեսությունում տվյալ տարում բավարարվում է այդ չափանիշը, ապա տվյալ ցուցանիշը կարելի է գնահատել 1 միավոր: Գնաճի մակարդակի բարձրացման հետ մեկտեղ, շեմային մեծությունից շեղումը կավելանա, համամասնորեն կնվազի նաև գնահատականը, որը կարող է հասնել մինչև 0-ի, եթե շեմային մեծությունից շեղումը 100 և ավելի տոկոս է: Սա, իր հերթին, նշանակում է, որ գնաճի մակարդակը հասել է անկառավարելի չափերի:

Որպես տնտեսական անվտանգությունը բնորոշող գլխավոր հատկանիշ՝ ընդունենք իրական և հավանական (պոտենցիալ) սպառնալիքների հարաբերական գնահատականը: Դա կներկայացնի տվյալ տնտեսությունը բնութագրող տնտեսական անվտանգության ցուցա-

²² Lashitew, A.A, Ross, M.L, & Werker, E. (2021). What Drives Successful Economic Diversification in Resource-Rich Countries? The World Bank Research Observer, 36, 2, 164–196. <https://doi.org/10.1093/wbro/lkaa001>

նիշների գնահատականների կշռված միջինը, որն էլ կընդունվի որպես գլխավոր հատկանիշ: Պարզ է, որ դա ևս կտատանվի 0-1 միջակայքում:

Ելնելով վերը նշված սկզբունքից՝ երկրները, տնտեսական անվտանգության տեսանկյունից, ըստ գլխավոր հատկանիշի, կարող ենք դասակարգել չորս խմբի. բացարձակ անվտանգ, երբ գլխավոր հատկանիշը հավասար է 1-ի, անվտանգ՝ 0.7-0.9, բավարար անվտանգ՝ 0.5-0.6 և վտանգավոր՝ 0-0.4:

Նկատենք, որ ուսումնասիրության համար ընտրված բոլոր ցուցանիշների շեմային մեծությունները սահմանել ենք՝ ելնելով միջազգային փորձից: Յուրաքանչյուր SU ցուցանիշի փաստացի մեծության շեղվածությունը շեմայինից որոշվում է հետևյալ կերպ. (տվյալ տարվա փաստացի ցուցանիշը / տվյալ ցուցանիշի շեմային մեծությունը) $\times 100 - 100$: Ընդ որում, եթե շեղվածության չափը մեծ է 100%-ից, ապա տվյալ ցուցանիշին տրվում է 0 միավոր: Շեղվածության չափը 0-ից 100%-ի միջև տատանվելու ժամանակ շեմային մեծությունից յուրաքանչյուր 10 տոկոս շեղվածության համար միավորը նվազեցվում է 0.1 բալով: Բալային գնահատականները միջինացնելու արդյունքում որոշվում է տնտեսական անվտանգության համաթիվը (կամ գլխավոր հատկանիշը) յուրաքանչյուր տարվա համար:

Տնտեսական անվտանգության գնահատում՝ մատրիցի կազմամբ: Այս դեպքում տնտեսական անվտանգության ցուցանիշները դասակարգվում են ըստ հետևյալ չորս չափանիշի՝ (1) ցուցանիշի միջոցով բնութագրվող վտանգի առաջացման հավանականություն, (2) դրա ազդեցության չափ, (3) տևողություն և (4) անցանկալի դրսևորումների փոփոխման արագություն:

Մատրիցի օգտագործումը բարձրացնում է տնտեսական անվտանգության ցուցանիշների գնահատման համակարգի և կառավարման արդյունավետությունը՝ օգնելով ավելի ճշգրիտ կերպով գնահատել տնտեսության վտանգավորության աստիճանն ըստ որոշակի ցուցանիշի: Որպես արդյունք՝ դա նպաստում է ռեսուրսների ար-

դյունավետ կառավարմանը՝ հնարավորություն ընձեռելով գնահատելու ոլորտը կարգավորող կառույցների աշխատանքը և կողմնորոշիչ դեր ունենալու զարգացման հետագա քաղաքականության մշակման հարցում: Այս մեթոդը, միաժամանակ, օգտակար է տնտեսական անվտանգության ցուցանիշների ամբողջական վերլուծության տեսանկյունից, քանի որ ապահովում է տարբեր ցուցանիշների միջև բազմակողմանի փոխադարձ կապի ուսումնասիրության հնարավորություն, այսինքն՝ որևէ ցուցանիշի փոփոխությունն ինչպես է տեղի ունեցել և ինչպես կազդի մյուս ցուցանիշների վրա:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների ազդեցության չափը գնահատելու համար վերլուծության արդյունքում ընդունվել են հետևյալ արժեքները. ազդեցությունը գնահատվում է փոքր, եթե միջին արժեք / սահմանային արժեք հարաբերությունը 0.66-ից 1-ի միջակայքում է, միջին՝ եթե 1-ից 3-ի միջակայքում է, և մեծ, եթե 3-ից ավելի է: Այս բաժանման հիմքում «սուրբ երրորդության» սկզբունքն է, ըստ որի՝ երևույթը բաժանվում է 3 մասի:

Թեև մատրիցի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ երկրի տնտեսական անվտանգության ապահովումը տեղի կունենա առավելագույն թվով ցուցանիշների առաջին վանդակում տեղ գտնելու դեպքում, ցուցանիշների շարժը դեպի նպատակակետը, հավանաբար, տեղի կունենա ոչ ամենակարճ ճանապարհով՝ 9 ... 5 ... 1 վանդակների հերթականությամբ: Ըստ էության, հնարավոր են ցուցանիշների բարելավման ուղիների բազմաթիվ տարբերակներ:

Մատրիցը կիրառելի է տնտեսական անվտանգության՝ մեր կողմից ընտրված բոլոր ցուցանիշների համար: Գործնականում դա թույլ է տալիս գնահատել յուրաքանչյուր ցուցանիշի փաստացի վիճակը, բնութագրել տարբեր ցուցանիշների միջև փոխադարձ կապը, ինչպես նաև նպաստում է դրանց ծրագրավորված և համակարգված ձևով բարելավմանը:

Մատրիցի միջոցով գնահատման կարգը հիմնվում է նախկինում տեղի ունեցած զարգացումների վերլուծության, ցուցանիշների փաս-

տացի մակարդակների ձեռքբերման վրա ազդող գործոնների ուսումնասիրության, գործող տնտեսական կառուցակարգերի և ձևավորված պայմանների համալիր դիտարկման վրա:

Որպես օրինակ՝ ներկայացնենք առաջին, հինգերորդ և իններորդ վանդակներում ներառվող ցուցանիշների հանդեպ ներկայացվող պահանջները:

Առաջին վանդակում ներառվող տնտեսական անվտանգության ցուցանիշները երկարաժամկետ հատվածում պետք է դրսևորեն որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռու՝ անվտանգ գոտում գտնվող մակարդակ, որը լիովին համապատասխանում է երկրի տնտեսական շահերին:

Հինգերորդ վանդակում պետք է ընդգրկվեն տեղի ունենալու հավանականությամբ և ազդեցության չափով միջին ցուցանիշները, որոնց վարքագիծը կայուն է և գտնվում է որոշված սահմանային արժեքի շուրջ:

Իններորդ վանդակում ներառված ցուցանիշները տնտեսական անվտանգության սպառնալիքներն են, որոնք երկարաժամկետ հատվածում շեղված են որոշված սահմանային արժեքներից: Այստեղ խաչվում են խոցելիության առավելագույն աստիճանը և սպառնալիքի իրականացման մեծ հավանականությունը, հետևաբար՝ տնտեսական շահերի իրացումը մեծապես վտանգված է:

Նշենք, որ գնաճի միջին մակարդակի համար, որտեղ շեմային մեծությունը կարող է տատանվել 6-10%-ի միջակայքում, մեր հաշվարկներում ընդունվել է ոչ ավելի, քան 6% շեմային մեծությունը, իսկ տնտեսական աճի շեմային մեծության համար, որը կարող է տատանվել 2-3% միջակայքում՝ ոչ պակաս, քան 2% սահմանագիծը:

Պարզաբանումներ տնտեսական անվտանգության ցուցանիշների շեմային մեծությունների վերաբերյալ: Ընտրված ցուցանիշների շեմային մեծությունները որոշվել են՝ հիմնվելով միջազգային

փորձի վրա: Դրանց մեծ մասը կիրառելի է բոլոր երկրների համար՝ անկախ դրանց զարգացման աստիճանից²³:

Տնտեսական անվտանգության բոլոր ցուցանիշները բաժանվում են երեք խմբի. համեմատվող, բացարձակ և համամասնական: Համեմատվող ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են՝ համեմատության մեջ դրվելով տարածաշրջանային հիմնական մրցակիցների նույն ցուցանիշների մեծությունների հետ: Այս մեթոդաբանությամբ՝ մենք ընտրել ենք միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշը, որը հաշվարկվել է որպես Հայաստանի Հանրապետության, հարավկովկասյան տարածաշրջանի հանրապետությունների և Եվրասիական տնտեսական միության երկրների համապատասխան տարիների անվանական աշխատավարձերի միջին ցուցանիշ՝ արտահայտված ԱՄՆ դոլարով: Վերլուծության նպատակով հաշվարկվել են համապատասխան ժամանակահատվածների միջին տարեկան արժեքները:

Բացարձակ ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են՝ ելնելով բնակչության կենսամակարդակի ապահովման նվազագույն պահանջներից, ուստի կարող են փոփոխվել ըստ տարիների և ժամանակահատվածների: Այս տրամաբանությամբ ընտրել ենք մեկ շնչի հաշվով ՀՆԱ շեմային մեծությունը (արտահայտված ԱՄՆ դոլարով), որը հաշվարկվել է ըստ աշխարհի բոլոր երկրների տվյալ ցուցանիշի միջին մեծության: Որոշակի ժամանակահատվածների համար (1995-2000 թթ., 2001-2006 թթ., 2007-2011 թթ., 2012-2016 թթ., 2017-2022 թթ.) որպես շեմային մեծություններ են ընդունվել համապատասխան մեդիանային արժեքները:

Տնտեսական անվտանգության հարաբերական (%-ային արտահայտությամբ) ցուցանիշների շեմային մեծությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ են ներկայացված Ա. Խ. Մարկոսյանի տնտեսական անվտանգության հիմնախնդիրներին նվիրված մենա-

²³ Տե՛ս Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, М., 1997, с. 68-71:

գրության մեջ²⁴:

Տնտեսական անվտանգության գնահատման առաջարկվող մեթոդաբանությունը (որն ըստ էության երկու, միմյանց փոխլրացնող մեթոդների համակցություն է), ի տարբերություն գնահատման մյուս համակարգերի կամ մոտեցումների, ունի հետևյալ առավելությունները.

- գնահատման համար անհրաժեշտ տվյալների բազան գործող վիճակագրական տվյալներն են, այսինքն՝ դրանք հիմնվում են ինչպես միջազգային, այնպես էլ հայրենական (մասնավորապես՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի) պաշտոնական վիճակագրության տվյալների վրա: Որոշակի ցուցանիշների հաշվարկման հիմքում նորից պաշտոնական վիճակագրական շտեմարաններն են,
- օգտագործվող վիճակագրական տվյալները հրապարակային են և առկա տեղեկատվական բաց աղբյուրներում, այդ թվում՝ էլեկտրոնային ռեսուրսներում: Այլ կերպ ասած, այդ տվյալները ոչ միայն մատչելի են և հրապարակային, այլև հուսալի ու վստահելի,
- դրական պետք է համարել նաև այն, որ թվային տվյալների բազաները կազմվել, իսկ տնտեսական անվտանգության աստիճանը գնահատվել է համակարգչային ծրագրի միջոցով կամ այդ հաշվարկները կարող են արտահայտվել օրինաչափության կամ բանաձևման օգնությամբ, ինչը զգալիորեն հեշտացնում և արագացնում է թվային բազաների հետ կատարվող հաշվարկային աշխատանքը,
- մեթոդաբանության մեջ օգտագործվող ցուցանիշների քանակը երկու տասնյակ է՝ ընդգրկելով հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական կողմերը և միտումները: Սակայն, կախված ուսումնասիրության նպատակից և առաջարկվող խնդիրներից, դա կարող է ոչ միայն ավելանալ, այլև

²⁴ Մարկոյան Ա.Խ., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք» ԳԿԸ, 2005, 250 էջ :

պակասել (այս դեպքում ընդգրկված ցուցանիշների քանակը պետք է բավարար լինի առաջարկված նպատակին լիարժեքորեն հասնելու համար): Այսինքն՝ մակրոտնտեսական, միկրոտնտեսական և մեզատնտեսական ցուցանիշների քանակը չի սահմանափակվում, որպեսզի ապահովվի գնահատման լիարժեքություն և ամբողջություն՝ սոցիալական և տնտեսական քաղաքականությունների մշակման համար,

- մեթոդաբանությունը ենթադրում է համեմատական (հարաբերական) ցուցանիշների լայն ցանկ, իսկ բացարձակ մեծություն ունեցող ցուցանիշները չափազանց սահմանափակ են (դրանք երկուսն են՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և ամսական աշխատավարձի չափը), ինչը գործնականում անսահմանափակ է դարձնում օգտագործվող մակրոտնտեսական ցուցանիշների ինչպես քանակը, այնպես էլ որակական բնութագիրը,
- օգտագործվող մեթոդաբանությունը միտված է մակրոտնտեսական տարեկան ցուցանիշների հաշվարկմանը, թեև կարող է կիրառվել նաև ժամանակային կտրվածքով (ամիս, եռամսյակ, կիսամյակ և այլն) ցուցանիշներ հաշվարկելիս, ինչը մեթոդաբանությունը դարձնում է էլ ավելի ճկուն,
- տնտեսական անվտանգության հաշվարկներում օգտագործվել են բացարձակ արժեքով ցուցանիշներ՝ ՀՆԱ-ն՝ մեկ շնչի հաշվով և միջին ամսական անվանական աշխատավարձը (երկուսն էլ արտահայտված ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)՝ համաշխարհային տնտեսության համապատասխան ցուցանիշների համեմատ, ինչը վկայում է այդ կարևոր ցուցանիշների՝ համաշխարհային ցուցանիշների հետ կապի մասին: Համեմատական (հարաբերական) ցուցանիշների շեմային մեծությունները վերցված են միջազգային փորձից և համապատասխան հրապարակումներից, կարևոր է ընդգծել, որ պայմանների պահպանման դեպքում վերը նշված մեթոդաբանությունը դառնում է ունիվերսալ (համընդհանուր), քանի որ թույլ է տալիս

գնահատել ոչ միայն տնտեսական անվտանգությունը, այլև ազգային անվտանգության ամբողջ համակարգը:

Քննարկենք նաև տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների գնահատականների՝ ինչպես միմյանց գումարելու հնարավորությունը, այնպես էլ գիտական հիմնավորվածությունը: Եթե միևնույն մակրոտնտեսական ցուցանիշի (օրինակ՝ տնտեսական հավելվածի կամ գնաճի) վերաբերյալ վիճակագրական շարքերի ձևավորումը և դրանց միջոցով տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը հարցեր չեն առաջացնում, ապա երբ միմյանց են գումարվում տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների գնահատականներն ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ ամբողջական պատկերացում ունենալու համար, այս հանգամանքը կարող է քննադատվել: Սակայն, քննադատությունը տեղին չէ, քանի որ տնտեսական անվտանգության չափման այդ «տարաբնույթ» ցուցանիշները, ինչպես ասում են մաթեմատիկոսները, բերված են ընդհանուր հայտարարի, ինչն էլ հիմնավորում է դրանց հետ կապված գործողությունները: Ըստ որում, մակրոտնտեսական ցուցանիշների համադրելիությունն ապահովվում է մի քանի մեթոդների կիրառմամբ: Նախ՝ օգտագործվող ցուցանիշներից միայն երկուսն են արտահայտված բացարձակ արժեքով, ինչը կարող է դժվարացնել դրանց հետ գործողությունները: Այդ հանգամանքը «չեզոքացվում» է՝ բացարձակ արժեքով ցուցանիշները դարձնելով հարաբերական, ինչն էլ հնարավոր է դարձնում դրանց համադրելիությունը: Առաջին քայլով մակրոտնտեսական փաստացի ցուցանիշները հարաբերվում են դրանց շեմային (սահմանային) մեծություններին և բազմապատկվում 100%-ով, որի արդյունքում ստանում ենք տոկոսային արտահայտություն, որն էլ հետագայում օգտագործվում է հաշվարկների համար: Երկրորդ՝ ստացված հարաբերական ցուցանիշներին տրվում են բալային գնահատականներ (տնտեսական անվտանգության բալային գնահատականների մեթոդի կիրառման դեպքում)՝ այդպիսով ապահովելով ցուցանիշների լիարժեք համադրելիությունը և չափողականությունը: Բացի այդ, նկատենք

նաև, որ եթե որևէ տարվա համար ցանկանում ենք ունենալ տնտեսական անվտանգության մակարդակի ամբողջ պատկերը, արտահայտված բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների համակցությամբ, ապա գնահատականները պետք է գումարել: Կարևոր է ընդգծել, որ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման համար ընտրված մակրոտնտեսական ցուցանիշների միայն 10%-ն է, որ ունի բացարձակ արժեք, մյուսները հարաբերական (%-ով արտահայտված) ցուցանիշներ են, որոնք ավելի հավաստի են դարձնում կիրառվող մեթոդաբանությունը:

Տնտեսական անվտանգության մակարդակի հաշվարկման երկրորդ՝ մատրիցների կազմման մեթոդի դեպքում հաշվարկման՝ վերը նշված դժվարությունները կամ մեթոդաբանական խնդիրները բացակայում են:

Ասվածն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով բերենք հետևյալ օրինակները: Ենթադրենք՝ զամբյուղում կա 5 խնձոր, 6 տանձ և 9 սալոր: Որպեսզի ամբողջական պատկեր ունենանք զամբյուղի պարունակության մասին, պետք է ներմուծենք «միրգ» հասկացությունը, իսկ այն հարցին, թե քանի միրգ կա զամբյուղում, պատասխանն ակնհայտ է՝ 20: Նման հաշվարկ կատարում ենք՝ միմյանց գումարելով մրգերի տարբեր տեսակների քանակները: Կամ երբ հաշվարկում ենք որևէ երկրի ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրաշրջանառության ծավալը (մեծությունը), ապա դա արտահայտվում է տնտեսագիտական տարբեր բովանդակությամբ երկու ցուցանիշի՝ արտահանման և ներմուծման հանրագումարով: Արտահանումը և ներմուծումը միմյանց հետ կապված են զուտ արտահանման ցուցանիշի մեծությամբ, և երբ դա դրական է, երկրի ՀՆԱ-ն ավելանում է, իսկ բացասականի դեպքում՝ նվազում: Ավելին, ֆիզիկական և բնաիրային տեսքով դրանք չափազանց տարբեր են, սակայն դրանց մեծությունները չափվում են կա՛մ դրամով, կա՛մ մեկ այլ արժույթով (օրինակ՝ ԱՄՆ դոլարով), ինչն էլ հնարավորություն է տալիս հաշվարկելու ամբողջական ցուցանիշը: Այս դեպքում ևս ոչ մեկը չի կասկածում նման գործո-

ղության ճշտությանը: Նույնը վերաբերում է պետական պարտքի ցուցանիշի մեծությանը, որը ձևավորվում է ներքին և արտաքին պարտքերի գումարից: Դրանցից յուրաքանչյուրն ունի ոչ միայն ստացման տարբեր ընթացակարգ, այլև բովանդակություն: Սակայն, երբ հաշվարկվում է երկրի պետական պարտքը, դրանք գումարվում են, քանի որ գնահատվում են միասնական արժեքային միավորով (դրամ կամ մեկ այլ արժույթ): Երկրորդ օրինակը: Խոսքը ՀՆԱ հաշվարկման մասին է: Ինչպես հայտնի է, ՀՆԱ ոլորտային կառուցվածքը ձևավորվում է ամենատարբեր մեծություններից, որոնք են գյուղատնտեսությունը, ձկնաբուծությունը, արդյունաբերությունը, շինարարությունը, առևտուրը և ծառայությունները: Թեև դրանց հաշվարկման մեթոդները և բովանդակությունը տարբեր են, սակայն երկրի ՀՆԱ մեծության հաշվարկման նպատակով այդ մեծությունները գումարվում են միմյանց, քանի որ գնահատվում են արժեքային արտահայտությամբ (դրամով կամ այլ արժույթով):

Բերենք մեկ այլ օրինակ: Վիճակագրական կոմիտեի հրապարակումներում «Բնակչությունն ըստ սեռի և տարիքի» (որևէ թվականի հունվարի 1-ի դրությամբ, տոկոսներով ընդամենի նկատմամբ) ներկայացվում է ըստ տղամարդկանց և կանանց: Ըստ որում, նշված ցուցանիշը տրվում է 17 տարիքային խմբերի համար՝ սկսած «0-4» տարիքային խմբից մինչև «80+»: Քննարկենք վերը նշված ցուցանիշը 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ²⁵: Այսպես՝ «Տղամարդիկ» հատվածում կարդում ենք, որ «0-4» տարեկան տղամարդիկ կազմել են այդ «խմբի» 6,8%-ը, «5-9» տարեկանները՝ 7,9%-ը և այլն: Առաջին հայացքից պարզ է, որ «0-4» տարեկան տղա երեխաները դեռևս չեն հասցրել «տղամարդ» դառնալ՝ այդ բառի ամենախիսկական իմաստով (ֆիզիկական առումով), և երկրորդ՝ չէ՞ որ դժվար է պատկերացնել, թե, օրինակ, ինչպես կարելի է մեկ օրական տղային գումարել, օրինակ, 75 տարեկան պապիկին: Սակայն, ինչպես տեսնում ենք, դա արվում է: Նույնը

²⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, ՀՀ ՎԿ, էջ 65:

վերաբերում է «կանայք» հատվածին և ժողովրդագրական ծառին: Ավելին, ողջ բնակչության պատկերը ստանալու համար «տղամարդկանց» գումարում ենք «կանանց», թեև դժվար է պատկերացնել տարբեր սեռերի «գումարումը»: Սակայն, օգտագործելով «բնակչություն» հասկացությունը, հնարավոր է դառնում ոչ միայն ամենատարբեր տարիք ունեցող մարդկանց, այլև տարբեր սեռերի «գումարումը», որն արդեն դարձել է սովորական գործողություն և կասկած չի հարուցում:

Ներկայացնենք մեկ այլ դասագրքային օրինակ: Խոսքը մասնագետների շրջանում լայն ճանաչում վայելող, բազմաթիվ անգամներ վերահրատարակված և աշխարհի շատ երկրների տնտեսագիտական ուսումնական կազմակերպություններում առաջարկվող դասագրքում²⁶ բերված հանրահայտ օրինակի մասին է: Այդ դասագրքի են թաքաժիններից մեկը, որը վերաբերում է ՀԱԱ-ին, վերնագրված է «Դրամական չափումը»: ՀԱԱ-ն այստեղ չափվում է ըստ տարեկան արտադրության շուկայական արժեքի, որը դրամական ցուցանիշ է: Իրականում դա պետք է լինի այդպիսին, եթե անհրաժեշտ է համեմատել տարաբնույթ ապրանքների և ծառայությունների կազմը, որ թողարկվել է տարբեր տարիների: Հեղինակները ներկայացնում են պարզունակ օրինակ, որտեղ տնտեսությունում արտադրվում են միայն խնձոր և նարինջ: Ընդ որում, առաջին տարում արտադրվել է 3 նարինջ և 2 խնձոր, իսկ երկրորդ տարում՝ 2 նարինջ և 3 խնձոր: Հարցադրումը հետևյալն է. ո՞ր տարում է արտադրության ծավալն ավելի մեծ եղել: Այս հարցին անհնար է պատասխանել այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկու ապրանքը չպիտակավորի՝ ամրագրելով հասարակության կողմից այդ ապրանքների հարաբերական արժեքը (զինը): Խնդրի լուծումը ներկայացված է աղյուսակ 1.1-ում:

²⁶ Кэмпбелл Р. Макконнелл, Стенли Л.Брю «Экономикс: принципы, проблемы и политика», том 1, М., Изд.-во «Республика», 1992, с. 133.

**Արտադրության ծավալների համեմատությունը՝ գների կիրառմամբ
(դրամական արտահայտությամբ, հիպոթետիկ տվյալներով)**

Տարի	Արտադրության տարեկան ծավալը	Շուկայական արժեքը
1	3 նարինջ և 2 խնձոր	$3 \times 20 \text{ ցենտ} + 2 \times 30 \text{ ցենտ} = 1,20 \text{ դոլար}$
2	2 նարինջ և 3 խնձոր	$2 \times 20 \text{ ցենտ} + 3 \times 30 \text{ ցենտ} = 1,30 \text{ դոլար}$

Ենթադրենք՝ նարնջի գինը 20 ցենտ է, իսկ խնձորինը՝ 30: Կարելի է կարծել, որ երկրորդ տարվա արտադրության ծավալը գերազանցել է առաջին տարվա արտադրության ծավալը: Ինչո՞ւ: Քանի որ հասարակությունը երկրորդ տարում արտադրված ապրանքներն ավելի բարձր է գնահատել, ուստի և պատրաստ է երկրորդ տարվա ընթացքում արտադրված ապրանքների համար վճարելու ավելին, քան այն ապրանքների համար, որոնք արտադրվել են առաջին տարում:

Ասվածից հետևում է, որ տարբեր բովանդակությամբ երևույթների և կատեգորիաների ամբողջացման համար անհրաժեշտ է ունենալ համադրելիություն ապահովող գործիքակազմ, որն էլ հնարավորություն կտա ապահովելու դրանց միջև ամբողջական չափելիությունը:

Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ

1. *Տնտեսական անվտանգության հասկացությունը և էությունը:*
2. *Տնտեսական անվտանգության հայեցակարգային հիմնադրույթները:*
3. *Ազգային անվտանգության հասկացությունը և կառուցվածքը:*
4. *Ազգային անվտանգության ժամանակակից հիմնախնդիրները:*
5. *Տնտեսական անվտանգության ժամանակակից հիմնախնդիրները:*
6. *Տնտեսական անվտանգության՝ գոյություն ունեցող սահմանումները:*
7. *Տնտեսության նկատմամբ պետության միջամտության նպատակները և միջոցները:*
8. *Պետության տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները:*
9. *Անցումային տնտեսությամբ երկրների տնտեսական անվտանգության առանձնահատկությունները:*

10. *Տնտեսական անվտանգության երեք հիմնական տարրերը:*
11. *Տնտեսական անվտանգության ոլորտում պետության կողմից վարվող ռազմավարությունը:*
12. *Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման 2021-2026 թթ. ծրագիրը և ազգային անվտանգությունը:*
13. *Տնտեսական անվտանգության գնահատման էությունն ու բովանդակությունը:*
14. *Տնտեսական անվտանգության գնահատման նպատակն ու հիմնախնդիրները:*
15. *Տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների համակարգը:*
16. *Տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների շեմային մեծությունները և դրանց բնութագրերը:*
17. *Տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների հիմնական խմբերն ու բնութագրերը:*
18. *Տնտեսական անվտանգության շեմային մեծությունների ընտրության սկզբունքները:*
19. *Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը:*
20. *Տնտեսական անվտանգության բալային գնահատականների մեթոդի էությունը և հաշվարկման կարգը:*
21. *Տնտեսական անվտանգության գնահատումը՝ մատրիցի կազմմամբ:*
22. *«Վտանգ» տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները:*
23. *Տնտեսական անվտանգության գնահատման մեթոդաբանության կազմման մոտեցումները և սկզբունքները:*
24. *Քննարկե՛ք տնտեսական անվտանգության հայեցակարգային հիմնադրույթները:*
25. *Քննարկե՛ք տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների համակարգը, կազմը և ձևավորման սկզբունքները:*
26. *Ներկայացրե՛ք տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը (ըստ բալային գնահատականների մեթոդի):*
27. *Ներկայացրե՛ք տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը (ըստ մատրիցի կազմման մեթոդի):*

Առաջարկվող գրականություն

1. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ., Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2005, 250 էջ:
2. Մարկոսյան Ա., Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, 460 էջ:
3. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը, Եր., «Անտարես» հրատ., 2020, 628 էջ:
4. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. պետության և շուկայի նոր մարտահրավերները, Եր., «Անտարես» հրատ., 2019, 556 էջ:
5. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման արդյունքները, «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 8-9 հոկտեմբերի, 2019, էջ 71-85:
6. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 3, 2004:
7. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության բարելավման ուղիները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 4 (6), 2004:
8. Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Բնակչության եկամուտների բաշխման անհավասարությունը տնտեսական անվտանգության համակարգում, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 1 (7), 2005:
9. Մարկոսյան Ա., Գալստյան Հ., Մտավոր սեփականություն. կառավարման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Զանգակ-97», 2004:
10. Աղայան Ա., Ազգային զարգացման ռազմավարության գաղափարախոսությունը), «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:

11. Շահգելոյան Մ., Ազգային անվտանգության հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
12. Սաֆարյան Ա., Ազգային անվտանգություն, հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
13. Խաչիկյան Գ., «Տնտեսական անվտանգության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2001:
14. Հովհաննիսյան Ա., «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման համակարգը և ապահովման ուղիները», տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002:
15. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, 480 էջ:
16. Պոպեր Կ., Բաց հասարակությունն ու դրա թշնամիները. Հեգելն ու Մարքսը. հատոր 2 (թարգմ.՝ Մ. Հարությունյանի): Եր., «Գրական հայրենիք» (Հայաստան), 2006, էջ 186-187:
17. Rodríguez, G., Vassallo, R., & Castillo, P. (2023). Effects of external shocks on macroeconomic fluctuations in Pacific Alliance countries. *Economic Modelling*, 124, 106302.
18. Prodius O.I. Features of economic security of enterprises in developed countries. *Scientific Bulletin of the International Humanities University*. № 19. (2016). 79-82.
19. Kozitsyn, A.A. & Dudinskaya, M.V. (2015). Competitiveness and economic security-Priority problems of theregion's metallurgical complexes and its leaders in the conditions of instability. *Economy of Region*, 2015. Vol. 3, Pp. 204-215, DOI: 10.17059/2015-3-17Li
20. Golovko V. Essential Characteristics of the Economic Security of the State and its Main Components. *World Science*. 11(51). Vol. 3. (2019): 4-8. DOI: 10.31435/rsglobal_ws/30112019/6778

21. Zigunova A., Shevkunov N., Logvinova I., Kislov I., and Shevchenko V., Ensuring economic security of the enterprise in anti-crisis conditions. (2020). DOI: 10.1051/e3sconf/202015704030
22. Subota M.V. Methodology for assessing the socio-economic security of sustainable development of economic entities. Efficient economy, № 12. (2019). DOI: 10.32702/2307-2105-2019.12.101
23. Lashitew, A.A, Ross, M.L, & Werker, E. (2021). What Drives Successful Economic Diversification in Resource-Rich Countries? The World Bank Research Observer, 36, 2, 164–196. <https://doi.org/10.1093/wbro/lkaa001>
24. Абалкин Л., Экономическая безопасность России: угрозы и их отражение, «Вопросы экономики». N 12, 1994, с. 4-13.
25. Бухвальд Е., Головацкая Н., Лазуренко С., Макроаспекты экономической безопасности: факторы, критерии и показатели, «Вопросы экономики», N 12, 1994.
26. Глазьев С.Ю., Основа обеспечения экономической безопасности России альтернативный реформационный курс, “Российский экономический журнал”, N1, N2, 1997.
27. Кэмпбелл Р. Макконнелл, Стенли Л.Брю, Экономикс: принципы, проблемы и политика, том 1, М., Изд.-во «Республика», 1992, 399 с.
28. Основы экономической безопасности, под ред. Е.А.Олейникова, М., 1997г.

ԳԼՈՒԽ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Հայաստանի Հանրապետության տնտեսական
անվտանգության հիմնախնդիրները

Համաշխարհային տնտեսության գլոբալացումը և տնտեսական ինտեգրումը նոր մարտահրավերներ են առաջադրում հատկապես զարգացող և նախկին համայնավարական երկրներին՝ դիմակայելու տնտեսապես գերիզոր պետությունների կցորդ դառնալու և «կուլ չգնալու» վտանգին: Նման պայմաններում ազգային անվտանգության ապահովման խնդիրը մեծապես կախված է երկրի տնտեսության զարգացածության աստիճանից և, հատկապես, տնտեսական աճի տեմպից ու դրա որակից:

Խորհրդային կայսրության կազմալուծումից հետո նորանկախ պետությունները պետք է ինքնուրույնաբար լուծեին տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, ինչը շուկայի անցման և տնտեսության լայնածավալ կառուցվածքային վերափոխումների ժամանակահատվածում մղվեց երկրորդ պլան: Այս իմաստով, Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովման խնդիրը դեռևս կարիք ունի գիտական հիմնավորման, որը պետք է դառնա հետազոտողների ու մասնագետների ուսումնասիրության առարկան: Ըստ որում, տվյալ խնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները պետք է պարունակեն տարածաշրջանային, գիտատեխնիկական, սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ տեսանկյուններ:

Որո՞նք են ՀՀ տնտեսական անվտանգության ռազմավարության հիմնադրույթները, ի՞նչ ուղղություններ և կառուցակարգեր են մշակվել ու ներդրվել երկրի տնտեսական անվտանգությունն ապահովելու

համար, և, իհարկե, ինչպե՞ս ենք հաշվի առնելու երկրի տնտեսական շահերն աշխարհագրական տարածաշրջանում, ինչպես նաև տնտեսական համագործակցությունների շրջանակում: Այս հարցերին է նվիրված ներկայացվող նյութը:

Զարգացման արդի փուլում գլոբալացման գործընթացը յուրաքանչյուր երկրի առջև կարող է ոչ միայն նոր հնարավորություններ և հեռանկարներ է բացել, այլև առաջացնել նոր վտանգներ, ռիսկեր և ցնցումներ: Միջազգային իրադարձությունների արմատական, հաճախ՝ անկանխատեսելի, քառսային բնույթը և կանխատեսման ու հետագա կառավարման կառուցակարգերի անբավարարությունը (հատկապես 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո) հանգեցրին նրան, որ տնտեսական անվտանգության հիմնախնդիրը միջազգային հասարակական մտքի և քաղաքականության մեջ մղվեց առաջնային դիրք:

1990-ական թվականներին հետամբողջատիրական երկրներում անցումը դեպի շուկայական տնտեսություն ուղեկցվեց բնականոն զարգացումը խաթարող ճգնաժամերով: Նշված երևույթները դրսևորվեցին հատկապես տնտեսական հարաբերությունների ոլորտում՝ այստեղից բխող լուրջ, երբեմն անդառնալի սոցիալական հետևանքներով: Ստեղծված իրավիճակում հայտնված երկրները, որոնք միջազգային հանրությունը որակեց որպես անցումային, դեռևս բարդ և դժվարին զարգացման պայմաններում են, ուստի և դրանց մի մասում չի բացառվում համակարգային ճգնաժամի և սպառնալիքի առկայությունը:

Այդպիսի իրավիճակում է Հայաստանի Հանրապետությունը, որտեղ նախորդ դարի վերջին տասնամյակի ամենախոշոր համակարգային վերափոխումներն ընդգրկեցին հասարակական կյանքի բոլոր կողմերը՝ տնտեսություն, քաղաքականություն և գաղափարախոսություն: Սոցիալ-տնտեսական բնագավառում ընթացող արմատական գործընթացներն առաջին պլան մղեցին տնտեսական անվտանգության հիմնախնդիրը, որի սրությունը պայմանավորված է մի խումբ

պատճառներով, հատկապես՝ գործարարության տարբեր կազմակերպական կառույցների ձևավորմանն ուղեկցող և սեփականության բազմաձևության վրա ազդող բացասական գործոնների ազդեցությամբ (տնտեսության մենաշնորհացման բարձր աստիճանը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցածր մակարդակը, գործազրկության և աղքատության բարձր աստիճանը, ներդրումների փոքր ծավալները, տնտեսության ցածր մրցունակությունը և այլն), շուկայական ենթակառուցվածքների թույլ զարգացածությամբ, պետության կողմից շուկայական տնտեսության կարգավորման փորձի, նոր պայմաններում տնտեսությունը կառավարելու գիտելիքի պակասով և այլն:

Հայաստանի անկախության հռչակումից հետո անցած տարիների ընթացքում դեռևս անբավարար ուշադրություն է դարձվում հատկապես տնտեսական անվտանգության հիմնախնդիրներին ու դրանց լուծման ուղիներին, և երկար ժամանակ ոչ միայն չի ստեղծվել տնտեսական անվտանգության համակարգ, այլև չեն մշակվել տնտեսական անվտանգության հայեցակարգն ու հիմնադրույթները, չի ներդրվել այդ երևույթի գնահատման մեթոդաբանությունը:

Տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարության մշակումը Հայաստանի համար կարևորվում է նաև այն պատճառով, որ միջազգային տնտեսական հարաբերություններում մեր երկիրը զերծ չէ տարբեր տեսակի ճնշումներից և զգում է իր խոցելիությունը կանխամտածված գործողություններից, որոնք սահմանափակում են սեփական տնտեսական ինքնուրույնությունն ու ինքնիշխանությունը:

Վերը շարադրվածի տեսանկյունից, հրատապ են դարձել տնտեսական անվտանգության հասկացության, հայեցակարգային հիմնադրույթների քննարկումը, տնտեսական անվտանգության բնութագրումն ազգային անվտանգության համակարգում, համապատասխան ցուցանիշների համակարգի մշակումը, ինչպես նաև տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումն ու մշտադիտարկումը: Կարևորագույն խնդիրներից են Հայաստանի Հանրապետության և հարավկովկասյան տարածաշրջանի մյուս երկրների տնտե-

սական անվտանգության մակարդակի գնահատումը, համեմատական վերլուծությունն ու սպառնալիքների հայտնաբերումը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2013 թ.-ի հունվարի 1-ին Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), կարևոր են դառնում այդ տնտեսական միության և նրա կազմի մեջ մտնող անդամ երկրների տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշների դիտարկումն ու գնահատման մակարդակի քննարկումը:

Այս հիմնախնդիրը տնտեսական անվտանգության հիմնահարցերով զբաղվող և այդ ոլորտում բազմաթիվ հրապարակումների հեղինակ, ՌԴ ակադեմիկոս Ս. Յու. Գլազևի ուշադրության կենտրոնում է: Նա, մասնավորապես, նշում է. «ԵԱՏՄ մրցակցային ներուժը կարող է սահմանվել որպես նրա կարողություն՝ պահպանելու և զարգացնելու իր վերարտադրողական բազան՝ այլ երկրներից և տարածաշրջանային ընկերակցություններից առաջ, ինչը կենսունակության, ինքնության և անկախության հիմքն է: Առաջադեմ և հաջողությամբ զարգացող երկրների տնտեսական ռազմավարություններում մրցակցային ներուժի մեծացման խնդիրն առանցքային է: Ազգային տնտեսությունների զարգացման ռազմավարությունները, իրենց հերթին, ԵԱՏՄ մրցակցային ներուժի իրացման և ընդլայնման հիմնական գործոնն են: Դրանք զարգացնելու համար կարևոր է մակրոմակարդակում ճիշտ որոշել երկրների մրցակցային առավելությունների բնույթը և մշակել դրանց իրացման կառուցակարգեր, որոնք պահանջում են ժամանակակից տնտեսության զարգացման օրինաչափությունների ըմբռնում, որի ընթացքում փոխվում է տեխնոլոգիական բազան և դրա հետ միասին՝ տնտեսության մրցակցային ներուժը:

Միաժամանակ, չափազանց կարևոր է առաջադրել Եվրասիական տնտեսական ինտեգրման մրցակցային ներուժի իրացման խնդիրներ՝ հիմնվելով միությունների կառուցման սահմանափակումների վերլուծության վրա: Առանձնացնենք երեք, մեր կարծիքով, կարևորագույն ոլորտներ, որտեղ խնդիրների լուծումը թույլ կտա առաջընթաց գրան-

ցել ԵԱՏՄ տնտեսական անվտանգության ապահովման գործում:

Տեխնոլոգիական ոլորտ. Եվրասիական տնտեսական միությունում, հարակից ոլորտների արդիականացմանը զուգահեռ, հրատապ խնդիր է զարգացնել արտադրական և տեխնոլոգիական առաջադեմ համակարգերը՝ դրանց աճին օժանդակելով բոլոր հնարավոր միջոցներով: Այդ նպատակի համար անհրաժեշտ է օգտագործել միության անդամ պետությունների գիտական, տեխնիկական և արտադրական ներուժը՝ մեկ մաքսային տարածքում մրցունակ ձեռնարկություններ ստեղծելով և բեկումնային տեխնոլոգիաները լայնորեն ներդնելով: Այս ամենը, իր հերթին, ենթադրում է հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքներն արտադրության մեջ ինտեգրելու, կադրերի պատրաստման (առաջադեմ վերապատրաստման) ենթակառուցվածք ստեղծելու, միասնական աշխատաշուկայի շրջանակում տեղեկատվական փոխգործակցություն հաստատելու, ինչպես նաև պաշտպանվածության ապահովման անհրաժեշտություն:

Ինստիտուցիոնալ ոլորտ. այստեղ առաջնահերթությունը տնտեսական կառուցակարգի ձևավորումն է, որը թույլ կտա ռեսուրսները վերաբաշխել անհեռանկար ճյուղերից դեպի արտադրական և տեխնոլոգիական նոր, մեծ ներուժով ոլորտներ: Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է սերտ փոխգործակցություն ձևավորել միության անդամ պետությունների միջև՝ արդյունաբերական քաղաքականությունը համակարգելու համար, ինչպես նաև ձեռնարկել մի շարք միջոցառումներ՝ անվճարունակ ձեռնարկությունների վերակազմավորման և առևտրային ու ֆինանսական քաղաքականության նպատակների սահմանման համար:

Մակրոտնտեսական ոլորտ. արտադրության ավելացման և արտադրության և ներդրումների ոլորտներում առկա լճացումը հաղթահարելու խնդիրը պահանջում է մակրոտնտեսական բարենպաստ պայմանների ստեղծում միության արդյունաբերողների և ձեռնարկատերերի համար: Այսօր տնտեսական միջավայրի տարասեռությունը և միության «բարեկեցության» կախվածությունը ԵԱՏՄ խոշորագույն

տնտեսության մակրոտնտեսական երևույթներից կանխորոշում են բազմաթիվ անհավասարակշռություններ՝ հրահրելով միության ապամիասնացումը:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տնտեսության մրցակցային ներուժը (ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային) իրացնելու համար պետությանն անհրաժեշտ է հզոր նախաձեռնող ազդակ՝ բարձրացնելու ներդրումային և նորարարական ակտիվության մակարդակն ու ապահովելու հիմնական կապիտալում ներդրումների պահանջվող ծավալը: «Տնտեսական հրաշքի» հասած երկրների փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ներդրումների արագացված աճ՝ ՀՆԱ 35-45%-ի չափով»²⁷:

2.2. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը և զարգացման գերակայությունները

*Որքան հասարակությունը շեղվի
ճշմարտությունից, այնքան ավելի արելու
է նրանց, ովքեր խոսում են այդ մասին:
Ջորջ Օրուել (1903-1950)*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «տնտեսական անվտանգություն» հասկացություն, որպես այդպիսին, չի առանձնացվում, և առավել հաճախ խոսվում է ազգային անվտանգության մասին: Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնցով սահմանվում են անվտանգության ոլորտի պետական կառավարման մարմինները, լիազոր մարմինների տեղն ու դերն ազգային անվտանգության ապահովման համակարգում:

²⁷ Глазьев С.Ю. Экономическая безопасность как синоним конкурентоспособности Евразийского союза. Евразийская интеграция: экономика, право, политика. 2018; (4):10-1

«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված օրենքով²⁸ սահմանվում են ՀՀ ազգային անվտանգության հասկացությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների տեղն ու դերը ազգային անվտանգության ապահովման համապատասխան համակարգում, դրանց գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, ուղղությունները, լիազորությունները, ուժերն ու միջոցները, աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության ապահովման, ինչպես նաև նրանց գործունեության նկատմամբ վերահսկողության կարգը: Նշված օրենքում տնտեսական անվտանգության հասկացությունը բնորոշված չէ, իսկ տնտեսական անվտանգության ապահովման գործառույթների վերաբերյալ ամրագրված է նույն օրենքի 15-րդ հոդվածում («Ազգային անվտանգության մարմինների լիազորությունները, պատվիրակված գործառույթների իրականացումը»), որը վերաշարադրվել է ըստ 2018 թ.-ի մարտի 23-ին ընդունված փոփոխությունների:²⁹ Ազգային անվտանգության մարմինների մյուս լիազորությունների շարքում սահմանվում է, որ դրանք. «25) հետախուզական տեղեկություններ են հավաքում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման, նրա տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման, պետության անվտանգության ամրապնդման նպատակով», ինչպես նաև «51) ապահովում են Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը և իրենց իրավասության սահմաններում պայքարում են տնտեսական հանցագործությունների դեմ»:

²⁸ Տե՛ս «Ազգային անվտանգության մարմինների մասին», ՀՀ օրենքը: Ընդունել է ՀՀ Ազգային ժողովը 2001 թ.-ի դեկտեմբերի 28-ին, ՀՕ-294, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի www.arlis.am պաշտոնական կայքէջ:

²⁹ Տե՛ս «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը: Ընդունել է ՀՀ Ազգային ժողովը 2018 թ.-ի մարտի 23-ին, ՀՕ-268-Ն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի www.arlis.am պաշտոնական կայքէջ:

Ինչ վերաբերում է տնտեսական անվտանգության ապահովման գործիքակազմին, ապա դրան հատուկ անդրադարձ չի կատարվում:

Նշված օրենքը, ըստ էության, պարտավորեցնում է ազգային անվտանգության մարմիններին իրենց իրավասության սահմաններում ապահովել տնտեսության և ֆինանսների անվտանգությունը: Միաժամանակ, օրենքում բացակայում են մեթոդական հիմնադրույթները կամ ուսումնասիրության մեթոդաբանության վերաբերյալ հանձնարարականները, ինչը թույլ է տալիս եզրակացնել օրենքի իրավապահպան մոտեցման մասին:

2.2.1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված են անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը» հավանության է արժանացել ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում և հաստատվել ՀՀ նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի N ՆՀ-37-Ն հրամանագրով: Ըստ հրամանագրի. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների հա-

մակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը ենթակա է ճշգրտումների՝ ըստ ներպետական և միջազգային իրադրության, սպառնալիքների ու մարտահրավերների փոփոխման, ինչպես նաև ըստ սույն փաստաթղթում նշված նպատակների իրականացման³⁰»:

Նշենք նաև, որ վերը նշված փաստաթղթում նույնպես չի սահմանվում և չի օգտագործվում «տնտեսական անվտանգություն» արտահայտությունը, ինչը, մեր կարծիքով, լուրջ բացթողում է: Սակայն, հարկ է նշել, որ. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, նրա դեմ ուղղված սպառնալիքները» բաժնում նշված է նաև. «Հայաստանի Հանրապետությունը ձգտում է կայուն զարգացման միջոցով բնակչության համար ապահովել կյանքի բարձր որակ»: Փաստաթղթի նույն բաժնում ամրագրված են.

«Բարեկեցության ոլորտում.

- ✓ աղքատության հաղթահարումը,
- ✓ խոցելի խմբերի պաշտպանվածությունն ապահովող սոցիալական քաղաքականության իրագործումը,
- ✓ արդյունավետ և մրցունակ գիտակրթական քաղաքականության մշակումն ու կենսագործումը՝ հատկապես նորարարական զարգացման ուղղությամբ,
- ✓ առողջապահության համընդգրկուն ու արդյունավետ համակարգի զարգացումը միջազգային բարձրագույն չափանիշներին համապատասխան,
- ✓ անհատի և հասարակության հոգևոր-մշակութային զարգացման պայմանների ապահովումը»:

³⁰ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի N ՆՀ-37-Ն հրամանագիրը // <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>

Արտաքին սպառնալիքների բաժնի «Հասարակության բևեռացումը» ենթաբաժնում նշված է. «Սոցիալական արդարության պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, աղքատության մակարդակը, մասնագիտական կրթության, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության մակարդակը, հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը անցման շրջանի ավանդական մարտահրավերներ են: Թեև Հայաստանի Հանրապետությունը կայուն առաջընթաց է գրանցում այս ուղղություններով, այնուամենայնիվ այդ ոլորտները շարունակում են մնալ բարձր ռիսկայնության դաշտում»:

Ռազմավարության «Շուկայական տնտեսության կայացման և ֆինանսաբյուջետային կառավարման մարտահրավերները» ենթաբաժնում կարևորվել է. «Արդար մրցակցային միջավայրի ձևավորման և բնական մենաշնորհների կառավարման ոչ բավարար մակարդակը, ստվերային տնտեսության և կանխիկ դրամաշրջանառության մեծ ծավալները պոտենցիալ սպառնալիք են երկրի համար: Հայաստանի Հանրապետությունը ձգտում է պահպանել տնտեսական զարգացման բարձր ցուցանիշները՝ ապահովելով անհրաժեշտ պայմաններ ազատական առևտրի, փոքր և միջին գործարարության զարգացման, ներդրումներ ներգրավելու և դրանք պաշտպանելու համար»³¹:

«Հ ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշված է գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակի մասին, այն դեպքում, երբ կրթությունն ավանդաբար մեծ դեր ունի Հայաստանում: Գիտակրթական համակարգի կառավարման անարդյունավետությունը, միջազգային ներգրավվածության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը սպառնալիքներ են ազգային անվտանգության համար:

³¹ Նույն տեղում:

«Ժողովրդագրական բացասական միտումները» մասում Հայաստանի Հանրապետությունը որպես իր ազգային անվտանգության սպառնալիքներ է դիտարկում ցածր ծնելիությունը, հիվանդացության և մահացության դեռևս ոչ ցածր և կյանքի միջին տևողության ու որակի ոչ բավարար ցուցանիշները, չկառավարվող և անօրինական արտագաղթը, հատկապես կրթական, գիտական ու մշակութային ներուժի արտահոսքը:

Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, տնտեսական աճի պահպանմանն ուղղված քայլերի ձեռնարկում: Դրա անհրաժեշտության գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել համապարփակ բարեփոխումների իրագործմանը:

Բազմավարության «Ազատական տնտեսություն» բաժնի նպատակներն են տնտեսության կայուն աճը, մանր և միջին գործարարության զարգացումը, էներգետիկ անկախությունը, գործարարության համար առավել ազատական պայմանների ստեղծումը:

Մասնավոր սեփականության հանդեպ հարգանքն ու ձեռնարկատիրական ջիղը պատմականորեն բնորոշ են Հայաստանի ազգաբնակչությանը: Այդ յուրահատկությունները և դրանց արտացոլումը բարեփոխումների քաղաքականության մեջ նպաստավոր պայմաններ ստեղծեցին Հայաստանի տնտեսության արագընթաց աճի համար:

Հայաստանի Հանրապետությունը հատկապես կարևորում է մանր և միջին գործարարության զարգացումը և նպաստում դրան՝ հաշվի առնելով վերջինիս բացառիկ նշանակությունը ժողովրդավարական հասարակության կայացման, ինչպես նաև ավանդական ընտանեկան կապերի պահպանման համար:

Հայաստանն իր կայուն տնտեսական առաջընթացի ապահովման գործում կարևորում է՝

- ✓ շուկայական հարաբերությունների հետագա զարգացումը,
- ✓ տնտեսության մրցունակության բարձրացումը,
- ✓ մակրոտնտեսական և ֆինանսական կայունության ապահովումը, ֆինանսական համակարգի զարգացումը,
- ✓ ֆինանսական միջնորդության խորացումը,
- ✓ մրցակցային միջավայրի բարելավումը, տնտեսության ստվերային մասի կրճատումն ու դոլարացման էական նվազեցումը,
- ✓ տնտեսության ճյուղերի մենաշնորհացման կանխումը, բնական մենաշնորհների արդյունավետ կառավարումը և վերահսկումը,
- ✓ ներդրումների խթանման հեռանկարային ծրագրի իրագործումը,
- ✓ տարածքային ու ճյուղային սոցիալ-տնտեսական զարգացման համաչափությունը, ենթակառուցվածքների արդյունավետ կառավարումը,
- ✓ տնտեսության կառուցվածքում գիտատար ճյուղերի և բնապահպանության տեսակետից մաքուր տեխնոլոգիաների կիրառման գերակայության ապահովումը,
- ✓ արտահանման խթանումը:

Դիտարկվող հրամանագրում հատկապես կարևորվում է էներգետիկ և պարենային անվտանգությունը, ըստ որի՝ անհրաժեշտ է օժանդակել.

- ✓ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը, ինչը ենթադրում է էներգակիրների ներմուծման ուղիների և արտադրության ձևերի բազմազանեցում, նոր էներգետիկ, այդ թվում՝ միջուկային հզորությունների ստեղծում, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցում,
- ✓ բնակչության կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության ապահովմանը, այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի ու սննդամթերքի արտադրության ավելացմանը, ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարե-

լավմանը, սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ապահովմանը, տարածքային համալիր ծրագրերի իրականացմանը, հատկապես սահմանամերձ ու լեռնային շրջանների բնակավայրերի տնտեսական ու սոցիալական զարգացմանը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ագրարային հատվածում արտադրողականության մակարդակի բարձրացմանը:

Պետք է ընդգծել, որ ազգային անվտանգության իրագործման հիմնական երաշխիքների շարքում նշված է նաև սոցիալական արդարության ապահովումը, իսկ ազգային անվտանգության հիմնարար արժեքների շարքում, անկախության, պետության և ժողովրդի պաշտպանվածության, խաղաղության և միջազգային համագործակցության, հայապահպանության հետ միասին, կարևորվում է բարեկեցությունը, որը սահմանվում է որպես Հայաստանի Հանրապետության ձգտում դեպի բնակչության կյանքի բարձր որակ՝ կայուն զարգացման միջոցով:

Ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններն ու գործողություններն առանձնացված են ըստ հիմնարար արժեքների ոլորտների: Անկախության ոլորտում կարևորվում են նաև շուկայական հարաբերությունների խորացումն ու արմատավորումը, տնտեսության գիտատար, նորարարական, արտահանմանն ուղղված ոլորտների խթանումը, էներգետիկայի, տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների հուսալի գործունեության ապահովումն ու պաշտպանությունը: Բարեկեցության ոլորտում կարևորվում է.

- ✓ աղքատության հաղթահարումը,
- ✓ խոցելի խմբերի պաշտպանվածությունն ապահովող սոցիալական քաղաքականության իրագործումը,
- ✓ արդյունավետ և մրցունակ գիտակրթական քաղաքականության մշակումն ու կենսագործումը՝ հատկապես նորարարական զարգացման ուղղությամբ,

- ✓ առողջապահության համընդգրկուն ու արդյունավետ համակարգի զարգացումը՝ միջազգային բարձրագույն չափանիշներին համապատասխան,
- ✓ անհատի և հասարակության հոգևոր-մշակութային զարգացման պայմանների ապահովումը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում (ընդունվել է 2020 թ. հուլիսին) նշվում է. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվում է որպես ուղենիշային փաստաթուղթ անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները, սպառնալիքները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները սահմանելու համար: Հայաստանի անվտանգությանը և կայուն զարգացմանը միտված ոլորտային բոլոր փաստաթղթերը, որոնք ունեն անվտանգային բաղադրիչ, բխում են Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներից և տրամաբանությունից: Պետական կառավարման մարմինների կողմից ամենամյա պարբերականությամբ Անվտանգության խորհրդի գրասենյակ է ներկայացվում Ազգային անվտանգության ռազմավարությունում սահմանված դրույթների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն, որն ամփոփվում և ներկայացվում է ՀՀ վարչապետին: Ռազմավարությունը ենթակա է վերանայման ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ պայմանավորված Հայաստանում և աշխարհում ընթացող գործընթացներով և գերակայությունների փոփոխություններով»:

Այս փաստաթղթում ևս չի առանձնացվել և չի սահմանվել «տնտեսական անվտանգությունը», մինչդեռ օգտագործվում է «էներգետիկ և պարենային անվտանգության ապահովում» հասկացությունը:

Սույն ռազմավարության համաձայն՝ կարևորվել է «ՀՀ քաղաքացիների անվտանգության և բարեկեցության, երկրի կայուն տնտեսական զարգացման ապահովումը». «7.17 Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովման մեր առաջնահերթություններն են

տնտեսության առաջանցիկ և բարձր տեխնոլոգիական զարգացումը, ներքին և արտաքին տնտեսական սպառնալիքների ու ցնցումների նկատմամբ դիմադրողականությունը, հարմարվողականությունը համաշխարհային տնտեսության արագ փոփոխվող միջավայրին, համաշխարհային շուկայում ազգային տնտեսության մրցունակությունը, տնտեսության և ֆինանսական համակարգի անխափան աշխատանքի կազմակերպման ու համակարգման մեխանիզմների մշակումը»։ Իսկ 7.18-րդ կետում ամրագրված է. «Մեր տնտեսական քաղաքականությունը շարունակելու է միտված լինել մակրոտնտեսական կայունությանը, շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական մրցակցության ապահովմանը, սովերային տնտեսության կրճատմանը, գործարար միջավայրի շարունակական բարելավմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, արտահանման խթանմանը, տնտեսության ճյուղերի բազմազանեցմանը, դրանց արտադրողականության և տեխնոլոգիական զինվածության բարձրացմանը»³²:

2023 թ.-ի սեպտեմբերի վերջին պարզ դարձավ, որ ընդունված «ազգային անվտանգության ռազմավարությունը» լիարժեք կերպով չբռնեց ժամանակի քննությունը (նկատի ունենք Արցախի Հանրապետության հայաթափման փաստը)։ Ռազմավարությունում նշված սպառնալիքները և մարտահրավերները ճիշտ չէին հաշվարկված։ Բացի այդ, նշված ռազմավարությունը չի պարունակում գործուն կառուցակարգեր և պատասխանատվության համակարգ, ինչը թուլացնում է փաստաթղթի գործնական և կիրառական բնույթը։

Այս ամենը հուշում է, որ Հայաստանի Հանրապետության համար անհրաժեշտ է ազգային անվտանգության նոր ռազմավարություն, ինչը հաշվի կառնի ինչպես աշխարհում և տարածաշրջանում տեղի

³² Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, հուլիս, 2020 // https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf էլ. նետուրսն առկա է 1.12.2023 թ.:

ունեցող զարգացումները և անվտանգության ոլորտում տեղ գտած բացթողումները, դրանց վերացման ուղիները, այնպես էլ գործուն և կիրառական կառուցակարգեր կառաջադրի, որոնք կապահովեն ՀՀ ազգային անվտանգության նոր փաստաթղթի հիմնավորվածությունն ու կիրառելիությունը:

Հեշտ է նկատել, որ ներքին անվտանգության ոլորտի վերաբերյալ շեշտադրումների և մոտեցումների մեծ մասը (թեև անցել է ավելի քան 15 տարի) չի հասել իր նպատակին, ավելին՝ իրավիճակն ավելի է վատթարացել, իսկ անվտանգության վիճակը դարձել է մտահոգիչ և անկանխատեսելի: Այս պայմանները և հանգամանքները պահանջում են ազգային անվտանգության ոլորտում ավելի գործուն, առարկայական և արդյունավետ կառավարման համակարգի և գործիքակազմի ներդրում ու կիրառում՝ ապահովելով յուրաքանչյուր անվտանգային խնդրի լուծման հստակ և որոշակի ժամկետների, ինչպես նաև ճանապարհային քարտեզի ձևավորման և դրա նկատմամբ արդյունավետ հսկողության սահմանման և պատասխանատվության կառուցակարգեր:

2.2.2. Տնտեսական անվտանգության հիմնահարցերը՝ ՀՀ կառավարության ծրագրերում

Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության գործունեության ծրագրերը նույնպես դասվում են այն փաստաթղթերի շարքին, որտեղ զգալի ուշադրություն է դարձվում ազգային անվտանգության և, մասնավորապես, տնտեսական խնդիրների սահմանմանը և դրանց լուծումներին առնչվող միջոցառումների իրականացմանը: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը 2003 թվականի հունիսի 17-ին ՀՀ կառավարության արտահերթ նիստում արժանացավ հավանության և սահմանված կարգով ուղարկվեց ՀՀ Ազգային ժողով: Նույն թվականի հունիսի 20-ին կառավարու-

թյան գործունեության ծրագիրն արժանացավ Ազգային ժողովի հավանությանը³³:

Ըստ այդ ծրագրի՝ առաջիկա չորս տարիների համար ներկայացվող քաղաքականություններն ունեն հետևյալ հիմնական ուղղություններ՝

- տնտեսական բարեփոխումներ,
- սոցիալական բարեփոխումներ,
- կառավարման բարեփոխումներ,
- հակակոռուպցիոն քաղաքականություն:

Հատկապես ծրագրի «Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները» բաժնում թվարկված են 30-ից ավելի սոցիալական և տնտեսական հիմնախնդիրներ՝ զգալիորեն դժվարացնելով որոշակի գերակայությունների և առաջնահերթությունների սահմանումը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների ծրագիրը» ՀՀ կառավարությունը հաստատեց 2007 թվականի հունիսի 21-ի 695-Ա որոշմամբ (ի դեպ, նշված երկու ծրագրերում անհրաժեշտ է վերնագրերում ցույց տալ դրանց գործողության ժամկետը): Ի տարբերություն նախորդ ծրագրի, 2008-2012 թվականների ծրագրում³⁴ առանձնացված են լուծման ենթակա գերակա խնդիրները: Դրանք են.

- ազգային անվտանգության և կայուն զարգացման ապահովում,
- կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում,
- կրթություն և գիտություն,
- տարածքների համաչափ զարգացում,
- Հայաստանի քաղաքացիների սոցիալական պաշտպանվածություն:

Վերոնշյալ ծրագրում կա նաև առանձին բաժին՝ նվիրված կառավարության գործունեության հիմնական գերակայություններին: Հարց

³³ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի մասին, ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 699-Ա որոշում:

³⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Եր., 2007, էլեկտրոնային ռեսուրսն առկա է <https://www.gov.am/am/gov-program/> հղումով:

է առաջանում՝ ինչի՞ց ելնելով և ինչպե՞ս են սահմանվում այդ գերակայությունները, և ի՞նչ կապ ունեն դրանք տնտեսական անվտանգության հետ:

«< կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060 - Ա որոշմամբ ընդունված ծրագրում նշվում են կառավարության գործունեության հիմնական ուղղությունները, ըստ որոնց՝ նախատեսվում է.

- «1) վստահված ոլորտի արդյունավետ կառավարումն ապահովելու համար կառավարության անդամների պաշտոնական լիազորությունների ավելացում և դրան համարժեք պատասխանատվության սահմանում,
- 2) առկա մարտահրավերների համատեքստում վարկային ծրագրերի արդյունավետության վերազնահատում և գերակայությունների սահմանում,
- 3) պետական կառավարման մարմինների կողմից քաղաքացիներին ու տնտեսավարող սուբյեկտներին կոռուպցիայից զերծ ծառայությունների մատուցման նպատակով ավելորդ ընթացակարգերի և օղակների վերհանում ու վերացում, առօրյա կյանքում պետական կառավարման մարմինների հետ անհարկի շփումները նվազագույնի հասցնելը,
- 4) պետական կառավարման մարմինների հաշվետվողականության և թափանցիկության ավելացում, ինչպես նաև նրանց և քաղաքացիների ու տնտեսավարող սուբյեկտների միջև արդյունավետ հետադարձ կապի ստեղծում,
- 5) պետական կառավարման ապարատի ծախսերի կրճատում՝ հիմք ընդունելով իրականացվող գործառույթների անհրաժեշտությունն ու փաստացի իրականացումը,
- 6) պետական կառավարման մարմիններում կրկնվող կամ անարդյունավետ գործառույթներից հրաժարում,
- 7) քաղաքացիներին և ներդրողներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու համար «մեկ պատուհանի» սկզբունքով քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտ-

ներին մատուցվող ծառայությունների համակարգերի ընդլայնում՝ օգտագործելով գոյություն ունեցող հարթակները և, որպես ծառայություններ մատուցողներ, ներգրավելով նաև մասնավոր սուբյեկտներին,

- 8) բոլոր հանրապետական գործադիր մարմինների համար կատարողականի առանցքային ցուցիչների սահմանում և ըստ դրանց վարկանշում, տարածքային կառավարման մարմինների գործունեության գնահատման նոր կարգի սահմանում,
- 9) հանրային ծառայողների մասնագիտական ունակությունների, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարման աստիճանի գնահատման կատարողականության նոր չափանիշների ներդրում՝ հիմք ընդունելով պետական ծառայողի կերպարի արմատական վերափոխման հրամայականը,
- 10) հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացում, ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում,
- 11) բյուջետային ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով բյուջետավորման գործընթացի հնարավորինս ավտոմատացում,
- 12) հարկաբյուջետային քաղաքականության իրականացման թափանցիկության և հաշվետվողականության աստիճանի բարձրացման նպատակով մասնագիտական ու հանրային հետադարձ կապի ապահովում,
- 13) 2017 թվականին պետությանը պատկանող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների ֆինանսական և ֆիդուցիար կառավարման մշտադիտանցման կենտրոնացված համակարգի ներդրում, ինչպես նաև այդ կազմակերպությունների գործունեության գնահատման հա-

մար որոշակի հաշվարկային ցուցանիշների համակարգի ներդրում»³⁵:

Դժվար չէ նկատել, որ վերը բերված ուղղությունների մեծ մասը վերաբերում է տնտեսության կառավարման հիմնախնդիրներին, ուստի և դրանք դժվար է ճանաչել որպես գերակա: Նշված ծրագրում կարևորվել է նաև հանրապետության անվտանգության հարցը՝ «1.3. Արտաքին քաղաքականություն, սիյուռք, պաշտպանություն, անվտանգություն, հասարակական կարգ և արտակարգ իրավիճակներ, մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար, անվտանգություն և հասարակական կարգ» բաժնում նշելով. «1) ազգային անվտանգության և իրավապահ համակարգերի ռազմավարական բարեփոխումների շարունակականության ապահովման» հիմնախնդիրը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646 - Ա որոշման համաձայն՝ ծրագրում նշվում են այն հիմնական ուղղությունները («ՀՀ կառավարության ծրագրի տեսլականը և նպատակները» բաժնում), ըստ որոնց՝ ՀՀ կառավարությունը նպատակադրված է ապահովել մեր երկրի անվտանգությունը, ինչպես նաև այդ գերագույն խնդիրը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ տնտեսական առաջընթացը՝ արտացոլելով դա կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում:

Հայաստանի անվտանգության համատեքստում ՀՀ կառավարությունը կարևորում է մեր բնական պաշարներն արդյունավետ, թափանցիկ ձևով օգտագործելու և այդ ոլորտում պետության համար առավելագույն շահույթի ձևավորման խնդիրները, քանի որ դրանք ոչ միայն այսօրվա, այլև մեր ապագա սերունդների անվտանգությունն ապահովելու ամենաէական գործոններից են: Իսկ «3.5. Գյուղա-

³⁵ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, հաստատված է ՀՀ կառավարության 2016 թ.-ի հոկտեմբերի 18-ի N^o 1060-Ա որոշմամբ, էջ 5-6, էլեկտրոնային ռեսուրսն առկա է <https://www.gov.am/files/docs/1950.pdf> հղումով:

տնտեսություն» ենթաբաժնում շեշտադրվել է սննդամթերքի անվտանգությունը:

Նման իրավունքների իրացումը կարող է արդյունավետ կերպով իրագործվել միայն գործուն սահմանադրաիրավական համակարգում: Այս առումով, առավել քան էական է ՀՀ սահմանադրությամբ ամրագրված խորհրդարանական կառավարման համակարգին սահուն անցում ապահովելը, որի համար ՀՀ կառավարությունը կներդնի բոլոր ջանքերը խորհրդարանական համակարգում պետական կառավարման արդյունավետությունը, հանրության առջև իշխանության պատասխանատվությունը և հաշվետվողականությունը, իրավունքի գերակայությունն ապահովող օրենսդրական հիմքեր ստեղծելու գործում:

ՀՀ կառավարության մեկ այլ գերակայությունն է լինելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի թվայնացումը:

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ հաստատված կառավարության ծրագրում (2021-2026 թթ. գործողության ժամկետով) նշվում են ՀՀ անվտանգության ապահովման հիմնական ուղղությունները:

Այսպես՝ «Օրենքի և իրավունքի դիկտատուրան, իրավակարգը» բաժնում ասվում է, որ իրավունքի գերակայությունը, օրենքի առաջ բոլոր մարդկանց հավասարությունը, հանցավորության, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը ներքին անվտանգության ապահովման նշանակալի գործոններ են: Կարևորվում են անկախ և հանրային վստահություն վայելող դատական համակարգը, արդյունավետ և որակյալ նախաքննությունը, հանրային վստահություն վայելող դատախազությունը, ժամանակակից, շարժունակ ու արհեստավարժ ոստիկանությունը, որոնք պետք է ապահովեն կառավարության՝ ժողովրդից ստացած մանդատի իրագործումը:

«4.3 Կրթություն» ենթաբաժնում, գերակա խնդիր է համարվում կրթության և գիտության զարգացումը, որի շնորհիվ՝ հնարավոր է

հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության: Մարդկանց գիտելիքի և հմտությունների ուղղությամբ ներդրումները երկրի զարգացման գրավականն են: Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են լինելու քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը: Ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններիին:

Բարձրագույն կրթության ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին:

Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում առողջապահական համակարգի անխափան գործունեությունը կառավարության քաղաքականության առաջնահերթ գերակայություններից է՝ կապված ռեզերվային նյութատեխնիկական ռեսուրսների, մասնագիտական ներուժի, անհրաժեշտ կարողությունների և դրանց ծավալման ու մոբիլիզացիայի գործուն համակարգերի ներդրման հետ³⁶:

«Կառավարության՝ տարբեր ժամանակահատվածներում ընդունած որոշումների դիտարկումներից դժվար չէ եզրակացնել, որ առկա ծրագրերի միջև չկա օրգանական կապ, բացակայում է քաղաքականությունների շարունակականությունը: Նույնը վերաբերում է նաև զարգացման գերակայություններին (թե՛ տնտեսական, թե՛ այլ քաղաքականությունների), գերակա ուղղություններին և տնտեսական քաղաքականության միջոցառումներին:

³⁶ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.), հաստատված է ՀՀ կառավարության 2021 թ.-ի օգոստոսի 18-ի N° 1363-Ա որոշմամբ, էլեկտրոնային ռեսուրսն առկա է <https://www.gov.am/files/docs/4586.pdf> հղումով:

2.2.3. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները

ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը:

Ինչպես վերը նշեցինք, պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման կարևորագույն գործիքներ են տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի կազմավորումը (կազմումը) և դրանց սահմանային (շեմային) արժեքների որոշումը: Ասեցինք նաև, որ սահմանային (կամ շեմային) արժեքները քանակական՝ չափելի պարամետրեր են, որոնց միջոցով հնարավոր է գնահատել տնտեսության որոշակի ոլորտում ստեղծված իրավիճակը, խոցելիության աստիճանը, ինչպես նաև սպառնալիքների առաջացման հնարավորությունը և ուժգնությունը՝ տնտեսական անվտանգության տեսանկյունից: Այլ կերպ ասած, տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշմամբ պետության տնտեսական շահերին տրվում է քանակական որոշակիություն: Ընդ որում, տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը և ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքները տարբեր երկրների համար տարբեր են՝ պայմանավորված ազգային շահերի և դրանք իրացնելու ուղիների տարբերությամբ, ինչը հստակորեն երևում է տնտեսական զարգացածության տարբեր աստիճաններում գտնվող երկրների մասնագետների կողմից որոշված տնտեսական անվտանգության սահմանումներից³⁷:

Վերևում նկարագրված՝ մատրիցի կազմմամբ կատարել ենք Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատում, որը հնարավորություն է տալիս բացահայտելու մեր երկրի տնտեսական անվտանգության սպառնալիքները և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները: Ըստ այս մեթոդի՝ տնտեսական անվտանգության ցուցանիշները դասակարգվում են հետևյալ չորս չա-

³⁷ Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2005, էջ 111-115:

փանիշներով՝ (1) ցուցանիշի միջոցով բնութագրվող վտանգի առաջացման հավանականությունը, (2) դրա ազդեցության չափը, (3) տևողությունը և (4) անցանկալի դրսևորումների փոփոխման արագությունը:

Մատրիցի օգտագործումը բարձրացնում է տնտեսական անվտանգության ցուցանիշների գնահատման համակարգի և կառավարման արդյունավետությունը՝ օգնելով ավելի ճշգրիտ կերպով գնահատել որոշակի ցուցանիշի գծով տնտեսության վտանգվածության աստիճանը: Որպես արդյունք՝ դա նպաստում է ռեսուրսների արդյունավետ կառավարմանը՝ հնարավորություն ընձեռելով գնահատելու ոլորտը կարգավորող կառույցների աշխատանքը և կողմնորոշիչ դեր ունենալու զարգացման հետագա քաղաքականության մշակման հարցում: Այս մեթոդը, միաժամանակ, օգտակար է տնտեսական անվտանգության ցուցանիշների ամբողջական վերլուծության տեսանկյունից, քանի որ ապահովում է տարբեր ցուցանիշների միջև բազմակողմանի փոխադարձ կապի ուսումնասիրության հնարավորություն, այսինքն՝ որևէ ցուցանիշի փոփոխությունն ինչպես է տեղի ունեցել և ինչպես դա կազդի մյուս ցուցանիշների վրա:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների ազդեցության չափը գնահատելու համար վերլուծության արդյունքում ընդունվել են հետևյալ արժեքները. ազդեցությունը գնահատվում է փոքր, եթե միջին արժեք / սահմանային արժեք հարաբերությունը 0.66-ից 1-ի միջակայքում է, միջին՝ եթե 1-ից 3-ի միջակայքում է և մեծ՝ եթե 3-ից ավելի է:

Թեև մատրիցի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ երկրի տնտեսական անվտանգության ապահովումը տեղի կունենա առավելագույն թվով ցուցանիշների մատրիցի առաջին վանդակում տեղ գտնելու դեպքում, ցուցանիշների շարժը դեպի նպատակակետը, հավանաբար, տեղի կունենա ոչ ամենակարճ ճանապարհով՝ 9 ... 5 ... 1 վանդակների հերթականությամբ: Ըստ էության, հնարավոր են ցուցանիշների բարելավման ուղիների բազմաթիվ տարբերակներ:

Մատրիցը կիրառելի է տնտեսական անվտանգության՝ մեր ընտրած բոլոր ցուցանիշների համար: Գործնական կիրառության ընթացքում դա թույլ է տալիս գնահատել յուրաքանչյուր ցուցանիշի փաստացի վիճակը, բնութագրել տարբեր ցուցանիշների միջև փոխադարձ կապը և նպաստում է դրանց ծրագրավորված ու համակարգված բարելավմանը:

Մատրիցի միջոցով գնահատման կարգը հիմնվում է նախկինում տեղի ունեցած զարգացումների վերլուծության, ցուցանիշների փաստացի մակարդակների ձեռքբերման վրա ազդող գործոնների ուսումնասիրության, գործող տնտեսական կառուցակարգերի և ձևավորված պայմանների համալիր դիտարկման վրա: Որպես օրինակ՝ ներկայացնենք առաջին, հինգերորդ և իններորդ վանդակներում ներառվող ցուցանիշների հանդեպ ներկայացվող պահանջները:

Առաջին վանդակում ներառվող տնտեսական անվտանգության ցուցանիշները երկարաժամկետ հատվածում պետք է դրսևորեն որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռու՝ անվտանգ գոտում գտնվող մակարդակ, որը լիովին համապատասխանում է ՀՀ տնտեսական շահերին:

Հինգերորդ վանդակում պետք է ներառվեն տեղի ունենալու հավանականությամբ և ազդեցության չափով միջին ցուցանիշները:

Սրանց վարքագիծը կայուն է և որոշված սահմանային արժեքի շուրջ:

Իններորդ վանդակում տեղ գտած ցուցանիշները տնտեսական անվտանգության սպառնալիքներն են: Դրանք երկարաժամկետ հատվածում շեղված են որոշված սահմանային արժեքներից և իրենց ազդեցության չափով ու վտանգի առաջացման հավանականությամբ սպառնում են տնտեսական անվտանգությանը: Այստեղ խաչվում են խոցելիության առավելագույն աստիճանը և սպառնալիքի իրականացման մեծ հավանականությունը, հետևաբար՝ տնտեսական շահերի իրացումը մեծապես վտանգված է:

Հավելվածներում ներկայացված են հաշվարկների համար հիմք ծառայած ցուցանիշները (որոնք համընկնում են բալային գնահատա-

կանների մեթոդի կիրառմամբ օգտագործված ցուցանիշների հետ) և տնտեսական անվտանգության հաշվարկման արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության համար: Նշենք, որ գնաճի միջին մակարդակի համար, որտեղ շեմային մեծությունը կարող է տատանվել 6-10%-ի միջակայքում, մեր հաշվարկներում ընդունվել է ոչ ավելի, քան 10% շեմային մեծություն, իսկ տնտեսական աճի շեմային մեծության համար, որը կարող է տատանվել 2-3%-ի միջակայքում, ընդունվել է ոչ պակաս, քան 3% սահմանագիծ:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների միջին արժեքների հաշվարկի արդյունքում դրանց մի մասն ակնհայտորեն ընդգրկվել է անվտանգության գոտում՝ հայտնվելով սահմանային արժեքից ավելի լավ վիճակում: Այդ ցուցանիշների համար չի հաշվարկվել «միջին արժեք/սահմանային արժեք» հարաբերակցությունը, և դրանք ավտոմատ կերպով տեղափոխվել են մատրիցի ամենաանվտանգ՝ առաջին վանդակ: Արդյունքում 2001-2006 թվականները բնութագրող տնտեսական ցուցանիշների մեծ մասը՝ 20-ից 12-ը, հայտնվել է ամենաանվտանգ գոտում, մինչդեռ ամենաանվտանգավոր (9-րդ) վանդակում է մնացել աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշը:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ 2001-2006 թթ.-ին 1995-2000 թթ. նկատմամբ բարելավվել են Ջինիի գործակիցը (ՍՍՏ՝ տնտեսական անվտանգության ցուցանիշ), 2), գնաճի միջին մակարդակը (ՍՍՏ 4), ներդրումների ծավալը (ՍՍՏ 12), բյուջեի պակասուրդը (ՍՍՏ 16) և սպառման մեջ ներմուծված սննդամթերքի տեսակարար կշիռը (ՍՍՏ 20) բնութագրող ցուցանիշները:

Կատարված վերլուծության արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության աստիճանը, ըստ բերված ցուցանիշների, ուսումնասիրված ժամանակահատվածում զգալիորեն բարձրացել է: Ըստ որում, 2020 թվականին անվտանգության մակարդակի որոշ չափով նվազումը պայմանավորված է եղել COVID-19 համավարակի և 44-օրյա հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքներով: Տնտեսական անվտանգության

ապահովման գործընթացում, որպես առաջնահերթ գերակայություններ, կարելի է առանձնացնել այն ցուցանիշները, որոնք առավել շատ են շեղված շեմային մեծություններից (տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, աղքատության մակարդակը, Զինիի (եկամուտների կենտրոնացման) գործակիցը, կրթության և գիտության համար կատարված ծախսերը): Վտանգավոր մակարդակում է նաև արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության և ներքին սպառման մեջ՝ ներմուծման տեսակարար կշիռը (աղյուսակ 2.1):

Աղյուսակ 2.1

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները մատրիցների կազմման միջոցով և դրանց դասակարգումն ըստ վտանգավորության աստիճանի, 1995-2022 թթ.

<i>Տնտեսական անվտանգության ցուցանիշի անվանումը</i>	<i>Պայմանական նշանը</i>	<i>Ժամանակահատվածը</i>				
		<i>1995-2000</i>	<i>2001-2006</i>	<i>2007-2011</i>	<i>2012-2016</i>	<i>2017-2022</i>
		<i>Մարրիցի վանդակի համարը</i>				
ՀՆԱ-ն՝ մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	SUS 1	9	9	9	9	9
Զինիի գործակիցը (եկամուտների կենտրոնացման գործակիցը)	SUS 2	9	9	9	9	9
Միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլար	SUS 3	9	9	8	8	6
Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	SUS 4	8	8	8	8	8
Գնաճի միջին մակարդակը, %	SUS 5	9	4	7	3	4
Գործազրկության մակարդակը (միջին տարեկան), %-ով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ	SUS 6	8	7	9	9	9
Տնտեսական հավելածը, %	SUS 7	4	1	6	5	4
Ներքին պետական պարտքը (ազգ. արժույթով), %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	SUS 8	1	1	2	3	6
Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, %	SUS 9	9	9	9	9	9
Գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	SUS 10	8	9	9	9	9

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

Տնտեսական անվտանգության ցուցանիշի անվանումը	Պայմանական նշանը	Ժամանակահատվածը				
		1995-2000	2001-2006	2007-2011	2012-2016	2017-2022
		Մատրիցի վանդակի համարը				
Արդյունաբերական արտադրանքի մեջ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %	SUS 11	8	8	9	8	8
Արդյունաբեր. արտադրանքի մեջ մեքենաշին. տեսակարար կշիռը, %	SUS 12	9	9	9	9	9
Հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 13	9	7	8	9	9
Կյանքի սպասվող տևողությունը՝ հաշվարկված ծննդից (տարի)	SUS 14	6	6	6	6	6
Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը 100 հազար մարդու հաշվով)	SUS 15	7	7	8	9	9
Արտաքին պետական պարտքը (կառավարության և կենտրոնական բանկի) ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 16	9	9	9	9	9
Բյուջեի պակասուրդը (հավելուրդը) ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 17	9	3	6	7	7
Դրամական զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 18	9	9	9	8	7
Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 19	8	8	7	7	7
Ներմուծման տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ, %	SUS 20	8	8	7	7	7

Ցուցանիշների դասակարգման արդյունքում հնարավոր է դառնում դրանք տեղադրել տնտեսական անվտանգության վտանգավորության աստիճանը բնութագրող ընդհանրական մատրիցում (տե՛ս մատրից 2.1-2.5): Մատրիցը հնարավորություն է տալիս որոշելու տնտեսական անվտանգության այն սպառնալիքները, որոնք իրենց ազդեցության չափով և առաջացման հավանականությամբ այն աստիճանի են հասել, որ շտապ միջոցառումներ են պահանջում դրության բարելավման համար:

Մատրից 2.1

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
1995-2000 թթ.

Առաջացման հավանականությունը

Մեծ, $> 0,66$	6 SԱՑ 14	8 SԱՑ 4, SԱՑ 6, SԱՑ 10, SԱՑ 11, SԱՑ 19, SԱՑ 20	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 3, SԱՑ 5, SԱՑ 9, SԱՑ 12, SԱՑ 13, SԱՑ 16 SԱՑ 17, SԱՑ 18
Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7 SԱՑ 15
Փոքր, $< 0,33$	1 SԱՑ 8	2	4 SԱՑ 7
	Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 2.2

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2001-2006 թթ.

Առաջացման հավանականությունը

Մեծ, $> 0,66$	6 SԱՑ 14	8 SԱՑ 4, SԱՑ 11, SԱՑ 19, SԱՑ 20	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 3, SԱՑ 9, SԱՑ 10, SԱՑ 12, SԱՑ 16, SԱՑ 18
Միջին, $0,33 < X < 0,66$	3 SԱՑ 17	5	7 SԱՑ 6, SԱՑ 13, SԱՑ 15
Փոքր, $< 0,33$	1 SԱՑ 7, SԱՑ 8	2	4 SԱՑ 5
	Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 2.3

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2007-2011 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 SԱՑ 7, SԱՑ 14, SԱՑ 17	8 SԱՑ 3, SԱՑ 4, SԱՑ 13, SԱՑ 15, SԱՑ 19	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 6, SԱՑ 9, SԱՑ 10, SԱՑ 11, SԱՑ 12, SԱՑ 16, SԱՑ 18
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7 SԱՑ 5, SԱՑ 19, SԱՑ 20
	Փոքր, $< 0,33$	1	2 SԱՑ 8	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 2.4

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2012-2016 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 SԱՑ 14	8 SԱՑ 3, SԱՑ 4, SԱՑ 11, SԱՑ 18	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 6, SԱՑ 9, SԱՑ 10, SԱՑ 12, SԱՑ 13, SԱՑ 15, SԱՑ 16
	Միջին, $0,33 < X < 0,66$	3 SԱՑ 5, SԱՑ 8	5 SԱՑ 7	7 SԱՑ 17, SԱՑ 19, SԱՑ 20
	Փոքր, $< 0,33$	1	2	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 2.5

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2017-2022 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 SUS 3, SUS 8, SUS 14,	8 SUS 4, SUS 11	9 SUS 1, SUS 2, SUS 6, SUS 9, SUS 10, SUS 12, SUS 13, SUS 15, SUS 16
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7 SUS 17, SUS 18, SUS 19, SUS 20
	Փոքր, $< 0,33$	1	2	4 SUS 5, SUS 7
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Ուսումնասիրությունը վկայում է, որ վերը նշված ցուցանիշների բարելավումը շարունակելու է մնալ ՀՀ կառավարության գործունեության ուշադրության առանցքում: Հետաքրքրական է պարզել նաև, թե տնտեսական անվտանգության ցուցանիշներն ինչպես են արտացոլվել ռազմավարական փաստաթղթերում, որոնցից են ՀՀ կառավարության ծրագրերը: Օրինակ՝ ՀՀ կառավարության գործունեության 2008-2012 թթ. ծրագրում ակնկալվող հիմնական արդյունքները հետևյալն են եղել՝

- համախառն ներքին արդյունքի տարեկան 8-10 տոկոս իրական աճ,
- ներդրումների տարեկան ծավալների առնվազն 10 տոկոս աճ,
- տարածքային տնտեսական անհամամասնությունների էական նվազեցում,
- ոչ գյուղատնտեսական զբաղվածության 10 տոկոս աճ,

- պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճ՝ տարեկան համախառն ներքին արդյունքի 0.3-0.4 տոկոսային կետի չափով,
- աղքատության էական հաղթահարում՝ արդյունքում ապահովելով 11.2 տոկոսի ցածր ընդհանուր և 1.6 տոկոսից ցածր ծայրահեղ աղքատության մակարդակ,
- կենսաթոշակների մակարդակի ամենամյա բարձրացում՝ 2012 թ. աղքատության ընդհանուր գիծը 1.5 անգամ գերազանցող միջին կենսաթոշակի ապահովմամբ,
- սոցիալական ապահովության և ապահովագրության համակարգի ֆինանսավորման աճ՝ մինչև համախառն ներքին արդյունքի 6.2 տոկոսը,
- առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի ֆինանսավորման աճ՝ մինչև համախառն ներքին արդյունքի 2.2 տոկոսը,
- կրթության ոլորտին ուղղվող պետական ծախսերի ֆինանսավորման աճ՝ մինչև համախառն ներքին արդյունքի 3.5 տոկոսը³⁸:

Ներկայում գործող՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում ամրագրված տնտեսական քաղաքականության նպատակներն են՝

- տնտեսական հնարավորությունների ընդլայնումը և դրանց հավասար հասանելիության ապահովումը,
- մարդու ստեղծարար հմտությունների զարգացման և իրացման միջոցով միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը,
- արտահանումը խթանող պայմանների ապահովումն ու միջավայրի ձևավորումը:

Ըստ այդ փաստաթղթի՝ մինչև 2026 թվականը ՀՀ կառավարության տնտեսական թիրախներն են լինելու՝

³⁸ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Երևան, 2007, էջ 20: Էլեկտրոնային ռեսուրսը առկա է <https://www.gov.am/am/gov-program/> հղումով:

- ՀՆԱ տարեկան միջին աճի նվազագույն մակարդակը՝ 7% (բարենպաստ արտաքին տնտեսական պայմաններում՝ 9%),
- ֆորմալ հատվածի ոչ պետական ոլորտի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ֆոնդը՝ ՀՆԱ 25%,
- գործազրկության մակարդակը՝ 10%-ից ցածր:

«Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» ոլորտում տնտեսական քաղաքականության թիրախներին հասնելու համար անհրաժեշտ է լինելու ներդրում/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել առնվազն 25%-ի: Կառավարության քաղաքականությունը միտված է լինելու օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ 6% հարաբերակցություն ապահովելուն՝ շեշտադրելով որակյալ, գիտելիքահենք ներդրումային ծրագրերը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը խթանելու է նոր գիտելիքի, կառավարման հմտությունների զարգացումը և արտաքին գործարար կապերի ընդլայնումը:

Ծրագրի «Մշակող արդյունաբերություն» մասում նշված նպատակներին հասնելու համար կառավարության նախանշած թիրախները հետևյալն են՝

- մշակող արդյունաբերության կշիռը ՀՆԱ-ի մեջ հասցնել առնվազն 15%-ի,
- միջնաժամկետ հատվածում տնտեսական բարդության ցուցանիշը -0.39 -ից հասցնել 0.1 միավորի և ստեղծել հիմք՝ 10 տարվա ընթացքում դասվելու բարձր տնտեսական բարդություն ունեցող երկրների շարքին: Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու ապրանքների արտադրության արժեշրջանների խորացմանը նպաստելու ուղղությամբ, որը ենթադրում է տեխնոլոգիապես առավել բարդ ու բարձր հավելյալ արժեք ստեղծող արտադրանքի և արտադրական գործընթացների առկայություն³⁹:

³⁹ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.), հաստատված է ՀՀ կառավարության 2021 թ.-ի օգոստոսի 18-ի № 1363-Ա որոշմամբ, էջ 20-30: Էլեկտրոնային ռեսուրսն առկա է <https://www.gov.am/files/docs/4586.pdf> հղումով:

Անկասկած է նաև ՀՀ կառավարության այն մոտեցումը, որ առաջիկայում տնտեսական անվտանգության վերը նշված ուղղություններով ընդունվելիք ծրագրերի կենսագործմամբ հնարավոր կլինի երկրի ազգային անվտանգության հիմքը ձևավորող տնտեսական անվտանգության մակարդակն էլ ավելի բարձրացնել՝ նախադրյալներ ստեղծելով հանրապետության համար՝ ընդհուպ մոտենալու տնտեսական անվտանգության տեսանկյունից բացարձակ անվտանգ երկրների խմբին:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվում է որպես ուղենիշային փաստաթուղթ անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները, սպառնալիքները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները սահմանելու համար:

Հավելված 1




Հավելված 1-ում ներկայացված են այն ցուցանիշները, որոնք որպես հիմք են ընդունվել հաշվարկների համար (համընկնում են բալային գնահատականների մեթոդի կիրառմամբ օգտագործված ցուցանիշների հետ) և ՀՀ տնտեսական անվտանգության հաշվարկման արդյունքները:


ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման բալային մեթոդը թույլ է տալիս առավել ակնառու կերպով բնութագրել այդ ցուցանիշի «հետագիծը» և լիարժեք պատկերացում կազմել տնտեսական անվտանգության ընդհանրական վարկանիշների մասին: Այլ կերպ ասած, տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման բալային միավորների մեթոդը հնարավորություն է ընձեռում գնահատելու տնտեսական անվտանգության մակարդակը 20 մակրոտնտեսական ցուցանիշների մեծությունների գումարային չափելիությամբ և ստանալու ինտեգրալային (գումարային) ցուցանիշ՝ դրանով իսկ ամբողջական ու քանակական պատկերացում կազմելով այդ երևույթի շարժընթացի վերաբերյալ:

Բալային մեթոդի միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները, ըստ երկարա-

Ժամկետ կտրվածքի (1995-2000, 2001-2006, 2007-2011, 2012-2016, 2017-2022) և առանձին տարիների (1995, 2000, 2021, 2022), բերված են գծապատկեր 2.1-ում և 2.2-ում:



Գծապատկեր 2.1. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների գումարային մեծությունը



Գծապատկեր 2.2. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների գումարային մեծությունները որոշակի տարիներին

Վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա հաշվարկված ցուցանիշները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունը բավարար անվտանգ վիճակում է, որի հավաստիությունը կախված է վիճակագրական տվյալների ճշտությունից: Միաժամանակ, հարավ-կովկասյան տարածաշրջանի երեք երկրների շարքում Հայաստանի ցուցանիշը զիջում է հարևան Ադրբեջանի ցուցանիշին, ինչի մասին նույնպես վկայում են հետագա շարադրանքում ներկայացվող մեր հաշվարկները: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի բարելավման համար անհրաժեշտ է նախանշել բարելավման համապատասխան ուղիներ և գործիքակազմ:

2.2.4. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության սպառնալիքները

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ տնտեսական անվտանգության գնահատման միասնական բալային սանդղակը ենթադրում է ընտրված յուրաքանչյուր ցուցանիշի հետևյալ աստիճանավորումը՝

- սպառնալիք, երբ երկարաժամկետ հատվածում ցուցանիշը դրսևորում է այնպիսի մակարդակ, որն էականորեն շեղված է որոշված սահմանային արժեքից, ընդ որում, դա հնարավոր չէ մեղմացնել՝ ի հաշիվ այլ գործոնների,
- վտանգ, երբ ցուցանիշի փաստացի արժեքը տատանվում է որոշված սահմանային արժեքին մոտ միջակայքում,
- անվտանգություն, երբ տնտեսական անվտանգության ցուցանիշը երկարաժամկետ հատվածում գտնվում է որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռավորության վրա՝ ապահով գոտում:

Տնտեսական անվտանգության հնարավոր սպառնալիքների բացահայտումը և դրանց վնասագերծմանն անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումն առաջնահերթ նշանակություն ունեն

երկրի անվտանգության ապահովմանն ուղղված պետական ռազմավարության համար:

Երկրի տնտեսական անվտանգության սպառնալիքները կարող են դասակարգվել ըստ մի շարք հատկանիշների: Ըստ առաջացման աղբյուրների՝ դրանք կարող են լինել ներքին և արտաքին: Հայաստանի տնտեսությունում բարեփոխումների փուլում առաջացած հիմնական ներքին սպառնալիքներն են՝

- տնտեսության կառուցվածքային ձևախախտման ուժեղացումը,
- հայրենական արտադրանքի մրցունակության ցածր մակարդակը,
- ընդլայնված վերարտադրության պայմաններում տնտեսության գործելու անկարողությունը,
- բնակչության պահանջարկի և ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման անհավասարակշռությունը,
- տնտեսության տարբեր ոլորտներում մենաշնորհի գոյության բարձր տեսակարար կշիռը,
- արտադրության արդյունավետության բարձրացման խթանիչ շարժառիթների բացակայությունը,
- արհեստականորեն կայունացված փոխարժեքները,
- հանրապետության մարզերում տնտեսական զարգացման անհամաչափության խորացումը,
- հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացումը, տնտեսական հանցագործությունների աճը,
- պետական վերահսկողության համակարգի անարդյունավետությունը:

Արտաքին սպառնալիքների թվին են դասվում՝

- երկրի վերածումն այս կամ այն զարգացած պետության տնտեսական կցորդի,
- միջազգային հանրության հետ արտաքին առևտրում խտրականության տարբեր դրսևորումները,
- ներմուծումների նկատմամբ որոշակի հակումների ուժեղացու-

մը, կախվածությունը ներմուծումից,

- արտաքին պարտքի ավելացումը, արտարժույթի արտահոսքը երկրից:

Ներքին և արտաքին սպառնալիքների համադրումից պարզվում է, որ հանրապետության համար ավելի վտանգավոր են ներքին սպառնալիքները: Արտաքին սպառնալիքների մի շարք աղբյուրներ (օրինակ՝ արտաքին պարտքի ավելացումը, մերձավոր արտերկրի հետ արտաքին առևտրային շրջանառության կրճատումը) բխում են ներքին գործոններից (տնտեսության ցածր արդյունավետություն, մշակող արդյունաբերության ցածր մրցունակություն և այլն):

Ներկայում ՀՀ տնտեսական անվտանգության ամենաէական սպառնալիքները, թերևս, հետևյալներն են՝ աղքատության բարձր ցուցանիշ, միջին խավի՝ դանդաղ տեմպով ավելացում, հասարակության գույքային և ըստ եկամուտների անհավասարության ու շերտավորման խորացում, այդ թվում՝ հասարակության շերտավորում (փոքր խումբ հարուստներ և մեծաթիվ աղքատներ), սոցիալական տարբեր հակասությունների հանգեցնող գործազրկության աճ, տնտեսության գերակշռող ոլորտներում (բացառությամբ տեղեկատվության և կապի, ֆինանսական և ապահովագրական գործունեության), որտեղ միջին ամսական անվանական աշխատավարձերը զգալիորեն բարձր են տնտեսությունում ձևավորված միջին ցուցանիշներից, ինչպես նաև որոշ չափով՝ հանքագործական ոլորտում աշխատավարձերի ցածր մակարդակ, արտադրական կարողությունների օգտագործման ցածր աստիճան՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են ստվերային տնտեսության մեծ ծավալը, գործազրկության բարձր մակարդակը, կոռուպցիայի առկայությունը, պետական վերահսկողության համակարգի թուլությունը, Արցախից բռնի տեղահանված ավելի քան 100 հազար մարդու սոցիալ-տնտեսական ու կենցաղային հիմնախնդիրների լուծման ծավալներ, հսկայական ռեսուրսների անհրաժեշտություն և այլն: Բավական է նշել, որ 2023 թ.-ի դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց 2024 թ.-ի պետական

բյուջեում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, ըստ որի՝ պետական բյուջեի ծախսերն ավելացան 351 մլրդ դրամով, ինչը կապված էր էթնիկ գտման հետևանքով Հայաստան վերադարձած հայերի կենսաապահովման ընթացիկ ծախսերի հետ:

Հանրապետությունում վարձու աշխատանքի դիմաց կատարվող վճարումների մակարդակն այնպիսին է, որ դրա կարգավորումը պետք է դառնա պետության գործառնության հիմնական ուղղություններից մեկը: Թեև հատկապես վերջին տարիներին առկա են դրամական աշխատավարձի ավելացման բոլոր միտումները, սակայն տնտեսության ոլորտների մեծ մասում դրանք շարունակում են ցածր մնալ, ինչը նկատելիորեն նվազեցնում է բարձր արտադրողական աշխատանքի շահադրդումը (մոտիվացիան): Ըստ էության, ՀՀ-ում աշխատավարձի ցածր մակարդակը մնացել է տնտեսական ու քաղաքական անվտանգության սահմաններից ներքև:

Տնտեսության կառուցվածքի հետագա կատարելագործումը և բարձր ավելացված արժեք ապահովող ոլորտների ավելացումը երկրի անվտանգության աստիճանի բարձրացման գլխավոր պայմաններից են: Տնտեսական նախկին համակարգից մնացած բազմաբնույթ սոցիալ-տնտեսական խնդիրները ևս այսօր իրենց զգացնել են տալիս: Նախկին համակարգի կառուցվածքային ձևախախտումների հիմքում մի կողմից էլեկտրաէներգետիկ համակարգի արագընթաց զարգացումն էր, մյուս կողմից՝ դրանց համեմատ այն ոլորտների և բնագավառների թույլ զարգացումը, որոնք անմիջականորեն կոչված էին բավարարելու մարդկանց հոգևոր, մտավոր և նյութական պահանջները: Նման ժառանգությունն այսօր հնարավորություն չի ընձեռում ամուր հիմքերի վրա դնելու թեթև, սննդի և արդյունաբերության այլ հարակից ոլորտների զարգացումը, ծառայությունների ոլորտը և կենցաղային հիմնահարցերի լուծումը:

Կառուցվածքային վերակառուցման համար անհրաժեշտ է.

- տնտեսավարման ներկա համակարգում գործող ձեռնարկությունների (առևտրային կազմակերպությունների) պահպան-

ման նպատակահարմարության որոշում,

- կառուցվածքային առաջընթաց՝ տեղաշարժերի իրականացման նպատակով, տնտեսության առավել արդյունավետ ոլորտներում ու բնագավառներում զգալի ներդրումների ներգրավում,
- պաշտպանական համալիրի մաս կազմող ձեռնարկությունների ցանկի հստակեցում և այլն:

Սոցիալական ոլորտն առանցքային դեր է խաղում ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության ապահովման գործում: Դրանում կարելի է ներառել անհատի, ընտանիքի, հասարակության առանձին շերտերի, սոցիալական խմբերի և պետության կենսական շահերը: Որպես ՀՀ անվտանգության գլխավոր սպառնալիքներ՝ կարելի է առանձնացնել եկամուտների անհավասարաչափ բաշխումը, բնակչության կողմից սննդի պահանջմունքի լիարժեք բավարարման անկումը, թերսնումը, աղքատությունը: Նշված բոլոր միտումները, ինչպես նաև զբաղվածության կրճատումը, մահացության աճը, ծնունդների թվի նվազումը հանգեցնում են երկրում կյանքի ընդհանուր որակի անկմանը և արտագաղթի տեմպերի աճին, որոնք էլ, իրենց հերթին, սպառնում են երկրի անվտանգությանն ընդհանրապես:

Տնտեսական անվտանգության սպառնալիքների մեջ առանձնանում են ստվերային տնտեսությունը և կոռուպցիան՝ իրենց քաղաքական, սոցիալական և տնտեսական լուրջ հետևանքներով: Ընդ որում, այս երևույթները բնութագրական են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար, և, բնականաբար, տարբեր երկրներում դրանց յուրահատկությունները, չափերը, պայքարի միջոցները չափազանց տարբերվում են միմյանցից: Հայաստանում ևս այդ երևույթները տնտեսական զարգացումը խոչընդոտող լուրջ գործոններ են: Ստվերային տնտեսության առկայությունը պայմանավորված է սոցիալ-տնտեսական և քաղաքական ընդհանուր իրավիճակով, պետական կարգավորման ցածր արդյունավետությամբ, կոռուպցիայի առկայությամբ: Ընդ որում, վերջինիս հետ ստվերային տնտեսություն-

նը փոխադարձ կապի մեջ է: Ամերիկացի տնտեսագետ Գուտմանի կողմից առաջարկված փողի պահանջարկի գնահատման մեթոդի հիման վրա, օրինակ, 2000 թ.-ին ՀՀ տնտեսության ստվերային մեծություն/ՀՆԱ հարաբերությունը կազմել է 60,3%: Ինչ վերաբերում է կոռուպցիային, ապա պետք է նշել, որ, Համաշխարհային բանկի տվյալների համաձայն, Հայաստանը պատկանում է այն երկրների թվին, որտեղ հիմնական խնդիրը վարչական կոռուպցիան է: Վերջինս վերաբերում է գործող օրենքների և իրավական այլ ակտերի կիրարկման նպատակային խախտումներին՝ ի շահ պետական և ոչ պետական անձերի: Կոռուպցիայի այս տեսակի հիմքում պետական պաշտոնյաների կողմից իրենց հայեցողությամբ իրականացվող գործողություններն են, օրենքների և օրենսդրական ակտերի տարբերակված կիրարկումը: ԱՊՀ երկրների համար վարչական կոռուպցիայի «արժեքը» ընկերությունների եկամուտների 3,7%-ն է, արևելաեվրոպական երկրներում՝ 2,2%-ը, Հայաստանում՝ 4,6%-ը:

Ինչ վերաբերում է կոռուպցիայի ժամանակակից ընկալմանն ու բացահայտմանը, ապա պետք է նկատենք, որ հանրային կյանքի հասարակական-քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, գաղափարական, բարոյահոգեբանական անընդհատ փոփոխվող հարաբերություններում առաջանում են դրա նոր տեսակներ և համապատասխան սխեմաների նոր՝ չնախատեսված ձևեր: Այս հանգամանքը պահանջում է կոռուպցիոն դրսևորումների վիճակի և էվոլյուցիայի, առաջացման հնարավոր ռիսկերի, ոլորտների մշտական մոնիտորինգ (մշտադիտարկում), ինչը ներկայում հակակոռուպցիոն գործառույթներով օժտված և ոչ մի մարմին չի իրագործում: Մշտադիտարկումը թույլ կտա ժամանակին ճշգրտել հակակոռուպցիոն գործողություններն ու դրանց ուղղությունները՝ ի հայտ եկող մարտահրավերներին դիմակայելու համար: Առաջարկում ենք, որ նման լիազորություններով օժտվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, իսկ մշտադիտարկման մեթոդաբանությունը ներառի որոշակի (սահմանված) ցուցանիշների և ցուցիչների ուսումնասիրություն՝ որոշակի

ժամկետայնությամբ (եռամսյակային կամ կիսամյակային):

Միաժամանակ, կոռուպցիայի դեմ պայքարը, որի հիմնական թիրախը մարդու իրավունքների նկատմամբ առնվազն հարգանքն է, իսկ լավագույն դեպքում՝ այդ իրավունքների պաշտպանությունը, Հայաստանում դեռևս հիմնված է այն մոտեցման վրա, որ «վատ չէր լինի, որ հարգվեին», որը սխալ մոտեցում է: Նման ավտորիտար (մեծապետական) դիրքորոշումը ոչնչացնում է անկախ զսպումների և հակակշիռների կառուցակարգը, իսկ կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերը կախման մեջ դնում քաղաքականություն իրականացնողների կամքից: Հայաստանի Հանրապետության դեպքում, որտեղ ինստիտուցիոնալ հիմքերը, ինքնակարգավորվող ինստիտուտների առկայությունը գնահատվում են բավական ցածր մակարդակում, այս խնդիրն էլ ավելի է սրվում՝ կոռուպցիայի դեմ պայքարում չհաջողելու միակ «մեղավոր» ճանաչելով պետությանը:

Երկրներում կոռուպցիայի գնահատումը հիմնված է որոշակի ցուցիչների (համաթվերի) հաշվարկման վրա՝ շատ հաճախ որպես սուբյեկտիվ փորձագիտական գնահատականների և հարցումների արդյունք:

ՀՀ-ում 2022 թ.-ին կատարված հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ մեր երկրի քաղաքացիների համար դեռևս շատ են զսպող հանգամանքները, որոնց ուժով նրանք չեն ցանկանում բացահայտել սեփական տեսակետը, փորձը և ընկալումները կոռուպցիայի երևույթի վերաբերյալ: Այսպես՝ հետազոտության շրջանակում բաշխված շուրջ 3000 հարցվողից հարցաթերթին պատասխանել է միայն 70 մարդ: Այս պարագայում էլ հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ կոռուպցիոն դրսևորումների տեսանկյունից, ամենատարածված ոլորտներն են առողջապահությունն (78%) ու կրթությունը (77%): Մինչդեռ պետական եկամուտների, մաքսային և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ոլորտներում կոռուպցիոն դրսևորումները նվազել են՝ կազմելով համապատասխանաբար՝ 60%, 45% և 56%: Սա ևս մեկ անգամ հաստատ-

տում է այն միտքը, որ կոռուպցիայի դեմ պայքարն ընկալվում է որպես իշխանությունների մենաշնորհ (վերջին տարիներին ամենաշատ ուշադրությունը դարձվում է հենց նշված մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարին), մինչդեռ քաղաքացիներն այս ուղղությամբ չեն տեսնում իրենց դերակատարումն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը (ներառյալ կրթության բոլոր մակարդակները) և այլն, որոնք գործում են շուկայական հարաբերությունների շրջանակում: Այնուամենայնիվ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցաթերթում արժարժվող բոլոր հարցերն ունեն զգալիությունության բարձր աստիճան՝ ըստ 5,5 և 10-բալանոց սանդղակի⁴⁰:

ՀՀ տնտեսության առևտրային սկզբունքներով գործող ոլորտներում, կարելի է ասել, կոռուպցիայի դեմ պայքարը դեռևս բավարար և ակնկալվող արդյունք չի գրանցել: Այս առումով, անհրաժեշտ է շեշտը դնել այնպիսի համակարգային խնդիրների լուծման վրա, ինչպիսիք են տնտեսական հարաբերություններում կոռուպցիա առաջացնող երևույթների բացահայտումը, իրավահարաբերությունների ճշգրտումը և իրավական ակտերի լրամշակումը: Կարևոր է նաև մատնանշել այդ հիմնախնդիրների լուծման ուղղությունները: Այս հարցում օգտակար կարող են լինել մակրոտնտեսական պարամետրերի դիտարկումն ու հաշվարկումը: Տնտեսական համակարգի կոռուպցիան բնութագրելու համար սահմանվում է տվյալ հասարակությունում կոռուպցիոն եկամտի հասկացությունը, որի հաշվարկման մեթոդաբանությունը հայտնի է, սակայն կիրառման գործիքակազմը դեռևս պետք է քննարկման առարկա դառնա:

Իր հերթին, այնպիսի երևույթի դեմ պայքարը, ինչպիսին կոռուպցիան է, դժվարին գործընթաց է և չի կարող իրագործվել առանց կարճաժամկետ բարեփոխումների ծրագրի, որի հիմքում պետք է դրված

⁴⁰ Այս հիմնախնդրի և ուսումնասիրության արդյունքների մասին ավելի մանրամասն տե՛ս է. Մաթևոսյան, Ա. Մարկոսյան, Մ.Դեթլոֆֆ, Կոռուպցիայի ընկալման գնահատման հիմնախնդիրները և արդյունքները Հայաստանի Հանրապետությունում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական հոդվածների ժողովածու-2023, № 1, Եր., ՀՀ ԳԱԱ ՏԻ, 2023, էջ 16-33:

լինեն հետևյալ նախապայմանները՝

- իշխանությունների կամքը և շահագրգռվածությունը կոռուպցիայի դեմ պայքարելու գործում (քաղաքական կամքի դրսևորում),
- կոռուպցիոն գործողությունների նկատմամբ պահանջարկի նվազեցումը՝ հարկային արտոնությունների վերացմամբ, հատուկ թույլտվություն պահանջող գործունեության տեսակների սահմանափակմամբ, նորմատիվային-կարգավորող և օրենսդրական ակտերում տարամեկնաբանություններ ու սողանցքներ պարունակող նորմերի վերացմամբ, ինչը կառավարման և դատաիրավական համակարգերը կդարձնի առավելագույնս թափանցիկ և հաշվետվողական,
- կոռուպցիոն գործողությունների առաջարկի կրճատում ինչպես հանրային հատվածում, այնպես էլ տնտեսության մյուս ոլորտներում:

«Վ տնտեսական անվտանգությանը սպառնացող գործընթացներում առանձնանում է ազգային հարստության բաղկացուցիչ՝ մտավոր կապիտալի գործոնը, որի արտահոսքը երկրից, թերևս, ամենամեծ մտահոգությունն է առաջացնում և պահանջում կատարել անհետաձգելի քայլեր: Հանրապետության տնտեսությունում ստեղծված վիճակի պատճառով արդեն երկար ժամանակ է՝ արտագաղթում են կարող ուժերը (մասնագիտական բարձր որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսները)՝ մեծապես վտանգելով երկրի ներկան ու ապագան: Տարբեր հետազոտությունների տվյալներով միայն 1988-2001 թթ.-ին հանրապետությունից արտագաղթել է 600 հազարից մինչև 1,25 մլն մարդ⁴¹, ցավոք, նաև երկրի ստեղծագործական վերնախավի ներկայացուցիչներ: Եթե դիտարկենք արտագաղթի նվազագույն չափը՝ մոտ

⁴¹ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XIX դարի շեմին, ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001 թ., էջ 308, Գրիգորյան Յու., Ժողովրդագրական վիճակը Հայաստանում, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», թիվ 2, 2001:

600 հազ. մարդ, և ենթադրենք՝ նրանց մեջ ստեղծագործական վերնախավի ներկայացուցիչներն ընդամենը 1% են, ապա դա կկազմի 6000 մարդ: Տարբեր գնահատականների համաձայն՝ դրա հետևանքով հանրապետությանը հասցված վնասը հաշվարկվում է միլիարդների հասնող գումարի չափով (դրամական արտահայտությամբ):

2.3. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության որոշակի ցուցանիշների բարելավումը

Տնտեսական անվտանգության ապահովումը երկրի անկախության, ինքնիշխանության գլխավոր երաշխիքն է, հասարակության և անձի կայուն ու արդյունավետ գործունեության պայմանը: Այդ պատճառով տնտեսական անվտանգության ապահովումն ազգային անվտանգության և տնտեսության առանցքային գերակայություններից մեկն է: Ավելին, տնտեսական անվտանգության ապահովման տեսլականը և միջոցառումները պետք է լինեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ինչպես կարճաժամկետ (1 տարի), այնպես էլ միջնաժամկետ (3 տարի) ու երկարաժամկետ ռազմավարական պլանավորման հիմքում: Ազգային անվտանգության մյուս բաղադրիչների (քաղաքական, ռազմական, դիվանագիտական, բնապահպանական և այլն) գոյությունը և վիճակը մեծապես պայմանավորված են տնտեսական անվտանգությամբ, քանի որ տնտեսությունում են ստեղծվում այն նյութատեխնիկական, ֆինանսական և մյուս ռեսուրսները, որոնք ապահովում և «սնում» են ազգային անվտանգության մյուս բաղադրիչները:

Շուկայական տնտեսությանն անցման ժամանակահատվածում (1990-ական թվականների սկզբին) ՀՀ-ում ձևավորվեց ճգնաժամային իրավիճակ, որը բնութագրվեց արտադրության աննախադեպ անկմամբ, ինֆլյացիայի շատ բարձր տեմպերով, գործազրկության մակարդակի աճով, սպառման մակարդակի զգալի նվազմամբ, շու-

կայական ենթակառուցվածքների բացակայությամբ կամ ոչ լիարժեք ձևավորված լինելով, ոչ կայուն ֆինանսական շուկայով և, որպես այս ամենի հետևանք, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմամբ, բնակչության դրամական եկամուտների և սպառման մակարդակների չափազանց մեծ անհավասարությամբ: Այս ամենը ոչ միայն և ոչ այնքան պայմանավորված էր շուկայական վերափոխումներով, որքան համապատասխան կառուցակարգերի գործելու համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի թերի լինելով կամ որոշակի ոլորտներում ընդհանրապես դրանց բացակայությամբ: Այդ իրավիճակն ավելի էր սրվում տարածաշրջանում ստեղծված բարդ և, ամենից առաջ, քաղաքական միջավայրի, ինչպես նաև անցյալից եկած մի շարք պատճառներով (Սպիտակի երկրաշարժ, հարևան երկրի հետ Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հանրապետության ենթակառուցվածքների շրջափակում և այլն): Եվ եթե հաշվի առնենք երկրաշարժից և դարաբաղյան հակամարտությունից քայքայված տնտեսությունում վերականգնողական աշխատանքների ծավալումը, ապա պատահական չէ, որ սկզբնական շրջանում նախկին խորհրդային երկրների նման, Հայաստանում ևս տնտեսական անվտանգության գրեթե բոլոր համամասնությունները խաթարված էին: Հետագա տարիներին կայունության պահպանման և տնտեսական աճի ապահովման (հատկապես վերջին 5-6 տարիների) պարագայում հաջողվեց հասնել տնտեսական անվտանգության որոշակի մակարդակի, որը վտանգավորության սահմանում չէր, բայց բավական հեռու էր բացարձակ անվտանգ վիճակի սահմանագծից:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման և տվյալների ուսումնասիրությունից երևում է, որ սահմանային մակարդակում են գտնվում հատկապես սոցիալական ոլորտին պատկանող ցուցանիշները, սրվել են բնակչության աղքատության ու ժողովրդագրական հիմնախնդիրները, և վտանգված է բնակչության մի հատվածի (աղքատ) հետագա բնականոն կենսագործունեությունը:

2.3.1. Աղքատությունը և դրա հաղթահարումը

Աղքատության կրճատումը երկարատև գործընթաց է, որը հաղթահարվում է փոքր քայլերով: Դա պայմանավորված է ինչպես պետության, այնպես էլ այն հիմնախնդիրների լուծման առաջնահերթություններով, որոնք ծառայել են սոցիալ-տնտեսական, քաղաքական, տարածաշրջանային և այլ հանգամանքների պատճառով: Հասկանալի է՝ որքան քիչ են նմանատիպ հիմնախնդիրները և որքան շատ՝ դրանց լուծման հնարավորությունները, որքան հզոր են պետության ռեսուրսները և միջոցները, այնքան հեշտությամբ ու համեմատաբար կարճ ժամկետում կարելի է գտնել համապատասխան լուծումներ և, առաջին հերթին, նվազեցնել բնակչության աղքատության մակարդակը: Օրինակ՝ 2002 թվականի ընթացքում տնային տնտեսությունների աղքատության մակարդակը նվազել էր 0.4, իսկ բնակչությանը՝ 1.2 տոկոսային կետով:

Հայաստանի Հանրապետությունում աղքատության հիմնական ցուցանիշների շարժընթացը 2019-2021 թթ.-ին ներկայացված է աղյուսակ 2.3.1-ում:

2020 թ.-ին որոշ ցուցանիշների մեծությունների նվազումը պայմանավորված է ֆորսմաժորային 2 պատճառով՝ COVID-19 համավարակ և 44-օրյա պատերազմ: Այնուհանդերձ, Հայաստանում աղքատությունը շարունակում է մնալ բարձր մակարդակում: Հատկապես անհանգրստացնող է ծայրահեղ աղքատների ցուցանիշը, որը 2021 թ.-ին 2019 թ.-ի համեմատությամբ ավելացել է 0,1 տոկոսային կետով: Նույնը նկատվել է աղքատ բնակչության ցուցանիշի առումով, որը 26,4%-ից (2019 թ.) 2021 թ.-ին հասել է 26,5%-ի: Միաժամանակ, աղքատության խորությունը նկատելիորեն նվազել է՝ 2019 թ. 10,1%-ից հասնելով 4,8%-ի: Նույնը վերաբերում է նաև աղքատության սրությանը՝ 2019 թ. 3,4%-ից 2021 թ. հասնելով 1,4%-ի: Հատկանշական է, որ ծայրահեղ աղքատների բաժինը քաղաքային բնակավայրերում 2019 թ.-ին կազմել է 1,1%, գյուղականում՝ 2,0%, իսկ 2021 թ.-ին համապատասխանաբար՝ 1,0% և 2,1%:

Աղյուսակ 2.3.1

Հայաստանի Հանրապետության աղքատության ցուցանիշները,
2019-2021 թթ.⁴², %

<i>Ցուցանիշ</i>	<i>2019</i>	<i>2020</i>	<i>2021</i>
<i>Ընդամենը</i>			
Ծայրահեղ աղքատ	1.4	0.7	1.5
Աղքատ	26.4	27.0	26.5
Աղքատության խորություն	10.1	4.7	4.8
Աղքատության սրություն	3.4	1.3	1.4
<i>Քաղաքային բնակավայրեր</i>			
Ծայրահեղ աղքատ	1.1	0.4	1.0
Աղքատ	22.2	22.5	21.8
Աղքատության խորություն	8.4	3.6	3.4
Աղքատության սրություն	2.7	0.9	0.9
<i>Գյուղական բնակավայրեր</i>			
Ծայրահեղ աղքատ	2.0	1.2	2.1
Աղքատ	33.2	33.6	33.0
Աղքատության խորություն	12.8	6.2	6.6
Աղքատության սրություն	4.4	1.8	2.0

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ եթե 1999 թ.-ին Ջինիի եկամուտների անհավասարության ցուցանիշը կազմել է 36,2, 2010 թ.-ին՝ 0,30, ապա 2020 թ.-ին՝ 25,2, 2021 թ.-ին՝ 0,364, 2022 թ.-ին՝ 0,352 (ընդ որում, Ջինիի գործակիցը, ըստ սպառման մեծության, 2021 թ.-ին կազմել է 0,252, իսկ 2022 թ.-ին՝ 0,239): Բնակչության աղքատության մակարդակն ըստ միջին գծի 2020 թ.-ին եղել է 27,0%, 2021 թ.-ին՝ 26,5%, 2022 թ.-ին՝ 24,8%, որից ծայրահեղ աղքատության մակարդակը 2021 թ.-ին՝ 1,6%, 2022 թ.-ին՝ 1,2%: Բազմաչափ աղքատության մակարդակը 2021 թ.-ին կազմել է 18,7%, 2022 թ.-ին՝ 20,7%, աղքատության մակարդակն ըստ սուբյեկտիվ գնահատականի համապատասխանաբար՝ 9,5% և 8,4%: Հարաբերական աղքատության մակարդակը, հաշվարկված միջին եկամտի 60%-ով,

⁴² Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ աղքատության ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների տվյալների հետ, քանի որ հաշվարկված են ըստ աղքատության միջին գծի:

կազմել է համապատասխանաբար՝ 22,3%, 21,2%: Օրական 1,90 ԱՄՆ դոլարից պակաս եկամտով բնակչության բաժինը 1999 թ.-ին կազմել է 11,9%, 2010 թ.-ին՝ 1%, իսկ 2020 թ.-ին՝ 0,4%: Օրական 5.50 ԱՄՆ դոլարից պակաս եկամտով բնակչության բաժինը 1999 թ.-ին կազմել է 82,3%, 2010 թ.-ին՝ 62,1%, իսկ 2020 թ.-ին՝ 53,5%: Բացի վերոնշյալից, տոկոսային եկամուտը, որը վաստակել է ամենաբարձր վարձատրվողների 10 տոկոսը, 1999 թ.-ին կազմել է 29,6%, 2010 թ.-ին՝ 25%, իսկ 2020 թ.-ին՝ 21.5%:

Հանրապետությունում աղքատության մակարդակը գնահատվում է նաև ըստ միջազգային գծերի (օրական մեկ շնչի հաշվով եկամտով, համաձայն գնողունակության 2017 թ.-ի համարժեքության՝ ըստ 2,15 դոլարի): 2021 թ.-ին աղքատության ազգային գիծը միջազգայինի նկատմամբ կազմել է 0,5%, 2022 թ.-ին՝ 0,8%⁴³:

Հատկապես մտահոգիչ են հանրապետությունում մանկական աղքատության ցուցանիշները: Այսպես՝ ծայրահեղ աղքատությունը 2021 թ.-ին աղջիկների դեպքում կազմել է 2,8%, տղաների դեպքում՝ 2,3%, 2022 թ.-ին համապատասխանաբար՝ 1,9% և 1,9%, աղքատությունը 2021 թ.-ին աղջիկների դեպքում կազմել է 34,9%, տղաների դեպքում՝ 35,6%, 2022 թ.-ին համապատասխանաբար՝ 32,7 և 31,9%: 2021 թ.-ին ոչ աղքատ են եղել աղջիկների 65,1%-ը, տղաների՝ 64,4%-ը, 2022 թ.-ին համապատասխանաբար՝ 67,3%-ը և 98,1%-ը:


Աղքատությունը, մանավանդ եթե դա շարունակվում է տասնամյակներ, ոչ միայն համազգային չարիք է, այլև սոցիալական հիմքի քայքայման գործիք, որը ներսից ժանգի նման բարոյագրկում է հասարակությունը:

Հասարակության աղքատության պատճառներից հիմնականը եկամտի անհավասար բաշխումն է: Այսպես՝ եթե տնտեսական աճի մեծ մասը բաժին է հասնում հասարակության անդամների փոքրամասնությանը, ապա այդ դեպքում ունենք անարդար ու անհավասար

⁴³ Արմատատի և Համաշխարհային բանկի հետազոտություններ:

հասարակություն: Ուստի նման վիճակը կարելի է շտկել, եթե տնտեսական աճից օգտվեն բնակչության ավելի ու ավելի լայն շերտեր, այլ կերպ ասած, երկրում տեղի ունենա ներառական աճ, որի դեպքում հասարակության յուրաքանչյուր անդամ իր կենսակերպում կզգա նյութական փոփոխություն: Հետևաբար՝ տնտեսական աճի բարձր տեմպերը և ստացված արդյունքի ներառական բաշխումը լուրջ միջոցներ են աղքատության մակարդակի կրճատման գործում: Նկատենք նաև, որ հատկապես վերջին տարիներին նկատելիորեն բարելավվել են եկամտի և սպառման մակարդակի համամասնությունները բնակչության տարբեր շերտերի միջև: Այսպես՝ ամենաապահով բնակչության 20%-ի եկամտի և ծախսի հարաբերակցությունն ամենաանապահով բնակչության եկամտին և ծախսին կազմել է, ըստ սպառման ծախսերի՝ 2021 թ.-ին՝ 5,3 անգամ, 2022 թ.-ին՝ 4,8 անգամ, ըստ դրամական եկամտի՝ 7,8 անգամ և 7,1 անգամ, ըստ դեցիլային խմբերի՝ 2021 թ.-ին՝ 8,4 անգամ, 2022 թ.-ին համապատասխանաբար՝ 7,4, 14,3 և 13,2 անգամ:

Գծապատկեր 2.3.1-ում ներկայացված է աղքատության գիծը ՀՀ-ում 2019-2021 թթ.՝ արտահայտված դրամով:



Գծապատկեր 2.3.1. Աղքատության գիծը Հայաստանում, 2019-2022 թթ., դրամ ⁴⁴

⁴⁴ Կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022 թ. Եր., ՀՀ ՎԿ և ՀՀ վիճակագրական կոմիտեի <https://armstat.am/am/?nid=157&id=945> կայքի տվյալների հիման վրա:

2.3.2. *Սննդամթերքի սպառման մակարդակը*

Թեև հանրապետությունում սննդամթերքի ներմուծման կախվածության ցուցանիշը անվտանգ վիճակում է, սակայն անհանգստացնող է բնակչության կողմից կարևորագույն սննդամթերքի սպառման մակարդակի շեղումը սահմանված նորմերից: Աղյուսակ 2.3.2-ից երևում է, որ սննդամթերքի սահմանված ֆիզիոլոգիական նորմերը գերազանցում են միայն հացամթերքի, կարտոֆիլի և շաքարի փաստացի սպառման մակարդակը, ինչը վկայում է բնակչության կողմից սննդամթերքի սպառման կառուցվածքի մասին:

Աղյուսակ 2.3.2

ՀՀ բնակչության մեկ շնչի հաշվով սննդամթերքի փաստացի սպառումը և մթերքների երաշխավորվող ֆիզիոլոգիական նորմաները

(կգ՝ մեկ տարվա համար)⁴⁵

<i>Արտադրանքի անվանումը</i>	<i>Ֆիզիոլոգիական հիմնավորված նորմերը</i>	<i>Փաստացի սպառվել է</i>		
		<i>2000</i>	<i>2001</i>	<i>2002</i>
1. Հաց և հացամթերք	128	206.7	277.4	326.8
2. Կարտոֆիլ	58	67.4	67.5	59.8
3. Պտուղ և հատապտուղ	92	48.3	46.7	36.5
4. Շաքար	31.5	28	38	42
5. Միս և մսամթերք	75	29.6	36.3	45.1
6. Կաթ և կաթնամթերք	392	124.7	133.4	141.1
7. Ձուլ (հատ)	251	81.7	106.3	113.5
8. Ձուլ և ձկներեն	12.8	3.4	3.9	6.1

Վերջին տարիներին (2018-2022 թթ.) ՀՀ-ում նկատվել է սննդամթերքի կազմի բարելավում (տե՛ս աղյուսակ 2.3.3):

⁴⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 371-379: Այս բաժնում որոշ հիմնախնդիրների քննարկման համար, համեմատության նպատակով, բերված են 2000-ական թվականների սկզբի և 2020 թ.-ի սկզբի տվյալները:

Աղյուսակ 2.3.3

Տնային տնտեսությունների կողմից սննդամթերքի սպառումը

(միջինը մեկ շնչի հաշվով՝ տարեկան, կգ)⁴⁶

Արտադրանքի անվանումը	2018	2019	2020	2021	2022
Ցորենի հաց	104.9	100.7	102.4	102.1	97.1
Ցորենի ալյուր	1.0	0.8	1.0	1.1	1.0
Բրինձ	3.8	4.2	4.1	4.4	4.2
Մակարոնեղեն	6.4	7.0	7.1	6.8	6.6
Տավարի միս	7.3	7.2	8.1	9.7	8.4
Ոչխարի միս	0.1	0.1	0.1	0.2	0.2
Խոզի միս	1.7	1.3	1.8	2.2	1.5
Թռչնի միս	9.0	9.6	10.5	11.0	10.4
Անարատ կաթ, լ	5.6	5.4	5.4	6.4	5.6
Թթվասեր	3.0	3.2	3.2	3.9	3.4
Սերուցքային կարագ	1.2	1.3	1.5	1.7	1.4
Թարմ ձուկ	2.3	2.9	2.6	2.7	3.1
Ձու, հատ	135.4	144.1	146.3	146.5	155.7

Բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտը (2002 թ.՝ 18721 դրամ) բավական ցածր է նվազագույն սպառողական զամբյուրը բավարարելու համար: Ըստ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի համատեղ ուսումնասիրությունների՝ հանրապետության բնակչության միայն 13%-ն ունի նվազագույն սպառողական զամբյուրին հավասար կամ բարձր եկամուտ: Հաշվի առնելով ՀՀ ներկայիս բնատնտեսական, արտադրական և սոցիալական պայմանները և սննդամթերքի ռացիոնալ սպառման կենսաբանական նորմերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով անհրաժեշտ սննդամթերքի օրաբաժնի էներգետիկան ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաշվարկվել է 2412 կիլոկալորիա, մինչդեռ, ըստ վիճակագրական ծառայության ընտրանքային հետազոտությունների տվյալների, 2000-ից բարձր կիլոկալորիա ապահովում է բնակչության միայն 40%-ը: Նվազագույն պա-

⁴⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 154-155:

րենային գամբյուղը (2412 կկալ) մեկ շնչի հաշվով ամսական կազմում է մոտ 25000 դրամ:

Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքատեսակների մասին տվյալները վկայում են, որ վերջիններիս առումով, դեռևս գոյություն ունի որոշակի կախվածություն ներմուծումից (աղյուսակ 2.3.4):

Աղյուսակ 2.3.4

Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակի ռեսուրսները⁴⁷

№	Ապրանքատեսակի անվանումը	Չափի միավորը	2003 թ. հունվար-եկտեմբեր				
			Ներմուծված ¹	Արդահանված ²	Արդահրված	Ընդամենը ռեսուրսներ	Մանրածախ միջին գինը, դրամ
1	2	3	4	5	6	7-4-5+6	8
1	Տավարի միս	տոննա	9658.4	593.6	23996.0 ²	33060.8	1211 (1 կգ)
2	Խոզի միս	-/-	964.5	-	7042.0 ²	8006.5	1282 (1 կգ)
3	Հավի միս	-/-	12479.4	-	4368.0 ²	16847.7	903 ³ (1 կգ)
4	Ձուկ	-/-	187.8	9.9	-	177.9	169 (1 հատ)
5	Կարագ	-/-	3604.6	-	47.7	3652.3	1407 (1 կգ)
6	Պանիր	-/-	253.4	1002.6	5007.0	4257.8	1067 (1 կգ)
7	Սուրճ	-/-	9976.0	1830.9	-	8145.1	2315 (1 կգ)
8	Ցորեն	-/-	304036.8	21.0	216677.0	520692.8	147 (1 կգ)
9.	Հաց	-/-	-	-	293051.0	293051.0	Տե՛ս հաջորդ աղյուսակում
10	Բրինձ	-/-	15685.7	-	-	15685.7	311 (1 կգ)
11	Ալյուր	-/-	6096.7	-	131391.0	137487.7	187 (1 կգ)
12	Ձու	մլն հատ	92.2	332.0	502.2	262.4	444 (10 հատ)
13	Ձեթ	տոննա	18608.8	433.3	2122.1	20297.6	1103 (1 լ)
14	Մարզարին	-/-	4884.0	-	-	4884.0	786 (1 կգ)
15	Շաքարավազ	-/-	86963.1	-	-	86963.1	263 (1 կգ)
16	Մակարոնեղեն	-/-	1996.1	1.1	903.1	2898.1	288 (1 կգ)
17	Գինի	հազ.լիտր	21.5	217.3	2042.3	1846.5	965 (0.71 լ)
18	Էթիլային սպիրտ	-/-	159.7	-	1176.6	1336.3	-

⁴⁷ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 71:

Աղյուսակ 2.3.4-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7-4-5+6	8
19	Կոնյակ	հազ.լիտր	1.8 ⁴	7301.8 ⁴	7093.1	-	3690 (0.5լ)
20	Օղի	-//-	1198.2	128.4 ⁴	11105.3	12175.1	1068 (0.5 ւ)
21	Ծխախոտ (սիգարետ) ⁵	հազ.տուփ	98643.0	9682.3	161095.0	250055.7	192 (1 տուփ)
22	Բենզին	տոննա	192843.9	-	-	192843.9	282 (1 ւ)
23	Դիզելային վառելիք	-//-	111388.0	1.3	-	111386.7	196 (1 ւ)
24	Էլեկտրաէներ- գիա	հազ.կվ/ժ	276308.6	677800.7	5500583.0	5099090.9	25 (1 կվ/ժամ)
25	Պլաստմաս- սայե իրեր	տոննա	10981.8	210.4	240.3	11011.7	-

Ծանոթություն

- ¹ Ներմուծման և արտահանման ցուցանիշները չեն ներառում քաղաքացիների կողմից կազմակերպվող առևտրի փվայները:
- ² Նշված արտադրատեսակների արտադրության ցուցանիշները ներկայացվում են ըստ սպանդային քաշի (հիմնականում արտադրվել են գյուղացիական և բնակչության օժանդակ փնտեսություններում):
- ³ Ցուցանիշը ներառում է նաև հավի բուղը:
- ⁴ Օղու և կոնյակի քանակական չափի միավորը (հազ. լիտր) հաշվարկված է արտաքին առևտրի բնագավառում ապրանքների դասակարգման 8-նիշ ծածկագրին համապատասխան «լիտր 100% սպիրտ» լրացուցիչ չափի միավորից «40% սպիրտ» չափի միավորին անցման միջոցով: Հեղուաբար՝ դա պարունակում է որոշակի մոփավորություն:
- ⁵ Մեկ փուփի մեջ 20 հափ սիգարետ:

1 կգ հացի մանրածախ միջին գինը (դրամ)

Հացի տեսակի անվանումը	2003 թ. հունվար – դեկտեմբեր
Բարձր տեսակի հաց	249
Առաջին տեսակի հաց	215
Լավաշ	326

Աղյուսակ 2.3.5

Վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակի⁴⁸ ռեսուրսները

1	Ապրանքաբե- սակի անվանումը	Չափի միավորը	2022 թ. հունվար-հունիս				
			Արդա- դրված	Ներմու- ված ¹	Արդա- հանված ¹	Ընդամենը ռեսուրսներ	Մանրածախ մի- ջին գինը (դրամ)
2	3	4	5	6	7=4+5-6	8	
1	Տավարի միս	տոննա	8424.7 ²	999.9	1.3	9 423.3	3 285.4 (1 կգ)
2	Խոզի միս	-/-	1504.8 ²	5 840.0	101.9	7 242.9	3 892.0 (1 կգ)
3	Հավի միս	-/-	5201.5 ²	17 429.7	146.3	22 484.9	1 736.8 (1 կգ)
4	Ոչխարի միս	-/-	1303.6 ²	0.6	18.5	1 285.7	4 189.7 (1 կգ)
5	Ձուկ	-/-	12300.0	751.0	4 572.0	8 479.0	3 077.7 ³ (1 կգ)
6	Կարագ	-/-	1540.7	1 731.5	993.5	2 278.7	5 813.9 (1 կգ)
7	Պանիր	-/-	11204.7 ⁴	1 092.6	746.2	11 551.1	2 529.5 (1 կգ)
8	Սուրճ	-/-	-	7 618.3	1 955.6	5 662.7	5 173.9 (1 կգ)
9	Ցորեն	-/-	1 497.0	130 965.5	3 579.4	128 883.1	181.8 ⁵ (1 կգ)
10	Հաց	-/-	130 934.8	130 934.8	(1 կգ) ըստ տես. ¹ տե՛ս հաջորդ աղյուսակում
11	Բրինձ	-/-	-	6 818.3	0.3	6 818.0	1 041.8 (1 կգ)
12	Այլուր	-/-	87 093.4	13 775.9	3.8	100 865.5	496.9 (կգ) (բարձր տեսակի)
13	Ձուլ	մլն հատ	434.8	2.2	21.0	416.0	709.8 (10 հատ)
14	Բուսական յուղ	տոննա	25.3	14 135.0	318.0	13 842.3	1 649.1 (1 լ)
15	Մարգարին	-/-	76.9	9 328.7	124.1	9 281.5	1 387.2 (1 կգ)
16	Շաքարավազ	-/-	24 218.6	2 416.4	0.0	26 635.0	453.4 (1 կգ)
17	Մակարոնեղեն	-/-	2 651.3	6 797.4	206.5	9 242.2	825.8 (1 կգ)
18	Գինի	հազ. լիտր	3 660.7	373.8	1 676.9	2 357.6	2 469.6 (1 լ)
19	Կոնյակ ⁶	հազ. լիտր 100% սպիրտի	9 630.0	22.6	6 922.2	2 730.4	12 026.5 (1 լ)
20	Օղի ⁶	-/-	922.1	489.2	630.1	781.2	4 662.9 (1 լ)
21	Գարեջուր	հազ. լիտր	12 940.5	3 143.3	948.8	15 135.0	1 135.6 (1 լ)
22	Ծխախոտ (սիգարետ) ⁷	հազ. տուփ	601 247.0	39 415.2	592 553.9	48 108.3	616.2 (1 տուփ)
23	Բենզին	տոննա	-	110 525.4	-	110 525.4	534.5 (1 լ)
24	Դիզելային վառ.	-/-	-	79 182.3	-	79 182.3	576.7 (լ)
25	Էլեկտրաէներգ.	մլն կՎտժ	4 387.3	112.3	877.7	3 621.9	44.1 ⁸ (կՎտժ)

⁴⁸ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-հունիսին, ՀՀ ՎԿ, Եր., 2022, էջ 368: Ընդ որում, «Էթիլային սպիրտ» ցուցանիշի բացակայությունը պայմանավորված է արտադրության, ներմուծման և արտահանման ծավալների չափի միավորների անհամապատասխանությամբ:

Ծանոթություն

- ¹ Ներմուծման և արտահանման ցուցանիշները չեն ներառում քաղաքացիների կողմից կազմակերպվող առևտրի փվալները:
- ² Ներառյալ գյուղացիական փնտեսությամբ զբաղվող անհատական փնտեսությունների կողմից արտադրվածը (բացառությամբ՝ ներքին սպառումը)¹ արտահայտված սպանդային քաշով:
- ³ Ցուցանիշը ներառում է նաև փեղական արտադրության թարմ իշխան ձկնափետասկը:
- ⁴ Ներառյալ, ըստ «Տնային փնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության», սրացված փնտեսությունների կողմից փեղական արտադրության գնված պանրի, այդ թվում՝ փայնագործական պայմաններում արտադրված պանրի (բացառությամբ ներքին սպառումը) ծավալի լրահաշվարկը:
- ⁵ Արտադրողի իրացման գինը:
- ⁶ 2022 թ. հունվարին սույն ապրանքափետասկների համար նախկինում կիրառվող «լիտր» հաշվարկային միավորից անցում է կատարվել «լիտր 100% սպիրտի» հաշվարկային միավորի:
- ⁷ Մեկ տուփում՝ 20 հար սիգարետ:
- ⁸ 2022 թ.-ի հունվար-փետրվարին սակագինը հաշվարկվել է ամսական մինչև 400 կՎտժ սպառում ունեցող բնակչության համար գործող՝ ցերեկային 44.98 դրամ և գիշերային 34.98 դրամ, 400 կՎտժ-ից ավելի սպառում ունեցող բնակչության համար գործող՝ ցերեկային 47.98 դրամ և գիշերային 37.98 դրամ, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների համար՝ ցերեկային 29.99 դրամ և գիշերային 19.99 դրամ միջին կշռված սակագների հիման վրա: 2022 թ.-ի մարտին սակագինը (գործում է 2022 թ. փետրվարի 1-ից) հաշվարկվել է ամսական մինչև 200 կՎտժ սպառում ունեցող բնակչության համար գործող՝ ցերեկային 46.48 դրամ և գիշերային 36.48 դրամ, 201-400 կՎտժ սպառում ունեցող բնակչության համար գործող՝ ցերեկային 48.48 դրամ և գիշերային 38.48 դրամ, 400 կՎտժ-ից ավելի սպառում ունեցող բնակչության համար գործող՝ ցերեկային 53.48 դրամ և գիշերային 43.48 դրամ, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների համար՝ ցերեկային 29.99 դրամ և գիշերային 19.99 դրամ միջին կշռված սակագների հիման վրա: Որպես փետասկարար կշիռ՝ հաշվետու ամսվա միջին ամսական սակագնի հաշվարկման համար օգտագործվել են բնակչության կողմից նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի փաստացի քանակները:

1 կգ հացի մանրածախ միջին գինը, դրամ

Հացի տեսակի անվանումը	2022 թ. հունվար-հունիս
Բարձր տեսակի հաց	584.9
Լավաշ	936.5

2.3.3. Ժողովրդագրական անվանագության ցուցանիշները

Բավական անհանգստացնող են բնակչության աճի (նվազման) քանակը բնութագրող ժողովրդագրական ցուցանիշները և դրանց բացասական միտումները: Աղյուսակ 2.3.6-ից երևում է, որ տարեցտարի նվազել է բնակչության բնական աճը, և 2002 թ. դա կազմել է 2.1 (հազար մարդու հաշվով): Գյուղական բնակչության բնական աճը գերազանցում է քաղաքայինին, սակայն եթե հաշվի առնենք, որ արտագաղթի և արտագնա աշխատանքի մեկնողների թիվն առավելապես մեծ է գյուղական վայրերում, և գյուղական բնակչությունը կազմում է ողջ բնակչության 33.4%-ը, ապա կհանգենք գյուղերի «ամայացման» և ծերացման հիմնախնդիրներին (հատկապես սահմանամերձ գյուղերում):

Աղյուսակ 2.3.6

«Ը բնակչության բնական շարժի ցուցանիշները, 1999-2003 թթ.⁴⁹
(ծնվածներ, մահացածներ և բնակչության բնական աճ)

Տարիները	Ընդամենը, հազ. մարդ			1000 բնակչի հաշվով		
	Ծնվածները	Մահացածները	Բնական աճը	Ծնվածները	Մահացածները	Բնական աճը
<i>Ամբողջ բնակչությունը</i>						
1999	36.5	24.1	12.4	9.6	6.3	3.3
2000	34.3	24.0	10.3	9.0	6.3	2.7
2001	32.1	24.0	8.1	8.4	6.3	2.1
2002	32.2	25.5	6.7	10.1	8.0	2.1
2003	35.5	25.5	9.9	11.1	8.0	3.1
<i>Քաղաքային բնակչությունը</i>						
1999	22.4	15.8	6.6	8.9	6.2	2.7
2000	21.4	15.7	5.7	8.4	6.2	2.2
2001	20.3	15.6	4.7	8.0	6.2	1.8
2002	20.8	16.7	4.1	10.1	8.1	2.0
<i>Գյուղական բնակչությունը</i>						
1999	14.1	8.3	5.8	11.1	6.5	4.6
2000	12.9	8.3	4.6	10.2	6.6	3.6
2001	11.8	8.4	3.4	9.2	6.6	2.6
2002	11.4	8.8	2.6	10.0	7.7	2.7

⁴⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003, Եր., «Հ ԱՎԾ», էջ 31:

Չափազանց մտահոգիչ են ՀՀ բնակչության բնական աճի ցուցանիշները (աղյուսակ 2.3.7): Այսպես՝ 2018 թ.-ին ՀՀ բնակչության բնական աճը կազմել է 10.8 հազար մարդ, 2019 թ.-ին՝ 9.8 հազար մարդ, 2020 թ.-ին՝ 0.2 հազար մարդ, 2021 թ.-ին՝ 2.2 հազար մարդ, 2022 թ.-ին՝ 9.7 հազար մարդ: Այդ ցուցանիշները հազար բնակչի հաշվով կազմել են համապատասխանաբար՝ 2.6, 3.4, 0.1, 0.8, 3.3 մարդ⁵⁰:

Աղյուսակ 2.3.7

ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները, 2018-2022 թթ.
(ծնվածներ, մահացածներ և բնակչության բնական հավելված / նվազում)

Տարիներ	Ընդամենը 1 000 մարդ			1 000 բնակչի հաշվով		
	Ծնվածներ	Մահացածներ	Բնական հավելված/ նվազում	Ծնվածներ	Մահացածներ	Բնական հավելված/ նվազում
<i>Ամբողջ բնակչությունը</i>						
2018	36.6	25.8	10.8	12.3	8.7	3.6
2019	36.0	26.2	9.8	12.2	8.8	3.4
2020	36.4	36.2	0.2	12.3	12.2	0.1
2021	36.6	34.4	2.2	12.4	11.6	0.8
2022	36.4	26.7	9.7	12.3	9.0	3.3
<i>Քաղաքային բնակչությունը</i>						
2018	24.3	16.7	7.6	12.8	8.8	4.0
2019	23.7	16.9	6.8	12.5	8.9	3.6
2020	25.4	24.7	0.7	13.4	13.1	0.3
2021	22.8	23.5	-0.7	12.1	12.4	-0.3
2022	19.7	17.6	2.1	10.4	9.3	1.1
<i>Գյուղական բնակչությունը</i>						
2018	12.3	9.1	3.2	11.5	8.5	3.0
2019	12.3	9.3	3.0	11.5	8.7	2.8
2020	11.0	11.5	-0.5	10.3	10.7	-0.4
2021	13.8	10.9	2.9	12.9	10.2	2.7
2022	16.7	9.1	7.6	15.6	8.5	7.1

Այսօր Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական անվտանգության նկատմամբ հիմնական սպառնալիքը բնակչության արտահոսքն է, որն առաջացնում է ոչ միայն քանակական, այլև որա-

⁵⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 15:

կական բնույթի փոփոխություններ (բնակչության մեջ տարբեր խավերի, աշխատող և չաշխատող, ակտիվ և պասսիվ, կառավարման հակվածություն ունեցող և չունեցող անհատների, տղամարդկանց ու կանանց հարաբերակցության առումով):

Տվյալ հիմնախնդիրը, որպես գլոբալացմանը բնորոշ երևույթ, միաժամանակ պատմամշակութային բնույթի է:

Արտագաղթը, որպես ազգային անվտանգության սպառնալիք, Հայաստանի համար առավել հաշվարկելի է դառնում, երբ ուսումնասիրում ենք նույն երևույթը Հարավային Կովկասի մյուս երկու հանրապետություններում, ինչպես նաև Հայաստանում բարիք ստեղծող ու պետական օժանդակության կարիք ունեցող անձանց հարաբերակցությունը: Արևմտյան և ռուսական մի շարք աղբյուրների տվյալների համաձայն՝ Ադրբեջանից վերջին տարիներին արտագաղթել է 3-3.5 մլն մարդ, որից միայն 700 հազարը՝ այլազգի: Ուստի կարող ենք համարել, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների հետևանքով Հայաստանից տեղի ունեցած արտագաղթը ներկա պահին լրջագույն քանակական սպառնալիք չի ստեղծում Հայաստանի համար: Սակայն, կան երկու այլ հիմնախնդիրներ.

1. Հայաստանում և Ադրբեջանում բնակչության վերարտադրության հարաբերակցությունը (որն ի նպաստ Հայաստանի չէ),
2. ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները (եթե Ադրբեջանը զարգանալու է նավթի և գազի արտահանման ուղղությամբ, ապա այս դեպքում բարձր որակավորում ունեցող կադրերի պահանջ չի առաջադրվում, մինչդեռ Հայաստանի պարագայում, որի զարգացումը հիմնվելու է բարձր տեխնոլոգիաների վրա, առաջին հերթին, տվյալ պահանջն է առաջադրվում):

Ինչպես երևում է աղյուսակ 2.3.8-ից, 1999-2021 թթ. միգրացիայի մնացորդը հիմնականում բացասական է եղել՝ որոշ տարիների աճելով գրեթե մինչև 10, սակայն այս ցուցանիշը անհամեմատ բարձր է, քանի որ մեկնողների և եկողների հոսքերը դժվար է ճշտորեն վերա-

հսկել: Ուսումնասիրված չէ ժամանակավոր աշխատանքային, պայմանագրային, մշտական բնակության միգրացիայի կառուցվածքը: Տնտեսական անվտանգության տեսանկյունից, այս հարցն առանցքային է, քանի որ վերջին տարիներին տեղի է ունենում ուղեղների «արտահոսք», որի բացասական ազդեցությունն ապագայում չափազանց մեծ է լինելու: Բարձրակարգ կադրերի և գիտնականների արտահոսքը ուղղակի սպառնալիք է երկրի մտավոր անվտանգության համար:

Աղյուսակ 2.3.8

ՀՀ բնակչության միգրացիոն մնացորդը, 1999-2003 թթ. և 2018-2022 թթ.⁵¹

Տարի	1999	2000	2001	2002	2003	2018	2019	2020	2021	2022
1000 բնակչի հաշվով բնակչության միգրացիոն մնացորդը (-,+)	-2.6	-2.7	-2.6	-2.7	-9.8	-6.2	-5.2	1.1	-1.4	2.0

2.3.4. Բնակչության դրամական եկամուտների ձևավորումը

Ներկայում Հայաստանում ՀՆԱ վերաբաշխման գործում ցածր է պետության ունեցած դերը, այսինքն՝ պետական բյուջեի հարկային եկամուտների տեսակարար կշիռը բավական ցածր է ՀՆԱ-ի նկատմամբ (2002 թ.-ին այս ցուցանիշը կազմել է 14.09%, 2003 թ.-ին՝ 14.63%): Հիշեցնենք, որ զարգացած երկրներում այս ցուցանիշը կազմում է 30-35% (որոշ երկրներում, օրինակ՝ Դանիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում դա գերազանցում է 50%-ը): Առաջին հայացքից կա-

⁵¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, Երևան, ՀՀ ԱՎԾ, էջ 43, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 27:

րող է թվալ, որ մեր տնտեսությունը ձգտում է ազատականացված շուկայի մոդելին, որն ուղղված է հարկային բեռի թեթևացմամբ ձեռնարկատիրական գործունեության խթանմանը: Այս դեպքում պետք է ենթադրել, որ օտարերկրյա կապիտալը պիտի հոսի դեպի Հայաստան, քանի որ այստեղ բարձր է նաև բանկային տոկոսադրույքը: Այնուամենայնիվ, այս երևույթը տեղի չի ունենում, քանի որ հարկային բեռի իրական մակարդակը և տնտեսական գործունեության ռիսկայնությունը հանրապետությունում բավական բարձր են, և հետևաբար՝ մեծ է ստվերային տնտեսության տեսակարար կշիռը (տարբեր աղբյուրների տվյալներով դա կազմում է ՀՆԱ 35-60%-ը): Որպես հետևանք՝ պետբյուջեի շարունակական ճեղքվածքի պայմաններում մեծանում է երկրի կախվածությունն արտաքին աշխարհից, իսկ տնտեսական ակտիվության զգայունությունը՝ արտասահմանից ստացվող ֆինանսական միջոցներից: Պետական բյուջեի պակասուրդը բացարձակ մեծությամբ տարիներ շարունակ մնում է գրեթե անփոփոխ, այսպես՝ 1999 թ.՝ 4.1%, 2000 թ.՝ 4.9%, 2003 թ.՝ 4.3%, 2018 թ.՝ -1.6%, 2019 թ.՝ -0.8%, 2020 թ.՝ -5.1%, 2021 թ.՝ -4.5%, 2022 թ.՝ -2.2%, իսկ բյուջեի եկամտային մասում անուղղակի հարկերը (առանց այն էլ ուղղակի հարկերի համեմատությամբ մեծ տեսակարար կշիռ ունեն) աճի միտում են ցուցաբերում: Համախառն բյուջեի պակասուրդը 2018 թ. կազմել է -96.3 մլրդ դրամ, 2019 թ.՝ -52.4 մլրդ դրամ, 2020 թ.՝ -316.2 մլրդ դրամ, 2021 թ.՝ -318 մլրդ դրամ, 2022 թ.՝ -189.5 մլրդ դրամ⁵²:

Բնակչության դրամական եկամուտների ձևավորման գործում մեծ դեր են խաղում մեր հայրենակիցների կողմից Հայաստան ուղարկվող դրամական միջոցները (մոտավոր տվյալներով՝ 400-600 մլն դոլար): Արտաքին միջոցներից կախվածության հանգամանքը, տնտեսական անվտանգության տեսանկյունից, վտանգավոր է այնքանով, որ արտասահմանյան երկրների կողմից (հատկապես Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ) խիստ միգրացիոն քաղաքականություն վարելու դեպ-

⁵² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, եր., ՀՀ ՎԿ, էջ 18:

քում այդ միջոցների կրճատումը մեր երկրում կհանգեցնի ճգնաժամային երևույթների: Դրսից ստացվող միջոցներից կախվածությունն անմիջապես երևում է արտաքին տնտեսական գործունեության ֆինանսավորման ժամանակ, քանի որ զուտ արտահանումը գերազանցում է խնայողությունները (2002 թ.՝ 1.42 անգամ):

Հայաստանի համար անցանկալի մակարդակում է գտնվում խնայողության (կուտակման) նորման, որը 1995-2022 թթ. փոփոխվել է՝ գտնվելով 17.4-32.9%-ի միջակայքում (տե՛ս աղյուսակ 2.3.9): Նկատենք նաև, որ այդ ցուցանիշի անվտանգության ներքին սահմանը զարգացող երկրների համար ՀՆԱ առնվազն 25%-ն է, ինչը ՀՀ-ում վերջին տարիներին չի ապահովվել:

Վերջին տարիներին (2018-2022 թթ.) համախառն ներքին արդյունքի աճի տեմպը գերազանցել է վերջնական սպառման ծախսերի աճի տեմպը: Համապատասխանաբար՝ 2022 թ.-ին 2018 թ.-ի համեմատությամբ ՀՆԱ աճի տեմպը կազմել է 141.3%, իսկ վերջնական սպառման ծախսերինը՝ 122.8%, ինչը վկայում է տնտեսության «առողջացման» մասին, քանի որ պետությունն ավելի շատ ռեսուրսներ է հատկացնում ոչ թե սպառմանը, այլ կուտակմանը:

Բնակչության դրամական եկամուտների բաշխումը նույնպես կարևոր գործոն է տնտեսական աճի համար: Այսպես՝ եթե բնակչության դրամական եկամուտների բաշխման ամենահարուստ 20 տոկոսի (քվինտիլի) եկամուտների մասնաբաժինը մեծանում է, ապա ՀՆԱ աճը միջնաժամկետ կտրվածքով իրականում նվազում է: Ի հակադրություն եկամուտների բաշխման սանդղակի, ստորին 20 տոկոսի (աղքատների) եկամտի մասնաբաժնի աճն ապահովում է տնտեսական աճի ավելի բարձր տեմպ: Աղքատներն ու միջին խավը մեծ նշանակություն ունեն տնտեսական աճի համար՝ տնտեսական, սոցիալական և քաղաքական մի շարք փոխկապակցված գործիքների միջոցով:

Աղյուսակ 2.3.9

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ օգտագործումը և օգտագործման կառուցվածքը, 1995-2022 թթ.⁵³

Ցուցանիշ	1995	2000	2005	2010	2015	2018	2019	2020	2021	2022
Ներքին արդյունք (համախառն, շուկ. գներով)	522,256	1,031,338	2,242,881	3,460,203	5,043,633	6,017,035	6,543,322	6,181,903	6,991,778	8,501,436
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Վերջնական սպառման ծախսեր	613,392	1,123,495	1,929,976	3,289,548	4,591,090	5,492,806	6,281,852	5,581,949	5,935,539	6,745,454
	117.5	108.9	86.0	95.1	91.0	91.3	96.0	90.3	84.9	79.3
Համախառն կուտակում	96,223	192,278	683,323	1,137,342	1,045,572	1,347,800	1,139,096	1,215,599	1,605,583	1,839,227
	18.4	18.6	30.5	32.9	20.7	22.4	17.4	19.7	23.0	21.6
հիմնական միջոցների համախառն կուտակում	84,365	190,130	668,268	1,156,732	1,039,622	1,007,307	1,034,866	1,098,767	1,482,533	1,722,889
	16.2	18.4	29.8	33.4	20.6	16.7	15.8	17.8	21.2	20.3
Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	11,858	2,148	15,055	-19,390	5,950	340,494	104,231	116,833	123,051	116,338
	2.3	0.2	0.7	-0.6	0.1	5.7	1.6	1.9	1.8	1.4

⁵³ Կազմվել է Հայաստանի ազգային հաշիվները 1990-2001, ՀՀ ԱՎԾ, 2001 թ., էջ 36-ի, Հայաստանի ազգային հաշիվները 2012, ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 56-ի և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի «Ազգային հաշիվներ» հաստվածի հիման վրա, <https://armstat.am/am/?nid=202>

Աղյուսակ 2.3.9-ի շարունակությունը

Ցուցանիշ	1995	2000	2005	2010	2015	2018	2019	2020	2021	2022
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալը	-199,810	-280,194	-323,434	-847,303	-616,902	-823,571	-877,626	-615,645	-549,345	-83,246
	-38.3	-27.2	-14.4	-24.5	-12.2	-13.7	-13.4	-10.0	-7.9	-1.0
արտահանում	-	-	646,157	720,764	1,499,240	2,370,284	2,705,716	1,840,043	2,510,499	4,251,878
	-	-	28.8	20.8	29.7	39.4	41.4	29.8	35.9	50.0
ներմուծում	-	-	969,591	1,568,067	2,116,141	3,193,855	3,583,342	2,455,688	3,059,843	4,335,124
	-	-	43.2	45.3	42.0	53.1	54.8	39.7	43.8	51.0
Վիճակագրական շեղում	12,451	-4,241	-46,984	-119,384	23,872	-	-	-	-	-

Ծանոթություն. համարիչում՝ մլն ՀՀ դրամ, հայտարարում՝ %-ով ՀՆԱ-ի նկատմամբ:

Տնտեսական քաղաքականությունը, որը կենտրոնանում է աղքատների և միջին խավի վրա, կարող է մեղմել անհավասարությունը: Անկախ տնտեսական զարգացման մակարդակից, կրթության և առողջապահության ավելի լավ հասանելիությունը և լավ մշակված սոցիալական քաղաքականությունը կարող են միաժամանակ ապահովել, որ աշխատաշուկայի ինստիտուտները չափից ավելի չհարկեն աղքատներին և, դրանով իսկ, մեծացնեն աղքատների և միջին խավի եկամուտների բաժինը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, բնակչության եկամուտների բաշխման և, հատկապես, անհավասարության մեղմման գործում չկա միասնական քաղաքականություն: Սոցիալ-տնտեսական համապատասխան քաղաքականության հիմքում պետք է լինեն երկրի որոշակի և հստակ քաղաքականությունը և ինստիտուցիոնալ կարգավորումները: Ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում բնակչության դրամական եկամուտների բաշխման քաղաքականությունը պետք է ուղղված լինի մարդկային կապիտալի և նրա հմտությունների ավելացմանը՝ միտված բարեփոխումներին, որոնք հիմնականում պետք է ապահովվեն հարկային համակարգերն ավելի առաջադեմ դարձնելու ճանապարհով: Ընդհանուր առմամբ, տնտեսական աճի և եկամուտների հավասարության նպատակների միջև փոխլրացումները ցույց են տալիս, որ միջին կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունները կարող են նաև ազդել եկամտի բաշխման վրա և ապահովել ավելի ներառական բարեկեցություն⁵⁴:

Յուրաքանչյուր հասարակության ներսում արդարության ընկալումն ու ըմբռնումն ամենից առաջ պայմանավորված են բնակչության առանձին խմբերի միջև եկամուտների բաշխման համամասնություններով: Եթե այդ եկամուտները բաշխվում են անհավասարաչափ,

⁵⁴ Era Dabla-Norris, Kalpana Kochhar, Frantisek Ricka, Nujin Suphaphiphat, Evridiki Tsounta, Causes and Consequences of Income Inequality: A Global Perspective, Strategy, Policy, and Review Department, International Monetary Fund, June 2015 // <https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2015/sdn1513.pdf>, Էլ. ռեսուրսը առկա է 23.12.2023 թ. դրությամբ:

ապա հասարակության առանձին խմբերի միջև առաջանում է անարդարության զգացում, որը և կարող է ունենալ չափազանց բացասական սոցիալ-տնտեսական հետևանք: Եկամուտների բաշխման վերաբերյալ հասարակության առանձին խմբերի կարծիքը և վերաբերմունքը պարզելու գործում կարևոր գործիք են բնակչության շրջանում անցկացվող սոցիոլոգիական հարցումները և դրանց արդյունքների վերլուծությունը, որոնց հիման վրա էլ պետք է մշակվի համապատասխան սոցիալական քաղաքականություն:

Աղյուսակ 2.3.10-ում բերված են Հայաստանի Հանրապետության բնակչության անհավասարության և աղքատության հիմնական ցուցանիշները 2001-2020 թթ.:

2001 թ.-ին Զինիի գործակիցը կազմել է 35.4, 2010 թ.` 30, 2020 թ.` 25.2, օրական 5.50 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող բնակչության բաժինն այդ տարիներին կազմել է համապատասխանաբար` 83.8%, 62.1%, 53.5%, իսկ տոկոսային այն եկամուտը, որը վաստակել է ամենաբարձր վարձատրվողների 10 տոկոսը համապատասխանաբար կազմել է 29.1%, 25% և 21.5%:

Հայաստանում 2020 թ. որոշ ցուցանիշների նվազումը պայմանավորված է ֆորսմաժորային 2 իրավիճակով` COVID-19 համավարակ և 44-օրյա պատերազմ: Այնուհանդերձ, աղքատությունը Հայաստանում շարունակում է բարձր մակարդակում մնալ: Հատկապես անհանգստացնող է ծայրահեղ աղքատների ցուցանիշը, որը 2021 թ.-ին 2019 թ.-ի համեմատությամբ ավելացել է 0.1%-ով: Նույնը նկատվել է աղքատ բնակչության ցուցանիշի տեսանկյունից. 2019 թ.-ի 26.4%-ից 2021 թ.-ին վերջինս հասել է 26.5%-ի: Միաժամանակ, աղքատության խորությունը նկատելիորեն նվազել է` 2019 թ. 10.1%-ից հասնելով 4.8%-ի: Նույնը վերաբերում է նաև աղքատության սրությանը, որը 2019 թ.-ի 3.4%-ից 2021 թ.-ին հասել է 1.4%-ի: Հատկանշական է, որ ծայրահեղ աղքատների բաժինը քաղաքային բնակավայրերում 2019 թ. կազմել է 1.1% տոկոս, գյուղական բնակավայրերում` 2.0%, իսկ 2021 թ. համապատասխանաբար` 1.0% և 2.1%: Այսպես` եթե 2018-2022 թթ. ՀՀ ՀՆԱ-ն ավելացել է 141.2%-ով (2018 թ.-ի 6017.05 մլրդ դրամից 2022 թ.-ին

հասնելով 8501.4 մլրդ դրամի), ապա վերջնական սպառման ծախսերը՝ 122.8%-ով (2018 թ.-ի 54928 մլրդ դրամից 2022 թ.-ին կազմել է 6745.5 մլրդ դրամ)⁵⁵:

Աղյուսակ 2.3.10

Հայաստանի Հանրապետության բնակչության անհավասարության և աղքատության հիմնական ցուցանիշները, 2001-2020 թթ.⁵⁶

Տարի	Ջինիի գործակից	Աղքատություն, բնակչության տոկոս	Օրական 1.90 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող բնակչության բաժինը	Օրական 5.50 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող բնակչության բաժինը	Տոկոսային եկամուտ, որը վաստակել է ամենաբարձր վարձավորվողների 10
2001	35.4	տ. չ.	14	83.8	29.1
2002	34.8	տ. չ.	10	82.9	29
2003	33,0	տ. չ.	7.5	82.6	28.2
2004	37.5	տ. չ.	5.3	73.5	31.7
2005	36.0	տ. չ.	2.6	67.5	30.8
2006	29.7	տ. չ.	2	62.8	24.5
2007	31.2	տ. չ.	1.5	56	25.1
2008	29.2	տ. չ.	0.9	52.1	23.7
2009	28.0	տ. չ.	1.2	60.7	22.9
2010	30.0	տ. չ.	1	62.1	25
2011	29.4	տ. չ.	1.2	59.3	24
2012	29.6	տ. չ.	0.8	55.2	24.5
2013	30.6	տ. չ.	1.7	53.1	24.7
2014	31.5	տ. չ.	1.4	51.1	25.7
2015	32.4	տ. չ.	1.1	46.7	26.7
2016	32.5	տ. չ.	1.1	42.4	25.3
2017	33.6	տ. չ.	0.8	48.7	28.4
2018	34.4	տ. չ.	1.3	48.9	29.2
2019	29.9	26.4	1	52.3	25.1
2020	25.2	27	0.4	53.5	21.5

⁵⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 16:

⁵⁶ Armenia: Gini inequality index, https://www.theglobaleconomy.com/Armenia/gini_inequality_index/, Էլ. նետսուրսն առկա է 9.07.2023 թ. դրությամբ:

2.3.5. Արտաքին պարտքը և դրա սահմանային մակարդակները

Ամեն մի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և արտաքին տնտեսական հարաբերությունների կառուցման գործում էական նշանակություն ունեն արտաքին պետական պարտքի կառավարումը, օգտագործման ուղղությունները և պարտքի օգտագործման արդյունքում արձանագրված մակրոտնտեսական ցուցանիշների բարելավումը: Հատկապես վերջին 20 տարիների ընթացքում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական միտումներից մեկն է դարձել համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) նկատմամբ արտաքին պետական պարտքի առաջանցիկ աճը: Ըստ որում, վերջին ժամանակաշրջանում բազմաթիվ երկրների արտաքին պետական պարտքի աճի տեմպը գերազանցել է ՀՆԱ աճի տեմպը: Իր հերթին, արտաքին պետական պարտքի ձևավորումն ունի սահմաններ (սահմանափակումներ), որոնք պահանջում են փոխառու միջոցների արդյունավետ օգտագործում: Այս տեսանկյունից, բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որի արտաքին պետական պարտքը մոտ է ՀՆԱ-ի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված առավելագույն շեմին, և նոր պարտքի ներգրավման համար անհրաժեշտ է, առաջին հերթին, լուծել արտաքին պարտքի օգտագործման արդյունավետության հիմնախնդիրը: Վերջինս ենթադրում է, որ արտաքին պետական պարտքի աճի տեմպը պետք է ավելի դանդաղ լինի, քան երկրի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներինը (ՀՆԱ, զբաղվածություն, զուտ արտահանում և մի շարք այլ մակրոտնտեսական ցուցանիշներ):

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում դժվար է պատկերացնել որևէ երկրի սոցիալ-տնտեսական զարգացում՝ առանց արտաքին պետական պարտքի ներգրավման: Ավելին, հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային տնտեսությունների առաջընթացի

անհրաժեշտ գործիքներից մեկը (հաճախ նաև ամենակարևորը) դարձել է փոխատվական կապիտալը: Քանի որ ֆինանսական միջոցները չեն կարող միաժամանակ մատչելի լինել տնտեսավարող բոլոր սուբյեկտների համար, նրանցից շատերը, ցանկանալով ապահովել անխափան ֆինանսատնտեսական գործունեություն, այդ միջոցները ձեռք են բերում այլ աղբյուրներից ներգրավման ճանապարհով՝ առաջացնելով փոխատվական հարաբերություններ: Փողի՝ որպես կուտակման և վճարման միջոցի գործառույթների զարգացումը հանգեցրեց ֆինանսական միջոցների համակենտրոնացմանն ու վերաբաշխմանն այդ միջոցների կարիքն ունեցող ինչպես գործարարությամբ զբաղվող սուբյեկտների, այնպես էլ առանձին տնտեսական միությունների և տարածաշրջանների միջև: Ասվածի ապացույցն է այն իրողությունը, որ զարգացած երկրները կամ նրանց տնտեսական միավորումները (օրինակ՝ ՏՀԶԿ, Եվրամիություն) ֆինանսավորում են զարգացող երկրների տնտեսությունները:

Միջազգային վարկերի և փոխառությունների ներգրավումը որոշակի պարտավորություններ է առաջացնում ոչ միայն վարկատուների, այլև տվյալ երկրի համար՝ դրանք առավել արդյունավետ օգտագործելու առումով: Հայտնի է, որ նշված փոխատվական միջոցները, որպես կանոն, նպատակային են և նախատեսված որոշակի ոլորտի (ոլորտների) և առանձին ծրագրերի իրականացման համար: Որպեսզի տվյալ երկիրը կարողանա օգուտ քաղել օտարերկրյա փոխառություններից, բացի նպատակայնության ապահովումից, անհրաժեշտ է դրանք հնարավորին չափով արդյունավետորեն օգտագործել թե՛ ֆինանսական միջոցների տնտեսման և թե՛ արտասահմանյան փորձի ու տեխնոլոգիաների ներդրման իմաստով: Անհրաժեշտ է հիշել, որ ապագայում առաջընթաց ապահովելու համար պետության գերխնդիրն է հետագա սերունդներին թողնել ոչ թե անցած ժամանակաշրջանի կուտակված պարտավորությունները, այլ կայուն տնտեսական հիմք (ներուժ), որի վրա հնարավոր կլինի ստեղծել առողջ և արագ զարգացող արդյունավետ տնտեսություն:

Աղյուսակ 2.3.11

ՀՀ պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները, 2008-2022 թթ.⁵⁷

Ցուցանիշը	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտաքին պարտք, մլն ԱՄՆ դոլար	1577.2	2966.8	3300.5	3569.3	3739.1	3899.1	3785.2	4316.2	4805.6	5494.9	5536.4	5784.5	6059.4	6648.4	6445.4
Արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ, % (դոլարային)	13.5	34.3	35.6	35.2	35.2	35.1	32.6	40.9	45.6	47.6	44.4	42.5	47.9	48.0	33.0
Արտաքին պարտք, մլրդ դրամ	483.8	1121.1	1199.5	1376.9	1509.0	1581.6	1797.9	2088.0	2325.6	2660.1	2678.2	2774.8	3166.6	3192.2	2536.7
Արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ, % (դրամային)	13.6	35.7	34.7	36.4	35.4	34.7	37.2	41.4	45.9	47.8	44.5	42.4	51.2	45.7	29.8
Ներքին պարտք, մլն ԱՄՆ դոլար	328.8	408.8	504.8	565.1	632.9	689.4	656.3	761.5	1136.5	1279.7	1386.1	1536.7	1909.0	2577.2	4192.3
Ներքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ, % (դոլարային)	2.8	4.7	5.5	5.6	6.0	6.2	5.7	7.2	10.8	11.1	11.1	11.3	15.1	18.6	21.5
Ներքին պարտքը, մլրդ դրամ	100.9	154.4	183.4	218.1	255.5	279.7	311.7	368.4	550.0	619.5	670.5	737.2	997.7	1237.4	1650.0
Ներքին պարտք ՀՆԱ-ի նկատմամբ, % (դրամային)	2.8	4.9	5.3	5.8	6.0	6.1	6.5	7.3	10.9	11.1	11.1	11.3	16.1	17.7	19.4

⁵⁷ Կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի ArmStatBank տվյալների բազաների «Պետական ֆինանսներ» հաստվածի տվյալների հիման վրա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_1%20Economy%20and%20finance_14%20Government%20Finances/EF-gf-3.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

Թեև ՀՀ պետական պարտքի (արտաքին և ներքին) բեռը բավական գերազանցում է սահմանային ցուցանիշը (աղյուսակ 2.3.11), սակայն Հայաստանը չի դասվում ծանր պարտքի բեռ ունեցող երկրների շարքին:

2002 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքը 1025.2 մլն ԱՄՆ դոլար էր, որը ՀՆԱ մոտ 43.3%-ն էր: Արտաքին պարտքի այդ մակարդակը, համաձայն միջազգային չափանիշների, ցածր է «կրիտիկական սահմանից» (ՀՆԱ-ի 50%): Արտաքին պարտքը 2002 թ. կազմել է արտահանման ծավալի 113%-ը (2000 թ.՝ 198%-ը), որը համապատասխանում է միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշներին:

Պարտքի բեռի գնահատման կարևոր ցուցանիշներից է դրա զուտ ներկա արժեքը: Արտաքին պարտքի զուտ ներկա արժեքը (ՁՆԱ) 2003 թ.-ին կազմել է ՀՆԱ 26.1%-ը և արտահանման 81.5%-ը: Նախորդ տարիների համեմատ այս ցուցանիշները նվազել են: Ուսումնասիրվող երկրորդ ժամանակահատվածի (2018-2022 թթ.) վերջում՝ 2022 թ.-ին, այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 30% և 60.3% և նույնպես նվազման միտում են ունեցել (աղյուսակ 2.3.12):

Արտաքին պարտքի սպասարկումը 2002 թ. կազմել է 68.1 մլն ԱՄՆ դոլար, որից 18.5 մլն-ը՝ տոկոսավճար: Պետական պարտքի բեռի գնահատման կարևոր ցուցանիշներից է տարվա ընթացքում պարտքի ընդհանուր սպասարկման հարաբերությունն արտահանման ծավալին, որը ցույց է տալիս երկրի՝ իր արտաքին պարտավորությունները սպասարկելու ունակությունը: 2000 թ. և 2002 թ. այն կազմել է համապատասխանաբար՝ 14.8 և 13 տոկոս, որը ցածր է միջին պարտքի բեռ ունեցող երկրների համապատասխան ցուցանիշներից (23.5 տոկոս): Ընդ որում, միայն տոկոսավճարը կազմել է արտահանման 3.3 տոկոսը, որը համապատասխանում է պարտքի նվազ բեռ ունեցող երկրների ցուցանիշներին: Արտաքին պարտավորությունները սպասարկելու ունակությունը ցույց տվող մեկ այլ ցուցանիշ է նաև

պարտքի սպասարկում / բյուջեի եկամուտներ հարաբերությունը, որը 1999 թ.-ին կազմել է 17, 2000 թ.-ին՝ 15.8, 2001 թ.-ին՝ 15.8, 2002 թ.-ին՝ 17.1%, 2003 թ.-ին՝ 27.9 (15.4) տոկոս: Այս դեպքում միջին ցուցանիշ է համարվում 22.5 տոկոսը (տե՛ս աղյուսակ 2.3.12):

Աղյուսակ 2.3.12

ՀՀ արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշները և դրանց սահմանային մակարդակները, 1999-2003 թթ. և 2018-2022 թթ.⁵⁸

Ցուցանիշները	Ցուցանիշների սահմանային մակարդակները, %			Ցուցանիշը, %				
	առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	1999	2000	2001	2002	2003
1	2	3	4	5	6	7	8	9
Պարտքի սպասարկում / արտահանում	25.9	23.45	7.8	16	11	10	10	15.7 (8.7)*
Պարտքի տոկոսավճար / արտահանում	11.65	9.85	3.6	5.0	3.0	3.5	2.9	1.3
Արտաքին պարտք / արտահանում	387.95	209.0	64.0	227.3	192.3	167.2	146,5	122.8
Պարտքի սպասարկում / բյուջեի եկամուտներ	միջին ցուցանիշ 22.5			17.0	15.8	15.8	17.0	27.9 (15.4)*
Արտաքին պարտք / ՀՆԱ	սահմանային մեծություն 50			47	45	42.7	43.3	39.3
Զուտ ներկա արժեք / ՀՆԱ**	80 և ավելի	48-80	մինչև 48	30	28	28	28.4	26.1

⁵⁸Ըստ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տվյալների:

Աղյուսակ 2.3.12-ի շարունակությունը

Ցուցանիշները	Ցուցանիշների սահմանային մակարդակները, %			Ցուցանիշը, %				
	առավել քան պարզի բևռ ունեցող երկրներ	միջին պարզի բևռ ունեցող երկրներ	նվազ պարզի բևռ ունեցող երկրներ	2018	2019	2020	2021	2022
1	2	3	4	5	6	7	8	9
Ձուտ ներկա արժեք / արտահանում	220 և ավելի	132-220	մինչև 132	144	119	108	96	81.5
Պարտքի սպասարկում / արտահանում	25.9	23.45	7.8	7.5	14.4	14.7	9.2	4.9
Պարտքի տոկոսավճար / արտահանում	11.65	9.85	3.6	3.4	3.3	4.5	3.0	1.8
Արտաքին պարտք / արտահանում	387.95	209.0	64.0	112.0	99.8	158.7	132.7	66.5
Պարտքի սպասարկում / բյուջեի եկամուտներ	միջին ցուցանիշ 22.5			13.4	25.6	17.6	13.9	10.0
Արտաքին պարտք / ՀՆԱ	սահմանային մեծություն 50			44.4	42.5	47.9	47.9	33.0
Ձուտ ներկա արժեք / ՀՆԱ**	80 և ավելի	48-80	մինչև 48	39.5	36.8	41.0	41.0	30.0
Ձուտ ներկա արժեք / Արտահանում	220 և ավելի	132-220	մինչև 132	99.5	86.6	135.8	113.5	60.3

* Նույն ցուցանիշը՝ առանց գույք պարտքի դիմաց բանաձևով ռուսական վարկերի 63 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով մարման:

** Ձուտ ներկա արժեքի (ՁՆԱ) ցուցանիշը ներկայացնում է պետրական պարտքի սպասարկման գծով բոլոր ապագա վճարումների զեղչված (դիսկոնտավորված) արժեքը: ՁՆԱ-ն պայմանականորեն կարելի է սահմանել նաև որպես փվյալ պահին ձևավորված պետրական պարտքն ապագայում ժամանակին և պարզած կերպով սպասարկելու նպատակով անհրաժեշտ գումար:

Այսպիսով՝ նշվածից կարելի է դատել, որ 2003 թվականին արտաքին պարտքը բնութագրող 7 հիմնական ցուցանիշներից 4-ը գտնվել է նվազ, իսկ 3-ը՝ միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում, այնինչ 2022 թ.-ին միայն մեկ ցուցանիշն է միջին պարտքի բեռ ունեցող երկրների համար սահմանված մակարդակում, իսկ մնացած 6 ցուցանիշները համապատասխանում են նվազ պարտքի բեռ ունեցող երկրներին:

Հարկ է նշել նաև, որ երկրի արտաքին վարկային պարտավորությունների միջին կշռված տոկոսադրույքը չի գերազանցում 2.4%-ը, որը բավական ցածր ցուցանիշ է (կենտրոնական և արևելաեվրոպական երկրներում դա մոտ 10% է): Սա պայմանավորված է նրանով, որ ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների ավելի քան 78%-ը արտոնյալ պայմաններ ունի:

2.3.6. Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը և դրա կառավարման արդյունավետությունը

Աշխատության այս մասում նպատակադրվել ենք բացահայտել ՀՀ-ում 2003-2022 թթ. ժամանակահատվածում պետական պարտքի օգտագործման արդյունավետությունն ըստ քանակական տվյալների:

Ազգային մակարդակում պարտքի կառավարման կատարողականների գնահատման համար Համաշխարհային բանկը (ՀԲ) մշակել է առանձին մեթոդաբանություն⁵⁹, որը վերանայվել է 2016 թ.-ին և ներառում է որոշակի գործիքակազմ, որը թույլ է տալիս երկրների կառավարություններին գնահատել պետական պարտքի կառավարելիության մակարդակը: Այս մեթոդաբանությունը նախատեսում է որոշակի ցուցիչների (ցուցանիշների) համապարփակ փաթեթի միջոցով պետական պարտքի կառավարման գործառնությունների ողջ շրջանակի

⁵⁹ Subnational debt management performance assessment (DEMPE) methodology (English). Washington, D.C.: World Bank Group. 2016 թ. սեպտեմբերին վերանայված փաստաթուղթը, <http://documents.worldbank.org/curated/en/768161474369807939/Subnational-debt-management-performance-assessment-DEMPE-methodology>

գնահատում՝ ընդգծելով պարտքի կառավարման փորձառության ուժեղ և թույլ կողմերը, կենտրոնանալով կարողությունները և ազգային ինստիտուտները (կառույցները) հզորացնելու վրա, ինչպես նաև հեշտացնելով կառավարությունների կողմից այնպիսի ծրագրերի մշակումը, որպիսիք հատուկ են տվյալ երկրի կարիքներին: Տվյալ մեթոդաբանությունը ծառայում է նաև որպես միջազգայնորեն ընդունված ստանդարտ:

Անդրադառնալով ՀԲ մեթոդաբանության մեջ ներառված պարտքի կառավարման կատարողականը բնութագրող ցուցանիշներին՝ նշենք, որ այս գործիքը նախատեսում է ազգային պարտքի կառավարման գործունեությանը վերաբերող 31 չափում՝ խմբավորված պարտքի կառավարման 13 ցուցիչներում (debt performance indicators կամ DPI): Դրանք են. 1) կառավարման և ռազմավարության մշակման ոլորտում՝ իրավական շրջանակը (DPI-1), կառավարչական կառուցվածքը (DPI-2), պարտքի կառավարման ռազմավարությունը (DPI-3), պարտքի մասին հաշվետվողականությունը և գնահատումը (DPI-4), աուդիտը (DPI-5), 2) հարկաբյուջետային և բյուջետային քաղաքականությունների համակարգման ոլորտում՝ հարկաբյուջետային քաղաքականության և բյուջետային գործընթացի համակարգվածությունը (DPI-6), 3) փոխառությունների ստացման և հարակից ֆինանսական գործունեության ոլորտում՝ տեղական փոխառությունները (DPI-7), արտաքին փոխառությունները (DPI-8) և վարկային երաշխիքների, վարկավորման և ածանցյալ գործիքների առկայությունը (DPI-9), 4) դրամական հոսքերի կանխատեսման և դրամական մնացորդի կառավարման ոլորտում՝ դրամական հոսքերի կանխատեսման և դրամական մնացորդի կառավարման ցուցիչը (DPI-10) և 5) պարտքի հաշվառման և գործառնական ռիսկերի կառավարման ոլորտում՝ պարտքի կառավարման և տվյալների անվտանգության ցուցիչը (DPI-11), պարտականությունների տարանջատման, անձնակազմի կարողու-

թյունների և գործարարության շարունակականությունը (DPI-12) և պարտքի ու պարտքին առնչվող արձանագրումների ցուցիչը (DPI-13)⁶⁰:

Հատկանշական է, որ վերը նշված մեթոդաբանությամբ երկրների պարտքի կառավարման կատարողականի գնահատմամբ նպատակ չի դրվում որոշակի առաջարկություններ ներկայացնելու երկրներում իրականացվող բարեփոխումների ուղղությունների կամ ինստիտուտների հզորացման վերաբերյալ, այլ ակնկալվում է, որ ցուցանիշների յուրաքանչյուր խմբի համար պետք է ապահովվի նվազագույն մակարդակ, որը պարտադիր է կատարողականը դրական համարելու տեսանկյունից⁶¹:

Պարտքի կառավարման և կատարողականի գնահատման մեթոդաբանությունը սահմանում է յուրաքանչյուր ոլորտին A, B կամ C կատեգորիայի շնորհում՝ կախված գնահատման չափանիշների առկայությունից և որակից: A կատեգորիայի շնորհումը վկայում է այդ ցուցանիշի լավ վիճակի մասին, B-ն՝ վիճակի միջին գնահատականն է (նվազագույն պահանջների և լավագույն փորձի միջև), իսկ C-ն՝ սահմանված նվազագույն պահանջները նկարագրող կատեգորիան: Եթե որոշակի ցուցանիշը չի բավարարում սահմանված նվազագույն պահանջները, ապա դրան շնորհվում է D կատեգորիա, որն ազդարարում է տվյալ ցուցանիշի գծով անբավարար կատարողականի մասին, և սովորաբար, այդ ուղղությամբ պահանջվում են առաջնահերթ գործողություններ: Կան նաև իրավիճակներ, երբ որոշ ցուցանիշներ չեն կարող գնահատվել՝ կա՛մ տվյալ ցուցանիշի կիրառման անհնարինության, կա՛մ այդ ցուցանիշով նկարագրվող գործունեության բացակայության պատճառով (օրինակ՝ եթե չեն կիրառվում ածանցյալ գործիքներ կամ չեն տրամադրվում վարկային երաշխիքներ): Այս դեպքերում կիրառվում է կա՛մ N/A (կիրառելի չէ) եզրույթը, կա՛մ շնորհվում N/R (չի վարկանշավորվում կամ չի գնահատվում) կատեգորիա⁶²:

⁶⁰ Նույն տեղում, էջ 8-9:

⁶¹ Նույն տեղում, էջ 8:

⁶² Նույն տեղում, էջ 9:

Պետական պարտքի կառավարման նշված հետազոտական գործիքակազմը Հայաստանի Հանրապետության համար նույնպես կիրառվել է, ինչի մասին առկա է համապատասխան հաշվետվություն⁶³, որի հիմքում, սակայն, դրված է ՀԲ մեթոդաբանության 2009 թ. գործիքակազմը, ըստ որի՝ պարտքի կառավարման ցուցիչները 15-ն են, իսկ գնահատման ոլորտները՝ գրեթե անփոփոխ: Հայաստանի Հանրապետության պարտքի կառավարման կատարողականի գնահատումը վկայում է, որ լավագույն ցուցանիշները գրանցվել են պարտքի կառավարման ռազմավարության վերաբերյալ որոշումների կայացման, մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների հասանելիության և դրանց որակի, դրամավարկային քաղաքականության, տեղական փոխառությունների կառուցակարգերի, կարգավորման գործիքակազմի առկայության և դրանց որակի, ինչպես նաև արտաքին փոխառությունների համար իրավախորհրդատուների ներգրավման ցուցանիշների մասով: Նշվածներից յուրաքանչյուրը դասակարգվել է որպես A դասին պատկանող: Ինչ վերաբերում է վատագույն ցուցանիշներին, որոնք չեն ապահովում պահանջվող նվազագույն պահանջները և դասվում են D կատեգորիային, ապա դրանք են իրավական շրջանակը, վարկի երաշխիքների կառավարչական կառուցվածքը, հարկաբյուջետային քաղաքականության սահմաններում պարտքի սպասարկման կանխատեսումների ապահովումը և որակը, արտաքին փոխառությունների պլանի, ծախսերի և պայմանների գնահատումը, արտաքին փոխառությունների վերաբերյալ փաստաթղթավորված գործընթացների առկայությունը, վարկային երաշխիքների վերաբերյալ փաստաթղթավորված քաղաքականության և գործընթացների առկայությունը և դրանց որակը, գործառնական ռիսկերի կառավարման ամբողջ ոլորտը (ներառյալ պարտքի սպասարկման, տվյալների վերաբերյալ փաստաթղթավորված գործընթացների առ-

⁶³ Armenia - Debt management performance assessment (DeMPA) (English). Debt Management Performance Assessment (DeMPA) Washington, DC: World Bank Group. November. 2013, էջ 10, <http://documents.worldbank.org/curated/en/954231468206072639/Armenia-Debt-management-performance-assessment-DeMPA>

կայությունը և դրանց որակը, տվյալների անվտանգությունը նկարագրող ցուցիչները), ինչպես նաև պարտքի մասին պարտադիր հաշվետվողականությանը վերաբերող մի շարք ցուցիչներ:

Դիտարկված մեթոդաբանությունը և դրան համապատասխան իրականացված հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս ասել, որ, ըստ էության, տվյալ մեթոդաբանությամբ կատարվում է պարտքի կառավարման որակական գնահատում: Ինչ վերաբերում է երկրների պարտքի կառավարման գործընթացների քանակապես չափմանը, ապա այդպիսի հետազոտություններ նույնպես հանդիպում են, և դրանց հիմքում որոշակի մակրոտնտեսական ցուցանիշների և պարտքի չափերի ու պարտքի սպասարկման համար հատկացվող միջոցների փոխառնչությունների ուսումնասիրությունն է⁶⁴:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում պետական պարտքի կառավարման արդյունավետությանը, ապա այս հասկացությունն օրենսդրորեն ամրագրված չէ, թեև պետական պարտքի կառավարման գործընթացի արդյունավետ և հրապարակային կազմակերպման ապահովումն ամրագրված է որպես օրենքի նպատակ⁶⁵: Օրենսդրությամբ առանձնացված չէ նաև որևէ մեկ չափանիշ կամ ցուցիչ կամ ցուցանիշների համակարգ, որը թույլ կտա գնահատել ՀՀ պետական պարտքի կառավարման, դրա օգտագործման արդյունավետությունը: Տարբեր հեղինակների աշխատություններում նույնպես չի հանդիպում պարտքի կառավարման արդյունավետության հասկացության մեկնաբանությունը:

Միաժամանակ, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ մեկտեղ, ՀՀ կառավարությունը հաստատում է նաև պարտքի կառավարման եռամյա ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև

⁶⁴ Синявская К.В. Яруллин Р.Р. «Оценка эффективности управления государственным внутренним долгом Республики Башкортостан», журнал «Фундаментальные исследования». 2020. № 6. С. 137-142. 10.07.2023 թ. դրությամբ էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝ <https://fundamental-research.ru/ru/article/view?id=42790>

⁶⁵ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը (Հոդված 3. Օրենքի նպատակը), ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի մայիսի 26-ին, ՀՕ-78-Ն. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ <http://www.arlis.am> կայքում:

ընդունում կառավարության պարտքի բեռի նվազեցման տեսլականը⁶⁶: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի №1082-Ն որոշման «Վերլուծություններ» բաժինը ներառում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թվականների ռազմավարությունը (ինչը օրենքի պահանջ է)⁶⁷ և ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծությունը՝ որպես առանձին վերլուծականներ⁶⁸:

Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը նպատակադրված է դրա արդյունավետ կառուցվածքի ձևավորմանը՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը: Այլ կերպ ասած, ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում ապահովել կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորությունը և վճարային պարտավորությունների կատարումը՝ հնարավոր նվազագույն ծախսերով և պարտքի պորտֆելի ռիսկերի խելամիտ մակարդակի պայմաններում: ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունն ընդգրկում է միայն ՀՀ կառավարության պարտքը, և կատարված վերլուծությունները չեն ներառում ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը⁶⁹:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության վերլուծության՝ միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտքը գնահատվում է

⁶⁶ Տե՛ս՝ «ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» № 1082-Ն որոշում, ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների վերանայված ծրագիրը հաստատելու մասին» № 1010-Ն որոշում:

⁶⁷ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը (հոդված 12), ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի մայիսի 26-ին, ՀՕ-78-Ն. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ <http://www.arlis.am> կայքում:

⁶⁸ ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» № 1082-Ն որոշում, էջ 138-171, 179-186:

⁶⁹ Նույն տեղում, էջ 139:

կայուն և կառավարելի, ինչը խարսխված է 2020 թ. երկակի շոկի պայմաններում պարտքի բեռի բարձր մակարդակի գրանցումից հետո՝ 2021-2022 թթ., մինչև հարկաքյուջետային կանոններով ընդունելի մակարդակի նվազման, պարտքի կառուցվածքի զգալի բարելավման, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում պարտքի բեռի չափավոր կայուն մակարդակ ապահովելու հանձնառության վրա: Այնուամենայնիվ, պարտքը շարունակում է զգայուն մնալ տնտեսական աճի և փոխարժեքի ցնցումների նկատմամբ, դրա կառուցվածքը գնահատվում է «բարձր խոցելի», իսկ պատմությանը և ապագային նայող գնահատումներն ուրվագծում են էական անորոշություններ⁷⁰:

Հայաստանի Հանրապետության 2000-2018 թթ. արտաքին պետական պարտքի օգտագործման արդյունավետության գնահատման փորձ են կատարել հայ հեղինակները: Նրանք, կիրառելով արտաքին պետական պարտքի և մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների ժամանակագրական փոփոխությունները, հաշվարկել են համապատասխան «համեմատական արդյունավետության գործակիցներ», որոնք էլ թույլ են տալիս քանակապես գնահատել պարտքի օգտագործման արդյունավետությունը⁷¹: Օգտվելով նույն մեթոդաբանությունից՝ մենք կատարել ենք սույն հետազոտությունը 2013-2022 թթ.-ի համար:

ՀՀ արտաքին պետական պարտքի արդյունավետության գնահատման (համապատասխան գործակիցների հաշվարկման միջոցով) և մակրոտնտեսական ցուցանիշների միջև համեմատական վերլուծություն իրականացնելու նպատակով ընտրվել են մի քանի հիմնական ցուցանիշներ, որոնցից են երկրի ՀՆԱ-ն՝ որպես տնտեսությունը լավագույնս բնութագրող ցուցանիշ, այնուհետև զբաղվածության մակարդակը՝ առաջնորդվելով այն կանխադրությամբ, որ, տարբեր վարկային ծրագրերի շնորհիվ, երկրում տնտեսական աճի համար նպաստավոր

⁷⁰ Նույն տեղում, էջ 179:

⁷¹ Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է. Ժամանակակից պետության տնտեսագիտություն. Տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը, «Անտարես» հրատ., Եր, 2020, էջ 487-513:

պայմանների ապահովումը ենթադրում է նաև նոր աշխատատեղերի ստեղծում տնտեսության տարբեր հատվածներում, արտահանման ցուցանիշը, որն արտացոլում է համաշխարհային շուկայի համար երկրի մրցունակ արտադրանք թողարկելու հնարավորությունները: Վերլուծվել են նաև զուտ արտահանման, արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցները, ինչպես նաև հանրապետության վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի և արտաքին պետական պարտքի միջև կապի ցուցանիշները: Համեմատվել են նշված ցուցանիշների և արտաքին պետական պարտքի հավելաճի տեմպերը, որոնք էլ համապատասխան համեմատական արդյունավետության գործակիցներն են՝ k_1 , k_2 , ... k_n :

Մասնավորապես՝ ՀՆԱ հավելաճի և արտաքին պետական պարտքի հավելաճի ցուցանիշների համեմատական արդյունավետության գործակիցները (k_1) հաշվարկվել են համաձայն հետևյալ բանաձևի.

$$k_1 = \frac{\left(\frac{GDP_n}{GDP_{n-1}} \times 100\%\right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\%\right) - 100\%} \quad (2.1)$$

որտեղ

GDP_n -ն ընթացիկ տարվա ՀՆԱ ցուցանիշն է բացարձակ արժեքով,

GDP_{n-1} -ը նախորդ տարվա ՀՆԱ ցուցանիշն է բացարձակ արժեքով,

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով,

ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Հաշվարկային տվյալների համար հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից պաշտոնապես հրապարակված վիճակագրական շարքերը:

Աղյուսակ 2.3.13-ում բերված են ՀՀ արտաքին պետական պարտքի մեծությունները և դրանց կառուցվածքը 2003-2022 թթ. ժամանակա-

հատվածում, որի տվյալներից հետևում է, որ 2022 թ.-ին 2003 թ.-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքն ավելացել է ավելի քան 5.8 անգամ:

Աղյուսակ 2.3.13

ՀՀ արտաքին պետական պարտքը և դրա կառուցվածքը, 2003-2022 թթ.

Տարիները, 31.12-ի դրությամբ	ՀՀ արտա- քին պետա- կան պարտք		այդ թվում ¹					
			ՀՀ կառավարու- թյան արտաքին պարտքը		ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը		որից, ՀՀ կառա- վարության երաշ- խիքով գրամա- դրված վարկեր	
			մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%
2003	1101.6	100.0	871.5	79.1	230.1	20.9	15.5	1.4
2004	1183.5	100.0	943.0	79.7	240.5	20.3	22.8	1.9
2005	1099.3	100.0	903.1	82.2	196.2	17.8	19.8	1.8
2006	1205.7	100.0	1019.9	84.6	185.8	15.4	22.1	1.8
2007	1448.9	100.0	1257.2	86.8	191.7	13.2	33.8	2.3
2008	1577.2	100.0	1401.2	88.8	176.0	11.2	41.3	2.6
2009	2966.9	100.0	2466.1	83.1	500.8	16.9	75.0	2.5
2010	3300.5	100.0	2737.9	83.0	562.6	17.0	76.0	2.3
2011	3569.3	100.0	2952.0	82.7	617.3	17.3	100.6	2.8
2012	3739.1	100.0	3144.5	84.1	594.6	15.9	131.6	3.5
2013	3899.1	100.0	3390.8	87.0	508.3	13.0	143.8	3.7
2014	3791.8	100.0	3351.9	88.4	440.0	11.6	149.9	4.0
2015	4325.3	100.0	3849.0	89.0	476.3	11.0	140.8	3.3
2016	4803.4	100.0	4298.7	89.5	504.7	10.5	146.4	3.0
2017	5513.9	100.0	4912.4	89.1	601.5	10.9	158.5	2.9
2018	5536.0	100.0	4986.0	90.1	550.0	9.9	142.5	2.6
2019	5784.5	100.0	5295.2	91.5	489.3	8.5	129.0	2.2
2020	6059.4	100.0	5599.5	92.4	459.9	7.6	120.7	2.0
2021	6648.4	100.0	6190.7	93.1	457.7	6.9	101.4	1.5
2022	6445.4	100.0	5894.1	91.4	551.3	8.6	87.1	1.4

Աղբյուրը՝ կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (www.armstat.am) և ՀՀ ֆինանսների նախարարության կայքի «Հաշվետվություններ և վիճակագրություն» մասում տեղադրված «2013-2023 թթ. ՀՀ պետական պարտքի վերաբերյալ ամփոփ տվյալների դինամիկայի» տվյալներով, 10.07.2023 թ. դրությամբ էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tyalner/

ՀՀ արտաքին պետական պարտքի կազմում ավելի արագ տեմպերով ավելացել է ՀՀ կառավարության պարտքը, ինչի հետևանքով դրա բաժինն արտաքին պետական պարտքի կառուցվածքում 2003 թ.-ի

79.1%-ից 2022 թ.-ին հասել է 91,4%-ի, և, համապատասխանաբար, նվազել է ՀՀ կենտրոնական բանկի պարտքը, թեև վերջինս 2003-2022 թթ. բացարձակ արժեքով ավելացել է ավելի շուրջ 2.4 անգամ, սակայն արտաքին պետական պարտքի կազմում դրա բաժինը 2003 թ.-ի 20.9%-ից 2022 թ.-ին հասել է 8.5%-ի: ՀՀ արտաքին պետական պարտքի կտրուկ աճ է արձանագրվել 2009 թ.-ին, երբ նախորդ տարվա համեմատությամբ արտաքին պետական պարտքի մեծությունը գրեթե կրկնապատկվել է: Այդ հանգամանքը կապված էր ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների (երբ ՀՆԱ-ն դրամական արտահայտությամբ նվազեց 14.1%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 25.84%-ով, ինչն աշխարհի ամենաբարձր ցուցանիշներից մեկն է) հաղթահարման հետ: Աղյուսակում բերված ժամանակագրական շարքից երևում է, որ 20 տարիների ընթացքում միայն երկու տարի (2005 թ., 2014 թ., ինչպես նաև 2022 թ., այն էլ՝ պայմանավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքով) ՀՀ արտաքին պետական պարտքը չի ավելացել, իսկ մնացած տարիներին այն ավելացել է տարբեր մեծություններով:

Նկատի ունենալով նշված հանգամանքը, ինչպես նաև այն, որ առաջիկա տարիներին ամենևին էլ չի բացառվում արտաքին պետական պարտքի ավելացումը,⁷² օրակարգային հրատապություն են ստանում արտաքին պետական պարտքի օգտագործման արդյունավետության գնահատման հիմնահարցերը:

⁷² Նկատենք, որ դեռևս 2017 թ. ՀՀ կառավարության և ֆինանսների նախարարության պատվերով Արժույթի միջազգային հիմնադրամն իրականացրել է «Հայաստանի Հանրապետություն հարկաբյուջետային կանոնների արդիականացում» հետազոտությունը (10.07.2023 թ. դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կայքում https://minfin.am/website/images/files/Upgrading%20Fiscal%20Rules_Armenian.pdf հղմամբ), որի եզրակացություններից մեկն այն էր, որ ՀՀ-ում պետական պարտքի վերին շեմը պետք է պահպանվի ՀՆԱ 60 տոկոսի չափով: Ձեկույցում բերված են փորձագետների վերլուծություններն ու հիմնավորումները: Այդ կողմից, հատկապես վերջին ժամանակահատվածում, երբ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը նշանակալիորեն տատանվել է հօգուտ դրամի, կարծիքներ են հնչում, որ ՀՀ տնտեսության զարգացման հիմնական «մայրուղին» արտաքին պետական պարտք վերցնելն է:

ՀՀ ՀՆԱ և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցների հաշվարկների արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2.3.14-ում, որի տվյալները վկայում են, որ 2003-2022 թթ.-ի ընթացքում ՀՆԱ և արտաքին պետական պարտքի ցուցանիշները հիմնականում ունեցել են փոփոխման համանման ուղղություն՝ որոշակի տատանումներով: Բացառություն է 2005 թ.-ը, երբ նկատվել է ցուցանիշների փոփոխման հակադարձ միտում. այն է՝ ՀՆԱ կայուն բարձր աճի պայմաններում դիտվել է արտաքին պետական պարտքի կրճատում: Նշված ժամանակահատվածը, թերևս, առավել բարենպաստ էր ՀՀ տնտեսության համար (այդ հանգամանքը հիմնականում պայմանավորված էր համաշխարհային տնտեսության վերելքի փուլով), որին անմիջապես հաջորդել է 2009 թ.-ի ճգնաժամային ժամանակաշրջանը, երբ տնտեսության անկումն ուղեկցվել է արտաքին պետական պարտքի բեռի նկատելի ավելացմամբ: Սակայն, 2010 թ.-ից սկսած, հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշները վերադարձել են նախաճգնաժամային վիճակին: 2010-2013 և 2017-2018 թթ.-ի ընթացքում ՀՆԱ և արտաքին պետական պարտքի ցուցանիշներն ունեցել են փոփոխման համանման ուղղություններ, իսկ դիտարկվող ժամանակահատվածում՝ 2009 թ., 2014-2016 թթ., 2020 թ. և 2022 թ.՝ փոփոխման հակառակ ուղղություններ:

Աղյուսակ 2.3.14

ՀՀ ՀՆԱ և արտաքին պետական պարտքի հավելաճերի համեմատական արդյունավետության գործակիցները, 2003-2022 թթ.

<i>Տարի, ժամանակահատված</i>	<i>ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)</i>	<i>ՀՆԱ հավելաճի տեմպը, %</i>	<i>Արտաքին պետական պարտքը, մլն ԱՄՆ դոլար</i>	<i>Արտաքին պետական պարտքի հավելաճի տեմպը, %</i>	<i>Համեմատական արդյունավետության գործակիցները</i>
2003	2807	18.14	1101.6	7.04	2.58
2004	3577	27.43	1183.5	7.43	3.69
2005	4900	36.99	1099.3	-7.11	-5.20
2006	6384	30.29	1205.7	9.68	3.13
2007	9206	44.20	1448.9	20.17	2.19

Աղյուսակ 2.3.14-ի շարունակությունը

Տարի, ժամանակա- հատված	ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	ՀՆԱ հավելածի տեմպը, %	Արտաքին պետական պարտքը, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պե- տական պարտ- քի հավելածի տեմպը, %	Համեմատա- կան արդյու- նավետության գործակիցները
2003-2007 թթ. միջին տար. ցուցանիշները	5374.8	31.41	1207.8	7.44	1.28
2008	11662	26.68	1577.2	8.85	3.01
2009	8648.0	-25.84	2966.9	88.11	-0.29
2010	9260.0	7.08	3300.5	11.24	0.63
2011	10142.0	9.52	3569.3	8.14	1.17
2012	10619.4	4.71	3739.1	4.76	0.99
2008-2012 թթ. միջին տար. ցուցանիշները	10066.3	4.43	3030.6	24.22	1.10
2013	11212.3	4.73	3899.1	4.28	1.10
2014	11609.5	4.39	3791.8	-2.75	-1.60
2015	10553.3	-9.10	4325.3	14.07	-0.65
2016	10546.1	-0.07	4803.4	11.05	-0.01
2017	11527.4	9.30	5513.9	14.79	0.63
2013-2017 թթ. միջին տար. ցուցանիշները	11071.5	1.85	4466.7	8.29	-0.10
2018	12457.9	8.07	5536.0	0.40	20.14
2019	13619.2	9.32	5784.5	4.49	2.08
2020	12641.7	-7.18	6059.4	4.75	-1.51
2021	13861.4	9.65	6648.4	9.72	0.99
2022	19502.8	40.70	6445.4	-3.05	-13.33
2018-2022 թթ. միջին տար. ցուցանիշները	14416.6	12.11	6094.7	3.26	1.67
2003-2022 թթ. միջին տար. ցուցանիշները	10232.3	12.45	3700.0	10.80	0.99

Աղյուսակը կազմվել է հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի ժամանակագրական շարքերի, հղումը՝ <https://www.armstat.am/am/?nid=12&id=01001> և ՀՀ ֆինանսների նախարարության կայքի «Հաշվետվություններ և վիճակագրություն» մասում տեղադրված «2013-2023 թթ. ՀՀ պետական պարտքի վերաբերյալ ամփոփ տվյալների դինամիկա» տվյալներով, 10.07.2023 թ. դրությամբ էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner/

Այդուսակ 2.3.15

ՀՀ որոշակի մակրոտնտեսական ցուցանիշների հավելաճերի և արտաքին պետական պարտքի հավելաճի համեմատական արդյունավետության գործակիցները

Տարի, ժամանակահատված	ՀՆԱ/արտաքին պետական պարտք (k1)	Զբաղվածություն/արտաքին պետական պարտք (k2)	Պեկրական բյուջեի եկամուտներ/արտաքին պետական պարտք (տրամադրված) (k3)	Պեկրական բյուջեի եկամուտներ/արտաքին պետական պարտք (ըրվարային) (k4)	Զուտ արտահանում/արտաքին պետական պարտք (k5)	ՀԱԳ-եր/արտաքին պետական պարտք (k6)	Վերադարձված հաշվ-եկզրի հաշվենամացրո/արտաքին պետական պարտք (k7)
2003	2.58	0.02	7.74	3.79	-0.05	-2.60	2.94
2004	3.69	-0.31	-0.45	1.65	0.77	0.04	34.00
2005	-5.20	-0.21	-1.72	-6.26	-4.48	0.23	6.41
2006	3.13	-0.05	-1.56	3.06	4.73	2.84	-5.02
2007	2.19	0.04	58.20	3.07	3.74	1.29	19.49
2003-2007 թթ. միջին տարեկ. ցուցանիշները	1.28	-0.10	12.44	1.06	0.94	0.36	11.56
2008	3.01	0.17	3.44	5.57	6.69	3.18	63.35
2009	-0.29	-0.03	-0.09	-0.30	-0.27	0.06	-0.33
2010	0.63	0.78	1.87	0.89	0.54	-1.14	1.42
2011	1.17	-0.10	0.87	1.62	0.47	-1.13	-3.21
2012	0.99	-0.04	0.77	-0.09	0.52	-0.08	-4.39
2008-2012 թթ. միջին տարեկ. ցուցանիշները	1.10	0.15	1.37	1.54	1.59	0.18	11.37
2013	1.10	-0.18	2.75	2.59	0.21	-0.69	0.89
2014	-1.60	0.95	0.50	-1.90	0.38	1.03	-16.29
2015	-0.65	-0.38	0.12	-0.80	-2.77	-1.64	-6.01
2016	-0.01	-0.56	0.03	-0.02	-1.40	-1.90	0.45
2017	0.63	0.04	0.40	0.35	1.72	0.02	11.36
2013-2017 թթ. միջին տարեկ. ցուցանիշները	-0.10	-0.03	0.76	0.04	-0.37	-0.64	-1.92
2018	20.14	9.08	12.34	20.78	94.33	44.98	100.05
2019	2.08	0.61	4.62	3.86	2.77	0.32	-17.02
2020	-1.51	-0.49	-0.02	-0.43	-6.24	-4.01	82.45
2021	0.99	0.35	9.76	0.49	1.62	-0.18	-9.95
2022	-13.33	-1.53	-1.10	-13.65	-14.82	4.56	1229.07
2018-2022 թթ. միջին տարեկ. ցուցանիշները	1.67	1.60	5.12	2.21	15.53	9.13	276.92
2003-2022 թթ. միջին տարեկ. ցուցանիշները	0.99	0.41	4.92	1.21	4.42	2.26	74.48

Կազմվել է հեղինակների կողմից հաշվարկված տվյալների հիման վրա:

Մեր ուսումնասիրած մակրոտնտեսական և մյուս ցուցանիշների հավելաճերի և արտաքին պետական պարտքի հավելաճի՝ վերը ներկայացված մեթոդաբանությամբ հաշվարկված համեմատական արդյունավետության գործակիցներն ամփոփված են աղյուսակ 2.3.15-ում:

Իրականացված հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

- ✓ 2003-2022 թթ. ժամանակահատվածում շարունակաբար ավելացել է ՀՀ արտաքին պետական պարտքը, որի մեծությունը 2022 թ.-ին 2003 թ.-ի համեմատությամբ աճել է 485.1%-ով, նույն ժամանակահատվածում ՀՆԱ հավելաճը կազմել է 594.8%, զուտ արտահանման աճը՝ 473.8%, ՀՀ պետական բյուջեի եկամուտները դրամային արտահայտությամբ՝ 606.5%, դոլարային արտահայտությամբ՝ 838.5%, իսկ զբաղվածության ցուցանիշն աճել է ընդամենը 2.8%-ով,
- ✓ արտաքին պետական պարտքի ազդեցությունը ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա համարժեք չի եղել՝ հատկապես վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի, զուտ արտահանման և զբաղվածության ապահովման առումով,
- ✓ արտաքին պետական փոխառությունների կնքման գործընթացում առաջիկա տարիներին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ներգրավվող արտաքին պետական պարտքի օգտագործման արդյունավետությանն այն իմաստով, որ այդ փոխառությունները պետք է նկատելիորեն բարելավեն հանրապետության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները,
- ✓ ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունում, բացի պարտքի նախընտրելի կառուցվածքի ձևավորումից և հնարավոր ռիսկերի ու սցենարների մշակումից, անհրաժեշտ է նախատեսել նաև արտաքին պետական պարտքի օգտագործման ուղղությունները, ինչպես նաև հաշվարկել ու կանխատեսել դրա օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխան մակրոտնտեսական ցուցանիշների վրա ազդեցությունների հաշվարկմամբ:

2.3.7. Ներդրումային պահանջարկը և ներդրումային միջավայրի առողջացումը

Տնտեսական անվտանգության ապահովման համար կարևոր է տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը, հատկապես՝ ներդրումային պահանջարկի ավելացումը և ներդրումային միջավայրի առողջացումը, տեխնոլոգիական անվտանգության պահպանումը և մտավոր սեփականության պաշտպանությունը, էկոլոգիական անվտանգության օրգանական կապը տնտեսական անվտանգության հետ և դրա ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Ներդրումային ծրագրերի մշակման ժամանակ շատ հաճախ հակասություն է առաջանում երկու հակադիր մեթոդաբանական մոտեցումների միջև, մի կողմից՝ տնտեսական անհատականացման, մյուս կողմից՝ տնտեսակարգի և տնտեսական աճի վրա հիմնված: Այս հարցում հատկապես հակասությունները սուր են զարգացող երկրներում: Տնտեսության չսահմանափակված անհատականությունը վաղ թե ուշ առաջացնում է մակրոհամակարգի ճգնաժամ: Ընդ որում, տվյալ սկզբունքը համարժեք չէ ներկայիս տնտեսական համակարգին, շուկայական տնտեսությանը: Ժամանակակից պայմաններում կայուն և արդյունավետ տնտեսական ռազմավարության խնդիրների մշակման և որոշման ընթացքում շեշտը դրվում է տնտեսական կարգուկանոնի և տնտեսական աճի վրա:

Ներդրումային ծրագրերի մշակման այդ ուղղվածությունն այսօր պետք է հատուկ կերպով հաշվի առնվի ՀՀ նոր տնտեսական համակարգի կառուցման գործընթացում: 1990-ական թվականների սկզբից արձանագրվող ՀՆԱ անկումը ՀՀ-ում, ինչպես նաև նմանատիպ իրավիճակում հայտնված մյուս երկրներում վերաճել է տնտեսությունը ձևափոխող կարևոր գործոնի: Ցածր համախառն պահանջարկն ազդել է ներդրումների պահանջարկի վրա, ինչն առաջ է բերել ներդրումային ակտիվության, արտադրության անկում, դրա որոշ տեսակների իսպառ վերացում և տնտեսության մեջ մենաշնորհների ուժե-

ղացում: Նախկին Խորհրդային Միության հանրապետությունների միջև տնտեսական կապերի խզումը և հարևան հանրապետության կողմից տնտեսական շրջափակումը ձևավորել են տնտեսության խեղաթյուրված կառուցվածք: Ներկայում անգործության է մատնված արդյունաբերական ձեռնարկությունների 50%-ը: Ներդրումների բաժինը հիմնական կապիտալում ՀՆԱ-ի նկատմամբ միայն 8.4% է, իսկ բոլոր ներդրումները՝ 14.6%:

Թեև վերջին տարիներին զգացվում է ներդրումների մակարդակի զգալի աճ, այնուամենայնիվ, ՀՆԱ-ում ներդրումների տեսակարար կշիռը բնութագրող փաստացի ցուցանիշը վտանգավոր մակարդակում է: Մասնավոր կապիտալ ներդրումների իրական աճի տեմպը, ըստ ՀՀ ԿԲ գնահատականների, 2002 թվականի ընթացքում զգալիորեն աճել է՝ կազմելով շուրջ 22%: Այդուհանդերձ, հիմնական միջոցների մաշվածության բարձր մակարդակը և արտադրանքի մրցունակության պահպանումը պահանջում են ներդրումային դաշտի բարելավում: Նշենք, որ վերջին տարիներին ներդրումների մեծ մասն իրականացվում է գերազանցապես արտասահմանյան ներդրողների միջոցների հաշվին:

Մտավոր սեփականության արտահանման որակյալ կառուցվածքի բարելավման համար պետք է ստեղծել ներդրումային գործընթացի կայունացման հետևյալ կառուցակարգը. արտասահմանյան արտադրանքի նկատմամբ վերահսկողություն, ցածրորակ ապրանքների մաքսատուրքի էական ավելացում, հայտնագործությունների տեղեկատվական համակարգի ստեղծում, արտասահմանյան և հայրենական նորագույն հայտնագործություններն արտադրությունում օգտագործելու համար պետական երաշխավորության հաստատում:

Բնօգտագործման տնտեսական տեսանկյունների հետազոտության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում էքստերնալների՝ արտաքին տնտեսական էֆեկտների հարցը: Սոցիալական և արտադրական ծախսերի միջև տարբերությունները ձևավորում են էքստերնալները, որոնք խաթարում են հասարակության, տնտեսության և բնության

միջև հավասարակշռվածությունը: Գործարարության զարգացմանը հետևում է բացասական էֆեկտների ազդեցության մեծացումը հասարակական զարգացման վրա:

Շուկայական կառուցակարգն անզոր է բնապահպանական (էկոլոգիական) խնդիրների լուծման ժամանակ: Այդ դիլեմայի (երկրնտրանքի) լուծման համար երկու ճանապարհ կա՝ կա՛մ պետությունը պետք է ամբողջությամբ իր վրա վերցնի այդ «բեռը», կա՛մ արտաքին բացասական ազդակները ներառի արտադրական ծախսերում, այսինքն՝ դրանք դարձնի արտադրողի անուղղակի ծախսերի մասը: Վերջին տարբերակը տնտեսագիտության տեսության մեջ հայտնի է «ինտերնալացում» անվանմամբ:

Շրջակա միջավայրի պահպանման արդյունավետ տնտեսական կառուցակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է, որպեսզի էքստերնալներն արտահայտվեն արտադրական ծախսերում՝ հիմք ունենալով օրենսդրական դաշտը: Ընդ որում, շեշտը պետք է դնել այն սկզբունքի վրա, ըստ որի՝ «պետք է վճարի նա, ով աղտոտում է շրջակա միջավայրը»: Այդպիսի կառուցակարգի ներդրումը շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրը կդարձնի ձեռնարկության ներքին հարցը և կստիպի արտադրողին փնտրել արդյունավետ, տնտեսապես շահավետ մեթոդներ արտաքին տնտեսական ծախսերը կրճատելու համար:

Անհրաժեշտ է, որ պետությունը, ըստ օրենսդրական հիմքի, սահմանի տնտեսական զարգացման բնապահպանական (էկոլոգիական) կանոնները: Այն հանգամանքը, որ այսօր էքստերնալները չեն ընդգրկվում արտադրական ծախսերում, ցույց է տալիս այնպիսի կարևոր մակրոտնտեսական ցուցանիշների անկատարությունը, ինչպիսիք են ՀՆԱ-ն, ՀԱԱ-ն (համախառն ազգային արդյունքը): Այդ ցուցանիշներում նախատեսված չեն «կենսաբանական կապիտալի» կորուստները: Իսկ բնապահպանական աղտոտումները և ճգնաժամերը կանխարգելելու կամ վերացնելու համար նախատեսված ծախսերը չեն հաշվարկվում այդ մակրոտնտեսական ցուցանիշներում, որոնք

համարվում են հասարակության բարեկեցության համընդհանուր չափորոշիչներ և ընդհակառակը, արտահայտվում են դրանցում՝ որպես տնտեսական աճի բաղադրիչներ:

2.3.8. Փողի զանգվածի աճը

Շուկայական տնտեսության պայմաններում շրջանառությունում բաց թողնված փողի զանգվածը (ներառում է շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը և ներքին տնտեսության (բնակչության, կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով ու արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում) գների կայունացման հիմնական գործոններից մեկն է (մյուսն ապրանքների և ծառայությունների առաջարկի ավելացումն է): Հայաստանում գներն աճում են ավելի արագորեն, քան դրամական զանգվածը:

Այսպես, օրինակ, 2006-2011 թթ.-ի ընթացքում հանրապետությունում փողի զանգվածն ունեցել է հետևյալ շարժընթացը. 2006 թ.-ի 484496 մլն դրամից, այդ թվում՝ կանխիկ՝ 211469 մլն դրամ (փողի զանգվածի 43.6%-ը), ցախահնջ ավանդներ՝ 83836 մլն դրամ (17.3%), արտարժույթով ավանդներ՝ 42659 մլն դրամ (8.8%), 2011 թ.-ին համապատասխանաբար՝ 1118826 մլն դրամ, 349407 մլն դրամ (72.1%), 164280 մլն դրամ (33.9%), 142657 մլն դրամ (29.4%), 462482 մլն դրամ (95.4%)⁷³: Կամ 2011 թ.-ին 2006 թ.-ի համեմատ փողի զանգվածն ավելացել է 230.9%-ով կամ փողի զանգվածի միջին տարեկան աճը կազմել է 46.1%: 2006-2011 թթ. ժամանակահատվածում սպառողական գների ինդեքսն ավելացել է 124.6%-ով⁷⁴ կամ այդ ցուցանիշները 2006-2011 թթ. տարեկան կազմել են համապատասխանաբար՝ 107.9%, 104.4%, 109.0%, 103.4%, 108.2%, 107.7%⁷⁵: Սպառողական

⁷³ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2006-2011, Վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ 2012, էջ 34:

⁷⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ 2012 էջ 18:

⁷⁵ Համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի տվյալներով:

գների ինդեքսը 2018-2022 թթ. կազմել է 260.0%, իսկ փողի զանգվածի աճը՝ 159.0%:

Արտադրության փոքր ծավալների պայմաններում դրամական միջոցներն արագորեն շրջանառվում են, ինչը գների աճի արդյունք է:

Հայաստանում հաճախ խախտվում է դրամավարկային միջնորդության (մոնետարիզմի) հիմնական սկզբունքը՝ շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածի աճը 4-5%-ով ավելի արագ է լինում, քան տնտեսության կայուն զարգացման աճը: Պաշտոնական մոնետարիզացման՝ դրամաշրջանառության միջնորդության մակարդակը 6-7%-ի սահմաններում է, այն ժամանակ, երբ պետք է լիներ առնվազն 30%: Զարգացած երկրներում այդ ցուցանիշը հասնում է 70-80%-ի, Ճապոնիայում՝ 91.9-112.7%-ի, ԱՄՆ-ում՝ ավելի քան 100%-ի, զարգացող երկրներում՝ 40%-ի, Չինաստանում՝ 47.9-96.1%-ի, Ռուսաստանում՝ 12-15%-ի: Զարգացած երկրներում բնակչության յուրաքանչյուր շնչի հաշվով միջինում շրջանառության մեջ գտնվում է 8000-10000 դոլարի զանգված, իսկ Հայաստանում այդ ցուցանիշը 2018 թ.-ին կազմել է 935.8 (2775095 մլն դրամ/ 2965.3 մլն մարդ) հազ. դրամ, իսկ 2022 թ.-ին՝ 1482.9 հազ դրամ (4414973 մլն դրամ/ 2977.1 մլն մարդ)⁷⁶:

ՀՆԱ մեծության նկատմամբ փողի զանգվածի ցածր տեսակարար կշիռ (2018 թ.-ին ՀՆԱ-ի նկատմամբ փողի զանգվածի հարաբերությունը ՀՀ-ում կազմել է 461.1% (2775005 մլն դրամ 6017.0 մլրդ դրամ), իսկ 2022 թ.-ին՝ 51.9 (4414073 մլն դրամ/ 8501.4 մլրդ դրամ)⁷⁷ ունենալը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ՝ մեր երկիրն ընտրել է կայուն զարգացման ուղի՝ ի դեմս կոշտ դրամավարկային քաղաքականության՝ նպատակ ունենալով ամրապնդելու բնակչության վստահությունն ազգային արժույթի նկատմամբ: Բացի այդ, Հայաստանում զարգացած կամ դեռևս վերջնականորեն ձևավորված չեն ֆինանսական համակարգի տարբեր ինստիտուտները, ինչպիսիք են

⁷⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 15, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 46:

⁷⁷ Նույն տեղում:

կապիտալի և ապրանքային բորսաները, վարկային և ոչ բանկային հաստատությունները, ավանդների ամբողջական ապահովագրման և վերաապահովագրման կազմակերպությունները և այլն:

Այս ամենից բացի, ազգային արժույթի շրջանառության և, հատկապես, կուտակման միջոցի գործառույթների իրականացման գործում մեծ դեր է խաղում ԱՄՆ դոլարը: Արտարժույթային ավանդների նկատմամբ բնակչության և կազմակերպությունների բարձր հակվածությունը հանգեցնում է փողի շրջանառությունում դոլարայինացման բարձր մակարդակին և դրա հետագա խորացմանը: Դոլարայինացման երկույթը բնորոշ է շուկայական տնտեսության անցման շրջանում գտնվող տնտեսություն ունեցող երկրներին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը: Այս ճանապարհով են անցել Իսրայելը և Արգենտինան՝ 1980-ական թվականներին, Լեհաստանը և Հարավսլավիան՝ 1990-ականներին և բազմաթիվ այլ երկրներ: Նշված երկրներում դոլարայինացման առաջացումը պայմանավորված էր նաև նրանով, որ այդ երկրների քաղաքացիների զգալի մասն աշխատում էր արտասահմանում և փողը հայրենիք էր ուղարկում արտարժույթով: Նշենք, որ այս երկույթը հատկանշական է նաև Հայաստանի համար:

ՀՀ-ում դոլարայինացման արմատավորումը սկսվեց դեռևս 1993 թվականին, երբ ներդրվեց ազգային արժույթը (դրամը): Սկզբնական շրջանում ինֆլացիայի բարձր մակարդակը, դրամի կուրսի արագ անկումը (նկատենք, որ դրամափոխության առաջին ամիսներին 1 ԱՄՆ-ը դոլարն «արժեր» 14.5 դրամ), պետքուջեի խոշոր պակասորդն առաջացրին դրամի նկատմամբ անվստահություն, և, որպես հետևանք, հաստատվեց ավանդների ու վարկերի դոլարայինացման բարձր մակարդակ: Նույն ձևով 1998 թվականին Ռուսաստանում ևս ֆինանսական ճգնաժամը և 2008 թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հանգեցրին դրամի նկատմամբ անվստահության խորացմանը և, որպես հետևանք, շրջանառության մեջ դոլարայինացման աստիճանի բարձրացմանը:

Պետք է նշել, որ վերջին տարիներին բանկային համակարգի հանդեպ վստահության մեծացումը նույնպես նպաստեց դոլարայնացման խորացմանը, քանի որ բնակչության կանխիկ արտարժույթային միջոցների մի մասը հոսեց դեպի բանկային համակարգ: ՀՀ-ում դոլարայնացման մակարդակը գնահատելիս կանխիկ արտարժույթը հաշվի չի առնվում, քանի որ դրա մեծության ճշգրիտ գնահատումը գործնականում անհնար է: ՀՀ-ում, դոլարայնացման մակարդակը գնահատելու առումով, օգտվում են ընդհանուր ավանդների մեջ արտարժույթային ավանդների տեսակարար կշռի և արտարժույթային ավանդների ու փողի զանգվածի հարաբերության ցուցանիշներից: Դոլարայնացման կրճատման նպատակով 1999 թվականին որոշ քայլեր ձեռնարկվեցին, մասնավորապես՝ խստացվեց արտարժույթի տնօրինման նորմատիվը, և պարտադիր պահուստավորումը սկսեց իրականացվել միայն հայկական դրամով: Ենթադրվում էր, որ այս միջոցառումների արդյունքում երկրում կաճի արտարժույթային և կնվազի դրամային միջոցների առաջարկը՝ հանգեցնելով առաջինների տոկոսադրույքների նվազմանը և վերջինների տոկոսադրույքների ավելացմանը, ինչն էլ, ի վերջո, առաջ կբերի դրամային ավանդների ավելացում և, միաժամանակ, դոլարային ավանդների կրճատում: Այս քայլերը կարող էին միայն կարճաժամկետ ազդեցություն ունենալ: Մինչդեռ դոլարայնացման խորացումը շարունակվում է՝ մնալով դրամավարկային քաղաքականության հետ կապված հիմնական խնդիրը (մասնավորապես՝ 2002 թվականին դոլարայնացման (արտարժույթային ավանդների հարաբերակցությունը փողի զանգվածին) մակարդակը կազմել է 41%⁷⁸, իսկ 2003 թվականին՝ 43%⁷⁹): Այդ ցուցանիշը 2006 թ.-ին կազմել է 29.4 %, 2011 թ.-ին՝ 41.3 %, 2018 թ.-ին՝ 43.5%, 2022 թ.-ին՝ 36.7%⁸⁰:

⁷⁸ ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն, Եր., 2002, էջ 35:

⁷⁹ ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն, Եր., 2003, էջ 39:

⁸⁰ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն: Վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 34:

Դոլարայինացման մակարդակի իջեցման գլխավոր ճանապարհն այդ երևույթը ծնող պատճառների վերացումն է, որն իր հիմքում ունի ինչպես տնտեսական, այնպես էլ ինստիտուցիոնալ և քաղաքական ուղղվածություն:

Տնտեսության դոլարայինացման բարձր մակարդակը կարող է հանգեցնել հետևյալ բացասական հետևանքներին. (ա) փոխարժեք պարտքային ճգնաժամի ձևավորում, (բ) միջազգային արտարժույթի կամ վճարամիջոցի կուրսի տատանումներ, որոնք դժվարացնում են ինֆլյացիոն, ինչպես նաև արտահանման և ներմուծման գործառույթների կարգավորումը, (գ) ինքնուրույն մոնետար քաղաքականության իրականացման խոչընդոտում, (դ) կցորդային տնտեսական համակարգի ձևավորմանը նպաստում, (ե) կախվածություն միջազգային ֆինանսական կազմակերպություններից, (զ) բանկային համակարգի գործունեության թուլացում, (է) պետության՝ մասներելու հնարավորությունների սահմանափակում:

Դոլարայինացման հաղթահարման միջոցառումները կարող են արդյունավետ լինել միայն իրականացվող տնտեսական քաղաքականության նկատմամբ հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց ունեցած բարձր վստահության պայմաններում: Այս առումով, պետք է կարևորել գների կայունության ապահովումը և դրամի նկատմամբ վստահության ամրապնդումը: Դրանք, ի վերջո, կհանգեցնեն դրամի և դոլարի փոխարժեքների երկկողմանի տատանումներին, որոնց պայմաններում ներդրողների համար ռիսկային կլինի դեպոզիտներում հիմնականում արտարժույթով ներդրումներ կատարելը: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում դոլարայինացման կրճատմանն ուղղված բարոյահոգեբանական ազդեցությունն ավելի արդյունավետ կարող է լինել, քան վարչական միջոցառումները: ՀՀ-ում դոլարայինացման մակարդակի փոփոխությունները 1999-2003 թթ. և 2018-2022 թթ. արտացոլված են աղյուսակ 2.3.16-ում: Պետք է նշել, որ դոլարայինացման անվտանգության շեմային մակարդակը 25% է⁸¹:

⁸¹ Вопросы экономики, N 10, 1998, էջ 35:

«Տնտեսության դոլարայնացման մակարդակը, 1999-2003 թթ. և 2018-2022 թթ., տոկոս»⁸²

Ցուցանիշը	Տարիները									
	1999	2000	2001	2002	2003	2018	2019	2020	2021	2022
Արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշիռը փողի զանգվածում	49	50	47	41	43	44	38	35	35	37
Արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշիռն ընդհանուր դեպոզիտներում	80	82	81	75	71	57	54	48	49	49

Դոլարայնացման մակարդակը Հայաստանում հաշվարկվում է ըստ երկու ցուցանիշի՝ արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշիռը փողի զանգվածում և արտարժույթային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդներում:

Վերջին տարիներին արագ զարգացում ապրեց հանրապետության բանկային համակարգը: Տարեցտարի ԿԲ՝ բանկային համակարգի կարգավորմանն ուղղված վարչական մեթոդները փոխարինվեցին տնտեսական մեթոդներով, և այժմ ունենք բավական ազատական (լիբերալ) և արդյունավետ բանկային օրենսդրական դաշտ: Յուրաքանչյուր երկրում դրամավարկային և, մասնավորապես, բանկային համակարգի արդյունավետությունը գնահատելու համար օգտագործվում է փողի զանգվածում կանխիկ դրամի տեսակարար կշիռը բնութագրող ցուցանիշ, որը հնարավորություն է տալիս որոշելու, թե արդյոք տվյալ երկրում կա վստահություն բանկային համակարգի նկատմամբ և ինչպիսին է բանկային համակարգի արդյունավետության աստիճանը: Այն, որ Հայաստանի Հանրապետությունում մեծացել է բանկային համակարգի նկատմամբ այդ համակարգից օգտվող-

⁸² ՀՀ կենտրոնական բանկի հաշվետվություն, Եր., 2003, էջ 45, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2023, Երևան, ՀՀ ՎԿ, էջ 46:

ների վստահությունը, վկայում է փողի զանգվածում կանխիկ դրամի տեսակարար կշռի նվազումը: Այսպես՝ եթե 2006 թվականին այդ ցուցանիշը կազմել է 43.6% (211469 մլն դրամ / 484496 մլն դրամ), 2011 թ.-ին՝ 31.2% (349407 մլն դրամ / 1118826 մլն դրամ)⁸³, 2018 թ.-ին՝ 17.2% (476996 մլն դրամ / 2775095 մլն դրամ), ապա 2022 թ.-ին՝ 15.3% (675703 մլն դրամ / 4414973 մլն դրամ)⁸⁴ (աղյուսակ 2.3.17):

Հայաստանյան տարբեր կառավարություններ գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգել են փոփոխական հաջողություններով: Ներկայում հանրապետությունում գործում է գիտական և գիտակրթական այնպիսի համակարգ⁸⁵, որն ունի զարգացման որոշակի հնարավորություններ, ինչպես նաև բազմաթիվ հիմնախնդիրներ: Ստեղծված համակարգը ձևավորվել է տասնամյակների ընթացքում, որի գործունեության համար մշակվել և ընդունվել են բազմաթիվ օրենքներ և այլ իրավական ակտեր, որոնք այս կամ այն ձևով կարգավորում են ոլորտը⁸⁶: Նշված իրավական ակտերի ամբողջ ծավալով քննադատական վերլուծությունը և դրանց բարեփոխումների լիարժեք տեսլականի մշակումը (ինչպես օրենսդրաիրավական, այնպես էլ կազմակերպական - կառուցվածքային փոփոխությունների առումով) դուրս են սույն հետազոտության ուսումնասիրության սահմաններից (հեղինակները դրանց կանդիդատան առանձին հետազոտությամբ):

⁸³ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2012, Եր., ՀՀ ՎԿ, էջ 34:

⁸⁴ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 46:

⁸⁵ Սուվարյան Յու. Մ., Հարությունյան Վ. Լ., Սարգսյան Վ. Ա., Խաչատրյան Վ. Վ., Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը. Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 232 էջ:

⁸⁶ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2011 թվականի ապրիլի 14-ին, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2004 թվականի դեկտեմբերի 14-ին:

Աղյուսակ 2.3.17

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ, փողի գանգվածի աճի և կառուցվածքի փոփոխությունը, 2018-2022 թթ.⁸⁷


	2018	2019	2020	2021	2022	2022 թ.՝ 2018 թ.-ի համեմատ, %**
Ներքին արդյունք (համախառն, ըն- թացիկ գներով), մլրդ դրամ	6017	6543.3	6181.9	6991.8	8501.4	141.3
Փողի գանգված*	2775095	3085464	3362038	3802606	4414973	159.1**
	100	100	100	100	100	
այդ թվում՝						
բանկային համա- կարգից դուրս կանխիկ դրամ	476996	502304	648437	636088	675703	141.7***
	17.2	16.3	19.3	16.7	15.3	-1.9
ցպահանջ ավանդներ	418276	494571	588305	731216	1004292	240.1
	15.1	16.0	17.5	19.2	22.7	7.7
ժամկետային ավանդներ	671552	906256	947163	1095528	1113734	165.8
	24.2	29.4	28.2	28.8	25.2	1.0
արտարժույթով ավանդներ	1208271	1182333	1178134	1339774	1621243	134.2
	43.5	38.3	35.0	35.2	36.7	-6.8
Դրամական բազմարկիչ	2.28	2.33	2.15	2.08	2.3	100.9

* Ընդգրկված են ՀՀ ԿԲ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները: ** Տոկոսներով: *** Տոկոսային կետ:

Վերջին տարիների ընթացքում էականորեն փոփոխվել է գիտա-կան և գիտատեխնիկական գործունեության նկատմամբ պետական համակարգի վերաբերմունքը: Զգալիորեն ավելացել են պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը փաստացի հատկացվող չափաբաժինները (գծապատկեր 2.3.2): Հարկ է

⁸⁷ Կազմել և հաշվարկել են հեղինակները՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 16, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 46-ի տվյալների հիման վրա:

նշել, որ վիճակագրական տվյալների պաշտոնական հրապարակումից հետո գծապատկերում բերված ցուցանիշները որոշ փոփոխություններ կարող են կրել, որը չի կարող ազդել սույն աշխատությունում ներկայացվող հետազոտությունների որակական արդյունքների վրա: Հարկավոր է նկատի ունենալ նաև, որ ներկայացվող տվյալները կարող են տարբերվել պետական բյուջեի նախատեսված ցուցանիշներից՝ հաշվետու տարում տեղի ունեցող փոփոխությունների պատճառով:



Ծանոթություն

1. Գիտական և գիտալուսնահանրական հետազոտությունների ծրագիր (ընդամենը), այդ թվում՝ 2. Գիտական ենթակառուցվածքի արդիականացում, 3. Գիտական և գիտալուսնահանրական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ, 4. Գիտական և գիտալուսնահանրական նպատակային-ծրագրային հետազոտություններ, 5. Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ:

Գծապատկեր 2.3.2. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրերի համար կատարված ծախսերը (հազ. դրամ), 2021-2022 թթ.⁸⁸

Գծապատկեր 2.3.2-ից երևում է, որ 2022 թ.-ին 2021թ.-ի համեմատությամբ գիտական և գիտատեխնիկական գործունեության ծախսերն ավելացել է շուրջ 1,5 անգամ, ինչը էական ներդրում է ուղրտի զարգացման գործում: Սակայն, հարց է առաջանում՝ արդյո՞ք դա էա-

⁸⁸ Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների:

կանորեն է անդրադարձել ոլորտի արդյունավետության բարձրացման վրա:

Բացի այդ, ՀՀ կառավարության ընդունած որոշման համաձայն՝ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման գծով պետական ծրագրերում ներգրավված գիտական կադրերի պաշտոնային նվազագույն դրույքաչափերի հաշվարկի համար, որպես բազային աշխատավարձ, հաշվարկվում է տվյալ տարվա համար սահմանված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալը⁸⁹: Սակայն, նորից նույն հարցն է առաջանում՝ արդյո՞ք կատարված բարելավումները հայկական գիտական և գիտատեխնիկական մտքի զարգացումը կարող են համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:

«Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության 2023-2030 թվականների հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ (ընդունվել է 2023 թ.-ի հուլիսի 20-ի № 1238-Լ որոշմամբ) նշված է. «Տնտեսական քաղաքականության հայեցակարգի հենքն է հանդիսանում տնտեսությունում տեխնոլոգիական առաջընթացը, ինչի իրագործումն ընկած է մարդկային կապիտալի զարգացման և գիտելիքահենք տնտեսության տեսլականի տիրույթում: Պետության գերնպատակներից են Հայաստանում մարդկային կապիտալի զարգացումը և մարդկային տաղանդի առաջադիմության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը»⁹⁰:

⁸⁹ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի № 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 13.05.2021 թ. № 747-Լ որոշումը:

⁹⁰ «Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության 2023-2030 թվականների հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. հուլիսի 20-ի № 1238-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=180697> :

Հայեցակարգում նախանշված հենասյունների համատեքստում պետք է դիտարկվեն ոլորտային ընթացիկ և հաջորդող հայեցակարգերն ու ռազմավարությունները, այդ թվում՝ ընդունվեն, վերախմբագրվեն կամ վերաշարադրվեն գործող և հաջորդող տարիների համար մշակվող ոլորտային փաստաթղթերը: Մինչդեռ, որպես հայեցակարգի ընդունման նպատակ, դիտարկվել է միայն Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման քաղաքականության գերակայությունների սահմանումը:

2.3.9. Արդարքին և փոխադարձ առևտրի ապրանքաշրջանառության կառուցվածքը

Արժեստեղծման գործոնների արդյունքն ըստ ժամանակի յուրաքանչյուր միավորի (ժամ, շաբաթ, ամիս, տարի և այլն) ձևավորվում է ՀՆԱ կամ մեկ այլ մակրոտնտեսական ցուցանիշի (օրինակ՝ ազգային եկամտի կամ համախառն զուտ արդյունքի) միջոցով կամ, այլ կերպ ասած, ազգային հարստության աճի աղբյուրը ՀՆԱ-ն է, որի աճի ապահովումը երաշխիք է ստեղծում բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման ու պետության ներքին և արտաքին անվտանգության ապահովման համար: Ըստ որում, ՀՆԱ մեծությունը ձևավորվում է վերջնական սպառման, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումարով: Վերջինս ներկայացնում է ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման տարբերությունը, և եթե այդ տարբերությունը դրական է, ապա ՀՆԱ-ն ավելանում է, և ընդհակառակը: Ի վերջո, զուտ արտահանման ցուցանիշի մեջ խտանում է ինչպես միկրո- և մակրոմակարդակում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը, այնպես էլ ազգային քաղաքականության և մեզաէկոնոմիկայի փոխառնչությունները: Զուտ արտահանման մեծության ավելացման համար գոյություն ունի երկու ուղի. առաջին՝ արտահանման ավելացում և երկրորդ՝ ներմուծման նվազեցում: Ասվածի տեսանկյունից, մտահոգիչ են Հայաս-

տանի Հանրապետությունից արտահանման ծավալների և կառուցվածքի կենտրոնացվածության ու արտաքին առևտրաշրջանառության մեջ արտահանման մասնաբաժնի տվյալները: Վիճակագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, օրինակ, 2009 թ.-ին հանրապետության զուտ արտահանումը բացասական է եղել՝ կազմելով -2610.9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2010 թ.-ին՝ -2707.8 մլրդ ԱՄՆ դոլար: Իսկ 2003-2010 թթ.-ին ՀՀ արտահանման ծավալը տատանվել է մեկ մլրդ ԱՄՆ դոլարի շրջակայքում (2009 թ.-ին նվազել է՝ մոտենալով 710.2 մլն ԱՄՆ դոլարի սահմանագծին, ինչը վերջին տարիների ամենացածր մակարդակն է): 2022 թ.-ին արտահանումը կազմել է 5419.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 8775.9 մլն դոլար կամ զուտ արտահանումը կազմել է -3356.8 մլն ԱՄՆ դոլար, ինչը ՀՆԱ (19514 մլն դոլար) 17.2%-ն էր: Այդ ցուցանիշների միջին տարեկան մեծությունները 2000-2022 թթ.-ի համար կազմել են համապատասխանաբար՝ 1554.9, 3529.1, - 1974.2 մլն ԱՄՆ դոլար և 16.9%: Նման իրավիճակն այն բանի հետևանք է, որ ՀՆԱ-ի մեջ ցածր է արտահանման մասնաբաժինը, որը 2003-2009 թթ. ժամանակահատվածում ունեցել է անկման միտում: Այսպես՝ 2003 թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 24.4%, 2004 թ.-ին՝ 20.2%, 2005 թ.-ին՝ 19.9%, 2006 թ.-ին՝ 15.4%, 2007 թ.-ին՝ 12.5%, 2008 թ.-ին՝ 9.1%, 2009 թ.-ին՝ 8.2%, 2010 թ.-ին՝ 11.2%: Ասվածից հետևում է, որ արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ին ցածր է, և 2010 թ.-ին 2003 թ.-ի համեմատ այդ ցուցանիշը նվազել է ավելի քան երկու անգամ (թեև 2010 թ.-ին արտահանման աճի տեմպը նախորդ տարվա համեմատ 146.6% էր, իսկ ներմուծմանը՝ 112.9%): Այդ ժամանակահատվածում շարունակվել է արտահանման ռեսուրսափնտեսիվության աճը՝ շնորհիվ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արագ աճի, ինչպես նաև բարձր է եղել արտահանման կենտրոնացվածության աստիճանը. 3 հիմնական արտադրանքների (մետաղներ, ակրոհոլային խմիչքներ և ադամանդ) խումբն ապահովում էր արտահանման 70%-ից ավելին, որի կշիռն ուներ աճի միտում (2010 թ.-ին՝ 77.1%):

Աղյուսակ 2.3.18-ում պատկերված է Հայաստանի Հանրապետության ՀՆԱ և արտաքին ապրանքաշրջանառության, այդ թվում՝ արտահանման և ներմուծման ցուցանիշների շարժընթացը, ինչպես նաև դրանց աճի տեմպերը 2000-2022 թթ.: Տվյալներից երևում է, որ 2000-2022 թթ.-ին ՀՀ ՀՆԱ-ն (դոլարային արտահայտությամբ) ավելացել է 1020%-ով (19514/1912), արտաքին առևտրաշրջանառությունը՝ 1197.6%-ով (14195.0/1185.2), այդ թվում՝ արտահանումը՝ 1803.4%-ով (5419.1/300.5), իսկ ներմուծումը՝ 991.9%-ով (8775.9/884.7):

Նկատենք, որ եթե բացարձակ արժեքով 2018 թ.-ին ՀՀ ներմուծման ծավալը գերազանցել է արտահանման ծավալը 2562.4 մլն ԱՄՆ դոլարով (4975.2 մլն ԱՄՆ դոլար – 2412.8 մլն ԱՄՆ դոլար), ինչը նշանակում է, որ 2018 թ.-ին ՀՀ զուտ արտահանման մեծությունը գերազանցել է արտահանման բացարձակ արժեքը, ապա 2022 թ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 3356.8, 8775.9 և 5419.1 մլն ԱՄՆ դոլար:

Հետաքրքրական է նաև, որ 2018 թ.-ին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը ԱՊՀ երկրների հետ կազմել է ընդհանուր ապրանքաշրջանառության 30.0%-ը, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրների հետ՝ 27.0%-ը, Եվրամիության երկրների հետ՝ 24.8%-ը, իսկ այլ երկրների հետ՝ 45.2%-ը: ՀՀ առևտրի հաշվեկշիռը նույն ժանակահատվածում նշված երկրների հետ կազմել է համապատասխանաբար՝ -771.8 մլն ԱՄՆ դոլար, -611.5 մլն ԱՄՆ դոլար, -462.4 մլն ԱՄՆ դոլար և - 1317.1 մլն ԱՄՆ դոլար կամ ընդամենը՝ - 2551.3 մլն ԱՄՆ դոլար⁹¹: Այդ ցուցանիշները 2021 և 2022 թթ.-ին միայն ավելացել են, և 2021 թ.-ին առևտրաշրջանառության ընդհանուր ծավալում ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը կազմել է 35.1%, իսկ 2022 թ.-ին՝ 38.4%, որից ԵԱՏՄ երկրների հետ համապատասխանաբար՝ 32.6% և 37.3%:

⁹¹ Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2019, էջ 127:

ՀՀ ՀՆԱ և արտաքին առևտրաշրջանառության աճի տեմպերը, 2000-2022 թթ.

Տարի-ներ	ՀՆԱ		ՀՆԱ իրական աճի տեմպը (%) նախորդ տարվա նկատմամբ		Արտաքին առևտրաշրջա- նառություն, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին առևտրաշրջա նառության աճի տեմպը (%) նախորդ տարվա նկատմամբ	այդ թվում			
	մլն ՀՀ դրամ	մլն ԱՄՆ դոլար	դրամական ար- տահայտությամբ	դոլարային ար- տահայտությամբ			Արտահանում, մլն ԱՄՆ դոլար	Արտահանման աճի տեմպը, %, նախորդ տարվա նկատմամբ	Ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	Ներմուծման աճի տեմպը (%) նախորդ տարվա նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2000	1031338	1912	98.6	103.6	1185.2	113.6	300.5	129.7	884.7	109.1
2001	1175877	2118	104.1	110.8	1219.3	102.9	341.9	113.8	877.4	99.2
2002	1362472	2376	100.7	112.2	1442.3	122.4	505.2	147.8	987.2	112.5
2003	1624643	2807	104.6	118.1	1965.1	131.7	685.6	135.7	1279.5	129.6
2004	1907945	3577	106.3	127.4	2073.6	105.5	722.0	105.4	1350.7	105.6
2005	2242881	4900	103.2	137.0	2775.6	133.9	973.9	134.7	1801.7	133.4
2006	2656190	6384	104.6	130.3	3176.7	114.4	985.1	101.1	2191.6	121.6
2007	3149283	9206	104.2	144.2	4420.1	139.1	1152.3	117.0	3267.8	149.1
2008	3568228	11662	105.9	126.7	5483.3	124.1	1057.2	91.7	4426.1	135.4
2009	3141651	8648	102.6	74.2	4031.3	73.5	710.2	67.2	3321.1	75.0
2010	3400203	9260	107.8	107.1	4790.0	118.8	1041.1	146.6	3748.9	112.9
2011	3777946	10142	104.3	109.5	5479.6	114.4	1334.3	128.2	4145.3	110.6

Աղյուսակ 2.3.18-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2012	4266461	10619	98.8	104.7	5641.4	103.0	1380.2	103.4	4261.2	102.8
2013	4555638	11121	103.4	104.7	5864.6	104.0	1478.7	107.1	4385.9	102.9
2014	4828626	11610	102.3	104.4	5971.7	101.8	1547.3	104.0	4424.4	100.9
2015	5043633	10553	101.2	90.9	4724.6	79.1	1485.3	96.0	3239.2	73.2
2016	5067294	10546	100.3	99.9	5065.2	107.2	1791.7	120.6	3273.5	101.1
2017	5564493	11527	102.1	109.3	6334.8	125.8	2237.7	124.9	4097.1	125.2
2018	6017035	12458	102.5	108.1	7388.0	116.4	2412.8	107.8	4975.2	121.1
2019	6543321	13619	107.6	109.3	8175.9	110.7	2647.2	109.7	5528.7	111.1
2020	6181902	12642	92.8	92.8	7101.0	86.9	2537.0	95.8	4564.0	82.6
2021	6991777	13861	105.8	109.6	8378.2	118.0	3016.0	118.9	5362.2	117.5
2022	8501435	19514	112.6	140.8	14195.0	169.4	5419.1	179.7	8775.9	163.7
2000- 2022 թթ. միջինը	4026098.8	9176.6	103.3	112.0	5081.8	113.8	1554.9	116.8	3529.1	112.9

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է ըստ Հայաստանի վիճակագրական փարեզիրք, եր., ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 214, 460, Հայաստանի վիճակագրական փարեզիրք, եր., ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 210, 429, Հայաստանի ազգային հաշիվներ 2022, եր., ՀՀ ՎԿ, 2022, էջ 9 և ՀՀ ՎԿ ժամանակագրական շարքերի՝ <https://www.armstat.am/am/?nid=12> տվյալների:

Ինչ վերաբերում է Եվրամիության երկրներին, ապա դրանց հետ առևտրաշրջանառության ծավալները կրճատվել են՝ 2021 թ.-ին կազմելով ընդամենը առևտրաշրջանառության 19.0%-ը և 16.2%-ը, այլ երկրների հետ համապատասխանաբար՝ 45.9%-ը և 45.4%-ը: Ընդ որում, այլ երկրների շարքում նշանակալի է Չինաստանի (2021 թ.՝ 15.0%, 2022 թ.՝ 12.4%) և Իրանի Իսլամական Հանրապետության (2021 թ.՝ 6.0%, 2022 թ.՝ 5.0%) տեսակարար կշիռը: ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի հաշվեկշիռը վերջին երկու տարիներին շարունակել է մնալ բացասական, սակայն 2022 թ.-ին 2021 թ.-ի համեմատ բավականաչափ բարելավվել է: Մասնավորապես՝ ԱՊՀ և ԵԱՏՄ ԱՊՀ երկրների հետ բացասական հաշվեկշիռը նվազել է ավելի քան 3 անգամ: Օրինակ՝ ԱՊՀ երկրների առումով, 2021 թ.-ին այդ ցուցանիշը կազմել է -1084.3, իսկ արդեն 2022 թ.-ին՝ -322.8 մլն ԱՄՆ դոլար, ԵԱՏՄ երկրների առումով, համապատասխանաբար՝ -968.6 և -247.3 մլն ԱՄՆ դոլար: Եվրամիության երկրների դեպքում պատկերը ճիշտ հակառակն է. 2022 թ.-ին 2021 թ.-ի համեմատ արտաքին և փոխադարձ առևտրի հաշվեկշռի բացասական արժեքը ավելացել է շուրջ 3 անգամ՝ 2021 թ.-ի -274.4 մլն ԱՄՆ դոլարից 2022 թ.-ին դառնալով -736.9 մլն ԱՄՆ դոլար⁹²:

Այսպիսով՝ կատարված վերլուծությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ արտաքին շուկաներն էական ազդեցություն են թողնում ՀՆԱ՝ որպես երկրի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշի մեծության և աճի տեմպերի վրա, ինչն էլ տնտեսական քաղաքականություն մշակողներից պահանջում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՀՆԱ կառուցվածքին՝ երկրի սոցիալ-տնտեսական, տարածաշրջանային և համաշխարհային նշանակության ծրագրերի և զարգացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացքում⁹³:

⁹² Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2023, էջ 151-152:

⁹³ Այս հիմնախնդիրը ավելի մանրամասն ուսումնասիրված է Ա. Խ. Մարկոսյանի և Է. Ն.

Ամփոփելով աշխատության այս հատվածը՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական անվտանգությունը, որպես հետազոտությունների առարկա, դեռևս կայացման փուլում է: Մեր երկրի պարագայում տնտեսական անվտանգությանը դիտարկվում է որպես անցման շրջանի քաղաքականությունը բնութագրող առանձնահատկություններից ածանցյալ հասկացություն: Այստեղ տնտեսական անվտանգության հիմնախնդրի նկատմամբ համակարգված մոտեցում չի ցուցաբերվում և բացակայում է դրա՝ իբրև միասնական համակարգի մասին պատկերացումը: Հայաստանի Հանրապետությունում դեռևս մշակված չեն տնտեսական անվտանգության ամբողջական հայեցակարգը, դրա ապահովման իրավական դաշտը և, որպես վերջինիս արդյունք, պետական ռազմավարությունը:

Տնտեսական անվտանգության ռազմավարությունը պետք է համապատասխանի ազգային շահերին՝ դառնալով քաղաքական և տնտեսական կարևորագույն որոշումների ընդունման հիմնական կողմնորոշիչը: Այն պետք է պարունակի ցուցանիշներ (ինդիկատորներ), որոնք կարծանագրեն ներքին և արտաքին սպառնալիքների հայտնվելու փաստը և այդ սպառնալիքների չեզոքացմանն ուղղված միջոցառումները:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս անցման շրջանի վերափոխումների փուլում է (իրեն հատուկ դրսևորումներով), ինչը, նրա վրա ազդող ներքին և արտաքին գործոնների տեսանկյունից, դժվարացնում է տնտեսական անվտանգության ապահովումը: Նման պայմաններում ավելի է սրվում և կարևորվում տնտեսական անվտանգության ապահովման համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

Մաթևոսյանի «Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության երկարաժամկետ ռազմավարության արդյունքները», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտական հոդվածների ժողովածու-2023, № 2, Եր., ՀՀ ԳԱԱ ՏԻ, 2023 (էջ 26-44) հոդվածի շրջանակում:

Տնտեսական անվտանգության ապահովման համար պետության գերակայող ուղղություններն են արտադրության ծավալների աճի խթանումը, տնտեսության կառուցվածքային վերափոխումները, ազգաբնակչության հիմնական մասի բավարար կենսամակարդակի ապահովումը և կյանքի որակի բարձրացումը, հասարակության միջին խավի ձևավորմանն ուղղված միջոցառումները:

Տնտեսական անվտանգության համակարգի ձևավորման հիմնախնդիրներից են տնտեսական անվտանգության ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների վիճակագրության վարումն ու մոնիտորինգը: Շատ ցուցանիշներ հնարավոր չէ հաշվարկել դրանց վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության և երբեմն դրանց ոչ հավաստի լինելու պատճառով:

«Տնտեսական անվտանգության ցուցանիշների մեջ առանցքային տեղ են զբաղեցնում ՀՆԱ մեծության հաշվարկները: Որպես հանրապետության տնտեսական անվտանգության գերակա հիմնախնդիրներ՝ պետք է մատնանշել եկամուտների տարբերակվածությունը 10 տոկոս ամենահարուստ և 10 տոկոս ամենաաղքատ ընտանիքների միջև, աղքատության և եկամուտների կենտրոնացման մակարդակները: Տնտեսական անվտանգությանը սպառնացող գործընթացներում ՀՀ-ի համար առանձնահատուկ կերպով կարևորվում է երկրի ազգային հարստության բաղկացուցիչ մասի մտավոր կապիտալի շարունակական արտահոսքը երկրից, որն իր նշանակությամբ մեծ մտահոգություն է առաջացնում և կարիք ունի անհետաձգելի միջոցառումների ու քայլերի: Մեկ այլ սպառնալիք է սովետային տնտեսության և կոռուպցիայի առկայությունը, ինչը լուրջ խոչընդոտ է Հայաստանի տնտեսական շահերի իրացման և, հետևաբար, տնտեսական անվտանգության ապահովման համար:

Մեր հանրապետությունում տնտեսական անվտանգության ինքնուրույն ապահովումը բարդ և դժվարությամբ իրականացվող գործընթաց է: Ուստի ամենաարդյունավետը տնտեսական անվտանգության ապահովման կոլեկտիվ ձևն է՝ գործելով միջազգային կոլեկտիվ

անվտանգության համակարգերի շրջանակում, որտեղ առաջատար երկրների շահերը բարենպաստ են մեր երկրի տնտեսական անվտանգության ապահովման համար:

Ելնելով ուսումնասիրության հիմնական եզրակացություններից՝ նպատակահարմար է կատարել հետևյալ առաջարկությունները.

Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել տնտեսական անվտանգության համակարգ, որի հիմքում պետք է դրվի մոնիտորինգի, վերլուծությունների, կանխատեսումների և այլ միջոցառումների մշակումը (Ազգային անվտանգության խորհուրդ, «Էկոնոմիկայի նախարարություն»):

Տնտեսական անվտանգության ապահովման համակարգի ղեկավարումը հիմնականում պետք է բաղկացած լինի երկու մակարդակից: Կառավարման առաջին մակարդակում պետք է մշակվի տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարությունը՝ ի դեմս Ազգային անվտանգության խորհրդի, իսկ երկրորդում՝ այդ ռազմավարության մարտավարությունն ու բուն ռազմավարության իրականացումը՝ ի դեմս կառավարության:

Անհրաժեշտ է մշակել տնտեսական անվտանգության ապահովման միջոցառումների ընտրության կառուցակարգ, որը հնարավորություն կտա կատարելու նշված միջոցառումների նախնական ընտրությունը տնտեսական անվտանգության բարդ համակարգում:

Տնտեսական անվտանգության ապահովման գործում մեծ դեր ունեն պետական պաշարները՝ հիմնականում որպես տնտեսական համակարգի կայունացուցիչներ: Պաշարները պետք է հաշվարկվեն ըստ անհրաժեշտ ժամանակահատվածի՝ բոլոր հնարավոր սպառնալիքներին դիմակայելու համար, ընդ որում, նպատակահարմար է հաշվարկներ կատարելիս բացահայտել այն սպառնալիքները, որոնց չեզոքացման պաշարները որոշ առումով չեզոքացնում են նաև մեկ այլ սպառնալիք: Նման մոտեցումը հնարավորություն կտա խուսափելու պահուստների մեծության կրկնակի հաշվարկից:

Անհրաժեշտ է մշակել Հայաստանի տնտեսական անվտանգու-

թյան հայեցակարգ և ռազմավարություն, որոնք հստակ կերպով կսահմանեն անվտանգության ապահովման ուղղությունները, միջոցները, միջոցառումները՝ յուրաքանչյուր տարվա համար: Յուրաքանչյուր տարվա տնտեսական անվտանգության ձեռքբերումների հիման վրա (հաշվի առնելով նաև այդ գործընթացի թերությունները) անհրաժեշտ է վերանայել ինչպես հայեցակարգի, այնպես էլ ռազմավարության հիմնական դրույթները: Կարևոր է ընդգծել, որ տնտեսական անվտանգության արդյունքները պետք է հիմք հանդիսանան հանրապետության ինչպես ռազմավարական, այնպես էլ ընթացիկ ծրագրերի գերակայությունների սահմանման համար: Եվ եթե ներկայում մեզանում տնտեսական զարգացման գերակայություն ասելով հասկանում են տնտեսության այս կամ այն ոլորտի (օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, տուրիզմի և այլն) զարգացումը, ապա ժամանակն է, որ գերակա ուղղությունները ճանաչվեն ըստ տնտեսական անվտանգության այն ցուցանիշների, որոնք անմիջականորեն կապված են ինչպես հանրապետության ազգային շահերի, այնպես էլ նրա բնակչության մեծ մասի կենսամակարդակին առնչվող հիմնախնդիրների լուծման հետ:

Բոլոր վերը նշված դրույթներն իրագործելու համար պետք է ապահովել նաև տնտեսական անվտանգության իրավական հիմքը: Այդ նպատակով տնտեսական անվտանգության հայեցակարգը մշակելուց հետո անհրաժեշտ է ընդունել «Տնտեսական անվտանգության մասին» օրենք և դրանից բխող իրավական այլ փաստաթղթեր, ինչպես նաև մշակել ու Ազգային ժողովում օրենքների տեսքով հաստատել ամենամյա տնտեսական անվտանգության ծրագրեր՝ հանրապետության ազգային անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով:

2.4. Երկրի ազգային և տնտեսական անվտանգությունը՝ ռազմավարական պլանավորման համատեքստում

Ինչպես վերը նշեցինք, տնտեսական անվտանգության ապահովման գործընթացը ՀՀ-ում չի ենթարկվում որևէ համակարգման, ծրագրավորման, որոնք հիմնված կլինեն տվյալ ժամանակահատվածին բնորոշ սոցիալ-տնտեսական երևույթների ուսումնասիրության ու ռիսկերի առաջացման վրա: Այս իմաստով, օգտակար կարող է լինել ռազմավարական պլանավորման գործիքակազմի կիրառումը, որը պետական քաղաքականության համակարգված միջոցառումների ամբողջություն է՝ ուղղված երկրի ազգային շահերի, սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության ապահովման երկարաժամկետ նպատակների, ռազմավարական ազգային առաջնահերթությունների սահմանմանը և լուծման ուղիների ու գործիքակազմի որոշմանը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման ռիսկերի և ազգային (ներառյալ տնտեսական) անվտանգության սպառնալիքների ու վտանգների բացահայտմանը:

Ռազմավարական պլանավորման գործում հայեցակարգային դրույթների ամրագրման համար հիմք կարող է ծառայել օրենքը, որը, բովանդակային իմաստով, կամփոփի ռազմավարական պլանավորման նորմատիվային դաշտը, ինչպես նաև կկանոնակարգի այս ոլորտում ներգրավված մարմինների, օբյեկտների և սուբյեկտների միջև հարաբերությունները:

Ռազմավարական պլանավորման մասին օրենքի մշակումը նախաձեռնելուց առաջ առանցքային նշանակություն ունի դրա հայեցակարգի մշակումը (ինչն ընդունված է նաև ՀՀ-ում օրինաստեղծ փորձում), որը էականորեն տարբերվում է մինչ օրս գոյություն ունեցող՝ ուսումնասիրված կարգավորումներից: Այսպիսով՝ առաջարկվող հայեցակարգը հիմք կդառնա ռազմավարական պլանավորման արդիականացված և փոփոխված համակարգի ձևավորման և միննույն

տնտեսական տարածքում այս ոլորտում հարաբերությունների համակարգման և իրավական ակտերի համաձայնեցված մշակման համար՝ որպես ամբողջություն:

Այս առումով, առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել նման նորարարական հայեցակարգի նախագծի ստեղծմանը, այդ թվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմավարական պլանավորման մասին օրենքը ոչ միայն պետք է նորովի ներկայացնի կարգավորվող համապատասխան հարաբերությունները, այլև ծառայի տնտեսական գործունեության մասնակիցների միջև միջոյություն (ոլորտային) երկխոսության, ներդաշնակեցման նպատակներին:

Ռազմավարական պլանավորման մասին օրենքի հայեցակարգի նախագծում այս առնչությամբ առաջարկված գաղափարն է կատարելագործել պլանավորման աշխատանքների ազգային կարգավորման իրավական դաշտը՝ նախ և առաջ, նման կարգավորումն ավելի հիմնավոր և բովանդակալից ձևակերպելու տեսանկյունից: Սա նախատեսում է օրենքի մեջ հատուկ տնտեսական և կառավարչական զարգացումների ու կառուցակարգերի օգտագործում, որի արդյունքում պետք է ուժեղացվի երկրի սոցիալ-տնտեսության վիճակի համապարփակ վերլուծությունը և մշակվեն, հիմնավորվեն ու ընտրվեն ռազմավարական ուղղություններն ու կանխատեսվող ցուցանիշները, որոնք համապատասխանում են երկրի զարգացման սահմանված նպատակներին:

Ռազմավարական պլանավորման մասին օրենքի հայեցակարգի նպատակը ռազմավարական պլանավորման արդիականացված (առկա նպատակների և խնդիրների լույսի ներքո) համակարգի ստեղծումն է, որը ենթադրում է համապարփակ հավասարակշռված կարգավորող դաշտի և համարժեք մեթոդաբանության ձևավորում: Այս համակարգն աջակցելու է պլանավորման և կառավարման այլ որոշումների կայացման գործընթացին, ներքին հակասությունների վերացմանը, օրենսդրական (կամ կարգավորման կառուցակարգերի) բացերը լրացնելուն, ինչպես նաև հիմնվելու է պետական ռազմավար-

րական պլանավորման և ռիսկերի կառավարման, ֆինանսական և արդյունաբերական քաղաքականության, տեխնոլոգիական և ֆինանսական ինքնիշխանության, տնտեսական անվտանգության համակարգերի վերաբերյալ դինամիկ փոփոխվող ազգային օրենքների վրա:

Հայեցակարգի կարգավորման առարկան պետք է ներառի պետության ռազմավարական պլանավորման արդիականացված համակարգի իրավական, մեթոդական և կազմակերպչական հիմքերը, ուղղված լինի առկա լայնածավալ տեղեկատվության օգտագործմանը, թույլ տա տեղեկատվական տեխնոլոգիաների լայնորեն կիրառումն ազգային տնտեսության կառավարման մեջ՝ զգալիորեն բարձրացնելով վերջինիս մրցունակության մակարդակը: Վերջնական նպատակը երկրի քաղաքացիների կյանքի որակի զգալի բարելավումն է, ներառյալ աղքատության՝ որպես սոցիալական երևույթի ամբողջական նվազեցումը:

Ռազմավարական պլանավորման մասին օրենքի շահառուներ պետք է հանդիսանան ռազմավարական պլանավորման ոլորտում համապատասխան հարաբերությունների մասնակիցները (և, համապատասխանաբար, իրավահարաբերությունների սուբյեկտները): Պետությունը պետք է դառնա «ազգային կենտրոն»՝ համապատասխան իրավասություններով և պետական այլ մարմիններով (ներառյալ գործադիր պետական մարմինները, որոնց իրավասության շրջանակում են տնտեսության և սոցիալական համապատասխան ոլորտները, մարզային կառավարման մարմինները): Օրենքի կարգավորման առարկան վերաբերում է նաև տեղական ինքնակառավարման մարմիններին, ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության սուբյեկտներին (ներառյալ գիտական և գիտակոնստրուկտորական կազմակերպությունները), ինչպես նաև հասարակական միավորումներին, միություններին և ոչ առևտրային կազմակերպություններին, որոնք իրենց լիազորությունների շրջանակում աջակցում են երկրի ռազմավարական նպատակների իրականացմանը:

Ռազմավարական պլանավորման չափանիշները, որոնք պետք է սահմանեն և ապահովեն քաղաքականության շարունակականությունը, համակարգվածությունը, հարմարվողականությունը, արդյունավետությունը, ռիսկերից պաշտպանությունը (երկրի տնտեսական անվտանգությունը), խելացի տեխնոլոգիաների կիրառելիությունը, ինչպես նաև երկրի բնակչության կյանքի որակի բարելավման և բարեկեցության բարձրացման նպատակադրումը (նպատակների սահմանումը), ելնելով ազգային շահերից և սովյալ երկրի զարգացման նպատակներից, նույնպես պետք է սահմանված լինեն առաջարկվող իրավական ակտով:

Միաժամանակ, ռազմավարական պլանավորման մասին օրենքի առանձնահատկություններից մեկը պետք է լինի արդյունաբերական և սոցիալական քաղաքականության համատեղ իրականացման ընթացակարգի մոդելային-նորմատիվ շրջանակի սահմանումը՝ կապված պետական ռազմավարական որոշումների կայացման գործընթացի գնահատման հետ, որը ներկայացնում է վերարտադրողական սոցիալ-տնտեսական գործընթաց:

Այս առումով, օրենքի նախագծով անհրաժեշտ է նախատեսել հատուկ նորմեր և իրավական կառուցակարգեր, որոնք թույլ կտան՝

- առաջին հերթին, վերացնել ազգային տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող հանքարդյունաբերության ոլորտի վաղեմի խնդիրները (ներկայում և տեսանելի ապագայում), որոնք ներկայում լուծվում են կարճաժամկետ միջոցառումների շնորհիվ (հարկման բարեփոխումներ, իրական շահառուների հայտնաբերում, «թափանցիկության» աստիճանի բարձրացում և այլն),
- կանխել ապագայի սպառնալիքները, մասնավորապես՝ խնդրահարույց իրավիճակների առաջացումը, ինչպես նաև երկրի արտադրական և արտահանման հատվածների դինամիկայի կրիտիկական անկումը,

- արգելել տնտեսական անվտանգության նոր ռիսկերի առաջացումը և մեղմացնել արդեն գոյություն ունեցողների ազդեցությունը երկրի տնտեսության վրա:

Ռազմավարական պլանավորման վերաբերյալ օրենքը պետք է պարունակի նաև հատուկ սկզբունքներ, որոնք պետք է վկայեն, որ տնտեսավարող սուբյեկտների գործունեության «հավասար», ընդհանուր պայմանների ինստիտուցիոնալացումը և օրենքի գերակայությունը այլընտրանք չունեն, իսկ միայն շուկայական կարգավորման կուրսից անցումը դեպի ակտիվ պետական քաղաքականություն իրականացվում է այն ոլորտներում, որտեղ պետությունը ռազմավարական խնդիրներ է առաջադրում:

Փաստաթղթի առաջարկվող կառուցվածքը: Առաջարկվող օրենքի շրջանակում նախատեսվում է.

- 1) սահմանել իրավահարաբերությունների օբյեկտները տնտեսական գործունեության ռազմավարական պլանավորման գործընթացում,
- 2) մշակել ռազմավարական պլանավորման համակարգում պետության (պետական մարմինների) գործունեությունը կազմակերպելու և համակարգելու միասնական սկզբունքները,
- 3) առաջ քաշել ռազմավարական պլանավորման հարմարվողական կառուցակարգ և ստեղծել համապատասխան գիտելիքի բազա՝ խնդրահարույց իրավիճակների առաջացման համակարգային սպառնալիքների ռիսկերը կանխելու համար,
- 4) սահմանել շահառու անձանց, կազմակերպությունների և մարմինների շրջանակը, նրանց լիազորությունները, ինչպես նաև ծրագրային փաստաթղթերի մշակման, իրականացման և վերահսկման գործում փոխգործակցության կարգը,
- 5) սահմանել ռիսկերից պաշտպանված ռազմավարական պլանավորման մեթոդներն ու տեղեկատվական միջավայրը,
- 6) ձևակերպել ռազմավարական պլանավորման առանձին բաղադրիչների և նպատակային ցուցանիշների նախագծման մե-

թողները, տեխնիկան, ձևերը,

- 7) ձևավորել երկրի օրենսդրության միասնականացման իրավական հիմքը՝ շահագրգիռ կողմերի տնտեսական գործունեության ռազմավարական պլանավորման գործընթացի կարգավորման միասնական մոտեցումներ մշակելու համար,
- 8) օրենքի առարկան համապատասխանեցնել միջազգային պարտավորությունների նորմերին:

Ռազմավարական պլանավորման մասին օրենքի հայեցակարգը պետք է կառուցվի գործող հիմնական օրենքին համապատասխանության պահանջներով՝ հաշվի առնելով օրենսդրության զարգացման միտումներն ու դրա կիրառման փորձը, միջազգային իրավունքի նորմերը, թվայնացման ոլորտի կանոնները՝ տնտեսական հարաբերությունների, արտադրողական ուժերի և տեղեկատվական հասարակության ձևավորման համատեքստում:

Ստեղծված իրավիճակում ռազմավարական պլանավորման հարաբերությունների կարգավորման առնչությամբ հրատապ լուծում պահանջող խնդիրների շարքում կարելի է առանձնացնել տարածքային կառավարումը (որի արտահայտությունն է տարածքային անհամաչափ զարգացումը), գործող օրենսդրության անհամապատասխանությունը ռազմավարական պլանավորման սկզբունքներին, աշխարհաքաղաքական զարգացումների նոր պայմանները, որտեղ Հայաստանը փորձում է գտնել իր տեղը:

Ընդհանուր առմամբ, վերը նշված նոր բնույթի և այլ խնդիրների, ինչպես նաև ավելի ավանդական հարաբերությունների կարգավորումը պետք է պատշաճ կերպով ձևակերպվի ռազմավարական պլանավորման մասին օրենքում:

Սակայն, եթե այսպես կոչված՝ «ավանդական» ռազմավարական պլանավորման հետ կապված հարցերի նորմատիվային կարգավորման տեսանկյունները հայտնի են (օրինակ՝ հիմնական հասկացությունների, ռազմավարական պլանավորման իրավահարաբերությունների սուբյեկտների, իրավասությունների սահմանազատման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հարա-

բերությունների կարգավորման վերաբերյալ և այլն), ապա նորմատիվային բնույթի նորարարությունների նկարագրությունը և կառուցվածքը (ռազմավարական պլանավորման մեթոդների և կառուցակարգերի, դրանց կիրառման վերաբերյալ) դեռևս պետք է մշակվեն և արտացոլվեն առաջարկվող իրավական ակտում:

Ռազմավարական պլանավորման ոլորտում պետական քաղաքականությունը իրականացվում է ՀՀ վարչապետի ղեկավարությամբ՝ պետական մարմինների փոխգործակցության միջոցով՝ օրենսդրությամբ սահմանված ռազմավարական պլանավորման սկզբունքների հիման վրա:

Ռազմավարական պլանավորման բնագավառում պետական մարմինների փոխգործակցության կարգը, ռազմավարական պլանավորման փաստաթղթերի բովանդակությանը և դրանց կառուցվածքին ներկայացվող ընդհանուր պահանջները, ինչպես նաև կազմակերպչական մյուս հարցերը սահմանվում են ՀՀ վարչապետի կամ կառավարության որոշումներով:

Ռազմավարական պլանավորման ոլորտում պետական քաղաքականության կառուցակարգերն են ռազմավարական պլանավորման համակարգի և ազգային անվտանգության (այդ թվում՝ տնտեսական անվտանգության) կազմակերպումն ու գործունեությունը ռազմավարական պլանավորման սկզբունքների հիման վրա՝ նախատեսելով՝

- ա) ռազմավարական պլանավորման փաստաթղթերի մշակման գործում հետևողականության ապահովում՝ սահմանված բովանդակությանը համապատասխան,
- բ) սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունների, առաջնահերթությունների, նպատակների, խնդիրների, ցուցանիշների, ֆինանսական ապահովման տեսանկյունից և այլ ռեսուրսների (ներառյալ մարդկային) հաշվառմամբ՝ ռազմավարական պլանավորման փաստաթղթերի համաձայնեցում,
- գ) սոցիալ-տնտեսական քաղաքականության նպատակներին հասնելու, սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության ապահովման խնդիրների իրականացման հա-

մար ռեսուրսների (ներառյալ անհրաժեշտ ֆինանսական հոսքերի) բացահայտումը, ռազմավարական կառավարման և բյուջետային քաղաքականության միջոցառումների համակարգումը, դ) ռազմավարական պլանավորման պարբերաշրջանների նկարագրությունը,

ե) ռազմավարական պլանավորման փաստաթղթերի կատարման և այդ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշների մշտադիտարկման կազմակերպումը:

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով պայմանավորված՝ ոլորտային և տարածքային հիմունքներով նպատակների սահմանման շրջանակում մշակված ռազմավարական պլանավորման փաստաթղթերը ներառում են ռազմավարական պլանավորման ոլորտային փաստաթղթերը և տարածքային զարգացման ռազմավարությունը:

Պլանավորման և ծրագրավորման շրջանակում մշակված ռազմավարական պլանավորման փաստաթղթերը պետք է բովանդակեն կառավարության գործունեության հիմնական ուղղությունները, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին հասնելու միասնական ծրագիրը, ռազմավարական ոլորտներին վերաբերող ծրագրերը, ինչպես նաև ազգային անվտանգության ծրագիրը՝ իր բաղադրիչներով:

Ռազմավարական պլանավորման փաստաթղթերը երկրի զարգացման առաջնահերթություններին, նպատակներին, խնդիրներին և ծրագրային ցուցիչներին (քանակական և/կամ որակական բնութագրերին), ինչպես նաև ազգային (ներառյալ տնտեսական) անվտանգության ցուցանիշներին համապատասխանեցվում են ռազմավարական փաստաթղթերով նախատեսված նպատակների և խնդիրների փոխկապակցմամբ, ռեսուրսներով ապահովվածության ստուգմամբ: Նույն կերպ համապատասխանեցվում է ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունը:

Բազմավարական պլանավորման համակարգի հիմնական գործիքներն են ինդիկատիվ պլանավորումը, որը նախատեսում է սոցիալ-տնտեսական զարգացման վիճակն ու նպատակները բնութագրող և ազգային անվտանգությունն ապահովող համաձայնեցված ցուցիչների ամբողջության ձևավորում, ինչպես նաև ֆինանսական ապահովման հաշվարկների իրականացում և միջոցառումների մշակում՝ դրանց հիման վրա նպատակներին հասնելու միջոցառումների մշակման և ռեսուրսների տրամադրման համար:

Իրենց հերթին, ռազմավարական պլանավորման գործընթացում օգտագործվող ցուցանիշները որոշվում են նպատակների չափելիության և ցուցանիշների՝ նպատակներին համապատասխանության սկզբունքների հիման վրա՝ բնութագրելով նպատակներին հասնելու աստիճանն ու շարժընթացը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման ու ազգային անվտանգության ապահովման խնդիրները:

Բազմավարական պլանավորման գործընթացում օգտագործվող ցուցանիշների համակարգը ձևավորվում է ռազմավարական պլանավորման փաստաթղթերին համապատասխան և ապահովում կանխատեսման, նպատակների սահմանման, պլանավորման և ծրագրավորման շրջանակներում մշակված ռազմավարական պլանավորման փաստաթղթերի ներդաշնակեցում՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներով: Ցուցանիշների թարմացումը կատարվում է՝ հաշվի առնելով նոր նպատակների սահմանումը, թիրախային ցուցանիշների ձեռքբերումը (կամ դրանց տապալումը), ինչպես նաև ռեսուրսների անհրաժեշտության և բավարարության գնահատումը՝ ելնելով ֆինանսական հաշվարկներից:

Միատեսակ նախնական տվյալներ ստեղծելու, ռազմավարական պլանավորման փաստաթղթերում պարունակող ցուցանիշների շարունակականությունը, համադրելիությունը և հետևողականությունն ապահովելու նպատակով դրանց, ինչպես նաև թիրախային և առավելագույն թույլատրելի (սահմանային) արժեքների հաշվարկը պետք է կատարվի միասնական մեթոդաբանությամբ: Դրա համար օգտա-

գործվում են գնահատման և կանխատեսման ընդհանուր մոտեցումներ ու տեխնիկա՝ մոդելավորելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ու ազգային անվտանգության վիճակը, սպառնալիքների առաջացման հավանականությունը:

Սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության ապահովման ռազմավարական պլանավորման շարունակականության և անընդհատության սկզբունքն ապահովելու համար կարող են սահմանվել ռազմավարական պլանավորման պարբերաշրջաններ, որոնք, օրինակ, համապատասխանում են երկրի կառավարության պաշտոնավարման ժամանակահատվածին:

Ինչ վերաբերում է ռազմավարական պլանավորման գիտամեթոդական աջակցությանը, ապա ընդունված է այդ գործառույթը պատվիրակել համապատասխան գիտական կազմակերպություններին:

Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ

1. *Տնտեսական անվտանգության մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում:*
2. *Հետհամայնավարական երկրներում տնտեսական անվտանգության առանձնահատկությունները:*
3. *Տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարության էությունը:*
4. *Տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարության մշակման համար պատասխանատու մարմինները:*
5. *Եվրասիական տնտեսական միության սրբեղծումը և երկրների կապը՝ տնտեսական անվտանգության առումով:*
6. *«Ազգային անվտանգության վերաբերյալ օրենսդրությունը, համապատասխան մարմինները:*
7. *«Տնտեսական անվտանգության հիմնախնդրի վերաբերյալ փաստաթղթերը:*
8. *«Կառավարության ծրագրերը և դրանց առնչությունը տնտեսական անվտանգության ապահովմանը:*

9. ՀՀ կառավարության ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվությունները և դրանց առնչությունը տնտեսական անվտանգությանը:
10. ՀՀ տնտեսական անվտանգության գնահատման համար ընտրված ցուցանիշների կազմը:
11. ՀՀ տնտեսական անվտանգության գնահատման համար ընտրված ցուցանիշների շեմային (սահմանային) մեծությունները:
12. ՀՀ տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների աղբյուրները:
13. ՀՀ տնտեսական անվտանգության գնահատման մեթոդաբանությունը:
14. Տնտեսական անվտանգության բալային գնահատման մեթոդաբանությունը:
15. Տնտեսական անվտանգության գնահատման մեթոդաբանությունը մատրիցի կազմման միջոցով:
16. ՀՀ տնտեսական անվտանգության սպառնալիքները:
17. Տնտեսական անվտանգության սպառնալիքների չեզոքացման կամ նվազեցման միջոցառումները:
18. Տնտեսական անվտանգության ցուցանիշների բարելավմանն ուղղված միջոցառումները:
19. Պարենային անվտանգության էությունը, սննդամթերքի սպառումը:
20. Ժողովրդագրական անվտանգության ցուցանիշները, դրանց միպոմները Հայաստանի Հանրապետությունում:
21. Բնակչության դրամական եկամուտները՝ որպես տնտեսական անվտանգության ցուցիչ:
22. Բնակչության եկամուտների անհավասարությունը, աղքատությունը՝ որպես տնտեսական անվտանգության մարտահրավեր:
23. Արտաքին պարտքի մեծությունը և սահմանային մակարդակը:
24. Ներկայացրե՛ք արտաքին պարտքի կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը:
25. Ներկայացրե՛ք ՀՀ տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները:
26. Քննարկե՛ք ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի բարելավման համար անհրաժեշտ քայլերը:
27. Քննարկե՛ք ռազմավարական պլանավորման անհրաժեշտությունը երկրի տնտեսական անվտանգության համար:
28. Ներկայացրե՛ք ռազմավարական պլանավորման հայեցակարգի հիմնադրույթները:

Առաջարկվող գրականություն

1. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2005, 250 էջ:
2. Մարկոսյան Ա., Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, 460 էջ:
3. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը, Եր., «Անտարես» հրատ., 2020, 628 էջ:
4. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. պետության և շուկայի նոր մարտահրավերները, Եր., «Անտարես» հրատ., 2019, 556 էջ:
5. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման արդյունքները, «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 8-9 հոկտեմբերի, 2019, էջ 71-85:
6. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N3, 2004:
7. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության բարելավման ուղիները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 4 (6), 2004:
8. Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Բնակչության եկամուտների բաշխման անհավասարությունը տնտեսական անվտանգության համակարգում, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 1 (7), 2005:
9. Մարկոսյան Ա.Խ., Մաթևոսյան Է.Ն., «Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության երկարաժամկետ ռազմավարության արդյունքները», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտական հոդվածների ժողովածու-2023, № 2, Եր., ՀՀ ԳԱԱ ՏԻ, 2023, էջ 26-44):
10. Մաթևոսյան Է., Մարկոսյան Ա., Դեթլոֆֆ Մ., «Կոռուպցիայի ընկալման գնահատման հիմնախնդիրները և արդյունքները Հայաստանի Հանրա-

պետությունում», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտական հոդվածների ժողովածու-2023, № 1, Եր., ՀՀ ԳԱԱ ՏԻ, 2023թ., էջ 16-33:

11. Հովհաննիսյան Ա., «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման համակարգը և ապահովման ուղիները», տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002:
12. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, 480 էջ:
13. Era Dabla-Norris, Kalpana Kochhar, Frantisek Ricka, Nujin Suphaphiphat, Evridiki Tsounta, Causes and Consequences of Income Inequality: A Global Perspective, Strategy, Policy, and Review Department, International Monetary Fund, June 2015 // <https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2015/sdn1513.pdf>
14. Subnational debt management performance assessment (DEMPA) methodology (English). Washington, D.C.: World Bank Group. 2016 թ. սեպտեմբերին վերանայված փաստաթուղթը, <http://documents.worldbank.org/curated/en/768161474369807939/Subnational-debt-management-performance-assessment-DEMPA-methodology>
15. Armenia - Debt management performance assessment (DeMPA) (English). Debt Management Performance Assessment (DeMPA) Washington, DC: World Bank Group. November 2013. <http://documents.worldbank.org/curated/en/954231468206072639/Armenia-Debt-management-performance-assessment-DeMPA>
16. Глазьев С.Ю., Экономическая безопасность как синоним конкурентоспособности Евразийского союза. Евразийская интеграция: экономика, право, политика. 2018; (4):10-1.
17. Глазьев С.Ю., Основа обеспечения экономической безопасности России альтернативный реформационный курс, “Российский экономический журнал”, N1, N2, 1997.
18. Синявская К.В., Яруллин Р.Р., Оценка эффективности управления государственным внутренним долгом Республики Башкортостан, журнал

«Фундаментальные исследования». 2020. №6. С. 137-142. 10.07.2023 թ.
դրությամբ էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝
<https://fundamental-research.ru/ru/article/view?id=42790>

Իրավական ակտեր և տեղեկատվական շտեմարաններ

1. «Ազգային անվտանգության մարմինների մասին», ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ.-ի դեկտեմբերի 28-ին, ՀՕ-294 (փոփոխություններով և լրացումներով), Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի www.arlis.am պաշտոնական կայքէջում:
2. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՆՀ-37-Ն հրամանագիրը // <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>
3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, հուլիս 2020 // https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf էլ. ռեսուրսն առկա է 1.12.2023 թ.:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի մասին, ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 699-Ա որոշում:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Երևան, 2007, էլեկտրոնային ռեսուրսն առկա է <https://www.gov.am/am/gov-program/> հղումով:
6. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, հաստատված է ՀՀ կառավարության 2016 թ.-ի հոկտեմբերի 18-ի N°1060-Ա որոշմամբ, էլեկտրոնային ռեսուրսն առկա է <https://www.gov.am/files/docs/1950.pdf> հղումով:
7. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.), հաստատված է ՀՀ կառավարության 2021 թ.-ի օգոստոսի 18-ի N°1363-Ա որոշմամբ, էլեկտրոնային ռեսուրսն առկա է <https://www.gov.am/files/docs/4586.pdf> հղումով:
8. «Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության 2023-2030 թվականների հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. հուլիսի 20-ի N° 1238-Լ որոշում,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=180697>

9. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թ.վականի մայիսի 26-ին, ՀՕ-78-Ն. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ <http://www.arlis.am> կայքում:
10. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» № 1082-Ն որոշում:
11. ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների վերանայված ծրագիրը հաստատելու մասին» № 1010-Ն որոշում:
12. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» № 1082-Ն որոշում:
13. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին:
14. «Բարձրագույն և հետրոհական մասնագիտական կրթության մասին», ՀՀ օրենքը, ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին:
15. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ՝ <https://www.armstat.am/am/?nid=586>
16. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» վիճակագրական ժողովածուներ, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ՝ <https://www.armstat.am/am/>
17. «Հայաստանի ազգային հաշիվներ», վիճակագրական ժողովածուներ, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ՝ <https://www.armstat.am/am/>
18. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազաներ, <https://www.armstat.am/am/?nid=13>
19. «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», վիճակագրական ժողովածուներ, <https://www.armstat.am/am/>
20. ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություններ, www.cba.am
21. https://www.theglobaleconomy.com/Armenia/gini_inequality_index/

ԳԼՈՒԽ 3

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

3.1. ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական անվտանգության օրենսդրությունը

2020 թ. մայիսի 29-ին ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից ընդունված «Մինչև 2030 թվականը Անկախ պետությունների համագործակցության տնտեսական զարգացման ռազմավարությունը» փաստաթղթում ամրագրված է այն դիրքորոշումը, որ տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացումը (էներգետիկ, պարենային, բնապահպանական, տեխնոլոգիական, կիբեռանվտանգություն և այլն) ներառված է ԱՊՀ անդամ երկրների տնտեսական հիմնական ռազմավարական շահերի և նպատակների կազմում⁹⁴:

ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարությունում (մինչև 2020 թ.) տնտեսական անվտանգության ապահովումն ամրագրված է որպես Անկախ պետությունների համագործակցության սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային տարրերից մեկը: Մասնավորապես՝ նշվում է. «Ռազմավարության նպատակն է լրացուցիչ խթան հաղորդել ԱՊՀ անդամ պետությունների տնտեսական փոխգործակցությանը, ապահովել կայուն զարգացումը, տնտեսական անվտանգությունը, բարելավել բնակչության բարեկեցությունն ու կյանքի որակը՝ հիմնված սիներգիայի և մասշտաբի էֆեկտի վրա, խթանել ԱՊՀ անդամ երկրների ազգային տնտեսությունների մրցունակու-

⁹⁴ Стратегия экономического развития Содружества Независимых Государств на период до 2030 года [Электронный ресурс] URL:

<http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=6229>

թյունը ու համաշխարհային տնտեսական համակարգում նրանց դիրքերի ամրապնդումը:»⁹⁵: Ընդ որում, նշված փաստաթղթում տնտեսական կայուն զարգացում ապահովելու համար համաձայնեցված պայմանների ձևավորումը, բնակչության բարեկեցության բարելավումը, կրթության, առողջապահության, գիտության և մշակույթի զարգացումը, ինչպես նաև տնտեսական, էներգետիկ, պարենային և բնապահպանական անվտանգության ապահովումը դիտարկվում են որպես ԱՊՀ անդամ երկրների ընդհանուր նպատակներ⁹⁶:

2014 թ.-ի մայիսի 29-ին Աստանայում ընդունված և 2015 թ.-ի հունվարի 2-ին Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ մտած Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը, ի տարբերություն ԱՊՀ երկրների վերաբերյալ վերը նշված փաստաթղթերի, չի առանձնացնում երկրների ազգային կամ տնտեսական անվտանգությունը: Եվրասիական տնտեսական միության հիմնական թիրախներն են՝

- անդամ երկրների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ելնելով երկրների բնակչության կենսամակարդակի բարելավման նպատակից,
- միության ներսում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկա ձևավորելու ցանկությունը,
- համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում անդամ երկրների ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացումը, համագործակցությունը և մրցունակության մակարդակի բարձրացումը⁹⁷:

Այնուամենայնիվ, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) երկրների համաձայնեցված մակրոտնտեսական քաղա-

⁹⁵ Стратегия экономического развития Содружества Независимых Государств на период до 2020 года [Электронный ресурс] URL: <https://cis.minsk.by/page/18764>

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ Договор о Евразийском Экономическом Союзе, Статья 4. Основные цели Союза [Электронный ресурс] URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>

քականության վերաբերյալ դրույթները ներառված են Աստանայում ընդունված պայմանագրում: Մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 62-րդ հոդվածը վերնագրված է՝ «Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների մասին» և սահմանում է, որ միության շրջանակներում պետք է իրականացվի համակարգված մակրոտնտեսական քաղաքականություն, որը նախատեսում է անդամ պետությունների համատեղ գործողությունների մշակում և իրագործում՝ այդ երկրների տնտեսությունների համաչափ զարգացմանը հասնելու համար:

Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման ապահովումը՝ օգտագործելով միության ինտեգրացիոն ներուժը և յուրաքանչյուր անդամ պետության մրցակցային առավելությունները,
- անդամ պետությունների տնտեսությունների գործունեության միասնական սկզբունքների ձևավորումը, ինչպես նաև արդյունավետ փոխգործակցության ապահովումը,
- երկրների տնտեսությունների ներքին կայունության մակարդակի բարձրացման պայմանների ստեղծումը, ներառյալ մակրոտնտեսական կայունությունը, ինչպես նաև արտաքին ազդեցությունների նկատմամբ դիմադրության ապահովման պայմանների ստեղծումը,
- անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման ընդհանուր սկզբունքների և ուղեցույցների մշակումը⁹⁸:

⁹⁸ Договор о Евразийском Экономическом Союзе, Статья 62. Основные направления согласованной макроэкономической политики [Электронный ресурс] URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>

Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների ապահովման համար նախատեսված է ընթացակարգ, որը ձևակերպված է որպես հավելված («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 14-րդ հավելված): Ըստ այդմ՝ ԵԱՏՄ մշտապես գործող հանձնաժողովը համակարգում է համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը ցուցանիշների մշտադիտարկման, տնտեսական զարգացման ուղղությունների, մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղենիշների և համատեղ միջոցառումների վերաբերյալ փաստաթղթերի մշակման ու համաձայնեցման, հանձնարարականների մշակման, վերլուծությունների և հիմնական հարցերի վերաբերյալ խորհրդակցությունների անցկացման միջոցով:

Մակրոտնտեսական ցուցանիշների համակարգը ցույց է տալիս անդամ երկրների ինտեգրման աստիճանը, տնտեսական զարգացման մակարդակն ու շարժընթացը և վերաբերում է կանխատեսումների արտաքին պարամետրերին⁹⁹:

Մասնավորապես՝ տնտեսությունների ինտեգրման աստիճանը որոշելու համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝

- 1) յուրաքանչյուր անդամ երկրի տնտեսության մեջ կատարված ազգային, այդ թվում՝ ուղղակի ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով),
- 2) յուրաքանչյուր անդամ երկրի կողմից մյուս երկրի ազգային տնտեսության մեջ կատարված, այդ թվում՝ ուղղակի ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով),
- 3) յուրաքանչյուր անդամ երկրի արտահանման մասնաբաժինը (%-ով) ԵԱՏՄ անդամ երկրի արտահանման ծավալում,

⁹⁹ Կանխատեսումների արտաքին պարամետրերն առանձին ցուցիչներ են, որոնք բնութագրում են արտաքին գործոնները, որոնք էական ազդեցություն ունեն անդամ պետությունների տնտեսությունների զարգացման վրա և օգտագործվում են անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումների մշակման ժամանակ:

- 4) յուրաքանչյուր անդամ երկրի ներմուծման մասնաբաժինը (%-ով) ԵԱՏՄ անդամ երկրի ներմուծման ծավալում,
- 5) յուրաքանչյուր անդամ երկրի արտաքին առևտրաշրջանառության մասնաբաժինը (%-ով) ԵԱՏՄ անդամ երկրի արտաքին առևտրաշրջանառության ծավալում:

Տնտեսության զարգացման մակարդակն ու զարգացման շարժընթացը որոշելու համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝

- 1) համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը (%-ով),
- 2) մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը՝ գնողունակության համարժեքով հաշվարկված (ԱՄՆ դոլարով),
- 3) վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը (ԱՄՆ դոլարով և համախառն ներքին արդյունքի նկատմամբ տոկոսով),
- 4) ազգային արժույթի իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը՝ հաշվարկված սպառողական գների ինդեքսի հիման վրա (%-ով):

ԵԱՏՄ մշտապես գործող հանձնաժողովը, անդամ պետությունների հետ համաձայնեցնելով, կարող է որոշել անդամ պետությունների ինտեգրման աստիճանի ու դրա շարժընթացի մշտադիտարկման համար կիրառելի այլ ցուցանիշներ:

Ըստ պայմանագրի՝ ԵԱՏՄ անդամ երկրները 3 տարի ժամկետով համաձայնեցնում են միջակայքային քանակական արժեքները հետևյալ արտաքին կանխատեսման պարամետրերի համար՝ համաշխարհային տնտեսության զարգացման տեմպեր և Brent տեսակի նավթի գներ: ԵԱՏՄ բարձրագույն մարմնի որոշմամբ կարող են վերանայվել անդամ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումների մշակման ժամանակ օգտագործվող կանխատեսումների արտաքին պարամետրերը¹⁰⁰:

¹⁰⁰ Договор о Евразийском Экономическом Союзе, Приложение № 14: Протокол о проведении согласованной макроэкономической политики [Электронный ресурс] URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>

ԵԱՏՄ որոշ երկրների տնտեսական անվտանգության ոլորտի իրավական կարգավորումների ընդհանրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ չկան միասնական սահմանում և ընկալում: Այսպես՝ Բելառուսի Հանրապետությունում տնտեսական անվտանգության ապահովման ոլորտի իրավական կարգավորումը ներկայացված է Բելառուսի Հանրապետության Ազգային անվտանգության հայեցակարգով, որը հաստատվել է Բելառուսի Հանրապետության Նախագահի 2010 թվականի նոյեմբերի 9-ի № 575 հրամանագրով: Ըստ հրամանագրի՝ Բելառուսի Հանրապետությունում տնտեսական անվտանգությունը դիտարկվում է որպես տնտեսության այնպիսի վիճակ, երբ երաշխավորված է երկրի ազգային շահերի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Բելառուսի Հանրապետությունը օգտագործում է սոցիալական ուղղվածության շուկայական տնտեսության մոդել, որն ապացուցել է իր կենսունակությունը: Դրա հիման վրա ձեռք են բերվել համախառն ներքին արդյունքի և բելառուս ժողովրդի կենսամակարդակի աճի բարձր տեմպեր, և, ընդհանուր առմամբ, ապահովվել է տնտեսական անվտանգությունը¹⁰¹:

Ղազախստանում տնտեսական անվտանգության վերաբերյալ հիմնադրույթները ներառված են Ղազախստանի Հանրապետության 2012 թ. հունվարի 6-ի № 527-IV՝ «Ղազախստանի Հանրապետության ազգային անվտանգության մասին» օրենքում, իսկ տնտեսական անվտանգությունը մեկնաբանվում է որպես Ղազախստանի Հանրապետության ազգային տնտեսությունն իրական և հնարավոր սպառնալիքներից պաշտպանվածության վիճակ, որի դեպքում ապահովվում են տնտեսության կայուն զարգացումն ու տնտեսական անկախությունը¹⁰²:

¹⁰¹ Пункт 20 Концепции Национальной безопасности Республики Беларусь. [Электронный ресурс] URL: <https://mchs.gov.by/kontseptsiya-natsionalnoy-bezopasnosti-respubliki-belarus/>

¹⁰² Закон Республики Казахстан от 6 января 2012 года № 527-IV "О национальной безопасности Республики Казахстан, Статья 4, пункт 4 [Электронный ресурс] URL: http://online.zakon.kz/Document/?doc_id=31106860

Նշված նորմատիվային իրավական փաստաթղթում մանրամասնորեն ներկայացված են տնտեսական անվտանգության բաղադրիչները, և օրենքի 22-րդ հոդվածի («Տնտեսական անվտանգության ապահովումը») 1-ին մասը ներկայացնում է դրա բովանդակությունը՝ որպես հետևյալ բաղադրիչների ամբողջություն՝

- 1) ֆինանսական անվտանգություն, որը նախատեսում է ֆինանսական համակարգի՝ իրական և հնարավոր սպառնալիքներից պաշտպանվածության վիճակ, որի ժամանակ պետությունն ի վիճակի է ապահովելու իր ամբողջականությունը, անկախությունը և կայուն զարգացումը,
- 2) պարենային անվտանգություն, որը նախատեսում է տնտեսության, ներառյալ ագրոարդյունաբերական համալիրի պաշտպանվածության այնպիսի վիճակ, որի ժամանակ պետությունն ի զորու է բնակչության համար ապահովելու բարձրորակ ու անվտանգ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսապես հասանելիություն, որպեսզի բավարարվեն սպառմանն ու ժողովրդագրական աճին անհրաժեշտ ֆիզիոլոգիական նորմերը,
- 3) էներգետիկ անվտանգություն, որը նախատեսում է տնտեսության վառելիքաէներգետիկ, նավթագազային և ատոմային էներգետիկայի համալիրների՝ իրական և հնարավոր սպառնալիքներից պաշտպանվածության այնպիսի վիճակ, որի ժամանակ պետությունը կարող է ապահովել իր էներգետիկ անկախությունը և նշված ոլորտների կայուն զարգացումը՝ հասարակության և պետության կարիքները էներգառեսուրսներով բավարարելու համար,
- 4) տրանսպորտային անվտանգություն, որը նախատեսում է տնտեսության տրանսպորտային համալիրի՝ իրական և հնարավոր սպառնալիքներից պաշտպանվածության այնպիսի վիճակ, որի ժամանակ պետությունն ի զորու է պայմաններ ստեղծելու ավտոմոբիլային հանգույցների, օդային, ծովային, գետային և երկաթուղային փոխադրումների ոլորտում տնտեսության

և բնակչության կարիքները բավարարելու համար, ապահովելու տրանսպորտի և հարակից ծառայությունների, տրանսպորտային ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև տարանցիկ փոխադրումների ներուժի կայուն զարգացումն ու մրցունակությունը:

Բացի այդ, օրինագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում են պետական մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների տնտեսական անվտանգության ապահովման գործում որոշումների և գործողությունների հիմնական ուղղությունները, որոնցից են՝ 1) ազգային տնտեսության, ներառյալ արդյունաբերական և նորարարական բաղադրիչների կայուն զարգացման և անխափանության ապահովում, 2) երկրի ֆինանսական, էներգետիկ, պարենային և տրանսպորտային անկախության ապահովում, 3) թույլ չտալ համաշխարհային տնտեսական համակարգից Ղազախստանի տնտեսական մեկուսացումը, 4) Ղազախստանի Հանրապետության անկախության պահպանում և տնտեսական որոշումների կայացման ժամանակ ազգային շահերի պահպանում, այդ թվում՝ վերպետական տնտեսական ինտեգրման մարմինների կողմից որոշումների կայացման շրջանակներում, 5) տնտեսության հետագա բազմազանեցում (դիվերսիֆիկացում), երկրի ռեսուրսային-էներգետիկ հիմքի պահպանում ու ամրապնդում, 6) Ղազախստանի աշխարհաքաղաքական միջավայրում առաջացող բացասական գործոնների ազդեցության հետ կապված՝ երկրի տնտեսության խոցելիության աստիճանի առավելագույնս նվազեցում, 7) ներքին և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցության ապահովում, ներքին, արտաքին վարկային ռեսուրսների և ներդրումային հնարավորությունների ուղղորդում դեպի ազգային տնտեսության զարգացումը, 8) պետական բյուջեի պակասուրդի առավելագույն թույլատրելի մակարդակի գերազանցում թույլ չտալ և ուժեղացնել բյուջեի եկամտային մասը, 9) բյուջետային միջոցների և պետական միջոցների չարաշահումների կանխում, տնտեսության

սովերային հատվածի նվազեցում, 10) թույլ չտալ արտաքին պարտքի՝ օրենքով սահմանված չափից ավելացում, 11) մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների կանխում և այլն:

Ղազախստանի Հանրապետության ազգային շահերը (այդ թվում՝ արդյունաբերական ներուժի պահպանման և ամրապնդման առումներով) ապահովելու նպատակով պետությունը, օտարերկրյա ներդրողներին տրված երաշխիքների համաձայն, վերահսկողություն է իրականացնում Ղազախստանի տնտեսության այն օբյեկտների վիճակի և օգտագործման նկատմամբ, որոնք կառավարվում կամ պատկանում են օտարերկրյա կազմակերպություններին և օտարերկրյա մասնակցությամբ կազմակերպություններին¹⁰³:

Ազգային անվտանգության ապահովման պահանջները պարտադիր կերպով հաշվի են առնվում Ղազախստանի Հանրապետության ռազմավարական ռեսուրսների օգտագործման պայմանագրեր կնքելիս, այդ պայմանագրերի դրույթները կատարելիս և դրանց կատարման ընթացքը վերահսկելիս, ինչպես նաև պետական մարմնի կողմից ընդերքօգտագործման որոշումներ կայացնելիս: Պետությունը կարող է մերժել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումն ընդերքօգտագործողներին՝ կա՛մ մասնակի, կա՛մ ամբողջությամբ փոխանցելով դա մեկ այլ անձի, ինչպես նաև այդպիսի իրավունք ունեցող իրավաբանական անձանց չտրամադրել մասնակցության բաժնետոմսերի (բաժնետոմսերի փաթեթի) օտարման թույլտվություն, եթե նման գործողությունը հակասում է երկրի տնտեսական անվտանգությանը:

Միաժամանակ, պետական մարմինն իրավունք ունի մերժելու այնպիսի գործարքների թույլտվությունը, որոնք կարող են հանգեցնել մեկ երկրից մեկ անձի կամ անձանց խմբի հետ գործարքներ իրականացնելու իրավունքների կենտրոնացմանը: Այս պայմանի պահպա-

¹⁰³ Закон Республики Казахстан от 6 января 2012 года № 527-IV "О национальной безопасности Республики Казахстан, Статья 22. [Электронный ресурс] URL: http://online.zakon.kz/Document/?doc_id=31106860

նումը պարտադիր է նաև փոխկապակցված անձանց հետ գործարքների դեպքում:

Դրոզստանի Հանրապետությունում տնտեսական անվտանգությունը պետական քաղաքականության էական մասն է: Դրա ապահովման հիմնական նպատակներն են բնակչության նորմալ կենսապայմանների պահպանումը՝ տնտեսության բոլոր ոլորտներն ապահովելով անհրաժեշտ ռեսուրսներով, պայմաններ և նախադրյալներ ստեղծելով տնտեսության կայունացման և հետագա զարգացման համար, ինչպես նաև պաշտպանելով արտաքին և ներքին սպառնալիքների ազդեցությունից¹⁰⁴: Տնտեսական անվտանգության ապահովման գործողությունների ծրագրի միջոցով երկրում ինտեգրված մոտեցում է ցուցաբերվել տնտեսական անվտանգության միջոցառումների ապահովման գործում¹⁰⁵: 2013-2017 թվականների կայուն զարգացման ծրագրի 1-ին բաժնում նշվում են տնտեսական անվտանգության շեմերը¹⁰⁶:

Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական անվտանգության դրույթների իրավական հիմքն են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը, դաշնային սահմանադրական օրենքները, 2010 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված՝ «Անվտանգության մասին» № 390-Փ3 և 2014 թվականի հունիսի 28-ին ընդունված՝ «Ռուսաստանի Դաշնությունում ռազմավարական պլանավորման մասին» № 172-Փ3 օրենքները, այլ դաշնային օրենքներ, Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ռազմավարությունը, Ռուսաստանի Դաշ-

¹⁰⁴ Постановление Правительства Киргизии от 19 сентября 2002 года № 631 "О состоянии экономической безопасности Кыргызской Республики и мерах по ее дальнейшему обеспечению". [Электронный ресурс] URL: <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/53829>

¹⁰⁵ Постановление Правительства Кыргызской Республики Об утверждении Плана мероприятий по обеспечению экономической безопасности Кыргызской Республики на 2003 год [Электронный ресурс] URL: <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/54328/10?mode=tekst>

¹⁰⁶ Программа "По переходу Кыргызской Республики к устойчивому развитию на 2013-2017 годы" (Одобрена постановлением Правительства КР от 30 апреля 2013 года № 218" [Электронный ресурс] URL: <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/53067/10?mode=tekst>

նության Նախագահի և կառավարության ընդունած նորմատիվային իրավական ակտերը, Նախագահի 2017 թ. մայիսի 13-ի № 208՝ «Ռուսաստանի Դաշնության՝ մինչև 2030 թվականը տնտեսական անվտանգության ռազմավարության մասին» հրամանագիրը:

Ռուսաստանում տնտեսական անվտանգությունը սահմանվում է որպես ազգային տնտեսության պաշտպանվածության վիճակ արտաքին և ներքին սպառնալիքներից, որի ժամանակ ապահովվում են երկրի տնտեսական ինքնիշխանությունը, տնտեսական տարածքի ամբողջականությունը, ռազմավարական ազգային առաջնահերթությունների իրականացման պայմանները¹⁰⁷:

Հիմք ընդունելով վերը բերված՝ ԵԱՏՄ անդամ երկրների ազգային-տնտեսական անվտանգության պաշտոնական պատկերացումների հակիրճ վերլուծությունը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

- տնտեսական անվտանգությունն արտահայտվում է որպես անվտանգության վիճակ, սակայն դա թույլ չի տալիս ստանալ հասկացության օբյեկտիվ և ճշգրիտ նկարագիրը, պատկերացումն այդ իրավիճակի մասին,
- տնտեսական անվտանգությունը սահմանվում է որպես ստատիկ (անփոփոխ) երևույթ, որը կապվում է ազգային տնտեսության հետ: Մինչդեռ երկրի տնտեսությունը բարդ, հավանականություններից կախված ու դինամիկ համակարգ է, իսկ տնտեսական անվտանգության սահմանումները ոչ մի կերպ չեն անդրադառնում այդ համակարգի փոփոխականության վրա,
- տնտեսական անվտանգության սահմանումներում նպատակները ներկայացված են շատ ընդհանրական, դրանց որոշակիության աստիճանը շատ ցածր է,

¹⁰⁷ Подпункт №1 пункта №7 Указа Президента Российской Федерации от 13 мая 2017 года № 208 "О Стратегии экономической безопасности Российской Федерации на период до 2030 года". [Электронный ресурс] URL: <http://www.kremlin.ru/acts/bank/41921>

- տնտեսական անվտանգությունը դիտարկվում է միայն ազգային տնտեսությունների մակարդակում, ինչը, մեր կարծիքով, գրեթե հնարավոր չէ ապահովել: Հատկապես արտաքին շուկաներից մեծ կախվածություն ունեցող տնտեսություններում տնտեսական ռիսկերի առաջացումը շատ դեպքերում պայմանավորված է հենց այդ շուկաներում տեղի ունեցող երևույթներով:

Տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում միասնական և համակարգված գործունեություն չի կարող իրականացվել՝ առանց ԵԱՏՄ անդամ երկրներում տնտեսական անվտանգության հայեցակարգի և հիմնական կատեգորիաների միասնական ընկալման: Նկատի ունենալով այս հանգամանքը, մեր կարծիքով, կարող ենք ձևակերպել հետևյալ առաջարկությունները՝

1. Ամեն մի համակարգի անվտանգության երաշխիքը նրա էության պահպանումն է, որը բնութագրվում է ոչ թե ստատիկ, այլ դինամիկ վիճակով: Սպառնալիքն այդպիսի էության ժխտումն է:
2. Ազգային տնտեսության բնույթն ամբողջովին (համակողմանիորեն) արտահայտված է երկար ալիքների կամ երկարաժամկետ տեխնիկատնտեսական զարգացման տեսության մեջ:
3. Ազգային տնտեսական անվտանգության ապահովման նպատակները պետք է ունենան որոշակիության ավելի բարձր աստիճան՝ սահմանվելով կամ բնութագրվելով ըստ սոցիալ-տնտեսական որոշակի ցուցանիշների համակարգի:
4. Երկար ալիքների տեսությունն արտացոլում է տնտեսական համակարգերի փոփոխման անհավասարությունն ու պարբերական բնույթը և հնարավորություն է տալիս ձևավորելու որոշակիության ավելի բարձր աստիճան ունեցող նպատակներ՝ իրենց հատուկ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգով: Ելնելով այս հանգամանքից՝ նպատակահարմար է տնտեսական անվտանգությունը որոշել՝ օգտագործելով սոցիալ-

տնտեսական ցուցանիշների որոշակի համակարգ՝ համապատասխան փոփոխություններով հանդերձ:

5. Ներկայիս չորրորդ արդյունաբերական հեղափոխությունն ունի ոչ թե ազգային, այլ մեզատնտեսական բնույթ, ինչով էլ պայմանավորված է յուրաքանչյուր երկրի տնտեսական անվտանգության ապահովման խնդրի տեղափոխումը վերազգային մակարդակ:

3.2. Տնտեսական անվտանգության ոլորտում ԵԱՏՄ անդամ երկրների համագործակցության հնարավորությունները

Ինչպես վերը նշվեց, տնտեսական անվտանգությունն ազգային անվտանգության հիմնական տարրերից է, որն էական ազդեցություն ունի սոցիալ-տնտեսական զարգացման կայունության վրա՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին և ներքին միջավայրում մարտահրավերների և սպառնալիքների շարունակական տարածման համատեքստում: ԵԱՏՄ-ում ինտեգրացիոն գործընթացները կարող են մեծացնել յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսությունների առավելություններն առանձին-առանձին և հնարավորություն ընձեռել վաղ հայտնաբերելու և չեզոքացնելու համապատասխան սպառնալիքները:

ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական անվտանգության ապահովումը հատկապես կարևոր է Ֆորսմաժորային իրավիճակների (համաճարակ, ռազմավարական առճակատումների սրում համաշխարհային, քաղաքական և տնտեսական հարթակներում և այլն) ժամանակաշրջանում՝ պայմանավորված շուկաներում բարձր մրցակցությամբ, անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակով և համաշխարհային տնտեսության մեջ թվային փոխակերպման գործընթացների հետ կապված ակտիվ փոփոխություններով:

Այս բաժնում մշակված հանձնարարականների նպատակն է բացահայտել տնտեսական անվտանգության ոլորտում ԵԱՏՄ անդամ պետությունների համատեղ ջանքերի հիման վրա համագործակցության համաձայնեցված բնագավառները:

Հանձնարարականները հիմնված են օրենսդրության գիտական վերլուծության արդյունքների վրա՝ ԵԱՏՄ անդամ երկրներում տնտեսական անվտանգության ապահովման գործընթացների իրավական կարգավորման առանձնահատկություններն ու մոտեցումները բացահայտելու նպատակով:

Օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա նպատակահարմար ենք համարում առանձնացնել հետևյալը.

- ԵԱՏՄ անդամ երկրները շահագրգռված են հավասար, փոխշահավետ և բազմակողմ համագործակցությամբ՝ բարձրացնելու տնտեսական անվտանգության մակարդակը (էներգետիկ, պարենային, բնապահպանական, տեխնոլոգիական, կիբեռանվտանգության և այլն): Այս առաջադրանքի կատարումը պայմանավորված է տնտեսական զարգացման բազմաթիվ ռազմավարական շահերի և նպատակների համընկնմամբ¹⁰⁸,
- ԵԱՏՄ անդամ պետությունների՝ տնտեսական անվտանգության ոլորտում օրենսդրական և կարգավորող իրավական ակտերը պարունակում են տարբեր հայեցակարգային մոտեցումներ, գործիքակազմ և իրավական նորմեր: Այս առումով, տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ԵԱՏՄ անդամ երկրների օրենսդրությունների մոտարկման և ներդաշնակեցման նպատակով առաջարկվում է մշակել և ընդունել տնտեսական անվտանգության ու դրա ապահովման միջոցառումների մոդելային օրենք՝ այնպես, ինչպես բազմաթիվ այլ ոլորտներում:

¹⁰⁸ Стратегия экономического развития Содружества Независимых Государств на период до 2030 года [Электронный ресурс] URL: <http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=6229>

Մոդելային օրենքում նպատակահարմար է սահմանել իրավա-
կարգավորման առարկան, որն է՝ ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսա-
կան անվտանգության ապահովման առումով, քաղաքականության
մշակման և իրականացման ոլորտում առաջացող հարաբերություն-
ները՝ որոշելով այդ հարաբերությունների կողմերի միջև համագոր-
ծակցության ուղղություններն ու միջոցառումները:

Անհրաժեշտ է առաջարկել համապատասխան հայեցակարգային
կառուցակարգ՝ մասնավորապես սահմանելով հետևյալ եզրույթներն
ու հասկացությունները.

- ԵԱՏՄ անդամ պետության տնտեսական անվտանգությունը
տնտեսության վիճակ է, որտեղ ԵԱՏՄ անդամ պետության ազ-
գային շահերը երաշխավորված ու պաշտպանված են ներքին և
արտաքին սպառնալիքներից,
- ԵԱՏՄ տնտեսական անվտանգությունը ԵԱՏՄ անդամ պետու-
թյունների ազգային տնտեսությունների շարժի պահպանումն է
երկարաժամկետ սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական զար-
գացման հետագծով, որը հիմնված է համակցված գործոնների
վրա,
- ԵԱՏՄ անդամ պետության տնտեսական անվտանգությանը
սպառնացող վտանգը ԵԱՏՄ անդամ պետության ազգային շա-
հերին տնտեսական ոլորտում վնասելու հավանական կամ փաս-
տացի հնարավորությունն է,
- ԵԱՏՄ տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգ է
այն պայմանների և գործոնների համակցությունը, որի ազդեցու-
թյունը կարող է ուղղակի կամ անուղղակի վնաս հասցնել ԵԱՏՄ
ընդհանուր շուկային,
- ԵԱՏՄ անդամ երկրի տնտեսական անվտանգության մարտա-
հրավերը գործոնների համակցություն է, որը որոշակի պայման-
ներում կարող է հանգեցնել ԵԱՏՄ անդամ երկրի տնտեսական
անվտանգության սպառնալիքի,

- ԵԱՏՄ ազգային շահերը տնտեսական ոլորտում՝ ԵԱՏՄ անդամ պետության օբյեկտիվ նշանակալի տնտեսական կարիքներն են, որոնց բավարարումն ապահովում է ազգային-ռազմավարական գերակայությունների իրականացում,
- ԵԱՏՄ կոլեկտիվ շահերը տնտեսական ոլորտում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների ընդհանուր փոխհամաձայնեցված այն նպատակների և խնդիրների խումբն է, որոնց ձեռքբերումն ու լուծումը հիմք են հանդիսանում ԵԱՏՄ անդամ պետությունների համագործակցության համար,
- ԵԱՏՄ անդամ պետության տնտեսական անվտանգության սահմանային արժեքները տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային արժեքներն են կամ արժեքների թույլատրելի միջակայքերը, որոնցից շեղումը (գերազանցումը կամ թերացումը) ազդանշան է, որ առկա է երկրի տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգ (սպառնալիք):

Առաջարկվող օրենքում նպատակահարմար է սահմանել տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ԵԱՏՄ անդամ երկրների հարաբերությունների զարգացման հիմնարար սկզբունքները, որոնցից հիմնականները ձևակերպվում են հետևյալ կերպ՝

- փոխգործակցության և համագործակցության տնտեսական անվտանգության ապահովման ընթացքում ԵԱՏՄ անդամ պետությունների գործող օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերին համապատասխանելը,
- ԵԱՏՄ անդամ երկրների ռեսուրսների համախմբումը տնտեսական անվտանգությանը սպառնացող ընդհանուր վտանգներին դիմակայելու համար,
- ԵԱՏՄ տնտեսական անվտանգության ապահովման միջոցառումների իրականացման հետևողականությունն ու համակարգվածությունը,
- ԵԱՏՄ անդամ պետությունների ազգային շահերի առանձնահատկությունների ըմբռնումը, հարգանքը դրանց նկատմամբ,

- տնտեսական անվտանգության ոլորտում միջոցառումների համակարգումը,
- տնտեսական անվտանգության ոլորտում միջոցառումների գիտական հիմնավորումը և արդյունավետությունը,
- ֆինանսական, նյութական, մտավոր, աշխատանքային և տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,
- տնտեսական անվտանգության ոլորտում համագործակցության և առաջադեմ մոդելների ու համակարգերի մշակման գործում մասնակիցների շահերի պահպանումը և փոխշահավետ համակարգումը,
- ԵԱՏՄ անդամ երկրների ազգային-տնտեսական շահերի հավասարակշռության ապահովումը:

Տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ԵԱՏՄ անդամ երկրների համագործակցությունը պետք է հիմնված լինի վերջիններիս ազգային-տնտեսական շահերի առաջնահերթության վրա:

Տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ԵԱՏՄ անդամ պետությունների համագործակցության ուղղությունները պետք է ապահովեն ԵԱՏՄ տնտեսական զարգացման հիմնական նպատակի՝ կայուն տնտեսական զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, կենսամակարդակի բարձրացումը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացման համընկնող նպատակները, որոնք սահմանված են ԵԱՏՄ տնտեսական զարգացման մինչև 2030 թվականի ռազմավարությամբ, մասնավորապես՝

- ազգային տնտեսության կայուն աճի ապահովումը,
- անցում դեպի սոցիալ-տնտեսական զարգացման նոր որակ, որը հիմնված է մշտական տեխնոլոգիական արդիականացման, մշակման և չորրորդ արդյունաբերական հեղափոխության նորագույն տեխնոլոգիաների արտադրության մեջ ներդրման վրա,
- արտաքին անբարենպաստ գործոնների, ռիսկերի և սպառնալիքների նկատմամբ տնտեսության կայունության ապահովումը,

- արդյունաբերական համագործակցության խորացման, նոր համատեղ գիտատար և տեխնոլոգիական արտադրությունների ստեղծման ուղղությամբ ջանքերի գործադրումը, ներառյալ այն ոլորտները, որոնք կենտրոնացած են դեպի երրորդ երկրներ արտահանման վրա,
- ազգային-բնական ռեսուրսների և մրցունակության գործոնների առավել ամբողջական և արդյունավետ օգտագործման միջոցով արտահանման ներուժի զարգացումը, վերամշակման բարձր աստիճան ունեցող ու գիտատար արտադրանքի տեսակարար կշռի ավելացումը դեպի արտաքին շուկաներ արտահանման կառուցվածքում, համապատասխան ազգային ծրագրերի մշակումը,
- փոխադարձ առևտրի ծավալների ավելացումը և տնտեսության ռազմավարական ոլորտներում ապրանքների և ծառայությունների՝ երրորդ երկրներից ներմուծումից կախվածության նվազեցումը,
- բիզնես միջավայրի բարելավումը՝ հաշվի առնելով միջազգային և ազգային լավագույն փորձը,
- տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացումը, առաջադեմ տրանսպորտային տեխնոլոգիաների ներդրումը, տրանսպորտային համալիրների թվայնացումը, այդ թվում՝ արտահանման և տարանցման հնարավորությունների ընդլայնմամբ, համատեղ տրանսպորտային նախագծերի իրականացմամբ,
- ներդրումային միջավայրի բարելավումը՝ արտաքին ֆինանսական ռեսուրսներ և տեխնոլոգիաներ ներգրավելու և, առաջին հերթին, արդյունաբերության ոլորտում ռազմավարական կարևոր ծրագրեր իրագործելու համար,
- մարդկային կապիտալի զարգացումը (ժողովրդագրություն, առողջապահություն, կրթություն, բնակարանային պայմաններ և քաղաքային միջավայր, էկոլոգիա և մշակույթ):

Նպատակահարմար է ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում համագործակցությունը զարգացնել հետևյալ հիմնական ուղղություններով՝

- գիտական և մեթոդական աջակցություն տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ԵԱՏՄ անդամ պետությունների միջև փոխգործակցության գործընթացներին, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական անվտանգության ապահովման միասնական մեթոդաբանության մշակմամբ, որը կնեղառի՝

- ✓ ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական անվտանգության մակարդակի հաշվարկման միասնական մեթոդաբանական առաջարկություններ,

- ✓ տնտեսական անվտանգության վիճակը նկարագրող ցուցիչների և պարամետրերի, շեմային արժեքների որոշում, որի ներքո ապահովվում է համագործակցության տնտեսական շահերի պաշտպանություն: Որպես այդ ցուցանիշների մշակման հիմք՝ նպատակահարմար է ընդունել ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսության զարգացման հիմնական թիրախային մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպես նաև ԵԱՏՄ մասին պայմանագրի 63-րդ հոդվածի դրույթները, որոնց համաձայն՝ ԵԱՏՄ անդամ երկրները ձևավորում են տնտեսական քաղաքականություն (այդ մասին նշվել է վերևում):

Բացի այդ, ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ ԱՊՀ անդամ պետությունների կառավարություններին առաջարկվել է տնտեսական քաղաքականություն իրականացնելիս կողմնորոշվել տնտեսական զարգացման այն ցուցանիշներով, որոնք բնութագրում են տարածաշրջանում մակրոտնտեսական, ներառյալ գների, պետական ֆինանսների և ֆինանսական շուկաների կայունությունը.

- համախմբված տարեկան բյուջեի պակասուրդ՝ ՀՆԱ 4%-ից ոչ ավելի,

- պետական պարտք (արտաքին և ներքին)՝ ՀՆԱ 80%-ից ոչ ավելի,
- գնաճի մակարդակի գերազանցում (սպառողական գների ինդեքս՝ դեկտեմբեր՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) դրա միջին մակարդակը (սպառողական գների ինդեքս՝ դեկտեմբեր՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ), որը հաշվարկվում է ԵԱՏՄ անդամ այն երեք երկրների ցուցանիշների հիման վրա, որտեղ տեղի է ունեցել ամենափոքր գնաճը (ոչ ավելի, քան 5 տոկոսային կետով),
- տնտեսությանը տրված երկարաժամկետ վարկերի միջին կշռված տոկոսադրույքի գերազանցումը ԵԱՏՄ երկրների միջին տարեկան դրույքաչափին (որը հաշվարկվում է ԵԱՏՄ անդամ այն երեք երկրների ցուցանիշների հիման վրա, որտեղ տեղի է ունեցել այդ ցուցանիշի ամենափոքր աճը՝ 3 տոկոսային կետից ոչ ավելի):

ԵԱՏՄ մասին պայմանագրի 63-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները տնտեսական քաղաքականություն են ձևավորում մակրոտնտեսական ցուցանիշների այն քանակական արժեքների շրջանակում, որոնք որոշում են տնտեսական զարգացման կայունությունը.

- պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի տարեկան պակասուրդը չի գերազանցում համախառն ներքին արդյունքի 3 տոկոսը,
- պետական կառավարման հատվածի պարտքը չի գերազանցում երկրի համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը,
- գնաճի մակարդակը (սպառողական գների ինդեքսը) տարեկան կտրվածքով (դեկտեմբերը՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, տոկոսով) 5 տոկոսային կետից ավելի չի գերազանցում գնաճի մակարդակն այն անդամ պետությունում, որտեղ այս ցուցանիշն ամենացածր արժեքն է ունեցել:

Տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացմանը կնպաստեն հետևյալ միջոցառումները՝

- տնտեսական անվտանգության ոլորտում պետական, սոցիալական և մասնավոր գործընկերության կառուցակարգերի ավելի լայն կիրառում՝ հաշվի առնելով պետական աջակցությունը,
- ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսության մեջ փոխադարձ ներդրումները խթանելու միջոցառումների մշակում, արդյունաբերության զարգացման, ինչպես նաև մասնավոր հատվածի ներդրումների և ձեռներեցության համար գրավիչ պայմանների ստեղծում,
- Ֆինանսների մատչելիության մակարդակի բարձրացում, փոխադարձ առևտրի խոչընդոտների վերացում ու երկրների ազգային արժույթներով կատարվող հաշվարկների մասնաբաժնի ավելացում,
- տնտեսական կառավարման և օրենքի գերակայության ամրապնդում, հակակոռուպցիոն միջոցառումների խթանում,
- կրթական համակարգի, հատկապես մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում, տնտեսական անվտանգության ոլորտում միջպետական կրթական ծրագրերի և որակավորման բարձրացման, վերապատրաստման ծրագրերի իրականացում, տնտեսական անվտանգության ոլորտում ԵԱՏՄ անդամ երկրների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, գիտական, կրթական կազմակերպությունների և ընկերությունների միջև տեղեկատվության փոխանակում:

Տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացմանը կնպաստի տարածաշրջանային այլ կազմակերպությունների, ինտեգրացիոն ասոցիացիաների, տնտեսական միավորումների հետ համագործակցության խորացումը: Դրանց շարքում կարող են լինել ՇՀԿ-ն և ԲՐԻԿՍ-ը:

Հավելված 2



Հավելված 2-ում ամփոփված ԵԱՏՄ երկրների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները, որոնք որոշվել են վերը շարադրված բալային գնահատականների և մատրիցների կազմման մեթոդների, ինչպես նաև հաշվարկների համար հիմք ծառայած տվյալների կիրառմամբ:

3.3. Տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում իրավակիրառության փորձի և միջազգային իրավունքի նորմերը

Պետք է նշել, որ միջազգային իրավունքը չի պարունակում տնտեսական անվտանգության ոլորտում գործունեությունը կարգավորող հատուկ փաստաթուղթ կամ ընթացակարգեր: Կարելի է անդրադառնալ Միջազգային տնտեսական անվտանգության հայեցակարգի վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի 1987 թ. զեկույցին¹⁰⁹, որը, սակայն, զգալիորեն հնացել է և հիմնարար վերանայման կարիք ունի:

ՄԱԿ-ի մի շարք այլ իրավական ակտեր, օրինակ՝ Կանոնադրությունը, Կոռուպցիայի դեմ կոնվենցիան և այլն, նույնպես վերաբերում են տնտեսական անվտանգության ապահովման գործընթացներին, բայց և այնպես, մանրամասնորեն չեն կարգավորում այդ գործընթացը:

Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են ԱՀԿ-ն, ԱՄՀ-ն և այլն, նույնպես նպաստում են տնտեսական անվտանգության ապահովմանը, սակայն այս ոլորտում հայեցակարգային ապարատի և ռազմավարական պլանավորման միատեսակություն չկա:

¹⁰⁹ Концепция международной экономической безопасности / ООН Генеральная Ассамблея Экономический и Социальный Совет [Электронный ресурс] URL: <https://undocs.org/pdf?symbol=ru/A/42/314>

Յուրաքանչյուր երկիր ունի իրավակիրառական իր փորձառությունը, որը մեծապես որոշվում է ներքին օրենսդրությամբ ու պետության ազգային և տնտեսական անվտանգության ապահովման մեջ ներգրավված մարմինների ու կազմակերպությունների կառուցվածքով: Տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում միջազգային համագործակցությունը տարբեր տեսանկյուններից կարելի է տեսնել հետևյալ կազմակերպությունների գործունեության մեջ.

FATF (Փողերի վաճման դեմ պայքարի ֆինանսական գործողությունների խումբ), որը սահմանում է չափորոշիչներ և նպաստում փողերի վաճման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին: 2021 թվականին կազմակերպությունն ուներ 37 անդամ պետություն և 2 տարածաշրջանային կազմակերպություն: Ուշադրության է արժանի Ֆինանսական ռիսկերի մոնիտորինգի կենտրոն ստեղծելու առաջարկը:

Ինտերպոլը նպաստում է հանցավորության դեմ պայքարին՝ կազմակերպելով հանցագործությունների և հանցագործություններ կատարողների վերաբերյալ տվյալների փոխանակում, տրամադրելով տեխնիկական և գործառնական աջակցություն: Կազմակերպությունն ունի 194 մասնակից երկիր:

OLAF-ը, որը ֆինանսավորվում է ԵՄ բյուջեից, հետաքննում է խարդախությունները, կոռուպցիան, զգալի չարաշահումները եվրոպական կառույցներում և մշակում խարդախության դեմ քաղաքականություն:

RILO-Moscow-ը մաքսանենգության դեմ պայքարի գլխավոր տնօրինության ստորաբաժանումն է, որն ապահովում է իրավապահ մարմինների տեղեկատվության փոխանակումը Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) անդամ երկրների միջև: ՌԻԼՕ - Մոսկվան ներառում է Ադրբեջանի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի մաքսային կապի ազգային կենտրոնները և հանդիսանում ՀՄԿ իրավապահ մարմինների տարածաշրջանային կապի գրասենյակների համաշ-

խարհային ցանցի (RILO) մի մասը՝ RILO-ի 11 գրասենյակով ամբողջ աշխարհում:

Հատկանշական է խարդախության դեմ պայքարի ոչ կառավարական միջազգային ասոցիացիայի՝ ACFE-ի գործունեությունը, որն ունի ավելի քան 85000 անդամ: ACFE-ի առաջարկությունները և ծառայությունները լայնորեն տարածված են տնտեսական անվտանգության ապահովման ոչ պետական հատվածում:

Միջազգային իրավակիրառական փորձում «տնտեսական անվտանգություն» հասկացությունը լայնորեն չի կիրառվում: Տնտեսական անվտանգության ապահովման գործընթացը դիտարկվում է առավելապես իրավապահ հարթությունում: Տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում փոխգործակցությունն իրականացվում է որոշակի ոլորտներում, մշակված չէ տարբեր գերատեսչական փոխգործակցություններն ինտեգրող (միավորող) մոտեցում:

Միջազգային տնտեսական անվտանգության համընդհանուր հայեցակարգի ձևակերպման դժվարությունները նաև նրանում են, որ տարբեր մասնագետներ տարբեր կերպ են ընկալում և մեկնաբանում համընդհանուր (միջազգային) անվտանգության էությունը: Անցումային տնտեսությամբ և զարգացած արդյունաբերական երկրների փորձագետներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ոչ թե նմանությունների, այլ դրանց միջև եղած տարբերությունների բացահայտմանը:

Այսպես, տնտեսական անվտանգության ապահովման հետ կապված, կառավարությունների առջև ծառայած խնդիրներն ու դրանց դեմ պայքարի ուղիների տեսլականը տարբեր են երկրների տարբեր խմբերի համար: Բանն այն է, որ ամեն մի արտաքին ազդեցություն, նույնիսկ, եթե ունի ընդգծված բացասական բնույթ, չի կարող որակվել որպես երկրի անվտանգության սպառնալիք: Դա կախված է տնտեսության չափից, զարգացման մակարդակից, ազգային տնտեսության դիվերսիֆիկացման, այդ ազդեցությունը չեզոքացնելու պատրաստակամության աստիճանից և այլն: Ազգային տնտեսության

վիճակը սպառնալիքի առաջացման պահին նույնպես կարևոր է: Օրինակ՝ արտաքին «ցնցումներին» ավելի դժվար է դիմակայել ազգային տնտեսության պարբերաշրջանի անկման ժամանակաշրջանում, իսկ վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճն ավելի մեծ վտանգ է ներկայացնում բարձր արտաքին պարտք ունեցող երկրների համար:

Իր հերթին, արտասահմանյան հետազոտողները միջազգային տնտեսական անվտանգության խնդիրների վերաբերյալ տարբեր կարծիքների առկայությունը բացատրել են երկրների պատմական զարգացման տարբերություններով, շահերի բևեռացմամբ ու տարբեր տեսական մոտեցումների կիրառմամբ: Տեսակետների հիմնական տարբերությունները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. արևմտյան փորձագետներն ավելի շատ, քան անցումային երկրներինը, շեշտում են միջազգային տնտեսական անվտանգության համակարգի ստեղծման դժվարությունները,
2. թեև երկու դաշինքների հետազոտողները կարող են օգտագործել նույն եզրույթները, օրինակ՝ «ազատ առևտուր», «անվտանգություն», «բացություն», սակայն դրանց կիրառական իմաստները կարող են շատ տարբեր լինել,
3. անցումային երկրների հետազոտողները դեռևս հակված են կարևորելու պետության դերը, արևմտյան հետազոտողները՝ կառավարության միջամտության և շուկայական հարաբերությունների համադրությունը,
4. արևմտյան փորձագետները միջազգային տնտեսական անվտանգության հիմնախնդիրները դիտարկում են տնտեսական միությունների, միավորումների (ՏՀԶԿ, ԵՄ, «երրորդ աշխարհի» երկրների դաշինքներ), ինչպես նաև Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ հարաբերությունների շրջանակում: Միաժամանակ, նրանք ձգտում են միջազգային տնտեսական անվտանգություն

ապահովել ոչ թե համաշխարհային մակարդակով, այլ դաշինքների ներսում¹¹⁰:

Միջազգային տնտեսական անվտանգության նեղ մեկնաբանության կողմնակիցն է, օրինակ, Վ. Ս. Պանկովը, որը միջազգային տնտեսական անվտանգության հայեցակարգի առարկան է համարում ոչ թե պատահականորեն առաջացող, այլ երկրի տնտեսության համար միտումնավոր ստեղծված սպառնալիքները: Այս հեղինակը միջազգային տնտեսական անվտանգությունը սահմանում է որպես միջազգային տնտեսական հարաբերությունների գործունեության ռեժիմ, որը կբացառի յուրաքանչյուր երկրի տնտեսական շահերին կանխամտածված վնաս հասցնելը: Այսպես, օրինակ, շուկայում պահանջարկի փոփոխման (տեղաշարժերի) հետևանքով զարգացող երկրների կորուստները հումքի գների կտրուկ անկման պատճառով չի կարելի վերագրել միջազգային տնտեսական անվտանգության խնդիրներին, քանի որ այս երևույթում «չարամտություն» չկա:

Վերը նշված սահմանման առումով, հեղինակն առանձնացնում է միջազգային տնտեսական անվտանգության խաթարման հետևյալ մեթոդները.

1. Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից սահմանված միջազգային առևտրի ընդհանուր կանոնների բնականոն վիճակի խախտումը, մասնավորապես՝ ապրանքների ու ծառայությունների ներմուծման և արտահանման սահմանափակումների (արգելքների) սահմանումը, համաշխարհային առևտրաշրջանառության ընդհանուր վիճակի և զարգացման միտումների համար քանակական և սակագնային արտասովոր սահմանափակումների ներդրումը և այլն:
2. Երկրի արժույթին միտումնավոր կերպով վնաս պատճառելը, օրինակ՝ խախտելով դրա՝ որպես ազգային արժույթի ռեժիմը, շահարկելով մրցակից երկրի արժույթի փոխարժեքի իջեցման գոր-

¹¹⁰ Международная экономическая безопасность: (Совместное советско-английское исследование). М.; Лондон, 1988. С. 10-63.

ծիքները, սառեցնելով օտարերկրյա բանկերում երկրի ունեցվածքը: Նման գործողություններն ուղեկցվում են նաև վարկային սահմանափակումներով, որոնք լարվածություն են ստեղծում միջազգային արժույթային և հաշվարկային հարաբերություններում:

3. Միջազգային տրանսպորտային հաղորդակցությունների գործող համակարգերի նպատակաուղղված խախտումը, մասնավորապես՝ օդային երթուղիների շահագործման վերաբերյալ գոյություն ունեցող պայմանագրերը չկատարելու կամ որոշակի երկրների նավերի օտարերկրյա նավահանգիստներ մուտք գործելու արգելքների սահմանման միջոցով:
4. Կապիտալի, որպես ուղղակի մասնավոր ներդրումներ, միջազգային միգրացիայի գործող ռեժիմի խախտումը: Սա կարող է տեղի ունենալ երկրից կապիտալի միտումնավոր կերպով կազմակերպված «փախուստի», օտարերկրյա ներդրողների ունեցվածքի անօրինական ռեկվիզացիայի կամ ազգայնացման հետևանքով (հատկապես այն դեպքերում, երբ համապատասխան փոխհատուցում չի տրվում):
5. Քաղաքական նկատառումներով տեխնոլոգիաների միջազգային փոխանցման և գիտատեխնիկական փոխանակման համար սահմանափակումների և խոչընդոտների ստեղծումը, ինչը հակասում է սովորական առևտրային հարաբերությունների կանոններին:
6. Միտումնավոր կերպով «ուղեղների» և որակավորված աշխատուժի արտահոսքի կազմակերպումը երկրից:
7. Արտաքին լծակների կիրառմամբ բնապահպանական վնասի պատճառում այս կամ այն երկրին, ինչը զգալի տնտեսական կորուստներ է առաջացնում¹¹¹:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված գործիքները լայնորեն կիրառվում են ներկայիս աշխարհաքաղաքական փոփոխությունների, երկրների միջև ընթացող «սառը», առևտրային և իրական պա-

¹¹¹ Внешнеэкономические связи. М., 1992. Вып. 8: Страны СНГ в системе мирового хозяйства: проблемы экономической безопасности. С. 5.

տերազմների (ռուս-ուկրաինական, իսրայելա-պաղեստինյան, ԱՄՆ-Չինաստան տնտեսական պատերազմի և այլն) ընթացքում:

Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ

1. ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարությունը:
2. ԵԱՏՄ տնտեսությունների ինտեգրման աստիճանը բնութագրող մակրո-տնտեսական ցուցանիշները:
3. Տնտեսական անվտանգության ռազմավարական փաստաթղթերը ԵԱՏՄ երկրներում:
4. Բելառուսի ազգային անվտանգության հայեցակարգը:
5. Ղազախստանի Հանրապետության ազգային անվտանգության մասին օրենքը:
6. Ղրղզստանի տնտեսական անվտանգության քաղաքականությունը:
7. Ռուսաստանի Դաշնությունում վարվող քաղաքականությունը տնտեսական անվտանգության ոլորտում:
8. Տնտեսության բազմազանեցումը (դիվերսիֆիկացումը)' որպես տնտեսական անվտանգության ապահովման ուղղություն:
9. Դիտարկե՞ք տրանսպորտային, էներգետիկ, պարենային, ֆինանսական անվտանգության ապահովման հնարավորությունները ԵԱՏՄ շրջանակներում:
10. Ներկայացրե՞ք տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ԵԱՏՄ երկրների համագործակցության հնարավորություններն ու ուղղությունները:
11. Ներկայացրե՞ք Եվրասիական տնտեսական միության ձևավորման հիմք հանդիսացող փաստաթղթերը, բացահայտե՞ք դրանց էությունը:
12. Ներկայացրե՞ք Եվրասիական տնտեսական միության երկրներում ընդունված տնտեսական անվտանգության ոլորտի իրավական ակտերը, կատարե՞ք դրանց համեմատական վերլուծություն:

Առաջարկվող գրականություն

1. Стратегия экономического развития Содружества Независимых Государств на период до 2030 года [Электронный ресурс] URL: <http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=6229>
2. Стратегия экономического развития Содружества Независимых Государств на период до 2020 года [Электронный ресурс] URL: <https://cis.minsk.by/page/18764>
3. Договор о Евразийском Экономическом Союзе, [Электронный ресурс] URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>
4. Договор о Евразийском Экономическом Союзе, Приложение № 14: Протокол о проведении согласованной макроэкономической политики [Электронный ресурс] URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>
5. Концепция Национальной безопасности Республики Беларусь. [Электронный ресурс] URL: <https://mchs.gov.by/kontseptsiya-natsionalnoy-bezopasnosti-respubliki-belarus/>
6. Закон Республики Казахстан от 6 января 2012 года № 527-IV "О национальной безопасности Республики Казахстан, [Электронный ресурс] URL: http://online.zakon.kz/Document/?doc_id=31106860
7. Постановление Правительства Киргизии от 19 сентября 2002 года № 631 "О состоянии экономической безопасности Кыргызской Республики и мерах по ее дальнейшему обеспечению". [Электронный ресурс] URL: <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/53829>
8. Постановление Правительства Кыргызской Республики Об утверждении Плана мероприятий по обеспечению экономической безопасности Кыргызской Республики на 2003 год [Электронный ресурс] URL: <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/54328/10?mode=tekst>
9. Программа "По переходу Кыргызской Республики к устойчивому развитию на 2013-2017 годы" (Одобрена постановлением Правительства КР от 30 апреля 2013 года № 218" [Электронный ресурс] URL: <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/53067/10?mode=tekst>
10. Указ Президента Российской Федерации от 13 мая 2017 года № 208 "О Стратегии экономической безопасности Российской Федерации на

период до 2030 года". [Электронный ресурс] URL:

<http://www.kremlin.ru/acts/bank/41921>

11. Концепция международной экономической безопасности / ООН Генеральная Ассамблея Экономический и Социальный Совет [Электронный ресурс] URL: <https://undocs.org/pdf?symbol=ru/A/42/314>
12. Международная экономическая безопасность: (Совместное советско-английское исследование). М.; Лондон, 1988. С. 10-63.
13. Внешнеэкономические связи. М., 1992. Вып. 8: Страны СНГ в системе мирового хозяйства: проблемы экономической безопасности. С. 5.

ԳԼՈՒԽ 4

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ

Հարավային Կովկասի երեք՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև տնտեսական կապերը ձևավորվել են շատ վաղուց: Չխորանալով դարերի խորքը և ազգամիջյան հարաբերությունների մեջ՝ նկատենք, որ Խորհրդային Միության ստեղծման պահին (1922 թ.) նշված երեք հանրապետություններն անդամակցեցին որպես մեկ վարչատնտեսական միավոր՝ Անդրֆեդերացիա անվանմամբ: Նման մոտեցումը պայմանավորված էր նորաստեղծ Խորհրդային Միության ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ տնտեսական շահերով և նպատակահարմարությամբ, քանի որ երեք հանրապետությունների տնտեսությունների միջև հարաբերությունները ձևավորվել էին, առաջին հերթին, դրանց տնտեսությունների միջև մասնագիտացման և կոոպերացիայի կապերի ամրապնդման և ինտենսիվացման հիման վրա: Այդպիսով՝ ապահովվում էր նաև տնտեսական կապերի և ապրանքափոխանակության արդյունավետությունը, որից շահում էին բոլոր երեք հանրապետությունները: Հետագայում, երբ 1936 թ. ընդունվեց ԽՍՀՄ Սահմանադրությունը, Անդրկովկասյան ֆեդերացիան կազմալուծվեց և նրա կազմի մեջ մտած հանրապետությունները դարձան Խորհրդային Միության առանձին հանրապետություններ՝ իրենց ինքնիշխանության և անկախության բոլոր հատկանիշներով:

Երկար ժամանակ Հարավային Կովկասի երեք հանրապետությունները, բառիս իսկական իմաստով, զարգացան և բարգավաճեցին՝ հասնելով էական և նշանակալից սոցիալ-տնտեսական ցուցանիշների: Ազրարային հետամնաց և ցածր կենսամակարդակ ունեցող երկրներից դրանք վերածվեցին արդյունաբերական, ինտենսիվ գյու-

ղատնտեսական, գիտատար և բնակչության բարձր մշակութային ու կենսամակարդակ ունեցող հանրապետությունների: Ավելի ուշ, երբ կազմալուծվեց և պատմության թատերաբեմից հեռացավ Խորհրդային Միությունը (1991), Հարավային Կովկասի հանրապետությունները Խորհրդային Միության մյուս հանրապետությունների նման ձեռք բերեցին անկախություն և դարձան ինքնիշխան պետություններ: Անցած 30 տարիների ընթացքում Հարավային Կովկասի երեք հանրապետություններից յուրաքանչյուրն անցավ իր «ճանապարհը»: Վրաստանը 2022 թ. վերջին դարձավ ԵՄ թեկնածու երկիր, Հայաստանի և Ադրբեջանի միջև առճակատում ուղեկցվեց մի քանի պատերազմներով և 2023 թ. սեպտեմբերյան դեպքերի հետևանքով՝ Արցախի հայաթափմամբ (էթնիկ զտմամբ):

4.1. Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները

Առանձին խումբ երկրների (ինչպես տարածաշրջանային, այնպես էլ յուրաքանչյուր այլ սկզբունքով միավորված և համագործակցող, այդ թվում՝ համաշխարհային ճանաչում ունեցող տնտեսական միությունների) տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը թույլ է տալիս ոչ միայն բացահայտել այդ և որոշակի տնտեսական միությունների կազմի մեջ մտնող երկրների տնտեսական անվտանգության աստիճանը, այլև պատկերացում կազմել կազմավորումների և միությունների մեջ մտնող երկրների՝ դրանցում գտնվելու տրամաբանությունն ու հիմնավորվածությունը: Հասկանալի է, որ տնտեսական անվտանգության տարբեր մակարդակներ ունեցող երկրները դժվար է միավորել միևնույն միության կամ խմբի մեջ և ձևավորել համագործակցություն: Այլ կերպ ասած, առանձին խումբ երկրների տնտեսական անվտանգության մակարդակը կարող է հիմք հանդի-

սանալ այս կամ այն միությանն անդամակցելու համար: Եվ եթե աշխարհում գործող բազմաթիվ տնտեսական միություններ (դրանց թիվը մոտ 50 է) ձևավորվել են տարատեսակ (այդ թվում՝ քանակական չափման չենթարկվող) մոտեցումների և սկզբունքների հիման վրա, ապա տնտեսական անվտանգության մակարդակի հստակ չափումը կարող է դառնալ այն հիմնական չափանիշներից մեկը, որից ելնելով՝ կարելի է հիմնավորել տնտեսական միությունների ձևավորման նպատակահարմարությունն ու համագործակցության տնտեսական ներուժը: Ավելին, եթե ներկայում գործող տնտեսական միությունները կազմավորվել են ըստ քաղաքական, մշակութային, աշխարհագրական, կրոնական և այլ հայտնի ու անհայտ մոտեցումների, ապա երկրների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումն այդ միությունների ստեղծման և, ըստ այդմ, տնտեսական գործունեություն ծավալելու հիմնավորվածության միջոց է:


Առանձին խումբ երկրների և տնտեսական միությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը թույլ է տալիս հաշվարկված ու հիմնավորված դարձնել այդ կազմակերպությունների և միությունների հետագա վերակազմավորման և նոր միությունների ստեղծման գործընթացը: Նման դեպքերում տնտեսական անվտանգության մակարդակի գնահատականները կարող են տնտեսական միությունների միացման, միավորման, բաժանման և առանձնացման հիմք դառնալ:

Նկատենք նաև, որ ինչպես որոշակի երկրների, այնպես էլ երկրների այս կամ այն խմբի համար հաշվարկված տնտեսական անվտանգության թե՛ առանձին ցուցանիշները, թե՛ այդ ցուցանիշների հիման վրա հաշվարկված ամփոփ գնահատականները բացահայտում և որոշակիացնում են այս կամ այն մակրոցուցանիշները, որոնք ընդգրկված են տնտեսական անվտանգության համակարգի մեջ՝ դրանով իսկ բացահայտելով այդ կազմակերպությունների ու միությունների տնտեսությունների ռիսկերի և մարտահրավերների առաջաց-

ման հավանականությունը, դրանց ազդեցության չափը, տևողությունը և անցանկալի դրսևորումների փոփոխման արագությունը:

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգների գնահատումը կատարել ենք ինչպես բալային գնահատականների, այնպես էլ մատրիցի միջոցով: Վերջինիս շնորհիվ՝ բացահայտվել են տնտեսական անվտանգության սպառնալիքները և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:

Բալային գնահատականների միջոցով Հարավային Կովկասի երեք հանրապետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) տնտեսական անվտանգության ամփոփ ցուցանիշները բերված են գծապատկեր 4.1-ում և 4.2-ում:



Գծապատկեր 4.1. Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքներն ըստ առանձին ժամանակահատվածների միջին ցուցանիշների

Գծապատկեր 4.1-ում երևում է, որ տնտեսական անվտանգության մակարդակն ամենաբարձրն է Ադրբեջանում՝ սկսած 2001-2006 թթ.


կեսերից: Մինչդեռ 1995-2000 թթ. ժամանակահատվածում տնտեսական անվտանգության ամփոփ ցուցանիշն ամենաարագ տեմպերով աճել է ՀՀ-ում, և, 2000-2006 թթ. կեսերից սկսած, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի տնտեսական անվտանգության ցուցանիշները հավասարվել են (11.3 բալային միավոր): Դրանից հետո նկատելի է Ադրբեջանի տնտեսական անվտանգության մակարդակի անընդհատ աճ, որն էլ իր գագաթնակետին (14.8 միավոր) է հասել 2012-2016 թթ.-ին, ապա թեև դանդաղորեն, սակայն այս ցուցանիշն անկում է գրանցել: Նկատելի է նաև, որ Ադրբեջանի տնտեսական անվտանգության ամփոփ ցուցանիշը, 2012-2016 թթ.-ից սկսած, դրսևորել է նվազման միտում և 2017-2022 թթ. ժամանակահատվածում կազմել 13.6 միավոր: Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության մակարդակը Հարավային Կովկասի հանրապետությունների շարքում ամենաբարձր աճի տեմպն է ունեցել, ինչի արդյունքում 2012-2016 թթ.-ի 10.9 միավորից 2017-2022 թթ.-ին հասել է 11.8-ի: Վրաստանում, համապատասխանաբար, այդ ցուցանիշը 9.7 միավորից հասել է 10.0 միավորի, իսկ Ադրբեջանում՝ 14.8 միավորից 13.6 միավորի՝ արձանագրելով 1.2 միավորի նվազում: Դիտարկված առաջին ժամանակահատվածում Հայաստանում տնտեսական անվտանգության մակարդակի աճի նման բարձր ցուցանիշը պայմանավորված է հանրապետությունում 1990-ական թվականների երկրորդ կեսից մինչև 2000 թվականն իրականացված արմատական և բարեհաջող տնտեսական բարեփոխումներով: ՀՀ-ում տնտեսական անվտանգության մակարդակը նկատելի անկում է ապրել 2001-2006 թթ. ժամանակահատվածում (11.3 բալային միավոր կամ նախորդ ժամանակահատվածի համեմատ՝ անկում 0.3 բալային միավորով): Տնտեսական անվտանգության մակարդակը Հայաստանում բավականաչափ երկար ժամանակահատված (2001-2016 թթ. կամ ավելի քան 15 տարի, որը կարելի է համարել լճացման ժամանակաշրջան) վերելքի առումով էական փոփոխություններ չի կրել և նվազել է 0.4 բալային միավորով՝ 2001-2005 թթ. 11.3-ից 2007-2011 թթ. հասնելով 11.0-ի, իսկ

2012-2016 թթ.՝ 10.9-ի, ինչը վկայում է երկրի տնտեսական անվտանգության լճացման և բարեփոխումների անհրաժեշտության մասին: Այդ իրավիճակը որոշակիորեն փոփոխվել է 2017-2022 թթ. (ավելի ստույգ՝ 2018 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում): Տնտեսական անվտանգության ցուցանիշների բարելավումը ՀՀ-ում ավելի նկատելի կլիներ, եթե 2019 թ.-ին չբռնկվեր COVID-19 համավարակը, իսկ 2020 թ.-ին՝ 44-օրյա պատերազմը, որոնք վատթարացրին հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (բավական է նշել, որ 2020 թ.-ին Հայաստանի տնտեսական անկման տեմպը 7.2% էր): Ինչ վերաբերում է Վրաստանի Հանրապետությանը, ապա վերջինիս տնտեսական անվտանգության մակարդակը հարավկովկասյան մյուս երկրների համեմատությամբ ավելի ցածր է:

Ըստ առանձին տարիների՝ հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների վարքագիծը (գծապատկեր 4.2) ավելի ակնառու է դարձնում այդ երկրներում տնտեսական անվտանգության հատկապես վերջին տարիների ցուցանիշների փոփոխության ընթացքը, ինչից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության ցուցանիշները մյուս երկու պետությունների համեմատությամբ ունեն դինամիկ աճի միտում և, ըստ էության, ամենաբարձրն են եղել՝ համաձայն 2021 թվականի տվյալների (11.7 բալային միավոր): Ինչ վերաբերում է 2022 թ.-ին, ապա տնտեսական ակտիվության ամենաբարձր ցուցանիշն (9.9 բալային միավոր) արձանագրվել է Հայաստանում, իսկ մյուս երկու հանրապետություններում գրանցվել է զգալի անկում՝ Ադրբեջանում՝ 5.7 բալային միավոր, Վրաստանում՝ 1.8 միավոր:

Աղյուսակ 4.1-ում և 4.2-ում զետեղված են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները՝ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի կազմման համար յուրաքանչյուր ցուցանիշի վանդակի նշումով՝ բնութագրելով դրանց վտանգվածության աստիճանը 1995-2022 թթ.-ին՝ ըստ որոշակի ժամանակահատվածների (աղյուսակ 4.1) և տարիների

(աղյուսակ 4.2):



Գծապատկեր 4.2. Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքներն ըստ առանձին տարիներին գրանցված ցուցանիշների

Ցուցանիշների նման դասակարգման արդյունքում հնարավոր է դառնում դրանց տեղադրումը տնտեսական անվտանգության վտանգվածության աստիճանը բնութագրող ընդհանրական մատրիցում: Մատրիցը հնարավորություն է տալիս որոշելու տնտեսական անվտանգության այն սպառնալիքները, որոնք իրենց ազդեցության չափով և առաջացման հավանականությամբ այն աստիճանի են հասել, որ արդեն շտապ միջոցառումներ են պահանջում դրության բարելավման համար:

Հավելված 3



Հավելված 3-ում ներկայացված են հաշվարկների համար հիմք ծառայած ցուցանիշները (որոնք համընկնում են բալային գնահատականների մեթոդի կիրառմամբ օգտագործված ցուցանիշների հետ) և տնտեսական անվտանգության հաշվարկման արդյունքները՝ երեք հանրապետությունների համար:

Աղյուսակ 4.1

Հարավկովկասյան երկրների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները՝ հաշվարկված մատրիցի կազմման միջոցով և դրանց դասակարգումն ըստ վտանգվածության աստիճանի ու 1995-2022 թթ. որոշակի ժամանակահատվածների

SUS №	Տնտեսական անվտանգության ցուցանիշները (SUS)	Մատրիցի վանդակի համարը				
		3	4	5	6	7
1	2	1995-2000 միջինը	2001-2006 միջինը	2007-2011 միջինը	2012-2016 միջինը	2017-2022 միջինը
SUS 1	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար					
	Հայաստան	9	9	9	9	9
	Ադրբեջան	9	9	9	9	9
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 2	Ջինիի գործակիցը (եկամոտների կենտրոնացման գործակիցը)					
	Հայաստան	5	9	9	9	9
	Ադրբեջան	8	9	9	9	9
	Վրաստան	5	9	9	9	9
SUS 3	Միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլար					
	Հայաստան	9	9	8	8	6
	Ադրբեջան	9	8	8	6	6
	Վրաստան	9	9	8	8	6
SUS 4	Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %					
	Հայաստան	8	8	8	8	8
	Ադրբեջան	8	6	7	6	6
	Վրաստան	8	8	8	8	8

Աղյուսակ 4.1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
SUS 5	Գնաճի միջին մակարդակը, %					
	Հայաստան	9	7	6	5	7
	Ադրբեջան	9	8	8	6	8
	Վրաստան	9	8	8	4	8
SUS 6	Գործազրկության մակարդակը (միջին տարեկան), %-ով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ					
	Հայաստան	6	6	8	8	8
	Ադրբեջան	1	6	7	7	7
	Վրաստան	6	8	8	8	8
SUS 7	Տնտեսական հավելածր, %					
	Հայաստան	4	1	3	7	3
	Ադրբեջան	1	1	2	8	8
	Վրաստան	6	2	3	3	3
SUS 8	Ներքին պետական պարտքը (ազգային արժույթով), %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ					
	Հայաստան	1	1	2	3	6
	Ադրբեջան	4	4	4	8	8
	Վրաստան	8	8	8	8	9
SUS 9	Աղբատույթյան ցուցանիշի «բնական» մակարդակը, %					
	Հայաստան	9	9	9	9	9
	Ադրբեջան	9	9	8	6	6
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 10	Գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	8	9	9	9	9
	Ադրբեջան	8	9	9	9	9
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 11	Արդյունաբերական արտադրանքում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %					
	Հայաստան	8	8	8	9	9
	Ադրբեջան	8	9	9	9	9
	Վրաստան	8	9	9	9	9

Աղյուսակ 4.1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
SUS 12	Արդյունաբերական արտադրանքում մեքենաշինության տեսակարար կշիռը, %					
	Հայաստան	9	9	9	9	9
	Ադրբեջան	9	9	9	9	9
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 13	Հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	9	2	2	2	2
	Ադրբեջան	8	4	4	4	4
	Վրաստան	9	2	2	2	2
SUS 14	Կյանքի սպասվող տևողությունը՝ հաշվարկված ծննդից (տարի)					
	Հայաստան	6	6	6	6	6
	Ադրբեջան	6	8	8	6	6
	Վրաստան	8	4	8	8	8
SUS 15	Հանցագործությունների մակարդակը (հանցագործությունները՝ 100 հազար մարդու հաշվով)					
	Հայաստան	1	1	1	1	1
	Ադրբեջան	1	1	1	1	1
	Վրաստան	1	1	1	1	1
SUS 16	Արտաքին պետական պարտքը (կառավարության և կենտրոնական բանկի) ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	8	8	9	9	8
	Ադրբեջան	6	6	5	8	8
	Վրաստան	9	8	9	9	9
SUS 17	Բյուջեի պակասուրդը (հավելուրդը) ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	1	1	6	7	6
	Ադրբեջան	1	1	1	1	1
	Վրաստան	1	1	7	2	6
SUS 18	Դրամական զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	9	9	9	8	8
	Ադրբեջան	9	9	9	8	8
	Վրաստան	9	9	9	8	6

Աղյուսակ 4.1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
SUS 19	Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին, %					
	Հայաստան	8	8	8	8	8
	Ադրբեջան	6	8	6	8	8
	Վրաստան	5	8	8	8	8
SUS 20	Ներմուծման տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ, %					
	Հայաստան	8	8	8	8	8
	Ադրբեջան	6	8	8	8	8
	Վրաստան	7	6	8	8	8

Ծանոթություն. կազմվել է ըստ հավելված 3-ի տվյալների:

Աղյուսակ 4.2

Հարավկովկասյան երկրների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները՝ հաշվարկված մատրիցի կազմմամբ և դրանց դասակարգումն ըստ վտանգվածության աստիճանի, 1995 թ., 2000 թ., 2020 թ., 2021 թ., 2022 թ.

SUS №	Տնտեսական անվտանգության ցուցանիշները (SUS)	Մատրիցի վանդակի համարը				
		3	4	5	6	7
1	2	1995	2000	2020	2021	2022
SUS 1	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար					
	Հայաստան	9	9	9	9	9
	Ադրբեջան	9	9	9	9	9
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 2	Ջինիի գործակիցը (եկամուտների կենտրոնացման գործակիցը)					
	Հայաստան	9	9	9	9	9
	Ադրբեջան	9	9	9	9	9
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 3	Միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլար					
	Հայաստան	9	9	8	8	6
	Ադրբեջան	9	8	8	6	6
	Վրաստան	9	9	8	8	6
SUS 4	Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %					
	Հայաստան	8	8	8	8	8
	Ադրբեջան	8	6	6	6	6
	Վրաստան	8	8	8	8	8

Աղյուսակ 4.2-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
SUS 5	Գնաճի միջին մակարդակը, %					
	Հայաստան	9	1	2	8	8
	Ադրբեջան	9	4	3	8	9
	Վրաստան	9	6	6	8	8
SUS 6	Գործազրկության մակարդակը (միջին տարեկան), %-ով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ					
	Հայաստան	6	8	8	8	8
	Ադրբեջան	1	1	6	7	7
	Վրաստան	2	8	8	8	8
SUS 7	Տնտեսական հավելածր, %					
	Հայաստան	3	4	1	3	2
	Ադրբեջան	2	2	1	4	5
	Վրաստան	6	8	1	2	2
SUS 8	Ներքին պետական պարտքը (ազգա-յին արժույթով), %-ով՝ ՀՆԱ նկատմամբ					
	Հայաստան	1	2	6	6	8
	Ադրբեջան	4	4	8	6	8
	Վրաստան	8	8	9	9	9
SUS 9	Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, %					
	Հայաստան	9	9	9	9	9
	Ադրբեջան	9	9	6	6	6
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 10	Գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	8	8	9	9	9
	Ադրբեջան	8	8	9	9	9
	Վրաստան	9	9	9	9	9
SUS 11	Արդյունաբերական արտադրանքի մեջ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %					
	Հայաստան	8	8	9	9	9
	Ադրբեջան	8	8	9	9	9
	Վրաստան	8	8	9	9	9
SUS 12	Արդյունաբերական արտադրանքի մեջ մեքենաչին տեսակարար կշիռը, %					
	Հայաստան	9	9	9	9	9
	Ադրբեջան	9	9	9	9	9
	Վրաստան	9	9	9	9	9

Աղյուսակ 4.1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
SUS 13	Հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	9	9	2	2	2
	Ադրբեջան	9	8	2	4	3
	Վրաստան	9	9	2	2	2
SUS 14	Կյանքի սպասվող տևողությունը՝ հաշվարկված ծննդից (տարի)					
	Հայաստան	6	6	6	6	6
	Ադրբեջան	8	6	8	6	6
	Վրաստան	8	8	8	8	8
SUS 15	Հանցագործությունների մակարդակը (հանցագործությունները՝ 100 հազար մարդու հաշվով)					
	Հայաստան	1	1	1	1	1
	Ադրբեջան	1	1	1	1	1
	Վրաստան	1	1	1	1	1
SUS 16	Արտաքին պետական պարտքը (կառավարության և կենտրոնական բանկի) ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	8	8	9	9	8
	Ադրբեջան	6	6	8	8	8
	Վրաստան	9	8	9	9	9
SUS 17	Բյուջեի պակասուրդը (հավելուրդ) ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	1	1	8	6	5
	Ադրբեջան	1	1	8	1	1
	Վրաստան	1	1	8	6	6
SUS 18	Դրամական զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ, %					
	Հայաստան	9	9	8	8	8
	Ադրբեջան	9	9	8	8	8
	Վրաստան	9	9	6	6	8
SUS 19	Ներմուծված ապրանքների և ծառայություն. հարաբերությունը ՀՆԱ-ին, %					
	Հայաստան	8	8	8	8	8
	Ադրբեջան	6	7	8	8	6
	Վրաստան	3	7	8	8	8
SUS 20	Ներմուծման տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ, %					
	Հայաստան	8	8	8	8	8
	Ադրբեջան	6	8	8	8	8
	Վրաստան	5	6	8	8	8

Ծանոթություն. կազմվել է ըստ հավելված 3-ի տվյալների:

Մատրիցի օգտագործումը բարձրացնում է տնտեսական անվտանգության ցուցանիշների գնահատման համակարգի և կառավարման արդյունավետությունը՝ օգնելով ավելի ճշգրիտ կերպով գնահատել տնտեսության վտանգվածության աստիճանն ըստ որոշակի ցուցանիշի: Դա նպաստում է ռեսուրսների արդյունավետ կառավարմանը՝ հնարավորություն ընձեռելով գնահատելու ոլորտը կարգավորող կառույցների աշխատանքը և կողմնորոշիչ դեր ունենալու զարգացման հետագա քաղաքականության մշակման հարցում: Այս մեթոդը, միաժամանակ, օգնում է կատարել տնտեսական անվտանգության ցուցանիշների ամբողջական վերլուծություն՝ թույլ տալով ուսումնասիրել տարբեր ցուցանիշների միջև առկա բազմակողմանի փոխադարձ կապը, այսինքն՝ պարզել, թե որևէ ցուցանիշի փոփոխությունն ինչպես է տեղի ունեցել և ինչպես կանդրադառնա մյուս ցուցանիշների վրա:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների ազդեցության չափը գնահատելու համար վերլուծության արդյունքում ընդունվել են հետևյալ արժեքները. ազդեցությունը գնահատվում է փոքր, եթե միջին արժեք / սահմանային արժեք հարաբերությունը 0,66-ից 1-ի, միջին՝ եթե 1-ից 3-ի և մեծ՝ եթե 3-ից բարձր միջակայքում է:

4.1-4.6 մատրիցներում ներկայացված են հարավկովկասյան երեք երկրների համար կազմված մատրիցները՝ ուսումնասիրության վերջին ժամանակահատվածի (2017-2022 թթ.) և վերջին տարվա (2022 թ.) համար (մատրիցների վանդակներն արտացոլված են աղյուսակ 4.1-ում և 4.2-ում): Տվյալների համադրությունը վկայում է, որ մեր տարածաշրջանի երկրներին բնորոշ են տնտեսական անվտանգության ցուցանիշների վտանգվածության ընդհանուր գծեր:

Մատրից 4.1

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ 2017-2022 թթ. միջինացված տվյալների

Առաջացման հավանականությունը	Մեծ, > 0,66	6 SԱՑ 3, SԱՑ 8, SԱՑ 14, SԱՑ 17	8 SԱՑ 4, SԱՑ 6, SԱՑ 16, SԱՑ 18, SԱՑ 19, SԱՑ 20	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 9, SԱՑ 10, SԱՑ 11, SԱՑ 12
	Միջին, $0,33 < X < 0,66$	3 SԱՑ 7	5	7 SԱՑ 5
	Փոքր, < 0,33	1 SԱՑ 15	2 SԱՑ 13	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 4.2

Ադրբեջանի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ 2017-2022 թթ. միջինացված տվյալների

Առաջացման հավանականությունը	Մեծ, > 0,66	6 SԱՑ 3, SԱՑ 4, SԱՑ 9, SԱՑ 14	8 SԱՑ 5, SԱՑ 7, SԱՑ 8, SԱՑ 16, SԱՑ 18, SԱՑ 19, SԱՑ 20	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 10, SԱՑ 11, SԱՑ 12
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7 SԱՑ 6
	Փոքր, < 0,33	1 SԱՑ 15, SԱՑ 17	2	4 SԱՑ 13
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 4.3

Վրաստանի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ 2017-2022 թթ. միջինացված տվյալների

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 SԱՑ 3, SԱՑ 17, SԱՑ 18	8 SԱՑ 4, SԱՑ 5, SԱՑ 6, SԱՑ 14, SԱՑ 19, SԱՑ 20	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 8, SԱՑ 9, SԱՑ 10, SԱՑ 11, SԱՑ 12, SԱՑ 16
	Միջին, $0,33 < X < 0,66$	3 SԱՑ 7	5	7
	Փոքր, $< 0,33$	1 SԱՑ 15	2 SԱՑ 13	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 4.4

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ 2022 թ. տվյալների

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 SԱՑ 3, SԱՑ 14	8 SԱՑ 4, SԱՑ 5, SԱՑ 6, SԱՑ 8, SԱՑ 16, SԱՑ 18, SԱՑ 19, SԱՑ 20	9 SԱՑ 1, SԱՑ 2, SԱՑ 9, SԱՑ 10, SԱՑ 11, SԱՑ 12
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5 SԱՑ 17	7
	Փոքր, $< 0,33$	1 SԱՑ 15	2 SԱՑ 7, SԱՑ 13	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 4.5

Ադրբեջանի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ 2022 թ. տվյալների

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 3, ՏԱՑ 4, ՏԱՑ 9, ՏԱՑ 14, ՏԱՑ 19	8 ՏԱՑ 8, ՏԱՑ 16, ՏԱՑ 18, ՏԱՑ 20	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 5, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 12
	Միջին, $0,33 < X < 0,66$	3 ՏԱՑ 13	5 ՏԱՑ 7	7 ՏԱՑ 6
	Փոքր, $< 0,33$	1 ՏԱՑ 15, ՏԱՑ 17	2	4
		Փոքր	Միջին	Մեծ
		Ազդեցության չափը		

Մատրից 4.6

Վրաստանի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ 2022 թ. տվյալների

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 3, ՏԱՑ 17	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 5, ՏԱՑ 6, ՏԱՑ 14, ՏԱՑ 18, ՏԱՑ 19, ՏԱՑ 20	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 8, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 12, ՏԱՑ 16
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7
	Փոքր, $< 0,33$	1 ՏԱՑ 15	2 ՏԱՑ 7, ՏԱՑ 13	4
		Փոքր	Միջին	Մեծ
		Ազդեցության չափը		

4.2. Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների ընդհանրությունները, առանձնահատկությունները և վտանգվածության աստիճանը

Հանրահայտ է, որ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները բազմաթիվ կողմերով և փոխադարձ կապերով առնչվում են և փոխապայմանավորվում: Այդպիսի կապերն ամենևին էլ չեն ձևավորվում և կայուն հարաբերությունների տեսքով մարմնավորվում ոչ միայն մեկ ամսվա կամ մեկ տարվա ընթացքում: Դրանք կերպավորվում են ավելի երկար ժամանակահատվածների, ինչպես, օրինակ, 5, 10, 15 կամ 20 տարվա ընթացքում: Այսինքն՝ որևէ երկրի ներկայիս մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա կառուցված և հաշվարկված տնտեսական անվտանգության համակարգն իր ներսում կրում է անցյալի երկարատև ժամանակահատվածի անցած ուղին, անցյալ ժամանակում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, ինչու չէ, նաև քաղաքական «մակընթացություններն ու տեղատվությունները»: Այլ կերպ ասած, տնտեսության ներկա «ժառանգական կողը» ձևավորվում է անցյալի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերով և հայտանիշներով՝ դրանով իսկ ապահովելով սոցիալ-տնտեսական առաջընթացի օրգանական կապը:

Ելնելով վերոնշյալ կապի և տնտեսության տարբեր ժամանակահատվածների միջև «պորտալարի» ամբողջական պատկերի ու վիճակի բացահայտման նպատակից, Հարավային Կովկասի երեք հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման արդյունքներից և դրանք ձևավորող տնտեսական անվտանգության որոշակի ցուցանիշներից և ամփոփ գնահատականներից՝ իրականացվել է վերլուծություն հարավկովկասյան երեք հանրապետությունների՝ ինչպես երկարատև (1995-2003), այնպես էլ

ավելի պակաս ժամանակային հորիզոն (2001-2006, 2007-2012, 2012-2017 և 2017-2022 թթ.) ունեցող հատվածների համար: Նման մոտեցումն արդարացված է այն իմաստով, որ տնտեսական անվտանգության ընդհանրացված և որոշակի ցուցանիշների համեմատումն ու վերլուծությունը թույլ են տալիս ավելի ճշգրտորեն բացահայտել ու նկարագրել միջերկրային նմանություններն ու տարբերությունները՝ կատարելով ընդհանրացումներ:

Հարավային Կովկասի երեք հանրապետությունների 1995–2003 թթ. տնտեսական անվտանգության ցուցանիշների կազմի, սահմանային արժեքների և ըստ վտանգվածության աստիճանի դասակարգումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ինչպես մի շարք ընդհանրություններ, այնպես էլ որոշակի առանձնահատկություններ:

Որպես այնպիսի ընդհանրություններ, որոնք բնորոշ են երեք հանրապետություններին էլ, կարելի է նշել.

- ա) աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը (ոչ ավելի, քան 9%) բազմակի գերազանցող փաստացի մակարդակները: Ըստ այդ ցուցանիշների՝ երեք հանրապետություններն էլ վտանգվածության ամենաբարձր՝ 9-րդ աստիճանում են,
- բ) ինֆլյացիայի միջին մակարդակը նույնպես 9-րդ՝ վտանգավոր աստիճանում է,
- գ) Ջինիի գործակցի¹¹² ցուցանիշով Հայաստանը և Վրաստանը վտանգվածության 9-րդ աստիճանում են, Ադրբեջանը՝ 8-րդ,
- դ) երեք հանրապետություններն էլ վտանգվածության 8-րդ աստիճանում են՝ տնտեսական աճի և ՀՆԱ-ում տնային տնտեսու-

¹¹² Եկամտների փաստացի բաշխման օբյեկտիվ գնահատականի համար օգտագործվող այս գործակիցը ցույց է տալիս, թե համախառն եկամտի որ մասն ինչպես են կենտրոնացված բնակչության առանձին խմբերի դեպքում, ինչը թույլ է տալիս դատել տվյալ երկրում տնտեսական անհավասարության մակարդակի մասին: Որպես կանոն, Ջինիի գործակիցը հաշվարկվում է բնակչության 10 (դեցիլային) կամ 20 (քվանտիլային) տոկոսային հավասարաչափ բաշխված խմբերի համար: Ավելի մանրամասն այդ մասին տե՛ս Մարկոսյան Ա., «Ինչո՞ւ են կառուցում «Լորենցի կորը» և հաշվարկում Ջինիի գործակիցը», «Տնտեսագիտություն բոլորի համար», Եր., «Տիգրան Մեծ», 2001, էջ 130-132:

թյունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշռի առումով,

- ե) կյանքի սպասվելիք տևողության և ներքին սպառման մեջ ներմուծման տեսակարար կշռի տեսանկյունից, Հայաստանը և Ադրբեջանը վտանգվածության 8-րդ աստիճանում են, Վրաստանը՝ 6-րդ,
- զ) տնտեսական անվտանգության համատեքստում, վտանգվածության բարձր աստիճանում են ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին պարտքի ցուցանիշները (Հայաստանն ու Վրաստանը 8-րդ տեղում են, իսկ Ադրբեջանը՝ 6-րդ),
- է) երեք հանրապետություններն էլ վտանգվածության միևնույն աստիճանում են՝ ըստ մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշի (4-րդ աստիճան), արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշռի (1-ին աստիճան), ինչպես նաև հանցագործության մակարդակի (հանցագործությունների թիվը 100 հազար մարդու հաշվով՝ 1-ին աստիճան):

Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրված 20 ցուցանիշի առումով էլ հարավկովկասյան երեք հանրապետություններն ավելի շատ ընդհանրություններ (11 ցուցանիշի համար), քան տարբերություններ ունեն:

Հարավկովկասյան երեք հանրապետություններում տնտեսական անվտանգության մնացած ցուցանիշներն ըստ վտանգվածության աստիճանի աչքի են ընկնում որոշակի առանձնահատկություններով: Օրինակ՝ ՀՆԱ-ի նկատմամբ ներքին պետական պարտքի ցուցանիշը Հայաստանի դեպքում ամենաանվտանգ (1-ին) խմբում է (կամ վանդակում), մինչդեռ Վրաստանի պարագայում՝ ամենավտանգավոր՝ 8-րդ խմբում: Կամ ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի պակասուրդի ցուցանիշն Ադրբեջանի դեպքում 1-ին խմբում է, իսկ Հայաստանի պարագայում՝ 8-րդ:

Եթե մեր ուսումնասիրած տնտեսական անվտանգության վտանգված ցուցանիշները դասակարգենք ըստ քանակի, ապա պատկերը կլինի հետևյալը (տե՛ս աղյուսակ 4.3):

Աղյուսակ 4.3

Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում, 1995-2003 թթ.

№	Հարավկովկասյան հանրապետություններ	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակը / ցուցանիշների քանակը								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Հայաստան	3	8	-	2	1	2	1	-	3
2	Ադրբեջան*	2	5	1	5	-	1	-	1	4
3	Վրաստան	3	4	-	6	1	1	-	3	2

* Ադրբեջանի համար ընդգրկված է 19 ցուցանիշ՝ ՀՆԱ-ի նկատմամբ ներքին պտտական պարտքի ցուցանիշի բացակայության պատճառով:

Հայաստանի Հանրապետության առումով, տնտեսական անվտանգության ցուցանիշների դասակարգումից հետևում է, որ 1995-2003 թվականներին ամենավտանգված առաջին երեք ցուցանիշները եղել են Ջինիի գործակիցը, ինֆլյացիայի միջին մակարդակը (այս ցուցանիշի վրա էական ազդեցություն է թողել 1995 թվականի 175.5%-անոց ինֆլյացիայի միջին մակարդակը, այն դեպքում, երբ այդ ցուցանիշը 2003 թվականին կազմել է ընդամենը 4.7%) և աղքատության ցուցանիշը: Եկամուտների բևեռացման և աղքատության ցուցանիշները հարավկովկասյան երեք հանրապետություններում էլ վտանգվածության ամենաբարձր աստիճանում են և, հետևաբար, դրանց վրա պետք է սևեռվի հատկապես սոցիալական քաղաքականությունը, որն իրականացվում է երեք հանրապետություններում էլ: Այս տեսանկյունից, զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև եկամուտների (արդյունքի) գնահատման և օգտագործման հիմնահարցերը նշված հանրապետություններում:

Որպես ընդհանուր գիծ, որ բնորոշ է երեք հանրապետություններին, առանձնացվել է աղքատության ցուցանիշների փաստացի մակարդակը, որը բազմակի գերազանցում է դրանց «բնական» մակարդակը (բնակչության 9%-ից ոչ ավելի): Այդ ցուցանիշով բոլոր երեք հանրապետությունները վտանգվածության ամենաբարձր՝ 9-րդ մա-

կարդակում են:

Տնտեսական անվտանգության ապահովումը երկրի անկախության, ինքնիշխանության կարևոր երաշխիքներից է, հասարակության և անձի կայուն ու արդյունավետ կենսագործունեության պայմանը, ուստի դա համարվում է ազգային տնտեսության զարգացման հիմնական գերակայություններից մեկը: Որպես բարդ և բազմագործոն հասկացություն, ազգային անվտանգության համակարգի բաղադրիչ մաս՝ դա, միաժամանակ, հիմք է հանդիսանում ազգային անվտանգության կառուցվածքում ներառվող տարրերի (ռազմական, տեղեկատվական, սոցիալ-քաղաքական, պարենային, բնապահպանական անվտանգության և այլն) ձևավորման համար: Այդ տարրերը փոխկապված են, մեկը մյուսին լրացնող, ուստի չի կարելի երկար ժամանակահատված գերակայություն տալ սրանցից որևէ մեկին՝ անտեսելով մյուսները: Դրանք բոլորի հիմքում հիմնականում տնտեսական գործոններն են, որոնք պայմանավորում են այս կամ այն տարրի անվտանգությունը:

Տնտեսական անվտանգության հասկացությունն Արևմուտքի զարգացած երկրներում դիտարկվում է որպես համաշխարհային շուկայում ազգային տնտեսության և դրա ոլորտների մրցունակություն, որը համաշխարհային տնտեսության բազմաբնույթ միտումներում և զարգացումներում ապահովում է երկրի ազատ շուկայական տնտեսության կենսունակությունը: Աշխատանքի միջազգային բաժանման մասնակից և շուկայական մրցակից տնտեսությունների համար տնտեսական անվտանգությունը փաստացի հանգում է այդ մրցակցության ընթացիկ ռիսկերին և վտանգներին համապատասխանաբար արձագանքելուն:

Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցների վանդակներով քանակական բաշխման ուսումնասիրությունից (տե՛ս աղյուսակ 4.1 և 4.2) կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

ա) սկզբում առանձնացնենք այն ցուցանիշները, որոնք 1995-2022 թթ.-ի ընթացքում ունեցել են տնտեսական անվտանգության միևնույն բովանդակությունը.

- ՀՆԱ՝ մեկ շնչի հաշվով (ՏԱՑ 1). բոլոր հանրապետություններում գտնվել է 9-րդ՝ ամենավտանգավոր վանդակում,
- նույնը վերաբերում է Ջինիի գործակցին (ՏԱՑ 2), 2002-2022 թթ.,
- արդյունաբերական արտադրանքի մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը (ՏԱՑ 12):

բ) Ցուցանիշներ, որոնք բնորոշ են երկու հանրապետություններին.

- գործազրկության մակարդակ (ՏԱՑ 6). Հայաստան, Վրաստան, 2007-2022 թթ.,
- աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակ (ՏԱՑ 9). Հայաստան, Վրաստան, 1995-2022 թթ. (9-րդ վանդակ),
- հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալ՝ ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 13). Հայաստան, Վրաստան (2-րդ վանդակ),
- ներմուծման տեսակարար կշիռ վերջնական սպառման մեջ (ՏԱՑ 20). Հայաստան, Ադրբեջան, 2001-2022 թթ. (8-րդ վանդակ),
- ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին (ՏԱՑ 19). Հայաստան, Վրաստան, 2001-2022 թթ. (8-րդ վանդակ),
- դրամական զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 18). Հայաստան, Ադրբեջան, 2001-2022 թթ. (9-րդ և 8-րդ վանդակ),
- արտաքին պետական պարտքը (կառավարության և Կենտրոնական բանկի) ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 16). 2001-2022 թթ. (8-րդ և 9-րդ վանդակ),
- միջին ամսական անվանական աշխատավարձ (ԱՄՆ դոլար) (ՏԱՑ 3). Հայաստան, Վրաստան (6-րդ վանդակ),

- գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 10). Հայաստան, Ադրբեջան, 1995-2022 թթ., 2001-2022 թթ. (9-րդ վանդակ),
- բյուջեի պակասուրդը (հավելուրդը) ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 17) (1-ին վանդակ),

գ) հանցագործությունների մակարդակ (ՏԱՑ 15). երեք հանրապետությունների համար, 1995-2022 թթ. (1-ին վանդակ):

Հարավային Կովկասի տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգում 3 հանրապետությունների հիմնական տարբերությունը նկատվել է տնտեսական հավելածի (ՏԱՑ 7) և ներքին պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 8) ցուցանիշներում: Ինչ վերաբերում է տնտեսական անվտանգության ցուցանիշների վտանգվածության աստիճանների՝ տարբեր ժամանակահատվածներում համընկնմանը, ապա դա գրանցվել է 20 մակրոտնտեսական ցուցանիշներից 18-ի դեպքում, ինչը վկայում է այդ երկրների տնտեսությունների և անվտանգության ցուցիչների ընդհանրության և ոչ թե տարբերությունների մասին:

Աղյուսակ 4.4-4.8-ում արտացոլված է հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում 1995-2022 թթ.-ին՝ խմբավորված ըստ հնգամյա ժամանակահատվածների: Վերլուծությունից հանգում ենք այն եզրակացությանը, որ նշված ցուցանիշների առումով այդ երկրներն ունեն ավելի շատ ընդհանրություններ, քան տարբերություններ:

Ըստ առանձին տարիների շարքի (1995, 2000, 2020, 2021, 2022) խմբավորենք Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակի ընդհանրությունները, տարբերությունները և առանձնահատկությունները (տե՛ս աղյուսակ 4.2):

Այդ դասակարգման ընդհանրությունների խմբում ընդգրկենք այն դեպքերը, երբ նշված շարքի ամբողջ ժամանակահատվածում (տարի-

ներին) բոլոր հանրապետություններում տնտեսական անվտանգության ցուցանիշները (ՏԱՑ) գտնվել են մատրիցի միևնույն վանդակում.

- ՀՆԱ՝ մեկ շնչի հաշվով (ՏԱՑ 1, 9-րդ վանդակ),
- Զինիի գործակից (ՏԱՑ 2, 9-րդ վանդակ),
- արդյունաբերական արտադրանքում մեքենաշինության տեսակարար կշիռ (ՏԱՑ 12, 9-րդ վանդակ),
- հանցագործությունների մակարդակ (ՏԱՑ 1, 1-ին վանդակ):
- Դասակարգման երկրորդ խմբում ընդգրկենք այն ցուցանիշները, որոնք վերաբերում են առնվազն երկու երկրի.
- միջին ամսական անվանական աշխատավարձ (ՏԱՑ 3). Հայաստան, Վրաստան (համապատասխանաբար՝ 9-րդ, 9-րդ, 8-րդ, 8-րդ, 6-րդ վանդակներ),
- տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (ՏԱՑ 4). Հայաստան, Վրաստան (բոլոր տարիներին՝ 8-րդ վանդակ),
- աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակ (ՏԱՑ 9). Հայաստան, Վրաստան (9-րդ վանդակ),
- արդյունաբերական արտադրանքում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռ (ՏԱՑ 11). Հայաստան, Վրաստան, Ադրբեջան (համապատասխանաբար ըստ տարիների՝ 8-րդ, 8-րդ, 9-րդ, 9-րդ, 9-րդ վանդակներ),
- հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 13). Հայաստան, Վրաստան (համապատասխանաբար ըստ տարիների՝ 9-րդ, 9-րդ, 2-րդ, 2-րդ, 2-րդ վանդակներ):

Հաջորդ խմբում ընդգրկված է միայն մեկ երկիր, որի դեպքում տնտեսական անվտանգության առնվազն մեկ ցուցանիշ բնորոշ է եղել ողջ ժամանակահատվածին.

- տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (ՏԱՑ 4). Հայաստան (8-րդ վանդակ),
- գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 10). Վրաստան (9-րդ վանդակ),
- կյանքի սպասվող տևողություն՝ հաշվարկված ծննդից (տարի) (ՏԱՑ 14). Հայաստան (6-րդ վանդակ),
- կյանքի սպասվող տևողություն՝ հաշվարկված ծննդից (տարի). (ՏԱՑ 14). Վրաստան (8-րդ վանդակ),
- ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերություն ՀՆԱ-ին (ՏԱՑ 19). Հայաստան (8-րդ վանդակ),
- ներմուծման տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ (ՏԱՑ 20). Հայաստան (8-րդ վանդակ):

Աղյուսակ 4.4

Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում, 1995-2000 թթ.

№	Հարավկովկասյան հանրապետություններ	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակ / ցուցանիշների քանակ								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Հայաստան	7	6	-	2	1	1	-	-	3
2	Ադրբեջան	6	5	-	4	-	1	-	-	4
3	Վրաստան	9	4	1	2	2	-	-	-	2

Աղյուսակ 4.5

Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում, 2001-2006 թթ.

№	Հարավկովկասյան հանրապետություններ	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակ / ցուցանիշների քանակ								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Հայաստան	7	5	1	2	-	-	-	1	4
2	Ադրբեջան	7	4	-	3	-	2	-	1	3
3	Վրաստան	8	6	-	1	-	1	-	2	2

Աղյուսակ 4.6

Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում, 2007-2011 թթ.

№	Հարավկովկասյան հանրապետություններ	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակ / ցուցանիշների քանակ								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Հայաստան	7	6	-	3	-	-	1	2	1
2	Ադրբեջան	6	5	2	1	1	2	-	1	2
3	Վրաստան	8	7	1	-	-	-	1	1	1

Աղյուսակ 4.7

Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում, 2012-2016 թթ.

№	Հարավկովկասյան հանրապետություններ	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակ / ցուցանիշների քանակ								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Հայաստան	7	6	2	1	1	-	1	1	1
2	Ադրբեջան	7	5	1	4	-	1	-	-	2
3	Վրաստան	7	8	-	-	-	1	1	2	1

Աղյուսակ 4.8

Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում, 2017-2022 թթ.

№	Հարավկովկասյան հանրապետություններ	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակ / ցուցանիշների քանակ								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Հայաստան	6	6	1	4	-	-	1	1	1
2	Ադրբեջան	5	7	1	4	-	1	-	-	2
3	Վրաստան	8	6	-	3	-	-	1	1	1

Կատարված դասակարգումներից կարելի է եզրակացնել, որ տնտեսական անվտանգության ցուցանիշների ընդհանրությամբ միմյանց ավելի «մոտ» են Հայաստանը և Վրաստանը, մինչդեռ Ադրբեջանի տնտեսական անվտանգության ցուցանիշները նկատելիորեն տարբերվում են ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի համա-


պատասխան ցուցանիշներից, ինչը վկայում է Ադրբեջանի տնտեսությունում արձանագրված ավելի խորքային տնտեսական հաջողությունների մասին, որոնց առանցքում եղել և շարունակում են մնալ նավթագազային հումքի արտահանումները, որոնք, օրինակ, 2022 թ.-ին կազմել են շուրջ 40 մլրդ դոլար (այդ երկրի պետական բյուջեի եկամուտների 50%-ը):

Հայտնի է նաև, որ տնտեսության զարգացման հիմքում տնտեսական աճի բարձր տեմպերն են: ՀՆԱ աճի բարձր տեմպերը յուրահատուկ լոկոմոտիվ են, որը տնտեսական քաղաքականության խելամիտ գործիքակազմի միջոցով ապահովում է երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացը:

Հավելված 4



Հավելված 4-ում Հարավային Կովկասի երեք հանրապետությունների 1990-2021 թթ. ՀՆԱ ցուցանիշներն են: Գծապատկեր 4.3-ում բերված է Հարավային Կովկասի հանրապետությունների մեկ շնչին ընկնող ՀՆԱ շարժը 1991-2021 թթ.:



Գծապատկեր 4.3. Հարավկովկասյան հանրապետություններում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, 1991-2021 թթ. (ընթացիկ ԱՄՆ դոլարով)¹¹³

¹¹³ <https://www.theglobaleconomy.com/compare-countries/>

Գծապատկերում երևում է, որ 1990-2021 թթ.-ին Հարավային Կովկասի հանրապետություններում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ մեծությունը (ընթացիկ ԱՄՆ դոլարով) դրսևորել է տարբեր վարքագծեր: Ընդհանուր առմամբ, ակնհայտ է, որ այդ երկրներում վերը նշված ցուցանիշն ունեցել է ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ՝ պայմանավորված այդ երկրների տնտեսություններում տեղ գտած կառուցվածքային փոփոխություններով, որոնք էլ էական տեղաշարժեր են ստեղծել հատկապես ապրանքների ու ծառայությունների ներմուծման և արտահանման կառուցվածքում: Եթե վերլուծենք այդ ցուցանիշների շարժընթացը, ապա կարող ենք կատարել որոշակի եզրահանգումներ.

- 1990-ական թվականների առաջին տարիներին բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշով ունեցել են տարբեր մեկնարկային վիճակներ: Այսպես՝ այդ ցուցանիշով առաջատարը եղել է Վրաստանը, որտեղ դա 1990 թ. կազմել է 1614.64 ԱՄՆ դոլար, իսկ 1991-ին՝ 1314.67 դոլար: Հայաստանում այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 634,36 և 372,16 դոլար (Վրաստանի համեմատ մոտ 3 անգամ, իսկ Ադրբեջանի համեմատ՝ շուրջ 2 անգամ ցածր), իսկ Ադրբեջանում համապատասխանաբար՝ 1234.53 և 1209.19 դոլար (հավելված 4),
- սկսած 1993 թ.-ից մինչև 2003 թվականն ընկած ժամանակահատվածը՝ նշված ցուցանիշը 3 հանրապետություններում էլ գրեթե նույնական է եղել: Այդ պատճառով 1995-2003 թթ.-ի տնտեսական անվտանգության ցուցանիշների միջև ավելի շատ ընդհանրություններ են դիտարկվում, քան տարբերություններ,
- սկսած 2004 թ.-ից՝ երկրների մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ մեծությունները սկսել են տարամիտվել տարբեր արագություններով, և այդ ցուցանիշների միջև զգալի «ճեղքվածք» է առաջացել, որը հիմնականում պայմանավորված էր Ադրբեջանի նավթագազային ոլորտի արագ զարգացմամբ, որն իր գագաթնակետին է հասել 2014 թ.-ին, ինչից հետո նկատվել է այդ ցուցանիշի էական նվազում:

Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Հարավկովկասյան երկրների տնտեսական անվտանգության գնահատման նպատակն ու հիմնախնդիրները:
2. Հարավկովկասյան երկրների տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների համակարգը:
3. Հարավկովկասյան երկրների տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների շեմային մեծությունները և դրանց բնութագրերը:
4. Տնտեսական անվտանգության շեմային մեծությունների ընտրության սկզբունքները:
5. Հարավկովկասյան երկրների տնտեսական անվտանգության գնահատումը մատրիցների կազմման միջոցով:
6. Հարավկովկասյան երկրների տնտեսական անվտանգության գնահատումը բալային գնահատականների մեթոդով:
7. Ներկայացրե՛ք Հայաստանի տնտեսական անվտանգության լավագույն և վատագույն ցուցանիշները:
8. Ներկայացրե՛ք Վրաստանի տնտեսական անվտանգության լավագույն և վատագույն ցուցանիշները:
9. Ներկայացրե՛ք Ադրբեջանի տնտեսական անվտանգության լավագույն և վատագույն ցուցանիշները:
10. Ներկայացրե՛ք Հարավային Կովկասի երկրների տնտեսությունների կառուցվածքը ու ՀՆԱ-ի վրա առավելագույն ազդեցություն ունեցող ոլորտները:
11. Քննարկե՛ք Հարավային Կովկասի երկրների տնտեսական անվտանգության աստիճանը բնութագրող գործոնները:
12. Ներկայացրե՛ք Հարավային Կովկասի երկրների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները: Կատարե՛ք համեմատական վերլուծություն:
13. Դիտարկե՛ք Հարավային Կովկասի երկրների ազգային ու տնտեսական անվտանգության ապահովման մարտահրավերները
14. Դիտարկե՛ք Հարավային Կովկասի երկրներում տնտեսական անվտանգության աստիճանի բարձրացման հիմնական ուղղությունները ու համագործակցության հնարավորությունները:

Առաջարկվող գրականություն

1. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2005, 250 էջ:
2. Մարկոսյան Ա., Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, 460 էջ:
3. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը, Եր., «Անտարես» հրատ., 2020, 628 էջ:
4. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. պետության և շուկայի նոր մարտահրավերները, Եր., «Անտարես» հրատ., 2019, 556 էջ:
5. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման արդյունքները, «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 8-9 հոկտեմբերի, 2019, էջ 71-85:
6. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 3, 2004:
7. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության բարելավման ուղիները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 4 (6), 2004:
8. Մարկոսյան Ա., Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., «Տիգրան Մեծ», 2001, էջ 130-132:
9. <https://www.theglobaleconomy.com/compare-countries/>

ԳԼՈՒԽ 5
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**5.1. Միջազգային տարբեր դասակարգումներին
համապատասխանող լավագույն երկրները**

Տնտեսական անվտանգության տեսագործնական հիմնահարցերի ուսումնասիրության նպատակների շարքում կարևորագույն տեղ ունի երկրի կամ երկրների խմբի սոցիալ-տնտեսական զարգացման մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապերի և փոխառնչությունների, ինչպես նաև օրինաչափությունների բացահայտումը: Ակնհայտ է, որ սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշները փոխլրացնում և փոխապայմանավորում են միմյանց: Կարևոր է նաև պարզաբանել դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը և կախվածությունը կամ, այլ կերպ ասած, տնտեսական անվտանգության մակարդակի ազդեցությունը մի շարք կարևոր ցուցանիշների շարժի վրա: Աշխատության այս բաժնում, տնտեսական անվտանգության ազդեցության տեսանկյունից, քննարկելու ենք հետևյալ հիմնական գլոբալ ցուցանիշները՝

ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ 2023 թ.-ին կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրները,

- մեկ ժամվա ընթացքում առավելագույն ՀՆԱ արտադրած լավագույն 10 երկրները,
- մարդու ազատության համաթվով լավագույն 10 երկրների ցուցանիշների միջև առկա պատճառահետևանքային կապերը:

Աղյուսակ 5.1-ում և 5.2-ում ներառված են ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող և մեկ

ժամվա ընթացքում առավելագույն ՀՆԱ արտադրած լավագույն 10 երկրների ցանկերը:

Աղյուսակ 5.1

ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրները, 2024 թ.

Տեղը	Երկիրը	Համաթիվը
1	Նորվեգիա	0,957
2	Իռլանդիա	0,955
3	Շվեյցարիա	0,955
4	Հոնկոնգ SAR, Չինաստան	0,952
5	Իսլանդիա	0,949
6	Գերմանիա	0,947
7	Շվեդիա	0,945
8	Ավստրալիա	0,944
9	Նիդերլանդներ	0,944
10	Դանիա	0,940

Աղբյուրը՝ <https://iworld.com/ru/blog/ranking-countries-standard-living>, վերջին դիտումը՝ 12.04.2024 թ.:

Աղյուսակ 5.2

Մեկ ժամվա ընթացքում առավելագույն ՀՆԱ արտադրած 10 լավագույն երկրները, 2022 թ.

Տեղը	Երկիրը	Մեկ ժամվա ընթացքում թողարկված ՀՆԱ-ն, ընթացիկ ԱՄՆ դոլար՝ գնողունակության համարժեքով ճշտված
1	Իռլանդիա	162.5
2	Նորվեգիա	161.8
3	Լյուքսեմբուրգ	130.7
4	Դանիա	104.2
5	Շվեյցարիա	100.5
6	Բելգիա	100.0
7	Շվեդիա	95.6
8	Ավստրիա	95.1
9	Նիդերլանդներ	92.3
10	ԱՄՆ	91.5

Աղբյուրը՝ *Productivity, current USD by country, around the world | TheGlobalEconomy.com* վերջին դիտումը՝ 12.04.2024 թ.:

Աղյուսակներից հետևում է, որ տվյալ երկրների միջև առկա են որոշակի օրինաչափություններ: Օրինաչափություններից մեկը վերաբերում է նրան, որ նշված ցանկերում 6 երկիր (Նորվեգիա, Իռլանդիա, Շվեյցարիա, Շվեդիա, Դանիա, Նիդերլանդներ) կրկնվում է, ինչը բնութագրում է երկու տարբեր սկզբունքներով խմբավորված երկրների ցուցանիշների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային ամուր կապը:

2022 թվականին մեկ ժամվա ընթացքում առավելագույն ՀՆԱ արտադրած երկրների դասակարգման համար հիմք է հանդիսացել 37 երկրի տվյալների հիման վրա հաշվարկված միջին ցուցանիշը, որը կազմել է 75 ԱՄՆ դոլար: Այս ցուցանիշն ամենաբարձրն է եղել Իռլանդիայում՝ 162,5 ԱՄՆ դոլար, համար, իսկ ամենացածրը՝ Կոլումբիայում՝ 20,5 ԱՄՆ դոլար: Ընդ որում, տվյալ ցուցանիշը հասանելի է 1970 թ.-ից մինչև 2022 թ. ընկած ժամանակահատվածի համար և հաշվարկվում է ընթացիկ ԱՄՆ դոլարով՝ ճշգրտված գնողունակության համարժեքով՝ նպատակ ունենալով արտացոլելու գների տարբերությունները երկրների միջև:


Կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող երկրների դասակարգման համար հիմք է հանդիսացել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մարդկային զարգացման ցուցիչ (ինդեքս-սի) հայեցակարգը: Մարդկային զարգացման ինդեքսը տարբեր երկրներում կյանքի մի շարք չափանիշների ցուցիչ է՝ կրթություն, առողջապահություն, բնակչության մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամուտ և այլն: Միգրացիոն գործընթացներն ուսումնասիրող մասնագետների երկարաժամկետ փորձառությունը վկայում է, որ հենց այդ երկրներն են ապահովում բնակչության տեղաշարժի մեծ հոսքեր՝ նոր բնակավայր և աշխատաշուկա ընտրելու տեսանկյունից:

Կարելի է արձանագրել, որ աշխատանքի բարձր արտադրողականություն և կենսամակարդակ ունեցող երկրների միջև գոյություն ունի կապերի բավական բարձր գործակից: Ըստ էության, նշված երկու ցուցանիշի միջև կոռելյացիայի գործակիցը 0.6 է (տե՛ս գծապատկեր 5.1-5.3-ը): Ընդ որում, գծապատկեր 5.2-ում և 5.3-ում ներ-


Հավելված 5




առված երկրների տնտեսական անվտանգության գումարային գնահատականները հաշվարկվել են վերևում նկարագրված մեթոդաբանությամբ, իսկ հաշվարկների համար ընտրված տվյալները ներկայացված են հավելված 5-ում:



Փծապատկեր 5.1. Մեկ ժամվա ընթացքում առավելագույն ՀՆԱ արտադրած 10 լավագույն երկրները, 2022 թ.



Փծապատկեր 5.2. ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության գումարային ցուցանիշները, 2012-2016 թթ.



Գծապատկեր 5.3. ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության գումարային ցուցանիշները, 2017-2022 թթ.

Որպեսզի պարզենք վերը նշված երկրների և տնտեսական անվտանգության միջև առկա կապը, աղյուսակ 5.3-ում ամփոփել ենք ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության ցուցանիշները՝ հաշվարկված բալային գնահատման մեթոդով՝ 2012-2016 թթ.-ի համար: Աղյուսակ 5.4-ում բերված համապատասխան ցուցանիշները վերաբերում են 2017-2022 թթ.-ին: Աղյուսակների տվյալների համեմատությունը վկայում է այն մասին, որ նշված երկրների շարքերի դասավորությունների միջև տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, ըստ որոնց՝ որոշ երկրներ բարելավել են իրենց տնտեսական անվտանգությունը, մյուսները՝ որոշ չափով վատթարացրել իրենց վիճակը:

Աղյուսակ 5.3

ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության գումարային ցուցանիշները՝ հաշվարկված բալային մեթոդով, 2012-2016 թթ.

<i>Տեղը</i>	<i>Երկիրը</i>	<i>Տնտեսական անվտանգության գումարային գնահատականը, միավոր</i>
1	Նորվեգիա	17.2
2	Հոնկոնգ SAR, Չինաստան	15.9
3	Շվեյցարիա	15.8
4	Դանիա	15.6
5	Գերմանիա	14.8
6	Շվեդիա	14.7
7	Ավստրալիա	14.2
8	Նիդերլանդներ	14.0
9	Իսլանդիա	13.6
10	Իռլանդիա	11.3

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

Աղյուսակ 5.4

ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության գումարային ցուցանիշները՝ հաշվարկված բալային մեթոդով, 2017-2022 թթ.

<i>Տեղը</i>	<i>Երկիրը</i>	<i>Տնտեսական անվտանգության գումարային գնահատականը, միավոր</i>
1	Նորվեգիա	16.9
2	Շվեյցարիա	15.9
3	Դանիա	15.6
4	Գերմանիա	15.1
5	Նիդերլանդներ	15.0
6	Հոնկոնգ SAR, Չինաստան	14.9
7	Իսլանդիա	14.5
8	Ավստրալիա	14.4
9	Շվեդիա	14.3
10	Իռլանդիա	11.8

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

5.2. Կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող երկրների տնտեսական անվտանգության մակարդակը

Երկրների տնտեսական անվտանգության ցուցանիշների միջև կապն ավելի ակնառու ձևով պատկերելու համար աղյուսակ 5.5-ում արտացոլել ենք լավագույն համարվող 10 երկրների տնտեսական անվտանգության ցուցանիշները 2012-2017 և 2017-2022 թթ.-ին՝ հաշվարկված մատրիցի կազմման մեթոդով: Միաժամանակ, աղյուսակ 5.6-ում և 5.7-ում ներկայացրել ենք այդ նույն ժամանակահատվածներում կենսամակարդակի առումով լավագույն ցուցանիշներ ունեցող առաջին 10 երկրների անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցների վանդակներում: Աղյուսակ 5.6-ից հետևում է, որ եթե տնտեսական անվտանգության մասին դատելու լինենք վտանգվածության մատրիցների 9, 8 և 7 համարների վանդակների հանրագումարային արդյունքներից, ապա կտեսնենք, որ այդ ցուցանիշների վտանգվածության «կրիտիկական» զանգվածը հավաքված կամ խտացված է հենց այդ խումբ վանդակներում: Այսպես, օրինակ, 2012-2017 թթ. Նորվեգիայի համար դա կազմել է 10, Իռլանդիայի համար՝ 15, Շվեյցարիայի համար՝ 12 ցուցանիշ, այսինքն՝ տնտեսական անվտանգության ցուցանիշների քանակի 50%-ը և ավելին «հավաքված» են վտանգվածության այդ վանդակներում: Այդ նույն օրինաչափությունը նկատվում է նաև մյուս երկրների պարագայում (միակ բացառությունը Հոնկոնգն է՝ 19 ցուցանիշ): Նույն պատկերը նկատվել է նաև 2017-2022 թթ.-ին:

Աղյուսակ 5.5

ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները մատրիցների կազմման միջոցով և դրանց դասակարգումն ըստ վտանգվածության աստիճանի, 2012-2022 թթ.

SUS N	Տնտեսական անվտանգության ցուցանիշները (SUS)	Մատրիցի վանդակի համարը	
		2012-2016 միջինը	2017-2022 միջինը
1	2	3	4
SUS 1	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար		
	Նորվեգիա	1	1
	Իռլանդիա	2	1
	Շվեյցարիա	1	1
	Հոնկոնգ SAR, Չինաստան	2	2
	Իսլանդիա	2	1
	Գերմանիա	2	2
	Շվեդիա	2	2
	Ավստրալիա	2	2
	Դանիա	2	2
	Նիդերլանդներ	2	2
SUS 2	Զինիի գործակիցը (եկամուտների կենտրոնացման գործակիցը)		
	Նորվեգիա	8	8
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	9	9
	Հոնկոնգ SAR, Չինաստան	9	9
	Իսլանդիա	6	6
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	8	8
	Ավստրալիա	9	9
	Դանիա	8	8
	Նիդերլանդներ	8	8
SUS 3	Միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլար		
	Նորվեգիա	6	8
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	7	6
	Հոնկոնգ SAR, Չինաստան	8	8
	Իսլանդիա	9	6
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	9	9
	Դանիա	8	8
	Նիդերլանդներ	9	9

Աղյուսակ 5.5-ի շարունակությունը

1	2	3	4
SUS 4	Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %		
	Նորվեգիա	6	6
	Իռլանդիա	6	5
	Շվեյցարիա	8	8
	Հոնկոնգ SAR, Չինաստան	9	9
	Իսլանդիա	8	8
	Գերմանիա	8	8
	Շվեդիա	6	6
	Ավստրալիա	8	8
	Դանիա	6	6
	Նիդերլանդներ	6	6
SUS 5	Գնաճի միջին մակարդակը, %		
	Նորվեգիա	3	5
	Իռլանդիա	1	4
	Շվեյցարիա	1	1
	Հոնկոնգ SAR, Չինաստան	7	4
	Իսլանդիա	5	7
	Գերմանիա	2	5
	Շվեդիա	1	5
	Ավստրալիա	4	5
	Դանիա	1	3
	Նիդերլանդներ	2	5
SUS 6	Գործազրկության մակարդակը (միջին տարեկան), %-ով՝ տնտեսապես ակտիվ քնակչության նկատմամբ		
	Նորվեգիա	3	3
	Իռլանդիա	9	5
	Շվեյցարիա	5	5
	Հոնկոնգ SAR, Չինաստան	4	3
	Իսլանդիա	3	3
	Գերմանիա	5	3
	Շվեդիա	6	6
	Ավստրալիա	5	5
	Դանիա	6	5
	Նիդերլանդներ	6	3

Աղյուսակ 5.5-ի շարունակությունը

1	2	3	4
SUS 7	Տնտեսական հավելածր, %		
	Նորվեգիա	9	9
	Իռլանդիա	2	2
	Շվեյցարիա	9	9
	Հոնկոնգ SAR, Չինաստան	8	9
	Իսլանդիա	5	6
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	8
	Ավստրալիա	6	8
	Դանիա	9	8
	Նիդերլանդներ	9	8
SUS 8	Ներքին պետական պարտքը (ազգային արժույթով), %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		
	Նորվեգիա	-	-
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	9	8
	Հոնկոնգ SAR, Չինաստան	-	-
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	-	-
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	9	9
	Դանիա	-	-
	Նիդերլանդներ	-	-
SUS 9	Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, %		
	Նորվեգիա	9	9
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	-	-
	Հոնկոնգ SAR, Չինաստան	-	-
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	-	-
	Դանիա	9	9
	Նիդերլանդներ	9	9

Աղյուսակ 5.5-ի շարունակությունը

1	2	3	4
SUS 10	Գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %		
	Նորվեգիա	9	9
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	9	9
	Հունկոնգ SAR, Չինաստան	9	9
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	9	9
	Դանիա	9	9
	Նիդերլանդներ	9	9
SUS 11	Արդյունաբերական արտադրանքի մեջ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %		
	Նորվեգիա	9	9
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	9	9
	Հունկոնգ SAR, Չինաստան	9	9
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	9	9
	Դանիա	9	9
	Նիդերլանդներ	9	9
SUS 12	Արդյունաբերական արտադրանքի մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, %		
	Նորվեգիա	5	6
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	7	6
	Հունկոնգ SAR, Չինաստան	6	6
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	3	3
	Շվեդիա	5	5
	Ավստրալիա	9	9
	Դանիա	6	6
	Նիդերլանդներ	6	7

Աղյուսակ 5.5-ի շարունակությունը

1	2	3	4
SUS 13	Հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, %		
	Նորվեգիա	5	5
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	9	9
	Հոնկոնգ SAR, Չինաստան	9	9
	Իսլանդիա	8	8
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	6	6
	Ավստրալիա	9	9
	Դանիա	6	6
	Նիդերլանդներ	9	9
SUS 14	Կյանքի սպասվող տևողությունը՝ հաշվարկված ծննդից (տարի)		
	Նորվեգիա	8	8
	Իռլանդիա	8	8
	Շվեյցարիա	8	8
	Հոնկոնգ SAR, Չինաստան	8	8
	Իսլանդիա	8	8
	Գերմանիա	8	8
	Շվեդիա	8	8
	Ավստրալիա	8	8
	Դանիա	8	8
	Նիդերլանդներ	8	8
SUS 15	Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը՝ 100 հազար մարդու հաշվով)		
	Նորվեգիա	8	6
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	8	6
	Հոնկոնգ SAR, Չինաստան	7	5
	Իսլանդիա	5	9
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	9	9
	Դանիա	9	9
	Նիդերլանդներ	8	8

Աղյուսակ 5.5-ի շարունակությունը

1	2	3	4
SUS 16	Արտաքին պետական պարտքը (կառավարության և կենտրոնական բանկի) ՀՆԱ-ի նկատմամբ, %		
	Նորվեգիա	-	-
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	8	8
	Հոնկոնգ SAR, Չինաստան	-	-
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	-	-
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	9	9
	Դանիա	-	-
	Նիդերլանդներ	-	-
SUS 17	Բյուջեի պակասուրդը (հավելուրդ) ՀՆԱ-ի նկատմամբ, %		
	Նորվեգիա	1	1
	Իռլանդիա	8	2
	Շվեյցարիա	1	1
	Հոնկոնգ SAR, Չինաստան	1	1
	Իսլանդիա	1	5
	Գերմանիա	1	2
	Շվեդիա	1	1
	Ավստրալիա	5	5
	Դանիա	2	1
	Նիդերլանդներ	3	1
SUS 18	Դրամական գանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ, %		
	Նորվեգիա	8	8
	Իռլանդիա	-	-
	Շվեյցարիա	2	2
	Հոնկոնգ SAR, Չինաստան	1	1
	Իսլանդիա	7	6
	Գերմանիա	-	-
	Շվեդիա	6	7
	Ավստրալիա	5	3
	Դանիա	8	8
	Նիդերլանդներ		

Աղյուսակ 5.5-ի շարունակությունը

1	2	3	4
SUS 19	Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին, %		
	Նորվեգիա	8	8
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	9	9
	Հոնկոնգ SAR, Չինաստան	9	9
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	7	5
	Դանիա	9	9
	Նիդերլանդներ	9	9
SUS 20	Ներմուծման տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ, %		
	Նորվեգիա	9	9
	Իռլանդիա	9	9
	Շվեյցարիա	9	9
	Հոնկոնգ SAR, Չինաստան	-	-
	Իսլանդիա	9	9
	Գերմանիա	9	9
	Շվեդիա	9	9
	Ավստրալիա	-	-
	Դանիա	9	9
	Նիդերլանդներ	9	9

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

Աղյուսակ 5.6

Կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող առաջին 10 երկրների տնտեսական անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում, 2012-2016 թթ.

№	Երկրները	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակը								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Նորվեգիա ¹	5	5	-	2	2	-	2	-	2
2	Իռլանդիա ²	13	2	-	1	-	-	-	2	1
3	Շվեյցարիա ³	8	4	2	-	1	-	-	1	3
4	Հոնկոնգ SAR, Չինաստան ⁴	6	3	2	1	-	1	-	1	2
5	Իսլանդիա	9	3	1	1	3	-	1	1	1
6	Գերմանիա ⁵	10	2	-	-	1	-	1	2	1
7	Շվեդիա	10	2	-	4	1	-	-	1	2
8	Ավստրալիա ⁶	9	2	1	1	3	1	-	1	-
9	Դանիա ⁷	7	4	-	4	-	-	-	2	1
10	Նիդերլանդներ ⁸	8	3	-	3	-	-	1	2	-

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

Ծանոթություն

¹ Նորվեգիայի դեպքում բացակայում է 2 ցուցանիշ՝ SU3 8 և SU3 16:

² Իռլանդիայի դեպքում բացակայում է 1 ցուցանիշ՝ SU3 18:

³ Շվեյցարիայի դեպքում բացակայում է 1 ցուցանիշ՝ SU3 9:

⁴ Հոնկոնգի SAR, Չինաստանի դեպքում բացակայում է 4 ցուցանիշ՝ SU3 8, SU3 9, SU3 16, SU3 20:

⁵ Գերմանիայի դեպքում բացակայում է 3 ցուցանիշ՝ SU3 8, SU3 16 և SU3 18:

⁶ Ավստրալիայի դեպքում բացակայում է 2 ցուցանիշ՝ SU3 9 և SU3 20:

⁷ Դանիայի դեպքում բացակայում է 2 ցուցանիշ՝ SU3 8 և SU3 16:

⁸ Նիդերլանդների դեպքում բացակայում է 3 ցուցանիշ՝ SU3 8, SU3 16 և SU3 18:

Աղյուսակ 5.7

Կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող առաջին 10 երկրների անվտանգության ցուցանիշների բաշխումը վտանգվածության մատրիցի վանդակներում 2017-2022 թթ.

№	Երկրները	Տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցի վանդակը								
		9	8	7	6	5	4	3	2	1
1	Նորվեգիա ¹	5	5	-	2	3	-	1	-	2
2	Իռլանդիա ²	12	1	-	-	2	1	-	2	1
3	Շվեյցարիա ³	7	4	-	3	1	-	-	1	3
4	Հոնկոնգ SAR, Չինաստան ⁴	7	2	-	1	1	1	1	1	2
5	Իսլանդիա	9	3	1	3	1	1	1	-	1
6	Գերմանիա ⁵	10	2	-	-	1	-	2	2	-
7	Շվեդիա	9	3	1	2	2	-	-	1	1
8	Ավստրալիա ⁶	8	3	-	-	4	-	1	1	1
9	Դանիա ⁷	6	5	-	3	1	-	1	1	1
10	Նիդերլանդներ ⁸	7	4	1	1	1	-	1	1	1

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

Ծանոթություն

- ¹ Նորվեգիայի դեպքում բացակայում է 2 ցուցանիշ՝ SU3 8 և SU3 16:
- ² Իռլանդիայի դեպքում բացակայում է 1 ցուցանիշ՝ SU3 18:
- ³ Շվեյցարիայի դեպքում բացակայում է 1 ցուցանիշ՝ SU3 9:
- ⁴ Հոնկոնգի SAR, Չինաստանի դեպքում բացակայում է 4 ցուցանիշ՝ SU3 8, SU3 9, SU3 16, SU3 20:
- ⁵ Գերմանիայի դեպքում բացակայում է 3 ցուցանիշ՝ SU3 8, SU3 16 և SU3 18:
- ⁶ Ավստրալիայի դեպքում բացակայում է 2 ցուցանիշ՝ SU3 9 և SU3 20:
- ⁷ Դանիայի դեպքում բացակայում է 2 ցուցանիշ՝ SU3 8 և SU3 16:
- ⁸ Նիդերլանդների դեպքում բացակայում է 3 ցուցանիշ՝ SU3 8, SU3 16 և SU3 18:

Մատրից 5.1-5.5-ում ներկայացված են լավագույն կենսամակարդակ ունեցող երկրների համար կազմված մատրիցները՝ ուսումնասիրության վերջին ժամանակահատվածի (2017-2022 թթ.) համար (մատրիցների վանդակներն արտացոլված են աղյուսակ 5.5-ում):

Մատրից 5.1

Նորվեգիայի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ միջինացված տվյալների, 2017-2022 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 4, ՏԱՑ 12, ՏԱՑ 15	8 ՏԱՑ 2, ՏԱՑ 3, ՏԱՑ 14, ՏԱՑ 18, ՏԱՑ 19	9 ՏԱՑ 7, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 20
	Միջին, $0,33 < X < 0,66$	3 ՏԱՑ 6	5 ՏԱՑ 5, ՏԱՑ 13	7
	Փոքր, $< 0,33$	1 ՏԱՑ 1, ՏԱՑ 17	2	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 5.2

Շվեյցարիայի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ միջինացված տվյալների, 2017-2022 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 3, ՏԱՑ 12, ՏԱՑ 15	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 8, ՏԱՑ 14, ՏԱՑ 16	9 ՏԱՑ 2, ՏԱՑ 7, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 13, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5 ՏԱՑ 6	7
	Փոքր, $< 0,33$	1 ՏԱՑ 1, ՏԱՑ 5, ՏԱՑ 17	2 ՏԱՑ 18	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 5.3

Դանիայի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ միջինացված տվյալների, 2017-2022 թթ.

Առաջացման հավանականությունը

Մեծ, > 0,66	6 ՏԱՑ 4, ՏԱՑ 12, ՏԱՑ 13	8 ՏԱՑ 2, ՏԱՑ 3, ՏԱՑ 7, ՏԱՑ 14, ՏԱՑ 18	9 ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 15, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
Միջին, $0,33 < X < 0,66$	3 ՏԱՑ 5,	5 ՏԱՑ 6	7
Փոքր, < 0,33	1 ՏԱՑ 17	2 ՏԱՑ 1	4
	Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 5.4

Գերմանիայի տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ միջինացված տվյալների, 2017-2022 թթ.

Առաջացման հավանականությունը

Մեծ, > 0,66	6	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 14	9 ՏԱՑ 2, ՏԱՑ 3, ՏԱՑ 7, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 13, ՏԱՑ 15, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
Միջին, $0,33 < X < 0,66$	3 ՏԱՑ 6, ՏԱՑ 12	5 ՏԱՑ 5	7
Փոքր, < 0,33	1	2 ՏԱՑ 1, ՏԱՑ 17	4
	Փոքր	Միջին	Մեծ


Ազդեցության չափը

Մատրից 5.5


Նիդերլանդների տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցն ըստ միջինացված տվյալների, 2017-2022 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, > 0,66	6 SUS 4	8 SUS 2, SUS 7, SUS 14, SUS 15	9 SUS 3, SUS 9, SUS 10, SUS 11, SUS 13, SUS 19, SUS 20
	Միջին, $0,33 < X < 0,66$	3 SUS 6	5 SUS 5	7 SUS 12
	Փոքր, < 0,33	1 SUS 17	2 SUS 1	4
		Փոքր	Միջին	Մեծ
		<i>Ազդեցության չափը</i>		

Գնահատենք նաև տնտեսական անվտանգության լավագույն վիճակ ունեցող, այսինքն՝ մատրիցի 1-ին, 2-րդ և 3-րդ վանդակներում ամենաշատ ցուցանիշներով երկրները: Հեշտ է նկատել, որ 2012-2016 թթ. ժամանակահատվածում 4-ական «միավոր» ունեն Շվեյցարիան, Հոնկոնգը և Գերմանիան: Գրեթե նույն օրինաչափությունն է նկատվում 2012-2017 թթ.-ին: Գծապատկեր 5.3-ում արտացոլված են Հայաստանի, Հարավային Կովկասի երեք հանրապետությունների, ԵԱՏՄ երկրների, ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն արդյունք ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության մակարդակի միջին ցուցանիշները 2012-2016 և 2017-2022 թվականներին, իսկ գծապատկեր 5.4-ում՝ Հայաստանի, հարավկովկասյան երեք երկրների (2020-2022 թթ.) և ԵԱՏՄ երկրների տնտեսական անվտանգության մակարդակի միջին ցուցանիշները 2013-2022 թթ.-ին:



Գծապատկեր 5.3. Հայաստանի, հարավկովկասյան երեք երկրների, ԵԱՏՄ երկրների, ՄԱԿ-ի կողմից ճանաչված՝ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության մակարդակի միջին ցուցանիշները, 2012-2016 և 2017-2022 թթ.



Գծապատկեր 5.4. Հայաստանի, հարավկովկասյան երեք երկրների (2020-2022 թթ.), ԵԱՏՄ երկրների տնտեսական անվտանգության մակարդակի միջին ցուցանիշները, 2013-2022 թթ.

Գծապատկեր 5.3-ից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրված բոլոր երկրներում և դրանց խմբերում տնտեսական անվտանգության մակարդակը դրսևորել է հստակ վարքագիծ, այն է՝ թեև դանդաղ-

րեն, սակայն ունեցել է աճման միտում, այսինքն՝ նկատվել է վիճակի բարելավում: Ակնհայտ է նաև, որ կենսամակարդակի լավագույն ցուցանիշներ ունեցող 10 երկրներում տնտեսական անվտանգության մակարդակը նկատելիորեն ավելի բարձր է, քան մյուս երկրներում: Այս հանգամանքը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ վկայում է տնտեսական անվտանգության գնահատման ընտրված մեթոդաբանության հիմնավորվածության և ճշգրտության մասին: Իսկ ինչ վերաբերում է գծապատկեր 5.4-ում ներկայացված գծերին, ապա երևում է, որ, ըստ առանձին տարիների, տնտեսական անվտանգության մակարդակն էականորեն նվազել է Հարավային Կովկասի, ինչպես նաև ԵԱՏՄ երկրներում: Հայաստանի ցուցանիշների փոփոխությունն էական չի եղել և, դրանով հանդերձ, ինչպես Հարավային Կովկասի, այնպես էլ ԵԱՏՄ երկրների համեմատությամբ էականորեն ավելի բարձր է եղել:

Աղյուսակ 5.8

Լավագույն 10 երկրներն ըստ մարդու ազատության համաթվի, 2020-2021 թթ.

Տեղը	Տեղի փոփոխությունը 2020-2021	Երկիրը	Անհատական ազատությունը	Տնտեսական ազատությունը	Մարդու ազատությունը	Համաթվի փոփոխությունը 2020-2021
1	0	Շվեյցարիա	9.39	8.47	9.01	Δ 0.05
2	0	Նոր Զելանդիա	9.20	8.43	8.88	▽ 0.05
3	0	Դանիա	9.35	8.10	8.83	Δ 0.02
4	Δ 1	Իռլանդիա	9.27	8.11	8.79	Δ 0.06
5	▽ 1	Էստոնիա	9.32	7.95	8.75	▽ 0.02
6	Δ 2	Շվեդիա	9.43	7.81	8.75	Δ 0.05
7	▽ 1	Իսլանդիա	9.31	7.93	8.73	Δ 0.02
8	Δ 1	Լյուքսեմբուրգ	9.29	7.91	8.71	Δ 0.05
9	▽ 2	Ֆինլանդիա	9.33	7.81	8.70	0.00
10	0	Նորվեգիա	9.23	7.67	8.58	▽ 0.01

Աղբյուրը՝ *The Human Freedom Index 2023: A Global Measurement of Personal, Civil and Economic Freedom*. <https://www.cato.org/sites/cato.org/files/2023-12/human-freedom-index-2023-full-revised.pdf>, p. 6.

Աղյուսակ 5.8-ում ներկայացված են մարդու ազատության համաթվով լավագույն 10 երկրները 2020-2021 թթ.-ին: Մարդու ազատության ամփոփ համաթիվը բաղկացած է երկու բաղադրիչից՝ անհատական ազատություն և տնտեսական ազատություն: Հատկանշական է, որ 2020-2021 թթ.-ին մարդու ազատության համաթիվ մեծությունն աճել է Շվեյցարիայում, Դանիայում, Իսլանդիայում, Իռլանդիայում և Լյուքսեմբուրգում: Ֆինլանդիայում դա մնացել է անփոփոխ, իսկ մնացած երկրներում՝ նվազել:

Եթե համեմատելու լինենք վերը բերված երեք աղյուսակների կազմը, ապա հեշտությամբ կնկատենք, որ ամենաբարձր կենսամակարդակ և մարդու ազատության լավագույն համաթիվ ունեցող 10 երկրների ցանկում 6 երկիր՝ Շվեյցարիա, Դանիա, Իռլանդիա, Շվեդիա, Իսլանդիա և Նորվեգիա, կրկնվում է: Ուստի կարող ենք արձանագրել, որ նշված երկրների ցանկերի միջև կոռելյացիայի գործակիցը 0.6 է, ինչը վկայում է բավական ամուր և էական փոխառնչությունների մասին: Նկատենք նաև, որ 2023 թ.-ին հրապարակված՝ մարդու ազատության մասին զեկույցում լավագույն 42 երկրների շարքում ընդգրկված են նաև նախկին Խորհրդային Միության երկրներից Էստոնիան (վարկանշային աղյուսակի 5-րդ տեղում), Լատվիան (15-րդ տեղում), Լիտվան (17-րդում, Միացյալ Թագավորության և ԱՄՆ-ի հետ՝ նույն հորիզոնականում), իսկ Հայաստանը զբաղեցրել է 33-րդ, Վրաստանը՝ 42-րդ, Ադրբեջանը՝ 126-րդ տեղը¹¹⁴:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ տնտեսական անվտանգության մակարդակի, բարձր արտադրողականությամբ աշխատանքի, բարձր կենսամակարդակի և մարդու ազատության միջև կապը բավականաչափ ընդգծված է, և ուսումնասիրված երկրների ու դրանց տարբեր խմբերի միջև դա կազմում է առնվազն 0.6: Այլ կերպ ասած, այդ ցուցանիշների միջև գոյություն ունի առնվազն 60%-անոց հարաբերակցություն:

¹¹⁴ The Human Freedom Index 2023: A Global Measurement of Personal, Civil and Economic Freedom. <https://www.cato.org/sites/cato.org/files/2023-12/human-freedom-index-2023-full-revised.pdf> , p. 5-7.

Ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Աշխարհի երկրների դասակարգումն ըստ բնակչության կենսամակարդակի:
2. Աշխարհի երկրների դասակարգումն ըստ մեկ ժամվա ընթացքում արտադրված առավելագույն ՀՆԱ-ի:
3. Ներկայացրե՛ք երկրների լավագույն տասնյակն ըստ բնակչության կենսամակարդակի: Նշե՛ք դասակարգման մեթոդաբանությունը:
4. Ներկայացրե՛ք երկրների լավագույն տասնյակն ըստ առավելագույն ՀՆԱ-ի: Նշե՛ք դասակարգման մեթոդաբանությունը:
5. Ներկայացրե՛ք երկրների լավագույն տասնյակն ըստ մարդու ազատության համաթվի: Նշե՛ք դասակարգման մեթոդաբանությունը:
6. Ներկայացրե՛ք ըստ տարբեր դասակարգումների լավագույնը ճանաչված երկրների տնտեսությունների առանձնահատկությունները:
7. Քննարկե՛ք ըստ տարբեր դասակարգումների լավագույնը ճանաչված երկրների տնտեսական անվտանգության արդյունքները:
8. Ներկայացրե՛ք ըստ տարբեր դասակարգումների լավագույնը ճանաչված երկրների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման նմանություններն ու տարբերությունները:
9. Դիտարկե՛ք անցման շրջանի տնտեսությամբ և լավագույնը ճանաչված երկրների տնտեսական անվտանգության առանձնահատկությունները:
10. Նշե՛ք տնտեսական անվտանգության գնահատման այն ցուցանիշները, որոնք լավագույնն են համարվել ինչպես անցման շրջանի տնտեսությամբ, այնպես էլ բարձր կենսամակարդակ ունեցող երկրների համար:
11. Նշե՛ք տնտեսական անվտանգության գնահատման այն ցուցանիշները, որոնք վատագույնն են համարվել ինչպես անցման շրջանի տնտեսությամբ, այնպես էլ բարձր կենսամակարդակ ունեցող երկրների համար:
12. Արդյո՞ք դիտարկվում է ցուցանիշների կամ երևույթների փոխկախվածություն ըստ տարբեր դասակարգումների ուսումնասիրված երկրների միջև, և եթե այո, ապա ինչպիսի՞ն է այդ կապը:

Առաջարկվող գրականություն և տեղեկատվական շտեմարաններ

1. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մերթ-դաբանություն և արդյունքներ., Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2005, 250 էջ:
2. Մարկոսյան Ա., Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, 460 էջ:
3. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը, Եր., «Անտարես» հրատ., 2020, 628 էջ:
4. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. պետության և շուկայի նոր մարտահրավերները, Եր., «Անտարես» հրատ., 2019, 556 էջ:
5. Մարկոսյան Ա., Խաչատրյան Վ., Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման արդյունքները, «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտա-ժողովի նյութեր, Եր., 8-9 հոկտեմբերի, 2019, էջ 71-85:
6. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 3, 2004:
7. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության բարելավման ուղիները, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 4 (6), 2004:
8. The Human Freedom Index 2023: A Global Measurement of Personal, Civil and Economic Freedom. <https://www.cato.org/sites/cato.org/files/2023-12/human-freedom-index-2023-full-revised.pdf>
9. <https://www.theglobaleconomy.com/compare-countries/>
10. <https://iworld.com/ru/blog/ranking-countries-standard-living>,
11. Productivity, current USD by country, around the world | TheGlobalEconomy.com
12. <https://www.theglobaleconomy.com/compare-countries/>

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսության համաշխարհայնացումն ու միասնացումը, ինչպես նաև նմանօրինակ տնտեսությանը ներդաշնակվելու պահանջները նոր մարտահրավերներ են առաջադրում հատկապես զարգացող և նախկին համայնավարական երկրների կառավարություններին՝ դիմակայելու և մրցակցելու տնտեսապես հզոր պետությունների կցորդ դառնալու և «կուլ չգնալու» վտանգին: Նման պայմաններում ազգային անվտանգության ապահովման խնդիրը մեծապես կախված է երկրի տնտեսության զարգացածության աստիճանից և սոցիալ-տնտեսական քաղաքականության հաջողություններից:

Խորհրդային կայսրության կազմալուծումից հետո նորանկախ պետությունները պետք է ինքնուրույնաբար լուծեին տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, ինչն անցման և լայնածավալ կառուցվածքային վերափոխումների ժամանակահատվածում մղվեց երկրորդ պլան: Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովման խնդիրը դեռևս կարիք ունի գիտական հիմնավորման՝ դառնալով հետազոտողների և մասնագետների ուսումնասիրության առարկան: Ըստ որում, տվյալ խնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները պետք է պարունակեն տարածաշրջանային, գիտատեխնիկական, սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ տեսանկյուններ:

Իսկ որո՞նք են պետության տնտեսական անվտանգության ռազմավարության հիմնադրույթները, ի՞նչ կառուցակարգերով է դա ապահովվելու, ինչպե՞ս են հաշվի առնվելու երկրի տնտեսական շահերը տարածաշրջանում և համաշխարհային տնտեսության հարափոփոխ պայմաններում, ի՞նչ հանգամանքների պարագայում է հնարավոր ձեռք բերել տնտեսական անվտանգության բարձր մակարդակ, և այդ հարցում ի՞նչ փորձ ունեն տնտեսական անվտանգության բարձր մակարդակ ունեցող երկրները:

Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհում ավելի ու ավելի շատ միջոցներ են հատկացվում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին անվտանգության պահպանման և ամրապնդման գործին: Ըստ որում, այդ երևույթը նկատվում է գրեթե բոլոր մայրցամաքներում և պետություններում: Պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության բաղկացուցիչների բարելավման հնարավորությունները, առաջին հերթին, կախված են տնտեսական անվտանգության հնարավորություններից և ներուժից:

Աշխարհաքաղաքական նոր վերափոխումների շեմին հատկապես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների համար կարևոր են դառնում ազգային և հատկապես տնտեսական անվտանգության հիմնախնդիրների ու մասնավորապես՝ դրանց գնահատման և չափման տնտեսագիտական ուսումնասիրությունները: Ընդ որում, գնահատվում են ինչպես տնտեսության անվտանգության գործընթացում տեղ գտած ձեռքբերումները, այնպես էլ բացթողումներն ու թերությունները: Աշխատության նպատակն է պետության, պետությունների խմբի, տնտեսական միությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանության մշակումը, դրա հիման վրա վերը նշված սուբյեկտների տնտեսական անվտանգության գնահատումն ինչպես ըստ առանձին տարիների, այնպես էլ՝ ըստ ավելի երկարատև ժամանակահատվածների: Կարևորվել են նաև ՀՀ տնտեսական քաղաքականության գերակա և առաջնահերթ ուղղությունները, շարունակականությունը և հետևողականությունը, կապը ՀՀ կառավարության տարբեր տարիների ծրագրերի հետ: Հետագոտությամբ բացահայտվել է նման կապի բացակայությունը (շատ հաճախ), ինչը հատկապես երկարատև ժամանակահատվածի կտրվածքով թուլացնում է տնտեսական քաղաքականության արդյունավետությունը:

Ավելին, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գերակա և առաջնահերթ ուղղությունները սահմանված չեն ըստ միասնական տեսական-մեթոդաբանական հիմքի, սահմանված չեն նաև այդ ուղղու-

թյունների ձևավորման սկզբունքները, ինչն էլ սուբյեկտիվ է դարձնում ոչ միայն սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը, այլև դրանց հիման վրա կառուցվող քաղաքականությունը: Այդ պատճառով առաջարկվում է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման հիմքում դնել երկրի տնտեսական անվտանգության վիճակն ու սպառնալիքները, ինչպես նաև անվտանգության բարելավման ուղիները: Հարկ է ընդգծել, որ տնտեսական անվտանգության գնահատման առաջարկվող մեթոդաբանությունը կարող է կիրառվել նաև ազգային անվտանգության մակարդակի գնահատման համար: Տնտեսական անվտանգության գնահատման մշակված մեթոդաբանության համաձայն՝ ընտրվել են 20 կարևորագույն մակրոտնտեսական ցուցանիշներ, որոնք պայմանավորում են Հայաստանի Հանրապետության, ԵԱՏՄ, Հարավային Կովկասի հանրապետությունների և կյանքի որակի լավագույն մակարդակ ունեցող 10 երկրների տնտեսական անվտանգության մակարդակը: Այդ նպատակով տնտեսական անվտանգության մակարդակը որոշվել է ինչպես բալային գնահատումների, այնպես էլ մատրիցների կազմման միջոցով: Կատարված վերլուծության արդյունքում բացահայտվել են տնտեսական անվտանգության հիմնական սպառնալիքները, ընդգծվել դրանց չեզոքացման կարևորությունը: Հայաստանի Հանրապետությունում վարչահրամայական տնտեսությունից անցումը ազատ շուկայականի ուղեկցվել է քաղաքական, տնտեսական, սոցիալական բազմաթիվ դժվարություններով: Անցած շուրջ երեք տասնամյակի ընթացքում մեր երկիրը գտնվելով հատկապես աշխարհաքաղաքական բարդագույն միջավայրում՝ թեև մեծ դժվարությամբ, սակայն կարողացել է փոքր տեմպերով բարելավել իր տնտեսական անվտանգության մակարդակը:

Հեղինակների կարծիքով յուրաքանչյուր պետության կենսունակության և գոյության հիմքը եղել ու շարունակում է մնալ ազգային անվտանգությունը, որի հիմնական բաղադրիչներից է տնտեսական անվտանգությունը: Ըստ որում, կախված ժամանակի և միջավայրի փոփոխությունից, տնտեսական անվտանգության բաղադրիչները

կարող են փոփոխվել՝ էականից վերածվելով ոչ էականի, և ընդհակառակը:

Բազմաթիվ հեղինակների ուսումնասիրություններում ընդգծվել են տնտեսական անվտանգության կարևորությունը տնտեսությունների կայունության ու արդյունավետության բարձրացման գործում, արտաքին ցնցումների ազդեցությունը զարգացող երկրներում տնտեսական առաջընթաց ապահովող գործոնների վրա:

Հարկ է նշել, որ միջազգային տնտեսական անվտանգության համընդհանուր հայեցակարգի ձևակերպումը պարունակում է որոշակի դժվարություններ, քանի որ տարբեր մասնագետներ տարբեր կերպ են ընկալում և մեկնաբանում համընդհանուր (միջազգային) անվտանգության էությունը: Զարգացած արդյունաբերական երկրների փորձագետներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ոչ թե երկրների միջև եղած նմանությունների, այլ տարբերությունների բացահայտմանը: Խնդիրը նաև այն է, որ ամեն մի արտաքին ազդեցություն՝ նույնիսկ ընդգծված բացասական բնույթի, չի կարող որակվել որպես երկրի անվտանգության սպառնալիք: Դա կախված է տնտեսության չափից ու զարգացման մակարդակից, ազգային տնտեսության դիվերսիֆիկացման, ինչպես նաև այդ ազդեցությունը չեզոքացնելու պատրաստակամության աստիճանից և այլն: Էական է նաև այն հանգամանքը, թե ինչպիսին է ազգային տնտեսության վիճակը սպառնալիքի առաջացման պահին:

Միջազգային տնտեսական անվտանգության խնդիրների վերաբերյալ բազմաբնույթ կարծիքների առկայությունը բացատրվում է երկրների պատմական զարգացման, երկրների ու տնտեսական միավորումների շահերի տարբերություններով, անվտանգության ապահովման գործում կառավարության միջամտության չափով և կառավարության ու շուկայական ուժերի համադրության անհրաժեշտությամբ և այլն:

Մեկ այլ մոտեցմամբ՝ միջազգային տնտեսական անվտանգության հայեցակարգի առարկա են համարվում ոչ թե պատահականորեն

առաջացող, այլ երկրի տնտեսության համար միտումնավոր ստեղծված սպառնալիքները: Իսկ որպես անվտանգության խաթարման մեթոդներ՝ առանձնացվում են միջազգային առևտրի ընդհանուր կանոնների խախտումը, ապրանքների ու ծառայությունների ներմուծման և արտահանման սահմանափակումների կիրառումը, երկրի արժույթի միտումնավոր արժեզրկումը, միջազգային տրանսպորտային հաղորդակցության ուղիների սահմանափակումը, կապիտալի միջազգային միգրացիայի և ներդրումային հոսքերի արգելափակումը, տեխնոլոգիաների փոխանցման ու գիտատեխնիկական փոխանակման համար խոչընդոտների ստեղծումը, բարձր որակավորում ունեցող աշխատուժի արտահոսքի կազմակերպումը և այլն:

Նշենք նաև, որ այդ գործիքները լայնորեն կիրառվում են ներկայիս աշխարհաքաղաքական փոփոխությունների, երկրների միջև ընթացող սառը, առևտրային և իրական պատերազմների (ռուս-ուկրաինական, իսրայելա-պաղեստինյան, ԱՄՆ-Չինաստան տնտեսական պատերազմի և այլն) ընթացքում:

Պետության, պետությունների խմբի և տնտեսական միությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը

Պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման համար կարևորագույն գործիքներ են տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի կազմավորումը և այդ ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշումը: Սահմանային (շեմային) արժեքները քանակական պարամետրեր են, որոնց միջոցով հնարավոր է դառնում տնտեսության որոշակի ոլորտներում ձևավորված դրության խոցելիության և սպառնալիքի չափի գնահատումը՝ տնտեսական անվտանգության տեսանկյունից: Այլ կերպ ասած, տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշմամբ պետության տնտեսական շահերին տրվում է քանակական որոշակիություն:

Կարևոր է նշել, որ տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը և այդ ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքները տարբեր երկրների համար տարբեր են՝ պայմանավորված ազգային շահի և դրա իրացման ուղիների տարբերությամբ, ինչը հստակորեն երևում է տնտեսական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող երկրների մասնագետների համապատասխան սահմանումներից:

Քալային գնահատականների մեթոդի կիրառմամբ տնտեսական անվտանգության գնահատումը

Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշների գնահատականները, որպես կանոն, տատանվում են 0-1 միջակայքում՝ կախված շեմային մեծությունից շեղվելու չափից: Ասվածը պատկերավոր կերպով ներկայացնելու համար բերենք հետևյալ օրինակը: Ենթադրենք՝ գնաճի մակարդակի շեմային մեծությունը որոշվել է տարեկան 5-6%: Դա նշանակում է, որ եթե տվյալ տնտեսությունում բավարարվում է այդ չափանիշը, ապա դա կարելի է գնահատել մեկ բալով (միավորով): Գնաճի մակարդակի բարձրացման հետ մեկտեղ, համամասնորեն կնվազի նաև գնահատականը՝ մինչև 0, ինչը նշանակում է, որ գնաճի մակարդակը հասել է անկառավարելի չափերի:

Որպես տնտեսական անվտանգությունը բնորոշող գլխավոր հատկանիշ՝ ընդունենք իրական և հավանական (պոտենցիալ) սպառնալիքների հարաբերական գնահատականը: Դա ներկայացնում է տվյալ տնտեսությունը բնութագրող տնտեսական անվտանգության ցուցանիշների գնահատականների կշռված միջինը, որն էլ ընդունվում է իբրև գլխավոր հատկանիշ: Պարզ է, որ դա նույնպես տատանվում է 0-1 միջակայքում:

Ելնելով վերը նշված սկզբունքից՝ երկիրը(ները) կամ դրանց խմբերը, տնտեսական անվտանգության տեսանկյունից, ըստ գլխավոր հատկանիշի, կարող են դասակարգվել որպես բացարձակ ան-

վտանգ, երբ գլխավոր հատկանիշը հավասար է 1-ի, անվտանգ՝ 0.7-0.9-ի, բավարար անվտանգ՝ 0.5-0.6-ի և վտանգավոր՝ 0-0.4-ի:

Նկարագրված բալային համակարգի միջոցով գնահատվել է 1995-2022 թթ. Հայաստանի Հանրապետության, Հարավային Կովկասի երեք հանրապետությունների, 2012-2022 թթ.՝ ԵԱՏՄ երկրների, ինչպես նաև 2012-2022 թթ.՝ կյանքի որակի բարձր մակարդակ ունեցող 10 երկրի տնտեսական անվտանգության մակարդակն ըստ ընտրված 20 մակրոտնտեսական ցուցանիշների և ընդհանրացված ամփոփ ցուցանիշի:

Հարկ է նշել, որ բոլոր ցուցանիշների շեմային մեծությունները հաշվարկվել են՝ ելնելով միջազգային փորձից: Յուրաքանչյուր ցուցանիշի փաստացի մեծության շեղվածությունը շեմայինից որոշվել է հետևյալ ձևով. տվյալ տարվա փաստացի ցուցանիշը / տվյալ ցուցանիշի շեմային մեծությունը) X 100 – 100: Ընդ որում, եթե շեղվածության չափը մեծ է եղել 100%-ից, ապա տվյալ ցուցանիշին տրվել է 0 միավոր: Շեղվածության չափը 0-ից 100% տատանվելու ժամանակ շեմային մեծությունից յուրաքանչյուր 10 տոկոս շեղվածության համար բալային գնահատականը նվազեցվել է 0.1-ով: Բալային գնահատականները միջինացնելու արդյունքում որոշվել է տնտեսական անվտանգության համաթիվը (կամ գլխավոր հատկանիշը) յուրաքանչյուր տարվա համար: Համաձայն ստացված արդյունքների՝ 1995-2022 թթ. ժամանակահատվածում Հայաստանը տնտեսական անվտանգության որոշակի ցուցանիշներ բարելավել է:

Մատրիցի կազմման մեթոդի կիրառմամբ

տնտեսական անվտանգության գնահատումը

Առաջարկվող մեթոդի համաձայն՝ տնտեսական անվտանգության ցուցանիշները դասակարգվել են ըստ հետևյալ չորս չափանիշի՝ (1) ցուցանիշի միջոցով բնութագրվող վտանգի առաջացման հավանականություն, (2) դրա ազդեցության չափ, (3) տևողություն և (4) անցանկալի դրսևորումների փոփոխման արագություն:

Մատրիցի օգտագործումը բարձրացնում է տնտեսական անվտանգության ցուցանիշների գնահատման համակարգի և կառավարման արդյունավետությունը՝ օգնելով ավելի ճշգրիտ կերպով որոշել տնտեսության վտանգվածության աստիճանն ըստ որոշակի ցուցանիշի: Արդյունքում դա նպաստում է ռեսուրսների արդյունավետ կառավարմանը՝ հնարավորություն ընձեռելով գնահատելու ոլորտը կարգավորող կառույցների աշխատանքը և կողմնորոշիչ դեր ունենալու զարգացման հետագա քաղաքականության մշակման հարցում: Այս մեթոդը, միաժամանակ, օգտակար է տնտեսական անվտանգության ցուցանիշների ամբողջական վերլուծության տեսանկյունից, քանի որ ապահովում է տարբեր ցուցանիշների միջև բազմակողմանի փոխադարձ կապի ուսումնասիրության հնարավորություն, այսինքն՝ պարզում է, թե որևէ ցուցանիշի փոփոխությունն ինչպես է տեղի ունեցել և ինչպես կազդի մյուս ցուցանիշների վրա:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների ազդեցության չափը գնահատելու համար վերլուծության արդյունքում ընդունել ենք հետևյալ արժեքները. ազդեցությունը գնահատվում է փոքր, եթե միջին արժեք / սահմանային արժեք հարաբերությունը 0.66-ից 1-ի, միջին՝ եթե 1-ից 3-ի միջակայքում է, և մեծ, եթե 3-ից ավելի է:

Թեև մատրիցի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ երկրի տնտեսական անվտանգության ապահովումը տեղի կունենա առավելագույն թվով ցուցանիշների՝ առաջին վանդակում տեղ գտնելու դեպքում, ցուցանիշների շարժը դեպի նպատակակետ տեղի կունենա ոչ ամենակարճ ճանապարհով՝ 9 ... 5 ... 1 վանդակների հերթականությամբ: Ըստ էության, ցուցանիշները հնարավոր է բարելավել բազմաթիվ տարբերակներով:

Մատրիցը կիրառելի է տնտեսական անվտանգության այն բոլոր ցուցանիշների համար, որոնք ընտրել են հեղինակները: Գործնական կիրառության ընթացքում դա թույլ է տալիս գնահատել յուրաքանչյուր ցուցանիշի փաստացի վիճակը, բնութագրել տարբեր ցուցանիշների

միջև փոխադարձ կապը, ինչպես նաև նպաստում է ցուցանիշների ծրագրավորված և համակարգված բարելավմանը:

Մատրիցի միջոցով գնահատման կարգը հիմնվում է նախկինում տեղի ունեցած զարգացումների վերլուծության, ցուցանիշների փաստացի մակարդակների ձեռքբերման վրա ազդող գործոնների ուսումնասիրության, գործող տնտեսական կառուցակարգերի և ձևավորված պայմանների համալիր դիտարկման վրա:

Այսպես, օրինակ, առաջին, հինգերորդ և իններորդ վանդակներում ներառվող ցուցանիշներին ներկայացվող պահանջները հետևյալն են.

- ✓ առաջին վանդակում ներառվող տնտեսական անվտանգության ցուցանիշները պետք է երկարաժամկետ հատվածում դրսևորեն որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռու՝ անվտանգ գոտում գտնվող մակարդակ, որը լիովին համապատասխանում է երկրի կամ առանձին խումբ պետությունների տնտեսական շահերին,
- ✓ հինգերորդ վանդակում պետք է ներառվեն տեղի ունենալու հավանականությամբ և ազդեցության չափով միջին ցուցանիշները: Սրանց վարքագիծը կայուն է՝ գտնվելով որոշված սահմանային արժեքի շրջակայքում,
- ✓ իններորդ վանդակում տեղ գտած ցուցանիշները տնտեսական անվտանգության սպառնալիքներն են: Դրանք երկարաժամկետ հատվածում շեղված են որոշված սահմանային արժեքներից և իրենց ազդեցության չափով և վտանգի առաջացման հավանականությամբ տնտեսական անվտանգության սպառնալիքներ են: Այստեղ խաչվում են խոցելիության առավելագույն աստիճանը և սպառնալիքի իրականացման մեծ հավանականությունը, հետևաբար՝ տնտեսական շահերի իրացումը մեծապես վտանգված է:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների միջին արժեքների հաշվարկի արդյունքում դրանց մի մասն ակնհայտորեն ընդգրկվել է

անվտանգության գոտում՝ հայտնվելով սահմանային արժեքից ավելի լավ վիճակում: Այդ ցուցանիշների համար չի հաշվարկվել «միջին արժեք/սահմանային արժեք» հարաբերակցությունը, և դրանք ավտոմատ կերպով տեղափոխվել են մատրիցի ամենաանվտանգ՝ առաջին վանդակ:

Ոսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում 1995-2022 թթ. բարելավվել են միջին ամսական անվանական աշխատավարձը (արտահայտված ԱՄՆ դոլարով) կամ ՏԱՑ 3-ը (ՏԱՑ՝ տնտեսական անվտանգության ցուցանիշ), գնաճի միջին մակարդակը (ՏԱՑ 4), տնտեսական հավելածը (ՏԱՑ 7), պետական բյուջեի պակասուրդը (ՏԱՑ 17), դրամական զանգվածը ՀՆԱ-ի նկատմամբ (ՏԱՑ 18), ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին (ՏԱՑ 19), ինչպես նաև վերջնական սպառման մեջ ներմուծված տեսակարար կշիռը (ՏԱՑ 20) բնութագրող ցուցանիշները: ՀՀ-ում տնտեսական անվտանգության մյուս ցուցանիշները հիմնականում մնացել են անփոփոխ կամ հայտնվել ավելի վտանգավոր գոտում (աղյուսակ 1): Մասնավորապես՝ մտահոգիչ է գործազրկության մակարդակի (%-ով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ) (ՏԱՑ 6), հանցագործությունների մակարդակի (ՏԱՑ 15) ցուցանիշների վատթարացումը՝ որպես հասարակության վիճակի բարոմետր:

Դասակարգման արդյունքում հնարավոր է դառնում ցուցանիշների տեղավորումը տնտեսական անվտանգության վտանգվածության աստիճանը բնութագրող ընդհանրական մատրիցում: Մատրիցը հնարավորություն է տալիս որոշելու տնտեսական անվտանգության այն սպառնալիքները, որոնք իրենց ազդեցության չափով և առաջացման հավանականությամբ այն աստիճանի են հասել, որ արդեն շտապ միջոցառումներ են պահանջում դրության բարելավման համար:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները մատրիցների կազմման միջոցով և դրանց դասակարգումն ըստ վտանգվածության աստիճանի, 1995-2022 թթ.

<i>Տնտեսական անվտանգության ցուցանիշի անվանումը</i>	<i>Պայմանական նշանը</i>	<i>Ժամանակահատվածը</i>				
		<i>1995-2000</i>	<i>2001-2006</i>	<i>2007-2011</i>	<i>2012-2016</i>	<i>2017-2022</i>
		<i>Մատրիցի վանդակի համարը</i>				
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	SUS 1	9	9	9	9	9
Ջինիի գործակիցը (եկամուտների կենտրոնացման գործակիցը)	SUS 2	9	9	9	9	9
Միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլար	SUS 3	9	9	8	8	6
Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	SUS 4	8	8	8	8	8
Գնաճի միջին մակարդակը, %	SUS 5	9	4	7	3	4
Գործազրկության մակարդակը (միջին տարեկան), %-ով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ	SUS 6	8	7	9	9	9
Տնտեսական հավելաճը, %	SUS 7	4	1	6	5	4
Ներքին պետական պարտքը (ազգային արժույթով), %-ով՝ ՀՆԱ նկատմամբ	SUS 8	1	1	2	3	6
Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, %	SUS 9	9	9	9	9	9
Գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	SUS 10	8	9	9	9	9
Արդյունաբերական արտադրանքում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %	SUS 11	8	8	9	8	8
Արդյունաբերական արտադրանքում մեքենաշինության տեսակարար կշիռը, %	SUS 12	9	9	9	9	9
Հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 13	9	7	8	9	9
Կյանքի սպասվող տևողությունը՝ հաշվարկված ծննդից (տարի)	SUS 14	6	6	6	6	6

Աղյուսակ 1-ի շարունակությունը

Տնտեսական անվտանգության ցուցանիշի անվանումը	Պայմանական նշանը	Ժամանակահատվածը				
		1995-2000	2001-2006	2007-2011	2012-2016	2017-2022
		Մատրիցի վանդակի համարը				
Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը՝ 100 հազար մարդու հաշվով)	SUS 15	7	7	8	9	9
Արտաքին պետական պարտքը (կառավարության և կենտրոնական բանկի) ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 16	9	9	9	9	9
Բյուջեի պակասուրդը (հավելուրդը) ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 17	9	3	6	7	7
Դրամական զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ, %	SUS 18	9	9	9	8	7
Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	SUS 19	8	8	7	7	7
Ներմուծման տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ, %	SUS 20	8	8	7	7	7

Տնտեսական անվտանգության գնահատման առաջարկվող մեթոդաբանությունը (որը երկու, ըստ էության, միմյանց լրացնող մեթոդների համակցություն է), ի տարբերություն գնահատման մյուս համակարգերի կամ մոտեցումների, ունի հետևյալ առավելությունները.

- գնահատման համար անհրաժեշտ տվյալների բազան գործող վիճակագրական տվյալներն են, այսինքն՝ դրանք հիմնվում են ինչպես միջազգային, այնպես էլ հայրենական (մասնավորապես՝ վիճակագրական պետական կոմիտեի) պաշտոնական վիճակագրության տվյալների վրա: Իսկ եթե հաշվարկվում են որոշակի ցուցանիշներ, ապա դրանց հաշվարկման հիմքում նորից պաշտոնական կամ պետական վիճակագրական բազաներն են,
- օգտագործվող վիճակագրական տվյալները հրապարակային են և մատչելի (հասանելի) հրապարակված բաց աղբյուրներից, այդ թվում նաև էլեկտրոնային ռեսուրսներից: Այլ կերպ ասած, օգտագործվող թվական տվյալները ոչ միայն հրապարակային են, այլև հուսալի և վստահելի,

- դրական պետք է համարել նաև այն, որ թվային տվյալների բազաները պատրաստվել, իսկ տնտեսական անվտանգության աստիճանը գնահատվել է համակարգչային ծրագրի միջոցով կամ այդ հաշվարկները կարող են արտահայտվել օրինաչափության կամ բանաձևման օգնությամբ, ինչը զգալիորեն հեշտացնում և արագացնում է թվային բազաների հետ կատարվող հաշվարկման աշխատանքը,
- մեթոդաբանության մեջ օգտագործվող ցուցանիշների քանակը երկու տասնյակ է՝ ընդգրկելով հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական կողմերն ու միտումները: Սակայն, կախված ուսումնասիրության նպատակից և առաջարկվող խնդիրներից, դա կարող է ոչ միայն ավելանալ, այլև պակասել (այս դեպքում ընդգրկված ցուցանիշների քանակը պետք է բավարարի առաջադրված նպատակին լիարժեքորեն հասնելուն): Այսինքն՝ մակրոտնտեսական, միկրոտնտեսական և մեզատնտեսական ցուցանիշների քանակը չի սահմանափակվում, եթե այդպիսով հնարավոր է ապահովել գնահատման լիարժեքություն և ամբողջականություն՝ սոցիալական և տնտեսական քաղաքականությունների մշակման համար,
- մեթոդաբանությունը ենթադրում է համեմատական (հարաբերական) ցուցանիշների լայն ցանկ, իսկ բացարձակ մեծություն ունեցող ցուցանիշների թիվն ընդամենը երկուս է, ինչը, սակայն, գործնականում չի առաջացնում սահմանափակումներ ընտրվող մակրոտնտեսական ցուցանիշների քանակի առումով,
- մեթոդաբանությունը կիրառվել է մակրոտնտեսական տարեկան ցուցանիշների համար, թեև եթե հաշվարկվում են ժամանակային կտրվածքով (ամիս, եռամսյակ, կիսամյակ, տարի և այլն) ցուցանիշներ, ապա դրանք նույնպես կարող են հիմք հանդիսանալ գնահատման աշխատանքների համար՝ դրանով իսկ ավելի ճկուն դարձնելով մեթոդաբանությունը:

Քննարկվել է նաև տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների՝ ինչպես միմյանց գումարելու հնարավորությունը, այնպես էլ գիտական հիմնավորվածությունը: Եթե միևնույն մակրոտնտեսական ցուցանիշի վերաբերյալ (օրինակ՝ տնտեսական հավելածի կամ գնաճի) վիճակագրական շարքերի ձևավորումը և դրանց միջոցով տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը հարցեր չեն առաջացնում, ապա երբ միմյանց են գումարվում տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների գնահատականները՝ ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ ամբողջական պատկերացում ունենալու համար, այս հանգամանքը կարող է քննադատվել: Սակայն, քանի որ տնտեսական անվտանգության չափման այդ «տարաբնույթ» ցուցանիշները, ինչպես ասում են մաթեմատիկոսները, բերված են ընդհանուր հայտարարի, դրանց հետ կապված գործողությունները հիմնավորված են:

Ընդ որում, մակրոտնտեսական ցուցանիշների համադրելիությունն ապահովվում է մի քանի մեթոդների կիրառմամբ: Նախ՝ օգտագործվող ցուցանիշներից միայն երկուսն են արտահայտվում բացարձակ արժեքով, ինչը կարող է դժվարացնել դրանց հետ կատարվող գործողությունները: Այդ հանգամանքը «չեզոքացվում» է՝ բացարձակ արժեքով ցուցանիշները վերածելով հարաբերականի, ինչն էլ հնարավոր է դարձնում դրանց համադրելիությունը: Առաջին քայլով մակրոտնտեսական փաստացի ցուցանիշները հարաբերվում են իրենց շեմային (սահմանային) մեծություններին և բազմապատկվում 100%-ով, որի արդյունքում ձևավորվում է տոկոսային արտահայտություն, որն էլ հետագայում օգտագործվում է հաշվարկների համար: Երկրորդ, ստացված հարաբերական ցուցանիշներին տրվում են բալային գնահատականներ (տնտեսական անվտանգության բալային գնահատականների մեթոդի կիրառման դեպքում)՝ այդպիսով ապահովելով ցուցանիշների լիարժեք համադրելիությունն ու չափողականությունը: Նկատենք նաև, որ եթե ցանկանում ենք ունենալ որևէ տարվա տնտեսական անվտանգության ամբողջական պատկերը՝ արտահայտված բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների համակ-


ցությամբ, ապա դրանց գնահատականները պետք է գումարել: Կարևոր է ընդգծել, որ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման համար ընտրված մակրոտնտեսական ցուցանիշների միայն 10%-ն է, որ ունի բացարձակ արժեք, մյուսները՝ հարաբերական (%-ով արտահայտված) ցուցանիշներ են, ինչն ավելի հավաստի է դարձնում կիրառվող մեթոդաբանությունը:

Տնտեսական անվտանգության մակարդակի հաշվարկման երկրորդ մեթոդի՝ մատրիցների կազմման պարագայում վերը նշված դժվարությունները կամ մեթոդաբանական խնդիրները բացակայում են:


Ասվածն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով բերենք հետևյալ օրինակները: Ենթադրենք՝ զամբյուղում կա 5 խնձոր, 6 տանձ և 9 սալոր: Որպեսզի զամբյուղի պարունակության մասին պատկերն ամբողջական լինի, պետք է ներմուծենք «միրգ» հասկացությունը, իսկ այն հարցին, թե քանի միրգ կա զամբյուղում, պատասխանն ակնհայտ է՝ 20: Նման հաշվարկ կատարում ենք՝ միմյանց գումարելով մրգերի տարբեր տեսակների քանակները: Կամ՝ երբ հաշվարկում ենք որևէ երկրի ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրաշրջանառության ծավալը (մեծությունը), ապա դա արտահայտվում է տնտեսագիտական տարբեր բովանդակությամբ երկու ցուցանիշի՝ արտահանման և ներմուծման հանրագումարով: Դա հնարավոր է, չնայած այն բանին, որ արտահանումը և ներմուծումը միմյանց հետ կապված են զուտ արտահանման ցուցանիշի մեծությամբ, որը երբ դրական է, երկրի ՀՆԱ-ն ավելանում է, իսկ երբ բացասական՝ ընդհակառակը՝ նվազում: Ավելին, դրանք ֆիզիկական և բնաիրային առումով չափազանց տարբեր են, սակայն հաշվարկվում է ամբողջական ցուցանիշը, ինչը հնարավոր է դառնում այն պարզ պատճառով, որ դրանց մեծությունները չափվում են կա՛մ դրամով, կա՛մ մեկ այլ արժույթով (օրինակ՝ ԱՄՆ դոլարով): Այս դեպքում ևս ոչ ոք չի կասկածում նման գործողության ճշտությանը կամ դրա իրականացմանը: Նույնը վերաբերում է պետական պարտքի ցուցանիշի մեծությանը, որը ձևավորվում է ներքին և արտաքին պարտքերի գումարից:

Դրանցից յուրաքանչյուրն ունի ոչ միայն ստացման տարբեր ընթացակարգ, այլև բովանդակություն: Սակայն, երբ հաշվարկվում է երկրի պետական պարտքը, դրանք գումարվում են, քանի որ գնահատվում են միասնական արժեքային միավորով (դրամով կամ մեկ այլ արժույթով): Երկրորդ օրինակում խոսքը ՀՆԱ հաշվարկման մասին է: Ինչպես հայտնի է, ՀՆԱ ոլորտային կառուցվածքը ձևավորվում է ամենատարբեր մեծություններից, որոնք են գյուղատնտեսությունը, ձկնաբուծությունը, արդյունաբերությունը, շինարարությունը, առևտուրը և ծառայությունները: Թեև դրանց հաշվակման մեթոդները և բովանդակությունը տարբեր են, սակայն երկրի ՀՆԱ հաշվարկման նպատակով գումարվում են, քանի որ գնահատվում են արժեքային արտահայտությամբ (դրամով կամ այլ արժույթով): Օրինակները կարելի է շարունակել, սակայն ասվածից հետևում է, որ տարբեր բովանդակություն ունեցող երևույթների և կատեգորիաների ամբողջացման համար անհրաժեշտ է ունենալ համադրելիություն ապահովող գործիքակազմ, որն էլ հնարավորություն կտա ապահովելու դրանց միջև ամբողջական չափելիությունը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքներն ըստ բալային մեթոդի՝ ընտրված ժամանակահատվածների (1995-2000 թթ., 2001-2006 թթ., 2007-2011 թթ., 2012-2016 թթ., 2017-2022 թթ.), ինչպես նաև առանձին տարիների (1995 թ., 2000 թ., 2021 թ., 2022 թ.) համար բերված են գծապատկեր 1-ում և 2-ում:



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության միջին գումարային մեծություններն ըստ որոշակի ժամանակահատվածների



Գծապատկեր 2. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գումարային մեծություններն ըստ որոշակի տարիների

Կատարված վերլուծության արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության աստիճանը, ըստ ընտրված՝ անվտանգության աստիճանը բնութագրող ցուցանիշների, ուսումնասիրված ժամանակահատվածում զգալիորեն բարձրացել է: Ըստ որում, 2020 թվականին անվտանգության մակարդակի որոշ չափով նվազումը պայմանավորված է եղել COVID-19 համավարակի և հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմի հետևանքներով: Տնտեսական անվտանգության ապահով-

ման գործընթացում, որպես առաջնահերթ գերակայություններ, կարելի է առանձնացնել այն ցուցանիշները, որոնք ավելի շատ են շեղված շեմային մեծություններից (տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, աղքատության մակարդակը, գործազրկության մակարդակը, Ջինիի (եկամուտների կենտրոնացման) գործակիցը, կրթության և գիտության համար կատարվող ծախսերը, արտաքին պետական պարտքը): Վտանգավոր մակարդակում են նաև արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, ինչպես նաև ներմուծման տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ (տե՛ս մատրից 1-5):

Մատրից 1

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը, 1995-2000 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, > 0,66	6 SUS 14	8 SUS 4, SUS 6, SUS 10, SUS 11, SUS 19, SUS 20	9 SUS 1, SUS 2, SUS 3, SUS 5, SUS 9, SUS 12, SUS 13, SUS 16 SUS 17, SUS 18
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7 SUS 15
	Փոքր, < 0,33	1 SUS 8	2	4 SUS 7
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 2

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2001-2006 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 14	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 11, ՏԱՑ 19, ՏԱՑ 20	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 3, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 12, ՏԱՑ 16, ՏԱՑ 18
	Միջին, $0,33 < X < 0,66$	3 ՏԱՑ 17	5	7 ՏԱՑ 6, ՏԱՑ 13, ՏԱՑ 15
	Փոքր, $< 0,33$	1 ՏԱՑ 7, ՏԱՑ 8	2	4 ՏԱՑ 5
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 3

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2007-2011 թթ.

Առաջացման հավանականությունը	Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 7, ՏԱՑ 14, ՏԱՑ 17	8 ՏԱՑ 3, ՏԱՑ 4, ՏԱՑ 13, ՏԱՑ 15, ՏԱՑ 19	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 6, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 12, ՏԱՑ 16 ՏԱՑ 18
	Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7 ՏԱՑ 5, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
	Փոքր, $< 0,33$	1	2 ՏԱՑ 8	4
		Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 4

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2012-2016 թթ.

Առաջացման հավանականությունը

Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 14	8 ՏԱՑ 3, ՏԱՑ 4, ՏԱՑ 11, ՏԱՑ 18	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 6, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 12, ՏԱՑ 13, ՏԱՑ 15, ՏԱՑ 16
Միջին, $0,33 < X < 0,66$	3 ՏԱՑ 5, ՏԱՑ 8	5 ՏԱՑ 7	7 ՏԱՑ 17, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
Փոքր, $< 0,33$	1	2	4
	Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Մատրից 5

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը,
2017-2022 թթ.

Առաջացման հավանականությունը

Մեծ, $> 0,66$	6 ՏԱՑ 3, ՏԱՑ 8, ՏԱՑ 14,	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 11	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 6, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 12, ՏԱՑ 13, ՏԱՑ 15, ՏԱՑ 16
Միջին, $0,33 < X < 0,66$	3	5	7 ՏԱՑ 17, ՏԱՑ 18, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
Փոքր, $< 0,33$	1	2	4 ՏԱՑ 5, ՏԱՑ 7
	Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Այսպիսով՝ տնտեսական անվտանգության ապահովումը երկրի անկախության, ինքնիշխանության, հասարակության և անձի արդյունավետ կենսագործունեության կարևոր երաշխիքներից է, հետևաբար նաև ազգային տնտեսության զարգացման հիմնական գերակայություններից մեկը:

Պետության տնտեսական անվտանգությանը բարդ և բազմագործոն հասկացություն է: Լինելով ազգային անվտանգության համակարգի բաղադրիչ մաս՝ վերջինս, միաժամանակ, հիմք է հանդիսանում ազգային անվտանգության կառուցվածքի մեջ մտնող ռազմական, տեղեկատվական, սոցիալ-քաղաքական, պարենային, բնապահպանական անվտանգության և այլ տարրերի ձևավորման համար: Այս բոլոր բաղադրիչները փոխկապված են, մեկը մյուսին լրացնող, և չի կարելի երկարատև ժամանակահատվածում գերակայությունը տալ սրանցից որևէ մեկին՝ անտեսելով մյուսները: Նշված բոլոր բաղադրիչների հիմքում հիմնականում տնտեսական գործոններն են, որոնք պայմանավորում են այս կամ այն բաղադրիչի անվտանգությունը:

Տնտեսական անվտանգությունը Արևմուտքի զարգացած երկրներում դիտարկվում է որպես համաշխարհային շուկայում ազգային տնտեսության և դրա ճյուղերի մրցունակության գրավական, որն ապահովում է համաշխարհային տնտեսության բազմաբնույթ միտումներն և զարգացումները, ազատ շուկայական տնտեսության կենսունակությունը: Աշխատանքի միջազգային բաժանման մասնակից և մրցակից շուկայական տնտեսությունների համար տնտեսական անվտանգությունը փաստացի հանգում է այդ մրցակցության ընթացիկ ռիսկերին և վտանգներին համարժեք արձագանքելուն:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական անվտանգությունը, որպես հետազոտման առարկա, դեռևս կայացման փուլում է: Այն դիտարկվում է իբրև անցման շրջանի քաղաքականությունը բնութագրող առանձնահատկություններից ածանցյալ հասկացություն: Տնտեսական անվտանգության հիմնախնդրի նկատմամբ մեզանում

չի ցուցաբերվում համակարգված մոտեցում և բացակայում է դրա՝ որպես միասնական համակարգի մասին պատկերացումը: Դեռևս մշակված չեն տնտեսական անվտանգության ամբողջական հայեցակարգը, տնտեսական անվտանգության ապահովման իրավական դաշտը և, որպես այդ ամենի արդյունք, պետական ռազմավարությունը:

Տնտեսական անվտանգության ռազմավարությունը պետք է համապատասխանի ազգային շահերին՝ դառնալով քաղաքական և տնտեսական կարևորագույն որոշումների ընդունման հիմնական կողմնորոշիչը: Այն պետք է պարունակի ցուցիչներ (ինդիկատորներ), որոնք կարձանագրեն ներքին և արտաքին սպառնալիքների առաջացման փաստը և կձեռնարկեն դրանց չեզոքացման միջոցառումներ:

Տնտեսական անվտանգության ապահովման գործընթացը ներկայում համակարգված ու ամփոփված չէ կատարման համար պարտադիր բնույթ կրող փաստաթղթում: Այս իմաստով, օգտակար կարող է լինել ռազմավարական պլանավորման գործիքակազմի կիրառումը, որը պետական քաղաքականության համակարգված միջոցառումների ամբողջություն է՝ ուղղված երկրի ազգային շահերի, սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության ապահովման երկարաժամկետ նպատակների, ազգային ռազմավարական առաջնահերթությունների սահմանմանը և լուծման ուղիների ու գործիքակազմի որոշմանը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման ռիսկերի և ազգային (ներառյալ տնտեսական) անվտանգության սպառնալիքների ու վտանգների բացահայտմանը:

Ռազմավարական պլանավորման գործում հայեցակարգային դրույթների ամրագրման համար հիմք կարող է ծառայել օրենքը, որը բովանդակային իմաստով կամփոփի ռազմավարական պլանավորման նորմատիվային դաշտը, ինչպես նաև կկանոնակարգի այս ոլորտում ներգրավված մարմինների, օբյեկտների և սուբյեկտների միջև հարաբերությունները:

Հայաստանի տնտեսությունը դեռևս անցման շրջանի վերափոխումների փուլում է (իրեն հատուկ դրսևորումներով) և նրա վրա ազդող ներքին և արտաքին գործոնները դժվարացնում են տնտեսական անվտանգության ապահովումը: Նման պայմաններում առավել սրվում և կարևորվում է տնտեսական անվտանգության ապահովման համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

Տնտեսական անվտանգության ապահովման համար պետության գերակայող ուղղություններն են արտադրության ծավալների աճի խթանումը, տնտեսության կառուցվածքային վերափոխումները, ազգաբնակչության հիմնական մասի բավարար կենսամակարդակի ապահովումը և կյանքի որակի բարձրացումը, հասարակության միջին խավի ձևավորմանն ուղղված միջոցառումները:

Տնտեսական անվտանգության համակարգի ձևավորման հիմնախնդիրներից են տնտեսական անվտանգության ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների վիճակագրության վարումը և մոնիտորինգը: Ընդ որում, շատ ցուցանիշներ հնարավոր չէ հաշվարկել դրանց վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության, իսկ որոշ դեպքերում՝ դրանց ոչ հավաստի լինելու պատճառով:

«Տնտեսական անվտանգության ցուցանիշներում առանցքային տեղ են զբաղեցնում ՀՆԱ մեծության հաշվարկները: Որպես հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրներ են դիտարկվում եկամուտների տարբերակվածությունը 10 տոկոս ամենահարուստ և 10 տոկոս ամենաաղքատ ընտանիքների միջև, աղքատության և եկամուտների կենտրոնացման մակարդակը: Տնտեսական անվտանգությանը սպառնացող գործընթացներում ՀՀ-ի համար առանձնահատուկ կերպով կարևորվում է ազգային հարստության բաղկացուցիչ՝ մտավոր կապիտալի շարունակական արտահոսքը երկրից, որն իր նշանակությամբ զգալի մտահոգություն է առաջացնում և ստիպում ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ ու քայլեր: Մեկ այլ սպառնալիք է ստվերային տնտեսության և կոռուպցիայի առկայությունը, ինչը լուրջ խոչընդոտ է Հայաստանի տնտեսական շա-

հերի իրացման և հետևաբար՝ տնտեսական անվտանգության ապահովման համար:

Մեր հանրապետության՝ որպես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրի դեպքում շատ բարդ ու դժվար է ինքնուրույնաբար ապահովել տնտեսական անվտանգություն: Ամենաարդյունավետ եղանակն այս պարագայում տնտեսական անվտանգության կոլեկտիվ ձևին նախապատվություն տալն է՝ ներգրավվելով համապատասխան միջազգային համակարգերի շրջանակներում:

Այսպիսով, ելնելով ուսումնասիրության արդյունքներից, նպատակահարմար է կատարել հետևյալ առաջարկությունները.

Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել տնտեսական անվտանգության համակարգ, որի հիմքում պետք է դրվի մոնիտորինգի, վերլուծությունների, կանխատեսումների և այլ միջոցառումների մշակումը (ազգային անվտանգության խորհուրդ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն):

Տնտեսական անվտանգության ապահովման համակարգի ղեկավարումը հիմնականում պետք է բաղկացած լինի երկու մակարդակից: Կառավարման առաջին մակարդակում պետք է մշակվի տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարությունը՝ ի դեմս Անվտանգության խորհրդի, իսկ երկրորդում՝ այդ ռազմավարության մարտավարությունն ու բուն ռազմավարության իրականացումը՝ ի դեմս կառավարության:

Անհրաժեշտ է ստեղծել տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների ընտրության կառուցակարգ, որը հնարավորություն կտա կատարելու նշված միջոցառումների նախնական ընտրություն տնտեսական անվտանգության բարդ համակարգում:

Տնտեսական անվտանգության ապահովման գործում մեծ դեր ունեն պետական պաշարները, որոնք հիմնականում պետք է հանդես գան որպես տնտեսական համակարգի կայունացուցիչներ: Պաշարները պետք է հաշվարկվեն այնպես, որ հնարավոր լինի որոշակի ժա-

մանակահատված դիմակայել բոլոր սպառնալիքներին: Ընդ որում, նպատակահարմար է հաշվարկներ կատարելիս բացահայտել այն սպառնալիքները, որոնց չեզոքացման համար անհրաժեշտ պաշարները որոշ մասով չեզոքացնում են նաև մեկ այլ սպառնալիք: Նման մոտեցումը հնարավորություն կտա խուսափելու պահուստների կրկնակի չափով օգտագործումից:

Անհրաժեշտ է մշակել Հայաստանի տնտեսական անվտանգության հայեցակարգը և ռազմավարությունը, ըստ որոնց՝ հստակ կերպով կսահմանվեն անվտանգության ապահովման ուղղությունները, միջոցները, միջոցառումները՝ յուրաքանչյուր տարվա համար: Տնտեսական անվտանգության առումով, ամեն մի տարվա ձեռքբերումների հիման վրա (հաշվի առնելով նաև այդ գործընթացում տեղ գտած թերությունները) անհրաժեշտ է վերանայել ինչպես հայեցակարգի, այնպես էլ ռազմավարության հիմնական դրույթները: Կարևոր է ընդգծել, որ տնտեսական անվտանգության արդյունքները պետք է հիմք հանդիսանան հանրապետության՝ ինչպես ռազմավարական, այնպես էլ ընթացիկ ծրագրերի գերակայությունների սահմանման համար: Եվ եթե ներկայում տնտեսական զարգացման գերակայություն ասելով հասկանում են տնտեսության այս կամ այն ոլորտի (օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, մշակող արդյունաբերության, տուրիզմի և այլն) զարգացում, ապա ժամանակն է, որ դա առնչվի երկրի տնտեսական անվտանգության ցուցանիշներին, որոնք, իրենց հերթին, անմիջականորեն պայմանավորում են հանրապետության ազգային շահերը և հատկապես բնակչության կենսամակարդակին վերաբերող հիմնախնդիրների լուծումը:

Ներկայում գերակա ոլորտների պետական աջակցությունը և դրանց ծրագրային ապահովումը գործնականում կատարվում են չհիմնավորված սկզբունքների և մոտեցումների հիման վրա՝ դրանով իսկ կազմալուծելով շուկայական տնտեսության հիմքը: Եվ եթե պետական աջակցության գործիքակազմը իրական հատվածի այս կամ այն ոլորտին պետական բյուջեից միջոցների հատկացման մեջ է,

ապա դրանով իսկ շուկայական տնտեսության որոշակի ոլորտների միջև ստեղծվում է անհավասար տնտեսական միջավայր, որը, այլ հավասար պայմաններում, պետական ռեսուրսներն ավելի հաճախ արհեստականորեն ուղղում է հարկային արտոնությունների (հարկային վարկի) տրամադրմանը: Այդ փորձը ներկայում կազմում է պետական բյուջեի եկամուտների 1/3-ը: Նման մոտեցումը հարիր չէ շուկայական տնտեսությանը, որի հիմքում «հավասարամեծ կապիտալները բերում են հավասար շահույթ» սկզբունքն է: Այլ կերպ ասած, շուկայական տնտեսությունը միջճյուղային և ներճյուղային մրցակցության շնորհիվ ձևավորում է ապրանքների ու ծառայությունների թողարկման այնպիսի միջավայր, որտեղ «միջամտությունները» խանգարում են այդ կառուցակարգի լիարժեք գործողությանը: Կասկածի տակ չի դրվում նաև այն, որ շուկայական կառուցակարգն ապահովում է ազգային շահերը:

Բոլոր վերը նշված դրույթներն իրագործելու համար պետք է ստեղծել տնտեսական անվտանգության իրավական հիմք: Այդ նպատակով տնտեսական անվտանգության հայեցակարգը մշակելուց հետո անհրաժեշտ է ընդունել «Տնտեսական անվտանգության մասին» օրենք և դրանից բխող իրավական այլ փաստաթղթեր, ինչպես նաև մշակել ու Ազգային ժողովում օրենքների տեսքով հաստատել ամենամյա տնտեսական անվտանգության ծրագրեր՝ հանրապետության ազգային անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով:

Ինչպես վկայում են Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման և վերլուծության արդյունքները.

- ✓ 1995-2022 թթ. ժամանակահատվածում տնտեսական անվտանգության ցուցանիշները դեռևս ցածր մակարդակում են,
- ✓ տնտեսական անվտանգության գնահատման որոշակի ցուցանիշներ, որոնք, ինչպես պարզվել է սույն ուսումնասիրության արդյունքում, վատթարացել են՝ սպառնալիք համարվելով երկրի համար,

- ✓ տնտեսական անվտանգության մակարդակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է, առաջին հերթին, ուշադրություն դարձնել մակրոտնտեսական այն ցուցանիշների բարելավմանը, որոնք, ըստ գնահատման մեթոդաբանության, վտանգավորության տիրույթում են:

SUMMARY FOR FOREIGN STUDENTS

The globalization and economic integration of the world economy, as well as the requirements to harmonize with that economy, pose new challenges, especially to the governments of developing and former community countries, to face and compete with the danger of becoming appendages of economically powerful states and not being "swallowed". In such conditions, the problem of ensuring national security largely depends on the degree of development of the country's economy and the success of the socio-economic policy.

After the disintegration of the former Soviet empire, the newly independent states had to independently solve their economic security problems, which were pushed to the background during the transition and large-scale structural changes. The issue of ensuring Armenia's economic security still needs scientific justification, it should become the subject of research by researchers and specialists. Accordingly, the conceptual approaches to the given problem should contain regional, scientific-technical, social, environmental, and several other aspects.

What are the foundations of the economic security strategy of the state, how is it evaluated, in which directions and with what structures will it be ensured and how will the country's economic interests be taken into account in the rapidly changing conditions of the region and world economy, under what circumstances a high level of economic security is ensured and what is the experience of countries with a high level of economic security in this matter.

It is also obvious that in the modern world, more and more funds are allocated for maintaining and strengthening both external and internal security. Moreover, this phenomenon is observed in almost all continents and countries. The capabilities of both internal and external security components of the state, first of all, depend on the capabilities and potential of economic security.

On the threshold of new geopolitical transformations, especially for countries with a small and open economy, economic studies of national security and, especially, economic security issues and, in particular, the level of its assessment and measurement, become important. Through this assessment, it becomes possible to identify both achievements and gaps and deficiencies in the process of economic security. The purpose of the work is to develop a methodology for assessing the level of economic security of a state, a group of states, and economic unions, and based on it, to assess the economic security of the above-mentioned entities, both - by years and for longer periods. The main and priority directions of the RA economic policy, continuity and consistency, and the connection with the programs of the RA government for different years were also highlighted. The research revealed, very often, the lack of such a connection, which, especially over a long period, weakens the effectiveness of economic policy.

Moreover, the definition of the priority directions of RA socio-economic development does not have a unified theoretical-methodological basis, their approaches and principles of formation are not defined, which makes the socio-economic development programs and the policies based on them subjective. For this reason, it is suggested to base the development of socio-economic development programs on the state of the country's economic security and threats and ways to improve security. It is important to emphasize that the proposed methodology for economic security assessment can also be used for assessing the level of national security. According to the developed methodology of economic security assessment, the most important 20 macroeconomic indicators were selected, which condition the level of economic security of the Republic of Armenia, EAEU, South Caucasus republics, and 10 countries with the best quality of life. For this purpose, the level of economic security was assessed both using scoring and by creating matrices. As a result of the analysis, the main threats to economic security were

identified and the importance of improving their magnitudes was emphasized. In the Republic of Armenia, the transition from a command economy to a free market economy was accompanied by many political, economic, and social difficulties and threats. During the past three decades, the Republic of Armenia, being in a particularly difficult geopolitical environment, although with great difficulty, managed to improve the country's economic security level at a small pace.

According to the authors, the basis of the viability and existence of the state was and continues to be national security, one of the main components of which is economic security. Accordingly, depending on the change of time and environment, the components of economic security can be changed and have essential and non-essential importance.

Many authors' studies have emphasized the importance of economic security in increasing the stability and efficiency of economies, and especially the impact of external shocks on the factors that ensure economic development in developing countries.

At the same time, the difficulties of formulating a universal concept of international economic security lie in the fact that the nature of universal (international) security is perceived and interpreted differently by different specialists. Experts from countries with economies in transition and developed industrial countries pay particular attention to identifying differences rather than similarities. The problem is also that every external influence, even of a markedly negative nature, cannot be qualified as a threat to the country's security. It depends on the size of the economy, the level of development, the degree of diversification of the national economy, the degree of readiness to neutralize this influence, etc. The state of the national economy at the time of the threat is also important.

The existence of different opinions on the issues of international economic security is explained by the differences in the historical development of countries, the differences in the interests of countries

and economic associations, the extent of government intervention in ensuring security, and the need for the combination of government and market forces, etc.

According to another approach, the subject of the concept of international economic security is considered to be not randomly occurring but deliberately creating threats to the country's economy. Among the methods of undermining such security, the following are distinguished: the violation of general rules of international trade, the application of restrictions on the import and export of goods and services, the deliberate devaluation of the country's currency, the restriction of international transport communication channels, the blocking of international capital migration and investment flows, the creation of barriers to technology transfer and scientific and technical exchange. creation, organizing outflow of highly qualified labor force, etc.

It should also be noted that these tools are widely used during current geopolitical changes, "cold", commercial, and real wars between countries (Russian-Ukrainian, Israeli-Palestinian, US-China economic war, etc.).

Assessment of the level of economic security of the state, group of states, and economic unions

The formation of the system of economic security indicators and the determination of their limit (threshold) values are the most important tools for the implementation of the function of ensuring economic security by the state. Limit (threshold) values are quantitative parameters, through which it becomes possible to assess the degree of vulnerability and threat of the situation formed in certain sectors of the economy from the point of view of economic security. In another way, through the determination of the marginal (threshold) values of economic security indicators, the economic interests of the state are given quantitative certainty.

It is important to note that the system of economic security indicators and their marginal (threshold) values are different for different countries, which is due to the difference in national interests and the ways to realize them, which is seen from the definitions of economic security determined by experts in countries at different levels of economic development.

Evaluation of economic security using the point scoring method

It is accepted that the estimates of indicators characterizing economic security vary between 0 and 1, depending on the amount of deviation from the threshold value. Let's give the following example to illustrate what was said. Suppose, the threshold value of the inflation rate is set at 5-6% per year. It means that if this criterion is met in the given economy, then this indicator can be evaluated with 1 point (unit). As the inflation rate increases, the score will also decrease proportionally to 0, which means that the inflation rate has reached unmanageable levels.

Let us consider the relative assessment of real and probable (potential) threats as the main characteristic defining economic security. This assessment will represent the weighted average of the assessments of the economic security indicators characterizing the given economy, which will be taken as the main characteristic. It will vary between 0-1.

Based on the above principle, the country(s) or their groups can be classified into four groups according to the main characteristic from the point of view of economic security safe when the main attribute is equal to 1, safe from 0.7-0.9, reasonably safe from 0.5-0.6 and dangerous from 0-0.4.

Using the described scoring system, the level of economic security of the Republic of Armenia, the three republics of the South Caucasus, 2012-2022 EAEU countries, as well as 2012-2022 10 countries with a high level of quality of life were evaluated according to 20 macroeconomic indicators selected for economic security and their generalized to the summary index.

It should be noted that the threshold values of all included indicators were calculated based on international experience. The deviation of the actual value of each indicator from the threshold value is determined in the following way (the actual value of the given year / the threshold value of the given indicator) X 100 – 100. Moreover, if the amount of deviation is greater than 100%, then this indicator is given a score of 0 points. When the amount of deviation varies from 0 to 100%, the score is reduced by 0.1 points for each 10% deviation from the threshold value. By averaging the scores, an economic security index (or main characteristic) was determined for each year. According to the obtained results, in the period between 1995-2022, Armenia has improved the values of individual indicators of economic security.

Assessment of economic security through matrix formation

The economic security assessment was also performed by the authors using another method, which makes it possible to identify threats to economic security and problems requiring a priority solution through a matrix.

According to the proposed method, the indicators of economic security are classified by the following four criteria: (1) the probability of occurrence of the hazard characterized by the indicator, (2) the extent of its impact, (3) the duration, and (4) the rate of change of undesirable manifestations.

The use of the matrix increases the efficiency of the economic security indicators evaluation system and management, helping to more accurately assess the degree of danger to the economy according to a specific indicator. As a result, it contributes to the effective management of resources, providing an opportunity to evaluate the work of the structures regulating the sector and to have a guiding role in the development of future development policies. At the same time, this method is useful from the point of view of a complete analysis of economic

security indicators, as it provides the possibility of studying the multi-faceted interrelationship between different indicators, that is, how a change in any indicator occurred and how it will affect other indicators.

To assess the impact of economic security indicators, the following values were adopted as a result of the analysis: the effect is rated as small if the mean value / marginal value ratio is between 0.66 and 1, medium if it is between 1 and 3, and big if it is greater than 3.

Although it follows from the general logic of the matrix that the security of the country's economic security will occur if the maximum number of indicators find a place in the first box, the movement of indicators to the destination will not take place most shortly, in the order of boxes 9 ... 5 ... 1. Basically, there are many possible ways to improve performance.

The matrix applies to all indicators of economic security selected by the authors. During practical application, it allows for assessing the actual state of each indicator, characterizing the mutual relationship between different indicators, and also contributes to their planned and systematic improvement.

The assessment procedure using the matrix is based on the analysis of past developments, the study of the factors affecting the achievement of the actual levels of the indicators, and the observation of existing economic structures and complex conditions.

So, for example, the requirements for indicators included in the first, fifth, and ninth boxes are as follows: the indicators of economic security to be included in the first box should demonstrate in the long term a level in a safe zone that is far enough from the determined limit value, which fully corresponds to the economic interests of the state or a separate group of states, in the fifth box should be included the average indicators of the probability of occurrence and the extent of the impact. Their behavior is stable and around a determined threshold value, the indicators in the ninth box are threats to economic security. They deviate

from the defined limit values in the long term and are threats to economic security due to the extent of their impact and the probability of occurrence of danger. Here, the maximum degree of vulnerability and the high probability of the threat's implementation intersect, therefore, the realization of economic interests is greatly endangered.

As a result of the calculation of the average values of the economic security indicators, a part of them was included in the security zone, being in a better condition than the marginal value. For those indicators, the ratio "mean value/limit value" was not calculated, and they were automatically moved to the safest - the first cell of the matrix.

The results of the study prove that in RA 1995-2022 the average monthly nominal salary (expressed in US dollars) index or ESI 3 (ESI - economic security indicator), the average inflation rate (ESI 4), and economic growth have improved. the characterizing indicator (ESI 7), the state budget deficit (ESI 17), money supply to GDP (ESI 18), the ratio of imported goods and services to GDP (ESI 19), as well as the final indicators characterizing the share imported into consumption (ESI 20). Other indicators of economic security in RA remained mostly unchanged or appeared in a more dangerous zone (Table 1). In particular, the deterioration of the indicators of the unemployment rate (in % of the economically active population) (ESI 6), and crime rate (ESI 15), which are barometers of the state of society, is of concern.

Table 1

The results of the evaluation of the economic security of the Republic of Armenia through the matrix and their classification according to the degree of danger in 1995-2022

<i>Economic security indicators</i>		<i>Matrix number</i>				
		<i>1995-2000</i>	<i>2001-2006</i>	<i>2007-2011</i>	<i>2012-2016</i>	<i>2017-2022</i>
GDP per capita, USD	ESI 1	9	9	9	9	9
Gini coefficient (coefficient of income concentration)	ESI 2	9	9	9	9	9
Average monthly nominal salary, USD	ESI 3	9	9	8	8	6
Share of household final consumption expenditure in GDP, %	ESI 4	8	8	8	8	8
Average inflation rate, %	ESI 5	9	4	7	3	4
Unemployment rate (annual average), in % of the economically active population	ESI 6	8	7	9	9	9
Economic growth, %	ESI 7	4	1	6	5	4
Domestic public debt (in national currency), % of GDP	ESI 8	1	1	2	3	6
The "natural" level of the poverty indicator, %	ESI 9	9	9	9	9	9
Expenditures for scientific research and development to GDP, %	ESI 10	8	9	9	9	9
The share of the manufacturing industry in industrial output, %	ESI 11	8	8	9	8	8
The share of mechanical engineering in industrial output, %	ESI 12	9	9	9	9	9
The volume of investments in fixed assets to GDP, %	ESI 13	9	7	8	9	9
Estimated life expectancy from birth (years)	ESI 14	6	6	6	6	6
Crime rate (number of crimes per 100,000 people)	ESI 15	7	7	8	9	9
External public debt (government and central bank) to GDP, %	ESI 16	9	9	9	9	9
Budget deficit (surplus) concerning GDP, %	ESI 17	9	3	6	7	7
Money supply (M2) about GDP, %	ESI 18	9	9	9	8	7
The ratio of imported goods and services to GDP, %	ESI 19	8	8	7	7	7
Share of imports in final consumption, %	ESI 20	8	8	7	7	7

As a result of the classification of indicators, it becomes possible to place them in the general matrix characterizing the degree of threat to economic security. The matrix makes it possible to determine those threats to economic security that have reached the level of their impact and probability of occurrence that require urgent measures to improve the situation.

The proposed economic security assessment methodology (it is a combination of two complementary methods), unlike other assessment systems or approaches, has the following advantages:

- ✓ the database necessary for the assessment is the existing statistical data, that is, they are based on both international and domestic (in particular, the statistical state committee) official statistical data. If individual indicators are calculated, the basis of their calculation is official or state statistical databases.
- ✓ the statistical data used are public and available from published open sources, including electronic resources. In other words, the data used is not only available and public but also reliable and trustworthy.
- ✓ it should also be considered positive that the digital databases and the assessment of the degree of economic security were made using a computer program, or these calculations can be expressed with the help of a pattern or formula, which significantly simplifies and speeds up the calculations with digital databases,
- ✓ the number of indicators used in the methodology is two dozen, which includes the main aspects and trends of the socio-economic development of the society. However, depending on the purpose of the study and the proposed problems, it may not only increase but also decrease (in this case, the number of included indicators should be sufficient to fully achieve the proposed goal). That is, the number of macroeconomic, microeconomic, and mega economic indicators is not subject to limitation if they ensure the

completeness of the assessment for the development of social and economic policies developed later.

- ✓ the methodology assumes a wide list of comparative (relative) indicators, and the indicators with an absolute magnitude are very limited (there are two of them), which does not cause restrictions on the choice of the number of macroeconomic indicators used in practice,
- ✓ the used methodology was applied to macroeconomic annual indicators, although if indicators are calculated at other time intervals (month, quarter, half year, year, etc.), then they can also be the basis for evaluation works, thereby making the methodology more flexible.

Both the possibility and the scientific validity of adding the evaluations of different macroeconomic indicators to each other were also discussed. If the formation of statistical series on the same macroeconomic indicator (for example, economic growth or inflation) and the assessment of the level of economic security through them does not raise questions, then when the evaluations of different macroeconomic indicators are added to each other to have a complete picture of the phenomenon under study, this circumstance can be criticized. However, the criticism is not appropriate, because for the measurement of economic security, these "various" indicators, as mathematicians say, are brought to a common denominator, which justifies the actions related to them.

Accordingly, the comparability of macroeconomic indicators is ensured by the use of several methods. First, only two of the indicators used are expressed in absolute value, which can make operations with them difficult. That circumstance is "neutralized" by making absolute value indicators relative, which makes their comparability possible. In the first step, the actual macroeconomic indicators are related to their threshold (limit) values and multiplied by 100%, as a result of which we get a percentage expression, which is later used for calculations. Second,

the obtained relative indicators are given point estimates (point estimates of economic security in the case of using the method), thus ensuring full comparability and measurability of the indicators. In addition, let's also note that if we want to have the whole picture of the level of economic security for any year, expressed by the combination of all macroeconomic indicators, then their estimates should be added. It is also important to emphasize that only 10% of the macroeconomic indicators selected for the assessment of the level of economic security have an absolute value, the others are relative (expressed in %) indicators, which makes the methodology used more reliable.

The second method of calculating the level of economic security, by creating matrices, does not have the difficulties or methodological problems mentioned above.

Let's give the following examples to make the above more illustrative. Suppose there are 5 apples, 6 pears, and 9 plums in the basket. To have a complete picture of the contents of the basket, we need to introduce the concept of "fruit", and the answer to the question of how many fruits are in the basket is obvious: 20. We make such a calculation by adding together the quantities of different types of fruits. Or, when we calculate the volume (magnitude) of a country's foreign trade turnover of goods and services, it is obtained by the sum of two indicators with different economic content: export and import. This is possible, even though export and import are related to each other by the size of the net export index, when it is positive, the country's GDP increases, and when it is negative, on the contrary, it decreases. Moreover, they are very different in their physical and natural appearance, but the complete index is calculated, which becomes possible for the simple reason that their magnitudes are measured either in drams or in another currency (for example, in US dollars). In this case, too, no one has doubts about the correctness or implementation of such an action. The same applies to the size of the public debt index, which is formed by the sum of internal and

external debts. Each of them has not only a different procedure for receiving but also a different content. However, when the national debt of the country is calculated, they are added together, because they are evaluated in a single unit of value (Dram or another currency). The second example also refers to economics. It refers to the calculation of the GDP. As it is known, the sectoral structure of the GDP is formed by the most productive quantities, which are: agriculture, fishing, industry, construction, trade, and services. Although they differ in their calculation methods and content, to calculate the size of the country's GDP, they are added together, because they are evaluated in terms of value (in dollars or other currency). The given examples can be continued, but it follows from what has been said that to complete the phenomena and categories with different content, it is necessary to have a comparability-supporting toolkit, which will make it possible to ensure complete measurability between them.

The results of the evaluation of the economic security of the Republic of Armenia using the scoring method according to selected periods (1995-2000, 2001-2006, 2007-2011, 2012-2016, 2017-2022), as well as according to some years (1995, 2000, 2021, 2022) are given in Chart 1 and Chart 2.




Chart 1. Average amounts of economic security of the Republic of Armenia according to selected periods




Chart 2. Amounts of economic security of the Republic of Armenia according to some years

From the results of the analysis, we can conclude that the level of economic security of the Republic of Armenia, according to the selected indicators characterizing the level of security, increased significantly during the studied period. Accordingly, the decrease in the level of security in 2020 was due to the consequences of the COVID-19 pandemic and the 44-day Armenian-Azerbaijani war. In the process of ensuring economic security, the indicators that deviate the most from the threshold values (the share of household final consumption expenditures in GDP, the poverty rate, the unemployment rate, the Gini (income concentration) coefficient, education, and science spending, external public debt) can be singled out as priorities. The share of machine building in industrial production, as well as the share of imports in domestic consumption, are also at a dangerous level (see Matrix 1-5).

Matrix 1

**The matrix of economic security indicators of the Republic of Armenia
1995-2000**

Probability of occurrence Big, > 0,66 Medium, $0,33 < X < 0,66$ Small, < 0,33	6 ESI 14	8 ESI 4, ESI 6, ESI 10, ESI 11, ESI 19, ESI 20	9 ESI 1, ESI 2, ESI 3, ESI 5, ESI 9, ESI 12, ESI 13, ESI 16 ESI 17, ESI 18
	3	5	7 ESI 15
	1 ESI 8	2	4 ESI 7
	Small	Medium	Big
		Effect size	

Matrix 2

**The matrix of economic security indicators of the Republic of Armenia
2001-2006**

Probability of occurrence Big, > 0,66 Medium, $0,33 < X < 0,66$ Small, < 0,33	6 ESI 14	8 ESI 4, ESI 11, ESI 19, ESI 20	9 ESI 1, ESI 2, ESI 3, ESI 9, ESI 10, ESI 12, ESI 16, ESI 18
	3 ESI 17	5	7 ESI 6, ESI 13, ESI 15
	1 ESI 7, ESI 8	2	4 ESI 5
	Small	Medium	Big
		Effect size	

Matrix 3

**The matrix of economic security indicators of the Republic of Armenia
2007-2011**

Big, > 0,66 Probability of occurrence Medium, $0,33 < X < 0,66$ Small, < 0,33	6 ESI 7, ESI 14, ESI 17	8 ESI 3, ESI 4, ESI 13, ESI 15, ESI 19	9 ESI 1, ESI 2, ESI 6, ESI 9, ESI 10, ESI 11, ESI 12, ESI 16 ESI 18
	3 ESI 17	5	7 ESI 5, ESI 19, ESI 20
	1	2 ESI 8	4
	Small	Medium	Big
	Effect size		

Matrix 4

**The matrix of economic security indicators of the Republic of Armenia
2012-2016**

Big, > 0,66 Probability of occurrence Medium, $0,33 < X < 0,66$ Small, < 0,33	6 ESI 14	8 ESI 3, ESI 4, ESI 11, ESI 18	9 ESI 1, ESI 2, ESI 6, ESI 9, ESI 10, ESI 12, ESI 13, ESI 15, ESI 16
	3 ESI 5, ESI 8	5 ESI 7	7 ESI 17, ESI 19, ESI 20
	1	2	4
	Small	Medium	Big
	Effect size		

**The matrix of economic security indicators of the Republic of Armenia
2017-2022**

Probability of occurrence Medium, $0,33 < X < 0,66$ Small, < 0,33	6 ESI 3, ESI 8, ESI 14,	8 ESI 4, ESI 11	9 ESI 1, ESI 2, ESI 6, ESI 9, ESI 10, ESI 12, ESI 13, ESI 15, ESI 16
	3 ESI 5, ESI 8	5 ESI 7	7 ESI 17, ESI 18, ESI 19, ESI 20
	1	2	4 ESI 5, ESI 7
	Small	Medium	Big
	Effect size		

According to the authors, the provision of economic security is one of the important guarantees of the country's independence, sovereignty, and the condition for the stable and effective life of the society and the individual. That is why ensuring economic security is one of the main priorities for the development of the national economy.

The economic security of the state is a complex and multifactorial concept. Being a part of the national security system, it is at the same time a basis for the formation of the elements included in the structure of national security: military, informational, socio-political, food, environmental security, etc. All these components are interrelated, one complements the other, and it is impossible to give priority to one of them for a long period, ignoring the others. The basis of all the mentioned components is mainly the economic factors that determine the safety of this or that component.

The concept of economic security in the developed countries of the West is considered as the competitiveness of the national economy and its branches in the world market, which ensures the vitality of the

country's free market economy in the multifaceted trends and developments of the world economy. For economies participating in the international division of labor and competing in the market, economic security boils down to responding accordingly to the current risks and dangers of that competition.

In the Republic of Armenia, economic security as a subject of research is still in its infancy. In the case of Armenia, economic security is considered a concept derived from the features characterizing the politics of the transition period. There is no systematic approach to the problem of economic security in the republic and there is no understanding of it as a unified system. In the Republic of Armenia, the complete concept of economic security, the legal framework for ensuring economic security, and, as a result, the state strategy, have not yet been developed.

The strategy of economic security should correspond to the national interests and become the main orientation during the adoption of the most important political and economic decisions. It should contain indicators that will record the occurrence of internal and external threats and the measures aimed at neutralizing these threats.

The process of ensuring economic security is currently not systematized and summarized in a document that is mandatory for execution. In this sense, it can be useful to use the toolkit of strategic planning, which is a set of coordinated state policy measures aimed at defining the long-term goals of the country's national interests, socio-economic development, and national security, defining strategic national priorities and determining the solution paths and tools, as well as social to the identification of economic development risks and national (including economic) security threats and dangers.

The law can serve as a basis for establishing conceptual provisions in strategic planning, which will sum up the normative field of strategic planning in a substantive sense, as well as regulate the relations between the bodies, objects, and subjects involved in this field.

Armenia's economy is still in the stage of transitional transformation (with its special manifestations) and the internal and external factors affecting it make it difficult to ensure economic security. In such conditions, the need to create a system of ensuring economic security becomes even more acute and important.

The main directions of the state for ensuring economic security are: promoting the growth of production volumes, structural transformations of the economy, ensuring a sufficient standard of living for the main part of the population and increasing the quality of life, measures aimed at the formation of the middle class of the society.

One of the problems of forming the economic security system is the management and monitoring of statistics of the data necessary for the calculation of economic security indicators, many indicators cannot be calculated due to the lack of statistical data on them and in many cases they are unreliable.

Among the indicators of economic security of RA, the calculation of the size of the GDP occupies a key place. The priority problems of the economic security of the republic are the differentiation of incomes between the richest 10 percent and the poorest 10 percent of families, the level of poverty, and the level of income concentration. Among the processes that threaten economic security, the continuous outflow of intellectual capital from the country, which is a constituent part of the country's national wealth, is of particular importance for RA, which causes considerable concern due to its importance and needs urgent measures and steps. Another threat is the existence of the shadow economy and corruption, which is a serious obstacle to the implementation of Armenia's economic interests and, therefore, to ensuring economic security.

For our republic, as a small and open economy, independent provision of economic security is a complicated process. The most effective way for this is the collective form of ensuring economic security, acting within the

framework of international collective security systems, in which the interests of the leading countries are favorable for ensuring the economic security of our country.

Based on the main conclusions obtained as a result of the performed work, it is advisable to make the following recommendations.

In Armenia, it is necessary to create an economic security system, which should be based on the development of monitoring, analyses, forecasts, and other measures (National Security Council, RA Ministry of Economy).

Management of the economic security system should mainly consist of two levels. At the first level of management, the strategy for ensuring economic security should be developed in the form of the Security Council, and the second, the tactics of implementing this strategy and the implementation of the strategy itself should be developed in the form of the government.

It is necessary to create a structure for the selection of measures aimed at ensuring economic security, which will make it possible to carry out the preliminary selection of the mentioned measures in the complex system of economic security.

State reserves play a major role in ensuring economic security, which should mainly play a stabilizing role in the economic system. Reserves should be calculated for the period necessary to counter all possible threats, and it is advisable to identify those threats, for the neutralization of which the necessary reserves partially neutralize another threat as well. Such an approach will make it possible to avoid double calculation of reserves.

It is necessary to develop the concept and strategy of Armenia's economic security, which will clearly define the directions, means, and measures for ensuring security for each year. Based on the economic security achievements of each year (taking into account also the shortcomings of this process), it is necessary to review the main

provisions of both the concept and the strategy. It is also important to emphasize that the results of economic security should be the basis for defining the priorities of both strategic and current programs of the republic. And if we currently mean the development of this or that sector of the economy (for example, information technology, manufacturing industry, tourism, etc.) by the priority of economic development, then it is time to choice of priority directions of economic policy which must related to the economic security indicators of the country. This indicators, in turn, directly determine the national interests of the country, and closely chained with solution of problems related to the interests and living standards of the majority of the population.

Moreover, the current state support of priority sectors of economy and related programs are built on principles and approaches that are not grounded in practice, thereby destroying the foundations of the market economy. And if the instruments of state support consists in the allocation of state budgetary funds to one or another branch of the real sector, then an unequal economic environment is created between certain sectors of the market economy, which, in other equal conditions, artificially directs state resources more often to tax benefits (tax loan). This practice currently accounts for 1/3 of the state budget revenues. Such an approach is not suitable for the structures of the market economy, because the principle of "equal capitals bring equal profit" applies here. In other words, at the expense of inter-branch and intra-branch competition, the market economy forms such an environment for the release of goods and services, where "interventions" prevent the full operation of that structure. In other words, the market mechanism ensures national interests.

Moreover, the current state support of priority sectors of economy and related programs are built on principles and approaches that are not grounded in practice, thereby destroying the foundations of the market economy. And if the instruments of state support consists in the allocation

of state budgetary funds to one or another branch of the real sector, then an unequal economic environment is created between certain sectors of the market economy, which, in other equal conditions, more often artificially directs state resources to tax benefits (tax loan) provision. This practice currently accounts for 1/3 of the state budget revenues. Such an approach is not suitable for the structures of the market economy, which based on the principle of "equal capitals bring equal profit". In other words, at the expense of inter-branch and intra-branch competition, the market economy forms such an environment for the production of goods and services, where "interventions" prevent the full operation of that structure. And of course, the market mechanisms ensures national interests.

To implement all the above-mentioned provisions, the legal basis of economic security must also be provided. For this purpose, after developing the concept of economic security, it is necessary to adopt the Law "On Economic Security" and other legal documents arising from it, as well as to develop and approve annual economic security programs in the form of laws in the National Assembly to increase the national security of the republic.

As evidenced by the results of the evaluation and analysis of the economic security of the Republic of Armenia:

- ✓ 1995-2022 during the period, the economic security indicators of the republic are still at a low level,
- ✓ the indicators of economic security assessment, which have worsened as a result of this study and are considered a threat to the country, have increased,
- ✓ To improve the level of economic security, first of all, it is necessary to pay attention to the improvement of macroeconomic indicators, which, according to the evaluation methodology, are in the range of danger.

РЕЗЮМЕ ДЛЯ ИНОСТРАННЫХ СТУДЕНТОВ

Глобализация и экономическая интеграция мировой экономики, а также требования, предъявляемые к национальным экономикам в связи с гармонизацией глобальных, межнациональных и национальных процессов, ставят новые задачи, особенно перед правительствами развивающихся и бывших тоталитарных стран, сталкивают и «принуждают» их к конкуренции с экономически мощными государствами. Целью же развивающихся стран становится – не стать придатком и не быть «проглоченными» экономически мощными странами. В таких условиях проблема обеспечения национальной безопасности во многом зависит от степени развития экономики страны и успешности проводимой социально-экономической политики.

После распада Советской империи новым независимым государствам пришлось самостоятельно решать проблемы экономической безопасности, которые в переходный период и во время проведения масштабных структурных преобразований были отодвинуты на второй план. Вопрос обеспечения экономической безопасности Армении ещё нуждается в научном обосновании, он должен стать предметом изучения исследователей и специалистов. При этом, концептуальные подходы к решению данной проблемы должны содержать региональные, научно-технические, социальные, экологические и ряд других аспектов.

Каковы основные положения стратегии экономической безопасности государства, как она оценивается, в каких направлениях и с использованием каких механизмов она будет обеспечиваться и как будут учитываться экономические интересы страны в регионе и мире в условиях быстро меняющейся экономики, при каких обстоятельствах обеспечивается высокий уровень экономической безопасности и как в этом вопросе может быть полезен опыт стран с высоким уровнем экономической безопасности? Все эти вопросы не просто рито-

рические, они требуют скорейшего решения в рамках национальной политики страны.

Также очевидно, что в современном мире все больше средств выделяется на поддержание и укрепление как внешней, так и внутренней безопасности. Причем это явление наблюдается практически на всех континентах и во всех странах. Возможности улучшения как внутренних, так и внешних составляющих безопасности государства, в первую очередь, зависят от возможностей и потенциала реализации экономической безопасности.

В преддверии новых геополитических трансформаций, особенно для стран с малой и открытой экономикой, важное значение приобретают экономические исследования вопросов национальной безопасности и, особенно, экономической безопасности, в частности – оценки уровня безопасности и ее количественного измерения. Благодаря такой оценке становится возможным выявить как достижения, так и пробелы и недостатки в процессе обеспечения экономической безопасности. Целью исследования является разработка методики оценки уровня экономической безопасности страны, группы стран, а также экономических союзов, и на ее основе – оценка экономической безопасности указанных субъектов, как в целом, так и по отдельности на протяжении определенных периодов времени. Обсуждаются также основные и приоритетные направления экономической политики РА, подчеркивается преемственность и последовательность целей, их связь с программными документами Правительства РА, разработанными для отдельных лет. В ходе исследования отчетливо выявилась проблема отсутствия таких связей, что, особенно в течение длительного периода времени, ослабляет эффективность проводимой экономической политики.

Более того, определение первичных и приоритетных направлений социально-экономического развития РА не базируется на единой теоретико-методологической основе, не определены также подходы

и принципы формирования такой системы, что делает программы социально-экономического развития субъективными, равно как и основанную на них политику. По этой причине в основу разработки программ социально-экономического развития предлагается брать состояние экономической безопасности страны, возможности возникновения угроз и пути повышения безопасности. Важно подчеркнуть, что предложенная методика оценки экономической безопасности может быть использована и для оценки уровня национальной безопасности. Согласно разработанной методике оценки экономической безопасности выбраны 20 наиболее важных макроэкономических показателей, обуславливающих уровень экономической безопасности Республики Армения, ЕАЭС, республик Южного Кавказа и 10-и стран с наилучшим качеством жизни. Уровень экономической безопасности был оценен двумя способами: с помощью оценок по балльной системе и путём построения матриц. В результате анализа были выявлены основные угрозы экономической безопасности и подчеркнута важность нивелирования масштабов отрицательных последствий. В Республике Армения переход от командной экономики к свободной рыночной системе сопровождался множеством политических, экономических, социальных трудностей и угроз. За последние три десятилетия Республика Армения, находясь в особенно сложной геополитической обстановке, хотя и с большим трудом, сумела небольшими темпами повысить уровень экономической безопасности страны, и особенно это проявилось в 2018-2022 годах.

По мнению авторов, основой жизнеспособности и существования государства была и остается национальная безопасность, одной из главных составляющих которой является экономическая безопасность. Соответственно, в зависимости от времени и изменения среды компоненты экономической безопасности могут меняться и иметь существенное или несущественное значение.

В исследованиях многих авторов подчеркивается важность эконо-

мической безопасности в повышении стабильности и эффективности экономики, и особенно влияния внешних шоков на факторы, обеспечивающие экономическое развитие развивающихся стран.

В то же время трудность формулирования универсальной концепции международной экономической безопасности заключается в том, что сущность всеобщей (международной) безопасности воспринимается и трактуется разными специалистами по-разному. Эксперты стран с переходной экономикой и развитых индустриальных стран уделяют особое внимание выявлению различий, а не сходств в понимании этой концепции. Проблема заключается ещё и в том, что любое внешнее воздействие, даже носящее ярко выраженный негативный характер, нельзя квалифицировать как угрозу безопасности страны. Это зависит от размера экономики, уровня развития, степени диверсификации национальной экономики, степени готовности нейтрализовать это влияние и т. д. Важное значение имеет и состояние национальной экономики на момент возникновения угрозы.

Существование различных мнений по вопросам международной экономической безопасности объясняется различиями в историческом развитии стран, различиями интересов стран и экономических объединений, степенью государственного вмешательства в обеспечение безопасности, необходимостью сочетания правительственных (государственных) и рыночных сил и т.д.

Согласно другому подходу предметом концепции международной экономической безопасности считаются не случайно возникающие, а намеренно созданные угрозы экономике страны. А среди методов подрыва такой безопасности выделяют следующие: нарушение общих правил международной торговли, применение ограничений на ввоз и вывоз товаров и услуг, преднамеренная девальвация валюты страны, ограничение международных перевозок, каналов связей, блокирование международной миграции капитала и инвестиционных потоков, создание барьеров для передачи технологий и научно-тех-

нического обмена, организация оттока высококвалифицированной рабочей силы и т.д.

Следует также отметить, что данные инструменты широко используются в ходе современных геополитических изменений, «холодных» войн, торговых и реальных войн между странами (российско-украинская, израильско-палестинская, торговая война между США и Китаем и др.).

Оценка уровня экономической безопасности страны, группы стран и экономических союзов

Формирование системы показателей экономической безопасности и определение их предельных (пороговых) значений являются важнейшими инструментами реализации государством функции обеспечения экономической безопасности. Предельные (пороговые) значения представляют собой количественные параметры, с помощью которых становится возможным оценить степень уязвимости и угрозы ситуации, сложившейся в отдельных отраслях экономики, с точки зрения экономической безопасности. Иными словами, посредством определения предельных (пороговых) значений показателей экономической безопасности, экономическим интересам государства придается количественная определенность.

Важно отметить, что система показателей экономической безопасности и их предельные (пороговые) значения различны для разных стран, что обусловлено различием национальных интересов и способов их реализации, что хорошо видно из определений экономической безопасности, сформулированных экспертами для стран, находящихся на разных уровнях экономического развития.

Оценка экономической безопасности оценок методом балльной системы

Принято, что оценки показателей, характеризующих экономическую безопасность, варьируются от 0 до 1 в зависимости от величины

отклонения от их пороговых значений. Для иллюстрации сказанного приведем следующий пример. Предположим, пороговое значение уровня инфляции установлено на среднегодовом уровне 5-6%. Это означает, что если данный критерий соблюдается в данной экономике, то данный показатель экономической безопасности можно оценить 1 баллом (единицей). По мере увеличения уровня инфляции оценка экономической безопасности данного показателя будет пропорционально уменьшаться достигнув нуля (как минимального значения), что будет означать, что уровень инфляции достиг неуправляемого уровня.

Рассмотрим относительную оценку реальных и вероятных (потенциальных) угроз как основную характеристику, определяющую экономическую безопасность. Данная оценка будет представлять собой средневзвешенную оценку показателей экономической безопасности, характеризующих данную экономику, которая будет принята в качестве основной характеристики. Понятно, что она будет варьироваться в пределах 0-1.

На основе вышеизложенного принципа страны или их группы по уровню экономической безопасности можно разделить на четыре группы: абсолютно безопасные, если основная характеристика равна 1, практически безопасные - от 0,7 до 0,9, достаточно безопасные - от 0,5 до 0,6 и находящиеся на низком уровне экономической безопасности - от 0 до 0,4.

С применением описанной балльной системы были получены результаты для Республики Армения и трех республик Южного Кавказа за 1995-2022 годы, стран ЕАЭС, а также экономической безопасности 10-ти стран с высоким уровнем качества жизни за 2012-2022 годы, рассчитанные на основе 20 избранных макроэкономических показателей и их обобщенному сводному индексу.

Следует отметить, что пороговые значения всех включенных в исследование показателей были рассчитаны на основе международ-

ного опыта. Отклонение фактического значения каждого показателя от порогового значения определяется следующим образом (фактическое значение показателя за данный год / пороговое значение данного показателя) $\times 100 - 100$. При этом, если величина отклонения превышает 100%, то данному показателю присваивается оценка 0 баллов. При колебании величины отклонения от 0 до 100 % балл снижается на 0,1 балла за каждые 10 % отклонения от порогового значения. Путем усреднения баллов определялся индекс экономической безопасности (или основная характеристика) для каждого года. Согласно полученным результатам, за период 1995-2022 гг. Республика Армения улучшила некоторые показатели экономической безопасности.

Оценка экономической безопасности посредством формирования матрицы (матричным способом)

Оценка экономической безопасности была выполнена авторами также с использованием другого – матричного метода, позволяющего выявить угрозы экономической безопасности и проблемы, требующие приоритетного решения.

Согласно предлагаемой методике показатели экономической безопасности классифицируются по следующим четырем критериям: (1) вероятность возникновения опасности, характеризуемой данным показателем, (2) степень ее воздействия, (3) продолжительность воздействия и (4) скорость изменения нежелательных проявлений.

Использование матричного метода повышает эффективность системы оценки и управления показателями экономической безопасности, помогая более точно оценить степень опасности конкретного показателя для экономики. Как результат это способствует эффективному управлению ресурсами, предоставляя возможность оценивать работу структур, регулирующих отношения в сфере экономической безопасности и играющих направляющую роль в разработке будущей политики развития. В то же время этот метод полезен с точки зрения

комплексного анализа показателей экономической безопасности, так как дает возможность изучения множественной взаимосвязи между различными показателями, то есть того, как произошло изменение того или иного показателя и как это повлияет на другие показатели.

Для оценки влияния показателей экономической безопасности в результате анализа были приняты следующие значения: Эффект оценивается как малый, если отношение среднего значения к предельному значению находится в пределах от 0,66 до 1, средний, если он находится в диапазоне от 1 до 3, и большой, если он превышает значение 3.

Хотя из общей логики матрицы следует, что обеспечение экономической безопасности страны произойдет, если максимальное количество показателей найдет место в первом блоке, движение показателей к месту назначения не будет происходить кратчайшим путем, в порядке движения от 9-ой ячейки до 5, затем до первой. По сути, существует множество возможных способов улучшить положение отдельных показателей в матрице.

Матричный способ оценки применим ко всем выбранным авторами показателям экономической безопасности. При практическом применении он позволяет оценить фактическое состояние каждого показателя, охарактеризовать взаимосвязь между различными показателями, а также способствует их планомерному и систематическому совершенствованию.

Процедура оценки с использованием матрицы основана на анализе прошлых событий, изучении факторов, влияющих на достижение фактических значений показателей экономической безопасности, наблюдении за существующими экономическими структурами и сложившимися условиями.

Так, например, требования к показателям, включенным в первый, пятый и девятый ячейки матрицы, следующие:

- показатели экономической безопасности, включенные в пер-

вый блок, должны в долгосрочном периоде находиться в безопасной зоне, достаточно далекий от определенного предельного значения, что полностью соответствует экономическим интересам государства или отдельной группы государств;

- в пятой ячейке должны быть помещены показатели, вероятность возникновения и масштаб воздействия которых имеет среднее влияние. Поведение этих показателей стабильно и находится в пределах определенного порогового значения;
- показатели экономической безопасности, помещенные в девятую ячейку – это угрозы экономической безопасности. Они отклоняются от установленных предельных значений в долгосрочной перспективе и представляют угрозу экономической безопасности, а по масштабу своего воздействия и вероятности возникновения представляют большую опасность. Здесь пересекаются максимальная степень уязвимости и высокая вероятность возникновения угрозы, поэтому реализация экономических интересов страны оказывается под серьезной угрозой.

В результате расчета средних значений показателей экономической безопасности часть из них явно была отнесена к безопасной зоне, оказавшись в лучшем состоянии, чем их предельные значения. Для этих показателей соотношение «среднее значение/предельное значение» не рассчитывалось, и они автоматически были зачислены в самую безопасную – первую ячейку матрицы.

Результаты исследования показывают, что в РА в 1995-2022 гг. улучшились некоторые показатели экономической безопасности (сокращенно ПЭБ), такие как индекс среднемесячной номинальной заработной платы (выраженный в долларах США) или ПЭБ-3, среднегодовой уровень инфляции (ПЭБ-4), показатель характеризующий экономический рост (ПЭБ-7), дефицит государственного бюджета (ПЭБ-17), денежная масса по отношению к ВВП (ПЭБ-18), соотношение импортируемых товаров и услуг к ВВП (ПЭБ-19), а также показа-

тели, характеризующие долю импорта в конечном потреблении (ПЭБ-20). Остальные показатели экономической безопасности РА остались практически без изменений или оказались в более опасной зоне (см. таблицу 1). В частности, вызывает беспокойство ухудшение показателей уровня безработицы (% от экономически активного населения) (ПЭБ-6), уровня преступности (ПЭБ-15), которые являются также социальными барометрами состояния общества.

Таблица 1

Результаты оценки экономической безопасности Республики Армения путем составления матриц и классификация показателей по степени их опасности в 1995-2022 гг.

<i>Наименование показателя экономической безопасности</i>	<i>Условное обозначение</i>	<i>Периоды времени</i>				
		<i>1995-2000</i>	<i>2001-2006</i>	<i>2007-2011</i>	<i>2012-2016</i>	<i>2017-2022</i>
		<i>Номер ячейки матрицы</i>				
ВВП на душу населения, долл. США	ПЭБ 1	9	9	9	9	9
Коэффициент Джини (коэффициент концентрации доходов)	ПЭБ 2	9	9	9	9	9
Среднемесячная номинальная заработная плата, дол. США	ПЭБ 3	9	9	8	8	6
Доля расходов на конечное потребление домохозяйств в ВВП, %	ПЭБ 4	8	8	8	8	8
Среднегодовой уровень инфляции, %	ПЭБ 5	9	4	7	3	4
Среднегодовой уровень безработицы, в % от экономически активного населения	ПЭБ 6	8	7	9	9	9
Экономический рост, %	ПЭБ 7	4	1	6	5	4
Внутренний государственный долг (в национальной валюте), % от ВВП	ПЭБ 8	1	1	2	3	6
«Естественный» уровень показателя бедности, %	ПЭБ 9	9	9	9	9	9
Расходы на научные исследования и разработки по отношению к величине ВВП, %	ПЭБ 10	8	9	9	9	9
Доля обрабатывающей промышленности в промышленном производстве, %	ПЭБ 11	8	8	9	8	8

Продолжение таблицы 1

Наименование показателя экономической безопасности	Условное обозначение	Периоды времени				
		1995- 2000	2001- 2006	2007- 2011	2012- 2016	2017- 2022
		Номер ячейки матрицы				
Доля машиностроительной отрасли в промышленном производстве, %	ПЭБ 12	9	9	9	9	9
Объем инвестиций в основной капитал по отношению к ВВП, %	ПЭБ 13	9	7	8	9	9
Предполагаемая продолжительность жизни с момента рождения (лет)	ПЭБ 14	6	6	6	6	6
Уровень преступности (количество преступлений на 100 000 человек)	ПЭБ 15	7	7	8	9	9
Внешний государственный долг (правительства и центрального банка) по отношению к ВВП, %	ПЭБ 16	9	9	9	9	9
Дефицит (профицит) государственного бюджета, % к ВВП	ПЭБ 17	9	3	6	7	7
Денежная масса (M2) по отношению к ВВП, %	ПЭБ 18	9	9	9	8	7
Отношение объема импортируемых товаров и услуг к ВВП, %	ПЭБ 19	8	8	7	7	7
Доля импорта в конечном потреблении, %	ПЭБ 20	8	8	7	7	7

В результате классификации показателей становится возможным поместить их в общую матрицу, ячейки которых характеризуют степень угрозы экономической безопасности. Матрица позволяет определить те угрозы экономической безопасности, которые достигли такого уровня своего воздействия и вероятности возникновения, которые требуют принятия срочных мер по улучшению ситуации.

Предлагаемая методология оценки экономической безопасности (она представляет собой сочетание двух взаимодополняющих методов) в отличие от других систем или подходов оценки имеет следующие преимущества:

- ✓ необходимой для оценки базой данных являются существующие статистические данные, то есть они основаны как на международных, так и на отечественных (в частности, Армстата РА)

- официальных статистических данных. А если рассчитываются отдельные показатели, то основой их расчета являются официальные или государственные статистические базы данных;
- ✓ используемые статистические данные являются общедоступными и доступны из опубликованных открытых источников, в том числе электронных ресурсов. Другими словами, используемые данные не только доступны и публичны, но также надежны, поскольку являются официальными, и заслуживают доверия;
 - ✓ положительным следует также считать то, что оценка степени экономической безопасности с использованием цифровых баз данных были произведены с использованием компьютерной программы, эти расчеты могут быть выражены также с помощью шаблона или формулы, что существенно упрощает и ускоряет работу с базами данных;
 - ✓ количество используемых в методике показателей составляет два десятка и включает в себя основные аспекты и тенденции социально-экономического развития общества. Однако в зависимости от цели исследования и предлагаемых задач количество показателей может не только увеличиваться, но и уменьшаться (при этом количество включенных в расчёты показателей должно быть достаточным для полного достижения поставленной цели). То есть, в предлагаемой методике количество макроэкономических, микроэкономических и мегаэкономических показателей не подлежит ограничению, если они обеспечивают полноту и целостность оценки для дальнейшей разработки социальной и экономической политики;
 - ✓ методология предполагает широкий перечень сравнительных (относительных) показателей, а показатели с абсолютной величиной весьма ограничены (их всего два), что позволяет не ограничиваться в выборе количества используемых для исследования макроэкономических показателей;

- ✓ использованная методика применена к макроэкономическим годовым показателям, хотя если показатели рассчитываются с использованием других временных интервалов (месяц, квартал, полугодие, год и др.), то они также могут стать основой для проведения расчетов, тем самым делая методику более гибкой.

Обоснована также корректность и научная обоснованность сложения оценок, полученных для разных макроэкономических показателей друг с другом. Если формирование статистических рядов по одному и тому же макроэкономическому показателю (например, экономического роста или инфляции) и оценка с их помощью уровня экономической безопасности не вызывает вопросов, то при сложении оценок разных макроэкономических показателей для получения полноценной картины изучаемого явления, это обстоятельство может подвергнуться критике. Однако критика не уместна, поскольку для измерения экономической безопасности эти «разнородные» с точки зрения математики показатели, приводятся к общему знаменателю, что оправдывает дальнейшие действия, связанные с ними.

Соответственно, сопоставимость макроэкономических показателей обеспечивается использованием нескольких методов. Во-первых, только два из используемых показателей выражены в абсолютном значении, что может затруднить работу с ними. Это обстоятельство «нейтрализуется» путем приведения показателей, выраженных абсолютной величиной к относительным, что делает возможным их сопоставимость. На первом этапе фактические макроэкономические показатели привязываются к их пороговым (предельным) значениям и умножаются на 100%, в результате чего мы получаем процентное выражение, которое в дальнейшем используется для расчетов. Во-вторых, полученным относительным показателям присваиваются балльные оценки (балльные оценки экономической безопасности в случае использования одноимённого метода), что обеспечивает полную сопоставимость показателей. Важно отметить также, что если

мы хотим иметь полную картину уровня экономической безопасности за какой-либо год, выраженную совокупностью всех макроэкономических показателей, то присвоенные им баллы следует сложить. Также важно подчеркнуть, что только 10% макроэкономических показателей, выбранных для оценки уровня экономической безопасности, имеют абсолютное значение, остальные являются относительными (выраженными в %) показателями, что делает применяемый метод более надежным.

Второй метод расчета уровня экономической безопасности путем построения матриц не имеет упомянутых выше трудностей и методологических проблем.

Для большей наглядности приведем следующие примеры. Предположим, в корзине 5 яблок, 6 груш и 9 слив. Чтобы иметь полное представление о содержимом корзины, нам необходимо ввести понятие «фрукты», и ответ на вопрос, сколько фруктов в корзине, очевиден: 20. Такой расчет мы делаем, суммируя количества разных видов фруктов. Или, когда мы рассчитываем объем (величину) внешнеторгового оборота страны товарами и услугами, он получается как сумма двух показателей разного экономического содержания: экспорта и импорта. Это возможно, несмотря на то, что экспорт и импорт связаны друг с другом величиной чистого экспорта, когда он положительный, ВВП страны увеличивается, а когда отрицательный, наоборот, уменьшается. При этом экспорт и импорт весьма различны по своему физическому и материальному содержанию, однако объем внешней торговли рассчитывается как единый показатель, что становится возможным по той простой причине, что стоимость товаров и услуг измеряется либо в драмах, либо в другой валюте (например, в долларах США). И в этом случае ни у кого не возникает сомнений в правильности такого действия. То же самое касается и расчета показателя государственного долга, который формируется из суммы внутреннего и внешнего долга. У каждого из составляющих не только

разный порядок получения, но и разное содержание. Однако при расчете государственного долга страны они суммируются и оцениваются в единой валюте (драмах или другой валюте). Другой пример также относится к экономике. Речь идет о расчете ВВП. Как известно, отраслевую структуру ВВП формируют различные отрасли производства: сельское хозяйство, рыболовство, промышленность, строительство, торговля и услуги. Хотя они различаются по методам расчета и содержанию, для целей расчета размера ВВП страны они суммируются, поскольку оцениваются в стоимостном выражении (в долларах или другой валюте). Приведенные примеры можно продолжать, но из сказанного следует, что для интеграции явлений и категорий различного содержания необходимо иметь инструментарий, обеспечивающий сопоставимость показателей и позволяющий обеспечить их соизмеримость.

Результаты оценки экономической безопасности Республики Армения балльным методом для отдельных периодов времени (1995-2000, 2001-2006, 2007-2011, 2012-2016, 2017-2022 гг.), а также за отдельные годы (1995, 2000, 2021, 2022) приведены на графике 1 и графике 2.




График 1. Средние суммарные показатели экономической безопасности Республики Армения за отдельные периоды времени




График 2. Суммарные показатели экономической безопасности Республики Армения за отдельные годы

По результатам анализа можно сделать вывод, что уровень экономической безопасности Республики Армения, рассчитанный на основании выбранных нами показателей, характеризующим уровень безопасности, за исследуемый период значительно увеличился. При этом, снижение уровня безопасности в 2020 году произошло из-за последствий пандемии COVID-19 и 44-дневной армяно-азербайджанской войны. В качестве приоритетов в деле обеспечения экономической безопасности можно выделить показатели, наиболее отклоняющиеся от пороговых значений (доля расходов на конечное потребление домохозяйств в ВВП, уровень бедности, уровень безработицы, коэффициент Джини (концентрация доходов), расходы на образование и науку в % к ВВП, размер внешнего государственного долга). Доля машиностроения в промышленном производстве, а также доля импорта во внутреннем потреблении также находятся на опасном уровне (см. матрицы 1-5).

Матрица 1

Матрица показателей экономической безопасности РА за 1995-2000 гг.

Вероятность возникновения	Большая, > 0,66	6 ПЭБ 14	8 ПЭБ 4, ПЭБ 6, ПЭБ 10, ПЭБ 11, ПЭБ 19, ПЭБ 20	9 ПЭБ 1, ПЭБ 2, ПЭБ 3, ПЭБ 5, ПЭБ 9, ПЭБ 12, ПЭБ 13, ПЭБ 16 ПЭБ 17, ПЭБ 18
	Средняя, $0,33 < X < 0,66$	3	5	7 ПЭБ 15
	Небольшая, < 0,33	1 ПЭБ 8	2	4 ПЭБ 7
		Небольша	Средня	Большая
		<i>Степень влияния</i>		

Матрица 2

Матрица показателей экономической безопасности РА за 2001-2006 гг.

Вероятность возникновения	Большая, > 0,66	6 ПЭБ 14	8 ПЭБ 4, ПЭБ 11, ПЭБ 19, ПЭБ 20	9 ПЭБ 1, ПЭБ 2, ПЭБ 3, ПЭБ 9, ПЭБ 10, ПЭБ 12, ПЭБ 16, ПЭБ 18
	Средняя, $0,33 < X < 0,66$	3 ПЭБ 17	5	7 ПЭБ 6, ПЭБ 13, ПЭБ 15
	Небольшая, < 0,33	1 ПЭБ 7, ПЭБ 8	2	4 ПЭБ 5
		Небольшая	Средняя	Большая
		<i>Степень влияния</i>		

Матрица 3

Матрица показателей экономической безопасности РА за 2007-2011 гг.

Вероятность возникновения	Большая, $> 0,66$	6 ПЭБ 7, ПЭБ 14, ПЭБ 17	8 ПЭБ 3, ПЭБ 4, ПЭБ 13, ПЭБ 15, ПЭБ 19	9 ПЭБ 1, ПЭБ 2, ПЭБ 6, ПЭБ 9, ПЭБ 10, ПЭБ 11, ПЭБ 12, ПЭБ 16 ПЭБ 18
	Средняя, $0,33 < X < 0,66$	3	5	7 ПЭБ 5, ПЭБ 19, ПЭБ 20
	Небольшая, $< 0,33$	1	2 ПЭБ 8	4
		Небольшая	Средняя	Большая
		<i>Степень влияния</i>		

Матрица 4

Матрица показателей экономической безопасности РА за 2012-2016 гг.

Вероятность возникновения	Большая, $> 0,66$	6 ПЭБ 14	8 ПЭБ 3, ПЭБ 4, ПЭБ 11, ПЭБ 18	9 ПЭБ 1, ПЭБ 2, ПЭБ 6, ПЭБ 9, ПЭБ 10, ПЭБ 12, ПЭБ 13, ПЭБ 15, ПЭБ 16
	Средняя, $0,33 < X < 0,66$	3 ПЭБ 5, ПЭБ 8	5 ПЭБ 7	7 ПЭБ 17, ПЭБ 19, ПЭБ 20
	Небольшая, $< 0,33$	1	2	4
		Небольшая	Средняя	Большая
		<i>Степень влияния</i>		

**Матрица показателей экономической безопасности РА за
2017-2022 гг.**

Вероятность возникновения	Большая, $> 0,66$	6 ПЭБ 3, ПЭБ 8, ПЭБ 14,	8 ПЭБ 4, ПЭБ 11	9 ПЭБ 1, ПЭБ 2, ПЭБ 6, ПЭБ 9, ПЭБ 10, ПЭБ 12, ПЭБ 13, ПЭБ 15, ПЭБ 16
	Средняя, $0,33 < X < 0,66$	3	5	7 ПЭБ 17, ПЭБ 18, ПЭБ 19, ПЭБ 20
	Небольшая, $< 0,33$	1	2	4 ПЭБ 5, ПЭБ 7
		Небольшая	Средняя	Большая
		Степень влияния		

По мнению авторов, обеспечение экономической безопасности является одной из важных гарантий независимости, суверенитета страны, условием стабильной и эффективной жизни общества и личности. Именно поэтому обеспечение экономической безопасности является одним из главных приоритетов развития национальной экономики.

Экономическая безопасность государства – сложное и многофакторное понятие. Являясь составной частью системы национальной безопасности, она одновременно является основой формирования компонентов, входящих в структуру национальной безопасности: военной, информационной, социально-политической, продовольственной, экологической безопасности и др. Все эти компоненты взаимосвязаны, один дополняет другой, и невозможно на протяжении длительного периода времени отдавать приоритет одному из них, игнорируя остальные. В основе всех упомянутых компонентов, в свою

очередь, лежат, главным образом, экономические факторы, определяющие безопасность того или иного компонента.

Понятие экономической безопасности в развитых странах Запада рассматривается как конкурентоспособность национальной экономики и ее отраслей на мировом рынке, обеспечивающая жизнеспособность свободной рыночной экономики страны среди многогранных тенденций развития мирового хозяйства. Для экономик, участвующих в международном разделении труда и конкурирующих на рынке, экономическая безопасность фактически сводится к соответствующему реагированию на текущие риски и опасности для такой конкуренции.

В Республике Армения экономическая безопасность как предмет исследования все еще находится в зачаточном состоянии. В случае Армении экономическая безопасность рассматривается как концепция, вытекающая из особенностей, характеризующих политику переходного периода. В республике нет системного подхода к проблеме экономической безопасности и нет её понимания как единой системы. В Республике Армения до сих пор не разработаны целостная концепция экономической безопасности, правовая база обеспечения экономической безопасности и, как следствие, нет государственной стратегии по обеспечению экономической безопасности.

Стратегия экономической безопасности должна соответствовать национальным интересам и стать основным ориентиром при принятии важнейших политических и экономических решений. Она должна содержать показатели (индикаторы), которые будут фиксировать возникновение внутренних и внешних угроз, а также меры, направленные на нейтрализацию этих угроз.

Процесс обеспечения экономической безопасности в настоящее время не систематизирован и не обобщен в документе, обязательном к исполнению. В этом смысле может оказаться полезным использование инструментария стратегического планирования, который пред-

ставляет собой совокупность скоординированных мер государственной политики, направленных на определение долгосрочных целей национальных интересов страны, социально-экономического развития и национальной безопасности, определение стратегических национальных интересов, приоритетов и определения путей и инструментов для их решения, а также для выявления рисков и угроз социально-экономического развития и национальной (в том числе экономической) безопасности.

Закон может служить основой для установления концептуальных положений стратегического планирования, которые будут суммировать нормативное поле стратегического планирования в содержательном смысле, а также регулировать отношения между учреждениями, объектами и субъектами, вовлеченными в этот процесс.

Экономика Армении все еще находится в стадии переходных преобразований (с присущими ей особенностями), и действующие на нее внутренние и внешние факторы затрудняют обеспечение экономической безопасности. В таких условиях необходимость создания системы обеспечения экономической безопасности становится еще более острой и важной задачей.

Основными направлениями государственной политики по обеспечению экономической безопасности являются: содействие росту объемов производства, структурные преобразования экономики, обеспечение достаточного уровня жизни основной части населения и повышение качества жизни, меры, направленные на формирование среднего класса общества.

Одной из проблем формирования системы экономической безопасности является ведение и мониторинг статистических данных, необходимых для расчета показателей экономической безопасности, многие показатели не могут быть рассчитаны из-за отсутствия статистических данных по ним и в отдельных случаях они недостоверны.

Среди показателей экономической безопасности РА расчет размера ВВП занимает ключевое место. Основными проблемами экономической безопасности республики являются дифференциация доходов между 10% самых богатых и 10% самых бедных семей, уровень бедности, уровень концентрации доходов. Среди процессов, угрожающих экономической безопасности, особое значение для РА имеет продолжающийся отток интеллектуального капитала из страны, который является составной частью национального богатства, что вызывает значительную обеспокоенность и требует неотложных мер. Другой угрозой является существование теневой экономики и коррупции, что является серьезным препятствием для реализации экономических интересов Армении и, следовательно, обеспечения экономической безопасности.

Для нашей республики, как небольшой и открытой экономики, самостоятельное обеспечение экономической безопасности является очень сложным и трудным процессом. Наиболее эффективным способом для этого является коллективная форма обеспечения экономической безопасности, действующая в рамках международных систем коллективной безопасности, при которой интересы ведущих стран благоприятствуют обеспечению экономической безопасности нашей страны.

На основании результатов, полученных в исследовании, можно сделать следующие выводы и рекомендации.

В Армении необходимо создать систему экономической безопасности, которая должна основываться на развитии мониторинга, анализа, прогнозов и других мер (например, со стороны совета национальной безопасности, Министерства экономики РА).

Управление системой экономической безопасности должно состоять в основном из двух уровней. На первом уровне управления должна быть разработана стратегия обеспечения экономической безопасности со стороны Совета Безопасности, а на втором - тактика реали-

зации этой стратегии и реализация самой стратегии со стороны правительства.

Необходимо создать процедуру выбора мер, направленных на обеспечение экономической безопасности, которая позволит осуществлять предварительный выбор определенных мероприятий в комплексной системе экономической безопасности.

Большую роль в обеспечении экономической безопасности играют государственные резервы, которые должны играть преимущественно стабилизирующую роль в экономической системе. Резервы следует рассчитывать на период, необходимый для противодействия всем возможным угрозам, и желательно выявить те угрозы, для нейтрализации которых необходимые резервы частично нейтрализуют и другую угрозу. Такой подход позволит избежать двойного расхода резервов.

Необходимо разработать концепцию и стратегию экономической безопасности Армении, которые будут четко определять направления, средства и меры обеспечения безопасности на каждый год. С учетом достижений экономической безопасности каждого года (учитывая и недостатки этого процесса) необходимо пересмотреть основные положения как концепции, так и стратегии. Важно также подчеркнуть, что результаты экономической безопасности должны стать основой для определения приоритетов как стратегических, так и текущих программ республики. И если под приоритетом экономического развития нашей страны в настоящее время понимать развитие того или иного сектора экономики (например, информационных технологий, туризма или др.), то настало время признать приоритетными направлениями такие, которые непосредственно связаны с национальными интересами республики, а также направлены на решение проблем, связанных с повышением уровня жизни большей части населения.

Для реализации всех вышеперечисленных положений необходимо также обеспечить правовую основу экономической безопасности. Для этого после разработки концепции экономической безопасности необходимо принять Закон «Об экономической безопасности» и другие вытекающие из него правовые документы, а также разработать и утвердить ежегодные программы по обеспечению экономической безопасности в форме законов Национального собрания и других законодательных актов.

Результаты оценки и анализа экономической безопасности Республики Армения свидетельствуют, что:

- ✓ за рассматриваемый период 1995-2022 гг. показатели экономической безопасности республики по-прежнему находились на низком уровне;
- ✓ увеличилось количество показателей экономической безопасности, изменившихся в худшую сторону за последние годы и считающихся угрозой для страны;
- ✓ для повышения уровня экономической безопасности в первую очередь необходимо обратить внимание на улучшение макроэкономических показателей, которые, согласно методике оценки, находятся в опасной зоне.
- ✓ согласно методике оценки, находятся в опасной зоне.

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԷԼՅԱՆՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Խմբագիր՝ Սաթենիկ Ալավերդյան
Տեխնիկական խմբագիր՝ Նահրա Խչեյան

Չափսը՝ 60 x 84¹/₁₆,
21 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 250:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37